

Լ.Յ. Գրիգորյան

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2002

*Հրատարակության և երաշխավորել էր ՊՏԻ
«Հաշվապահական հաշվառման և աուդիտի» ամբիոնը*

Մասն. խմբ.՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա.Սարգսյան

**Գրախոսներ՝ տ.գ.թ., դոցենտ Ալ.Սարգսյան
տ.գ.թ. Ա.Չակոբյան**

Գիրքը հրատարակվում է հեղինակի միջոցներով

Գ 888

Գրիգորյան Լ.Յ.

Տնտեսական գործունեության վերլուծությունը
արտադրական կազմակերպությունում: Ուսումնական
ծեռնարկ:
Երևան, Տնտեսագետ, 2002թ., 180 էջ:

Ուսումնական ծեռնարկի տեքստը կազմված է «Տնտեսական գործունեության վերլուծություն» դասընթացի ծրագրին համապատասխան: Հատուկ ուշադրություն է դարձված արտադրության տարրերի գործոնային վերլուծությանը՝ աշխատանքային ցուցանիշների, նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության և հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծությանը, արտադրանքի ինքնարժեքի և ֆինանսական վերլուծությանը: Նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների, ասպիրանտների և գործնական աշխատողների համար:

Գ $\frac{0601000000}{719(01)2002}$ 2002թ.

© Գրիգորյան Լիանա Հալուազի, 2002

Ներածություն

Շուկայական տնտեսությունը սահմանում է կոնկրետ պահանջներ կազմակերպությունների կառավարման համակարգում: Անհրաժեշտ է առավել արագ արձագանքել տնտեսական իրավիճակի փոփոխություններին կայուն ֆինանսական վիճակի և շուկայի կառուցվածքի փոփոխություններին համապատասխան արտադրության մշտական կատարելագործման նպատակով:

Կազմակերպությունները ինքնուրույն պլանավորում են իրենց գործունեությունը և որոշում զարգացման հեռանկարները՝ ելնելով արտադրվող արտադրանքի և արտադրական, և սոցիալական զարգացում ապահովելու պահանջներից:

Մրցակցության մեխանիզմի ձևավորումը, շուկայական անկայունությունը կազմակերպության համար անհրաժեշտ են դարձել մի կողմից արդյունավետ օգտագործել իր տրամադրության տակ եղած ներքին ռեսուրսները, մյուս կողմից ժամանակին արձագանքել արտաքին պայմանների փոփոխությանը, որոնց թվին դասվում են աշխատանքային և նյութական ռեսուրսները, հիմնական միջոցները:

Համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրումը պահանջում է տնտեսագիտական վերլուծության առաջավոր մեթոդների կիրառումը և կատարելագործումը՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման արդի մակարդակը:

Աշխատանքում աշխատանքային ռեսուրսների օգտագործման վերլուծության ընթացքում պարզաբանվում է աշխատուժի շարժը և կազմակերպության աշխատուժով ապահովվածությունը, աշխատաժամանակի օգտագործման արդյունավետությունը, աշխատանքի արտադրողականության դիսամիկան և դրա աճի գործոնները: Կազմակերպության աշխատուժով ապահովվածության վերլուծությունը լրացվում է աշխատաժամանակի օգտագործման վերլուծությամբ: Ապահովվածության վերլուծության կարևոր պայման է հանդիսանում նաև աշխատանքի արտադրողականության գնահատումը:

Ջնսարկվում և պարզաբանվում են նյութական պաշարների օգտագործման և նյութերով ապահովվածության վերլուծության նշանակությունը, խնդիրները, տեղեկատվական աղբյուրները: Մասնավորապես տրվում է, թե ինչպես են նորմավորվում նյութական պաշարները, ներկայացվում է նյութերի ծախսման նորմաների շեղման վերլուծությունը: Ընդհանրապես նյութական ռեսուրսների վերլուծությունը իրականացվում է, որպեսզի բացահայտվեն ռեզերվներ արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար և բնականաբար շահույթի մեծացման համար: Ցանկացած արտադրության հիմնական գործոնները դրանք

հիմնական ֆոնդերն են: Հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործումը թույլ է տալիս բարելավել բոլոր տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, այդ թվում արտադրանքի թողարկման աճի, նրա ինքնարժեքի իջեցման, աշխատատարության կրճատման և շահույթի մեծացման: Կազմակերպության համալուծումը նոր սարքավորումներով և նրանց արդյունավետ օգտագործումը մեծ ազդեցություն է թողնում աշխատանքային ռեսուրսների, նյութական ծախսերի արդյունավետ օգտագործման և վերջին հաշվով կազմակերպության ֆինանսական դրության վրա:

Արտադրական կազմակերպությունների գործնությունը բնութագրող գլխավոր ցուցանիշներից է հանդիսանում արտադրանքի ինքնարժեքը: Արտադրանքի ինքնարժեքի մակարդակից է կախված կազմակերպության գործնության ֆինանսական արդյունքը: Բացի այդ, յուրաքանչյուր կազմակերպության արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է շահույթի բաշխման հստակ և արդյունավետ համակարգի կիրառումը, որը հնարավորություն է տալիս օպտիմալ հարաբերակցություն սահմանել պետական բյուջե մասհանումների և կազմակերպության տրամադրության տակ մնացող միջոցների ճիշտ օգտագործման համար:

Շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած կազմակերպություն իր տնտեսական գործնությունը ծավալում է առավելագույն շահույթ ստանալու նպատակով: Կազմակերպության կարևորագույն հիմնահարցը սեփական և փոխառու կապիտալի խելամիտ հարաբերակցության ապահովումն է:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը որոշելու համար մշակված են հատուկ մեթոդներ, հաշվարկվում են տարբեր ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ բնորոշել ցանկացած կազմակերպության ֆինանսական դրությունը ընթացիկ ժամանակահատվածում, ինչպես նաև հեռանկարում:

Աշխատանքում բերվում են կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության եռությունը, խնդիրները, նպատակները, ձևերը, տեղեկատվական աղբյուրները: Ուսումնասիրվում է կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի կազմը, կառուցվածքը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել հաշվեկշռի պասիվի կազմին, կառուցվածքին, նրա փոփոխության պատճառներին, նրա վրա ազդող գործոններին: Հաշվարկվում են նաև ֆինանսական կայունությունը բնորոշող մի շարք ցուցանիշներ:

Գլուխ I. Արտադրության տարրերի գործնական վերլուծությունը

1.1. Աշխատանքային ցուցանիշների վերլուծությունը

1.1.1. Աշխատանքային ցուցանիշների վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվության աղբյուրները

Արտադրության ինտենսիվացումը, նրա տնտեսական արդյունավետության բարձրացումը և արտադրանքի որակը ենթադրում են կազմակերպություններում աշխատուժի տնտեսական նախաձեռնության մաքսիմալացում: Տնտեսության զարգացման ներկա փուլում կարևոր նշանակություն ունի պարզել, թե արտադրության պրոցեսում աշխատուժն ինչպես՝ է օգտագործվել, ինչպիսի՞ փոփոխություններ են կատարվել՝ համեմատած պլանայինի հետ: Կազմակերպություններում աշխատանքի օգտագործման կարևոր խնդիրն է բացահայտել բոլոր այն գործոնները, որոնք խոչընդոտում են աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, բերում են աշխատաժամանակի կորստին և նվազեցնում աշխատակազմի աշխատավարձը:

Աշխատանքային ռեսուրսներին՝ են վերաբերվում այն բնակչության մասը, որն օժտված է անհրաժեշտ ֆիզիկական տվյալներով, գիտելիքներով և տվյալ ոլորտին համապատասխան աշխատունակությամբ: Կազմակերպության անհրաժեշտ աշխատուժով ապահովվածությունը, դրանց ռացիոնալ օգտագործումը, աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակը կարևոր նշանակություն ունեն արտադրանքի ծավալի ավելացման և արտադրանքի արտադրողականության բարձրացման համար:

Վերլուծության հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

1. ուսումնասիրել և գնահատել կազմակերպության և նրա ստորաբաժանումների ապահովվածությունը աշխատուժով ամբողջությամբ, նաև ըստ կատեգորիաների և մասնագիտությունների
2. անձնակազմի շարժի և հոսունության վերլուծություն
3. աշխատանքային ռեսուրսների ռեզերվի հայտնաբերում, նրանց առավել լի՝ էֆեկտիվ օգտագործում:

Տեղեկատվության աղբյուր է հանդիսանում աշխատանքի պլանը, վիճակագրական հաշվետվությունները, կադրերի բաժնի տվյալները:

Հիմնական ցուցանիշները, որոնք բնութագրում են աշխատանքի օգտագործումը կազմակերպություններում, հանդիսանում են աշխատուժի օգտագործումը, աշխատանքի արտադրողականությունը, աշխատանքի աշխատատարությունը:

1.1.2. Կազմակերպության աշխատուժով ապահովվածության վերլուծություն

Կազմակերպության աշխատուժով ապահովվածությունը որոշվում է՝ համեմատելով փաստացի առկա աշխատողները ըստ կատեգորիայի և մասնագիտությունների՝ պլանով նախատեսվածի հետ: Առավել մեծ ուշադրություն է դարձվում այն վերլուծությանը, որը վերաբերվում է կազմակերպության ապահովվածությանը ավելի կարևոր մասնագիտություններով: Անհրաժեշտ է վերլուծել նաև աշխատուժի որակավորման մակարդակը: Աշխատանքային դժվարությունների գնահատման համար համեմատում են աշխատանքի և աշխատողների միջին տարակարգը, հաշվարկելով այն կշռված միջին հանրահաշվականով¹.

$$S = \frac{\sum S_{տ_i} \cdot U_{p_i}}{\sum U_{p_i}} \quad S = \frac{\sum S_{տ_i} \cdot V_{p_i}}{\sum V_{p_i}}$$

որտեղ՝

$S_{տ}$ - տ-արիֆային տարակարգ

U_p - աշխատողների թվաքանակ

V_{p_i} - յուրաքանչյուր տեսակի աշխատանքի ծավալը

Եթե աշխատողների և աշխատանքի միջին տարիֆային փաստացի տարակարգը ցածր է պլանայինից, ապա դա կարող է հանգեցնել ցածր որակի արտադրանքի թողարկմանը, իսկ եթե հակառակը, այդ տարակարգը մեծ է, ապա աշխատողներին անհրաժեշտ է լրացուցիչ վճարել:

Կառավարչական անձնակազմի խնդիրն է ստուգել յուրաքանչյուր աշխատողի զբաղեցրած պաշտոնի համապատասխանությունը նրա կրթական մակարդակին, ինչպես նաև լուծել խնդիրներ՝ կապված

¹ Любушин Н.П., Лещева В.Б. "Анализ финансового-экономической деятельности предприятия". Москва. Юнити. 2000. стр.278-280

կադրերի ընտրության, նրանց նախապատրաստման և որակավորման բարձրացման հետ:

Աշխատողների որակավորման մակարդակը մեծ մասամբ կապված է նրանց տարիքային կազմից, աշխատանքային ստաժից, կրթական մակարդակից և այլն: Այդ պատճառով էլ վերլուծությունը կատարելիս ուսումնասիրում են աշխատողների կազմում տեղի ունեցող փոփոխությունները՝ ըստ նրանց տարիքի, աշխատանքային ստաժի, կրթական մակարդակի: Զանի որ այդ փոփոխությունները հիմնականում կատարվում են աշխատուժի շարժի հետևանքով, ապա վերլուծության ժամանակ այս հարցին մեծ ուշադրություն է դարձվում:

Աշխատուժի շարժը բնութագրելու համար հաշվարկում և վերլուծում են հետևյալ գործակիցները.

1. շարժի գործակից ըստ ընդունման ($K_{ընդ}$)

$$K_{ընդ} = \frac{\text{աշխատանքի ընդունվածներ}}{\text{անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

2. հոսունության գործակից ($K_{հոս}$)

$$K_{հոս} = \frac{\text{սե. ցանկությամբ ազատվածների թիվ} + \text{աշխ. կարգի խախտ. ով}}{\text{անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

3. կազմակերպության հիմնական անձնակազմի գործակից ($K_{հ.ա.}$)

$$K_{հ.ա.} = \frac{\text{ամբողջ տարին աշխատողների թիվ}}{\text{անձնակազմի միջին ցուցակային թիվ}}$$

Անհրաժեշտ է ուսումնասիրել աշխատողների աշխատանքից ազատման պատճառները՝ սեփական ցանկությամբ, կրճատման հետեվանքով, աշխատանքային կարգի խախտման հետևանքով և այլն:

Աշխատուժի աշխատանքից ազատման պատճառ կարող է հանդիսանալ նաև առկա աշխատուժի ավելի լրիվ, ռացիոնալ օգտագործումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը, արտադրության ավտոմատացումը, կատարելագործված տեխնիկայի, տեխնոլոգիայի ներդրումը:

Իսկ եթե կազմակերպությունը ընդլայնում է իր գործունեությունը, մեծացնում արտադրական հզորությունը, ստեղծում նոր աշխատատեղեր, ապա պետք է որոշել աշխատանքային ռեսուրսների լրացուցիչ պահանջը ըստ կատեգորիաների և մասնագիտությունների:

Արտադրանքի թողարկման ավելացման ռեզերվը ի հաշիվ աշխատատեղերի ավելացման, որոշվում է մեկ աշխատողի փաստացի միջին տարեկան արտադրանքի ավելացմամբ՝

$$\eta \uparrow \text{ԱՅ} = \eta \uparrow \text{Ա}_2 \cdot \text{ա} \cdot \text{SU}_\phi$$

որտեղ՝

ՊՊԱԹ - արտադրանքի թողարկման ավելացման ռեզերվ

ՊՊԱԿ.պ - աշխատատեղերի ավելացման ռեզերվ

ՏԱՊ - աշխատողի փաստացի միջին տարեկան արտադրանք:

Կազմակերպության աշխատուժով ապահովվածության վերլուծությունը պետք է տանել կազմակերպության սոցիալական զարգացման ուսումնասիրման հետ սերտ կապի մեջ, հետևյալ ցուցանիշների օգնությամբ.

- աշխատողների որակավորման բարձրացում

- աշխատանքային պայմանների բարելավում և աշխատողների առողջության ամրապնդում

- սոցիալ-կուլտուրական և բնակարանային կենցաղային պայմանների բարելավում:

Վերլուծելով կազմակերպության աշխատուժի որակավորման բարձրացման պլանի կատարումը և դինամիկան, ուսումնասիրում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են աշխատողների տոկոսը, որոնք սովորում են բարձրագույն, միջնակարգ և միջնակարգ մասնագիտացված ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում աշխատողների նախապատրաստումը, իրենց որակավորումը բարձրացնող աշխատողների թիվն ու տոկոսը, ոչ որակյալ աշխատանքով զբաղված աշխատողների տոկոսը և այլն:

Աշխատանքային պայմանների բարելավման և աշխատողների առողջության ամրապնդման միջոցառումների գնահատման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները.

1. աշխատողների ապահովումը սանիտարակենցաղային շինություններով

2. աշխատանքային պայմանների սանիտարահիգիենիկ մակարդակը

3. 100 մարդու հաշվով վնասվածքի ստացման հաճախակասությունը

4. աշխատողների տոկոսը, որոնք ունեն պրոֆեսիոնալ խրոնիկ հիվանդություն

5. 100 մարդու հաշվով ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվը

6. աշխատողների թիվը, որոնք բարելավել են իրենց առողջությունը սանատորիաներում, հանգստյան տներում և այլն:

Վերլուծության է ենթարկվում նաև աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների պահպանման միջոցառումների կատարումը:

Աշխատողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալ-կուլտուրական և բնակարանային-կենցաղային պայմանները բնութագրվում են այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են աշխատողների ապահովվածությունը բնակարանով, նոր կացարանների կառուցման պլանի կատարումը, մանկապարտեզների, սանատորիաների, հանգստյան տների, սոցիալ-կուլտուր-կենցաղային օբյեկտների առկայությունն ու շինարարությունը և այլն:

Մեծ ուշադրություն է դարձվում աշխատանքային կոլեկտիվի սոցիալական պաշտպանվածության հարցին, որի լուծումը, շուկայական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ, մեծ մասամբ դրվում է կազմակերպության վրա: Կոլեկտիվ պայմանագրերով սահմանված՝ սոցիալական պաշտպանության հիմնական ուղղություն են հանդիսանում նյութական օգնության տրամադրումը և առաջին հերթին բազմազան կազմակերպության անդամների ապահովումը այգեբանջարանոցային հողատարածքներով, անտոկոս վարկի տրամադրումը, բնակարանի շինարարության համար շինարարական նյութերի դուրս գրումը իջեցված գներով և այլն: Աշխատողների սոցիալական պաշտպանության հարցը ավելի հրատապ է այն կազմակերպությունների համար, որոնք գտնվում են սևանկացման եզրին: Դրանց վերաբերվում են աշխատատեղերի պահպանման միջոցառումները, աշխատողների աշխատանքից մասսայական ազատման անթույլատրելիություն, աշխատանքից ազատվածների ֆինանսական աջակցություն, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել ցակացողներին ֆինանսական աջակցություն, աշխատավարձի բարձրացման ժամանակավոր սահմանափակում և այլն:

Կազմակերպության արտադրության պոտենցիալի ապիովման համար կարևոր նշանակություն ունի աշխատատեղերի պահպանումը բուհերի, մասնագիտական, ուսումնական հաստատությունների շրջանավարտների համար:

Կազմակերպությունները արտադրանքի արտադրությունը պլանավորելիս պլանավորում են նաև բոլոր աշխատողների թվաքանակը, որը անհրաժեշտ է պլանով նախատեսված արտադրանքի արտադրության ծավալն ապահովելու համար:

Սղյուակ. 1.1

	Ցուցանիշներ	պլան	փաստ	շեղում
1.	Արտադրանքի ծավալը (1000դր.)	7000	8000	+ 1000
2.	Բանվորների թվաքանակը	300	310	+ 10

Աղյուսակ 1.1-ի տվյալներից երևում է, որ մեր ուսումնասիրվող կազմակերպությունում արտադրանքի ծավալը պլանավորվել էր 7 մլն դրամ, փաստացի կազմել է 8 մլն դրամ: Բանվորների թվաքանակը պլանային՝ 300 մարդ, իսկ փաստացի կազմել է 310 բանվոր: Անհրաժեշտ է որոշել արտադրանքի ծավալը 1 մլն դրամով ավելացնելու դեպքում պլանային արտադրողականությամբ կազմակերպությունը որքա՞ն լրացուցիչ բանվորներ պետք է ունենար:

1. Նախ որոշենք պլանի կատարման աստիճանը.

$$\frac{8000}{7000} \cdot 100 = 114\% \quad (14\%-ով \text{ ավել})$$

2. Որոշենք արտադրանքի ծավալը 14% գերակատարելու դեպքում պլանային արտադրողականությամբ քանի բանվոր պետք է ունենա.

$$\frac{300 \cdot 14}{100} + 300 = 342 \quad \text{բանվոր}$$

Կազմակերպությունը արտադրանքի արտադրության պլանը 14% գերակատարելու դեպքում պլանային արտադրողականությամբ պետք է ունենար 342 բանվոր, բայց փաստացի բանվորների թվաքանակը կազմել է 310 մարդ: $310 - 342 = -32$, փաստորեն կազմակերպությունը հարաբերականորեն պակաս է ունեցել 32 բանվոր: Փաստորեն բանվորների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է եղել կազմակերպության արտադրանքի աշխատատարողության իջեցմամբ, որը ապահովել է աշխատանքի արտադրողականություն և կազմակերպությունը բանվորներին կրճատել է 32 մարդ:

Աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման վերլուծություն

Աշխատուժի օգտագործման վերլուծությունն ավելի լավ դարձնելու համար պետք է օգտվել 1 աշխատողի կողմից աշխատած մարդ/օրերից և մարդ/ժամերից տվյալ ժամանակաշրջանի համար, ինչպես նաև աշխատաժամանակի օգտագործման աստիճանից: Այդպիսի վերլուծություն տարվում է ըստ յուրաքանչյուր կատեգորիայի աշխատողների, ըստ ամբողջ կազմակերպության, ինչպես նաև ըստ նրա տարբեր ստորաբաժանումների:

Կազմակերպության աշխատանքային ռեսուրսների օգտագործում

Աղյուսակ 1.2

No	Ցուցանիշներ	Չափվեսու տարի			Շեղում	
		Նախորդ տարի	պլան	փաստ	ճախորդ տարվանից	պլանից
1.	Աշխատողների տարեկան թվաքանակ()	170	170	175	+5	+5
2.	1 աշխատողի աշխատած միջին տարեկան ա) օրերը (O) բ) ժամերը (ժ) (2.(ա) 3)	220	220	210	-10	-10
		1727	1749	1638	-89	-111
3.	Աշխատ.օրվա միջին տևող (ժամ) (S)	7.85	7.95	7.8	-0.05	-0.15
4.	Աշխատ.ժամի ֆոնդ (ժամերով) (2բ 1) (ԱՖ) այդ թվում՝ արտաժամյա աշխժամ. (իզ ժամ)	283590	297330	286825	-6765	-10505
		1700	-	1575	-125	+1575

Աշխատաժամանակի ֆոնդը (ԱՖ) կախված է աշխատողների թվաքանակից (ԱԹ), 1աշխատողի կողմից տարեկան աշխատած օրերի թվից (O), օրվա միջին տևողությունից (S)՝

$$ԱՖ = ԱԹ \cdot O \cdot S^2$$

Ուսումնասիրվող կազմակերպությունում աշխատաժամանակի փաստացի ֆոնդը պլանայինից պակաս է 10505 ժամով (տվյալները բերված են աղ. 2.2-ում)։

Գործոնների ազդեցությունը աշխատաժամանակի ֆոնդի վրա կարելի է բացահայտել բացարձակ տարբերությունների եղանակով.

$$\Delta ԱՖ_{ԱԹ} = (ԱԹ_{\phi} - ԱԹ_{պլ}) \cdot O_{պլ} \cdot S_{պլ} = (175 - 170) \cdot 220 \cdot 7,95 = +8745 \text{ ժամ}$$

$$\Delta ԱՖ_O = (O_{\phi} - O_{պլ}) \cdot ԱԹ_{\phi} \cdot S_{պլ} = (210 - 220) \cdot 175 \cdot 7,95 = -13913 \text{ ժամ}$$

$$\Delta ԱՖ_S = (S_{\phi} - S_{պլ}) \cdot ԱԹ_{\phi} \cdot O_{\phi} = (7,8 - 7,95) \cdot 210 \cdot 175 = -5513 \text{ ժամ}$$

Այսպիսով, աշխատաժամանակի ֆոնդի վրա դրական է ազդել բանվորների թվի փոփոխությունը, իսկ բացասական՝ միջին տարեկան օրերի և օրվա միջին տևողության փոփոխությունը՝ +8745 - 13913 - 5513 = 10505 ժամ

Ինչպես երևում է բերված տվյալներից, կազմակերպությունը իր աշխատաժամանակի ֆոնդն օգտագործում է ոչ լիարժեք: Միջին հաշվով, 1 աշխատողը տարեկան 220 օրվա փոխարեն աշխատում է 210 օր, որի հետևանքով պլանով սահմանվածից շեղումը 1աշխատողի հա-

² Г.В.Савицкая. "Анализ хозяйственной деятельности предприятия ". Москва. ИНФРА - М. 2002. стр.124-125.

սար տարեկան կազմում է -10 օր, իսկ բոլորի համար՝ -1750 օր կամ 13913 ժամ (1750.7.95):

Եական են նաև աշխատաժամանակի ներհերթափոխային կորուստները. 1 օրվա համար դրանք կազմում են (-0,15) ժամ, իսկ բոլոր աշխատողների կողմից աշխատած օրերի համար՝

(-5512) ժամ ((-0,15) . 175 . 210): Աշխատաժամանակի ընդհանուր կորուստը - 19425 ժամ ((1638 - 1743) . 175): Դրանք իրականում ավելի շատ են, քանի որ աշխատած աշխատաժամանակի փաստացի ֆոնդը ներառում է նաև արտաժամյա աշխատած ժամերը (1575 ժամ): Եթե դրանք հաշվի առնենք, ապա աշխատաժամանակի ընդհանուր կորուստը կկազմի՝ $19425 + 1575 = 21000$ ժամ կամ 7,3%:

Աշխատաժամանակի ամբողջօրյա և ներհերթափոխային կորուստները բացահայտելու համար համեմատում են աշխատաժամանակի փաստացի և պլանային տվյալները: Դրանք կարող են լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, որոնք պլանով նախատեսված չեն: Օրինակ՝ ադմինիստրացիայի կողմից թույլատրված լրացուցիչ արձակուրդները, հիվանդության պատճառով աշխատողների ժամանակավոր անաշխատունակությունը, ինչպես նաև մեքենա - սարքավորումների անսարքությունը և այլն: Յուրաքանչյուր պատճառ վերլուծության է ենթարկվում առանձին - առանձին, հատկապես նրանք, որոնք կախված են կազմակերպության գործունեությունից: Աշխատակազմի պատճառով աշխատաժամանակի կորստի կրճատումը հանդիսանում է արտադրանքի արտադրության ավելացման ռեզերվ, քանի որ առանց լրացուցիչ կապիտալ ներդրումների հնարավոր չէ վերականգնել պակաս արտադրված արտադրանքի քանակը:

Աշխատաժամանակի ֆոնդի օգտագործման վերլուծություն

Աղյուսակ 1.3

No	Ցուցանիշներ	1 աշխատողի համար		Շեղում պլանից	
		թ/պլան	փաստ	1 աշխատողի համար	բոլորի համար
1.	Օրացուցային օրերի թիվ՝	365	365	-	-
2.	այդ թվում՝ ա) տոնական բ) հանգստյան օրեր գ) հանգստյան շաբաթներ	9 52 50	9 52 50	- - -	- - -
3.	Աշխատաժամանակի անվանական ֆոնդ (օրեր)	254	254	-	-
4.	Աշխ –ի չներկայացում (օրեր)	34	44	+10	+1750
	այդ թվում՝				
	ա) տարեկան արձակուրդներ	16	16	-	-
	բ) ուսման պատճառով	1	2	+1	+175
	գ) հիդիության և ծննդաբերության դադարի նիստրացիայի թուլատրությանը լրաց. արձակուրդ ն) հիվանդության պատճառով գ) պարապուրդ	5 9 -	8 11,8 4,2	+3 +2,8 +4,2	+525 +490 +735
5.	Աշխատաժամ ֆոնդ (օրեր)	220	210	-10	-1750
6.	Չերթափոխի տևողություն (ժամ)	8	8	-	-
7.	Աշխատաժ. ֆոնդ (ժամեր) (5 6)	1760	1680	-80	-14000
8.	Նախատոնական կրճատված օրեր (ժամ)	9	9	-	
9.	Արտոնութ. անչափահասն. (ժամ)	2	2,4	+0,4	+70
10.	Ներհերթափոխ. պարապուրդ (ժամ)	-	30,6	+30,6	+5355
11.	Աշխատաժ. օգտակար ֆոնդի տեղովություն (ժամ) (7 - 8 - 9)	17 49	1638	-1,11	-19425
12.	Չերթափոխի միջին տևողութ.(ժամ)	7,95	7,8	-31,5	-5512
13.	Լրացուցիչ աշխատած աշխատաժամանակ (ժամ)	-	9	+9	+1575
14.	Աշխատաժամ.անարտադրողական օգտագործում	-	8,3	+8,3	+1452

Սեր օրինակում աշխատաժամանակի կորստի մեծ մասը $((525+735)*7,95+5512)=15529$ ժամ պայմանավորված է սուբյեկտիվ գործոններով՝ ադմինիստրացիայի կողմից թույլատրված լրացուցիչ արձակուրդ, պարապուրդ, որը կարելի է համարել աշխատաժամանակի ֆոնդի ավելացման չօգտագործված պահուստ: Դրանց չթույլատրումը հավասար է 9 աշխատողների աշխատանքից ազատման՝ $15529:1749=9$: Սակայն պետք է հաշվի առնել, որ աշխատաժամանակի ֆոնդի կրճատումը կատարված է ոչ միայն արտադրանքի թողարկման ծավալի

կրճատմամբ, այլ նաև աշխատողների աշխատանքի ինտենսիվության բարձրացմամբ:

1.1.3. Անձնակազմի կազմի և կառուցվածքի վերլուծություն

Արդյունաբերաարտադրական անձնակազմի արդյունավետ օգտագործումը արտադրական գործընթացի արդյունավետությունն ապահովող արտադրական պլանների բարեհաջող կատարման կարևոր պայման է:

Արդյունաբերաարտադրական անձնակազմին՝ հիմնական գործունեությամբ զբաղվող անձնակազմին վերաբերվում են մարդիկ, որոնք զբաղվում են աշխատանքային օպերացիաններով, կապված են կազմակերպության հիմնական գործունեությանը (արդյունաբերական արտադրանքի թողարկում, արդյունաբերական բնույթի աշխատանքների կատարում, արտադրության կազմակերպում և կազմակերպության ղեկավարում և այլն): Արդյունաբերաարտադրական անձնակազմը բաժանվում է 2 մասի՝

ա) բանվորներ

բ) ծառայողներ

Բանվորներին վերաբերվում է անձնակազմի այն մասը, որը զբաղված է աշխատանքի առարկաների վրա անուղղակի ազդեցությամբ, դրանց և արտադրանքի տեղափոխմամբ, աշխատանքի միջոցների խնամքով և դրանց աշխատանքի ստացմամբ, և կատարում են արտադրական գործընթացի այլ ծառայություններ: Այլ կերպ ասած՝ բանվորները կազմակերպության կրտսեր սպասարկող անձնակազմն են (աշխատողներ, որոնք արտադրության գործընթացի վրա ուղղակի ազդեցություն չունեն՝ հավաքարարներ, ցրիչներ, հանդերձապահներ, վարորդներ, պահակներ և այլն):

Ծառայողների թվին դասվում են ղեկավարները, մասնագետները, գիասենյակային աշխատողները և այլն:

Կազմակերպության աշխատուժով ապահովվածությունը բնութագրվում է անալիտիկ աղյուսակում բերված ցուցանիշներով (աղ. 1.4)

Աղյուսակ 1.4

No	Անձնակազմն ըստ կատեգորիաների	Թիվն ըստ նախորդ տարվա	Ըստ պլանի	Փաստացի	Փաստացին %-ով	
					պլանի համեմատ	նախորդ տարվա համեմատ
	Ընդամենը	900	898	871	97.72	97.50
1.	Ֆինանսական գործունեությամբ զբաղվածները դրանցից՝	888	886	868	96.92	97.70
	բանվորներ	741	740	724	97.78	97.64
	ծառայողներ	147	146	144	98.63	98.00
	դրանցից՝					
	դեկալարներ մասնացետներ	47	48	48	100	102.50
	ուչ հիմնական գործունեությամբ զբաղվածներ	100	98	96	98.10	96.26
2.	ուչ հիմնական գործունեությամբ զբաղվածներ	12	12	10	83.33	83.33

Աղյուսակի տվյալներից նկատում ենք, որ հաշվետու տարում հիմնական գործունեությամբ զբաղվող անձնակազմի թվաքանակը պլանի համեմատությամբ նվազել և կազմել է 96.921, իսկ նախորդ տարվա համեմատությամբ՝ 97.701:

Բանվորների թվաքանակը նույնպես նվազել է ինչպես պլանի, այնպես էլ նախորդ տարվա համեմատությամբ և համապատասխանաբար կազմել 97.78% և 97.64%: Թվաքանակի նվազում նկատվում է նաև ըստ անձնակազմի այլ կատեգորիաների: Դա վկայում է այն մասին, որ վերլուծվող կազմակերպությունում օգտագործվում է միայն արտադրության զարգացման ինտենսիվ գործոններ:

Վերլուծության ընթացքում կարևոր նշանակություն ունի ուսումնասիրել անձնակազմի կառուցվածքի փոփոխությունը, որը ներկայացված է աղյուսակ 1.5 ում:

Աշխատանքային ռեսուրսների կառուցվածքային փոփոխություն

Աղյուսակ 1.5

Աճճնակազմն ըստ կատեգորիաների	Աճճնակազմի կառուցվածք						տես. կշռի փոփոխություն %	
	ճախորդ տարվա համար		պլան		փաստացի		պլանի համար	ճախորդ տարվա համար
	մարդ	%	մարդ	%	մարդ	%		
Հիմնական գործունեությամբ զբաղվածների այդ թվում՝								
ա) բանվորներ	741	83,44	740	83,52	724	83,41	-0,11	-0,03
բ) ղեկավարներ	47	5,29	48	5,42	48	5,53	+0,11	+0,24
գ) մասնագետներ	100	11,27	98	11,06	96	11,06	+0,01	-0,21

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ վերլուծվող կազմակերպությունում նվազում է արտադրական պոտենցիալը (բանվորների փաստացի տեսակարար կշիռը ցածր է նախորդ տարվա և պլանով նախատեսված մեծությունից):

Բանվորների թվաքանակի կրճատմանը զուգահեռ անձնակազմի կազմում ավելացել է ղեկավարների թիվն ու տեսակարար կշիռը: Դա կարող է պայմանավորված լինել կազմակերպությունում ղեկավարման կառուցվածքի փոփոխությամբ:

Միաժամանակ երևում է, որ նվազել է մասնագետների թիվն ու տեսակարար կշիռը: Հնարավոր է, որ դա պայմանավորված լինի անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետների բացակայությամբ:

Արտադրական պրոցեսին մասնակցելու բնույթով աշխատողները բաժանվում են հիմնականի՝ հիմնական արտադրանքի արտադրությամբ զբաղվողները և օժանդակի, որոնք զբաղված են օժանդակ արտադրությունում և բոլոր տեսակի ծառայություններում: Վերլուծության ընթացքում ուսումնասիրվում է հիմնական և օժանդակ աշխատողների միջև եղած հարաբերակցությունը, պարզվում է այդ հարաբերակցության փոփոխության տեսակները: Եթե հիմնական աշխատողների տեսակարար կշիռը նվազում է, ապա դա տալիս է աշխատողների արտադրողականության նվազմանը:

Ընդհանուր աշխատողների թվաքանակի մեջ հիմնական աշխատողների տեսակարար կշռի փոփոխության ազդեցությունը 1 աշխատողի արտադրողականության վրա որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta B_{աշ} = (D_{հիմ}^1 - D_{հիմ}^0) \cdot B_{աշ}^0$$

որտեղ՝

$D_{\text{հիծ}}^0$ և $D_{\text{հիծ}}^1$ - աշխատողների ընդհանուր թվաքանակի մեջ

հիմնական աշխատողների տեսակարար կշիռն է համապատասխանաբար բ/ալանով սահմանված և փաստացի

$B_{\omega_2}^0$ - 1աշխատողի պլանով սահմանված միջին տարեկան

արտադրողականություն:

Օժանդակ աշխատողների թվաքանակի կրճատմանը հասնում են ի հաշիվ օժանդակ աշխատանքների կենտրոնացման և մասնագիտացման, սարքավորումների վերանորոգման և կարգավորման, ավտոմատացման մակարդակի բարձրացման, դրանց աշխատանքների կատարելագործման միջոցով և այլն:

Տարբերում են աշխատողներ, որոնք զբաղված են նորմավորված աշխատանքում (գործավարձով աշխատողներ) և որոնք զբաղված են չնորմավորված աշխատանքում (ժամանակավարձով աշխատողներ):

Աշխատողների թվաքանակը որոշվում է, ելնելով պլանավորվող ժամանակաշրջանի աշխատանքի աշխատատարության նորմայից, տարեկան էֆեկտիվ աշխատաժամանակից և պլանավորվող նորմայի կատարումից, հետևյալ բանաձևով³:

$$\Theta_u = \frac{T}{T_{\text{эф}} \cdot K_n}$$

որտեղ՝

T - պլանավորվող ժամանակաշրջանի աշխատանքի աշխատարարություն(նորմա /ժամ)

K_n - արտադրանքի նորմայի կատարման պլանավորվող գործակից

$T_{\text{эф}}$ - պլանավորվող ժամանակաշրջանի էֆեկտիվ աշխատաժամանակի ֆոնդ, ընդունվում է սովորաբար 1տարի:

Աշխատողների թվաքանակը, որոնք զբաղված են ապարատուրային և ագրեգատային աշխատանքներում, որտեղ աշխատողների գործողությունները սահմանափակվում են հիմնականում մեքենայացված և ավտոմատացված կառավարման պրոցեսով, որոշվում է աշխատատեղերով և սարքավորումների սպասարկման նորմայով՝

³ Любушин Н.П., Лещева В.Б. "Анализ финансово-экономической деятельности предприятия". Москва. Юнити. 2000. стр.276

$$\Theta_U = \sum_{i=1}^m n_i \cdot \delta_i \cdot k_{\delta_i}$$

որտեղ՝

i - օպերացիայի անվանում

n_i - i օպերացիայի ազդեցատների թվաքանակը

δ_i - աշխատատեղերի խտություն (աշխատողների թվաքանակը, որն անհրաժեշտ է i -րդ աշխատատեղի սպասարկման համար)

K_{δ_i} - ըստ մասնագիտության համատեղության i -րդ օպերացիայում աշխատողների ծանրաբեռնվածության գործակից

Բանվորների մասնագիտական և որակական մակարդակի վերլուծությունը տարվում է մասնագետների և տարակարգերի բանվորների առկա թվաքանակը համեմատելով յուրաքանչյուր տեսակի աշխատանքի կատարման համար անհրաժեշտ բանվորների թվաքանակի հետ՝ ըստ առանձին ստորաբաժանումների, բրիգադների և կազմակերպության համար ընդհանրապես: Այդ ընթացքում բացահայտվում է յուրաքանչյուր մասնագիտության բանվորների ավելացումը կամ պակասը:

Բանվորների որակավորման մակարդակի համապատասխանությունը կատարվող աշխատանքի վերլուծելու համար համեմատում ենք աշխատանքի միջին տարակարգը բանվորների տարակարգի հետ:

i արդատրատեսակի աշխատանքի միջին տարակարգը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{\text{միջ}} = S_{\text{փ}} + \frac{k_{\text{միջ}} - k_{\text{օ}}}{k_{\text{մեծ}} - k_{\text{օ}}}$$

որտեղ՝

$P_{\text{փ}}$ - 2 կից տարակարգերից ամենափոքրը, որոնց միջև գտնվում է միջին տարիֆային գործակիցի նշանակությունը

$K_{\text{փ}}$ - 2 կից տարակարգերից փոքրի գործակիցը

$K_{\text{մեծ}}$ - 2 կից տարակարգերից մեծի տարիֆային գործակիցը

$K_{\text{միջ}}$ - i արտադրանքի աշխատանքի միջին տարիֆային գործակից

$$K_{\text{միջ}} = \frac{\sum_{j=1}^6 k_j \cdot T_j}{\sum_{j=1}^6 T_j}$$

որտեղ՝

j - համապատասխան տարակարգի ինդեքս (j^{21-6} , 6 տարակարգային աշխատանքի դեպքում)

K_j - j -րդ տարակարգի աշխատանքի տարիֆային գործակից

T_{ji} - j - րդ տարակարգի աշխատատարութունը՝ i արտադրատեսակի համար

Բանվորների միջին տարակարգը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$S_{բանվ.միջ.} = S_{\phi} + \frac{K_{միջ.բ} - K_{\phi}}{K_{մեծ} - K_{\phi}}$$

որտեղ՝

$K_{միջ. բանվ.բանվորների միջին տարիֆային գործակից}$, որը բնութագրվում է որպես միջին կշռված՝ ըստ բանվորների թվաքանակի

$$K_{բ.միջ.} = \frac{\sum_{j=1}^6 k_j \cdot \theta_{ji}}{\sum_{j=1}^6 \theta_{ji}}$$

որտեղ՝

θ_j - համապատասխան տարակարգերի բանվորների թվաքանակ.

Աշխատանքի միջին տարակարգի և այդ աշխատանքը կատարող բանվորների միջին տարակարգի համեմատությունը թույլ է տալիս դատել այն մասին, թե որքանով են ճիշտ ընտրված և տեղաբաշխված բանվորներն ըստ ստորաբաժանումների, ինչպես նաև ճիշտ է արդյոք պլանավորվում նրանց աշխատավարձի ֆոնդը:

Հաշվարկի համար օգտվենք աղ. 1.6-ի տվյալներից՝

Աշխատանքից պահանջվող որակավորման մակարդակը և առկա բանվորների կազմը

Աղյուսակ 1.6

Տարակարգ	Տարիֆային գործակից	Աշխատանքի արտադրողականության պլան	բանվորների թվաքանակ փաստ.
I.	1.00		-
II.	1.30	284900	183
III.	1.69	184100	120
IV.	1.96	499300	305
V.	2.27	113700	63
VI.	2.63	70500	43
Ընդամենը		1152500	714

Աշխատողների և աշխատանքի որակավորման մակարդակի համապատասխանությունը գնահատելու համար գտնենք հետևյալ ցուցանիշները.

ա) աշխատանքի միջին տարիֆային գործակից.

$$\frac{284900 \cdot 1,30 + 184100 \cdot 1,69 + 499300 \cdot 1,96 + 113700 \cdot 2,27 + 70500 \cdot 2,63}{1152500} = 1,825$$

բ) աշխատողների միջին տարիֆային գործակից.

$$\frac{183 \cdot 1,30 + 120 \cdot 1,69 + 305 \cdot 1,96 + 63 \cdot 2,27 + 43 \cdot 2,63}{714} = 1,813$$

Աշխատանքի և աշխատողների միջին տարակարգը համապատասխանաբար կկազմի՝

$$S_{\text{միջ}} = 3 + \frac{1,82 - 1,69}{1,96 - 1,69} = 3 + 0,48 = 3,48$$

$$S_{\text{միջբ}} = 3 + \frac{1,81 - 1,69}{1,96 - 1,69} = 3 + 0,44 = 3,44$$

Այսպիսով՝ ինչպես երևում է հաշվարկներից, աշխատողների փաստացի միջին տարակարգը ցածր է պլանավորվող աշխատանքի միջին տարակարգից: Դա խոսում է այն մասին, որ որակավորման փաստացի մակարդակը ցածր է պլանով պահանջվողից: Այդ պատճառով, աշխատողների պատրաստման ժամանակ անհրաժեշտ է ի նկատի ունենալ անհրաժեշտ մասնագիտությունների որակավորման բարձրացումը:

1.1.4. Աշխատանքային ցուցանիշների օգտագործման արդյունավետության բարձրացման պահուստների վերլուծություն

Աշխատանքի արտադրողականության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է ընդհանրացնող, մասնակի (հիմնական) և օժանդակ ցուցանիշների համակարգ:

Ընդհանրացնող ցուցանիշներին են վերաբերվում 1 բանվորի միջին օրեկան և միջին ժամային արտադրողականությունը, ինչպես նաև 1 բանվորի միջին տարեկան արտադրողականությունը:


Մասնակի ցուցանիշները դրանք որոշակի ձևի միավոր արտադրանքի արտադրության վրա ծախսված ժամանակը (արտադրանքի աշխատատարություն) կամ որոշակի ձևի արտադրանքի թողարկումն է 1 աշխատողի կողմից մեկ օրվա կամ մեկ ժամվա ընդացքում:

Օժանդակ ցուցանիշները բնութագրում են կոնկրետ միավոր աշխատանքի կատարման վրա ծախսված ժամանակը կամ միավոր ժամանակի ընդացքում կատարված աշխատանքի քանակը:

Աշխատանքի արտադրողականության ավելի ընդհանրացնող ցուցանիշ է հանդիսանում 1 աշխատողի կողմից թողարկված տարեկան արտադրանքի քանակը: Դրա մեծությունը կախված է ոչ միայն աշխատողների արտադրողականությունից, այլ նաև աշխատողների ընդհանուր թվի մեջ արտադրա-արդյունաբերական անձնակազմի տեսակարար կշռը, ինչպես նաև նրանց կողմից աշխատած օրերի թվից և աշխատանքային օրվա տևողությունից: (սխեմա 1)

Կազմակերպության կողմից միջին տարեկան արտադրանքի արտադրությունը բնութագրող ցուցանիշների փոխադարձ կապը:

Սխեմա 1



Ելակետային տվյալներ վերլուծության համար

Աղյուսակ 1.7

	Ցուցանիշներ	պլան	փաստ	շեղում (+,-)
1.	Արտադրանքի ծավալը (մլն դր.) (Ա)	97000	101800	+4800
2.	Միջին ցուցակային քիվը ա արդյունաբերա-արտադրական անձնակազմի(ԱԱԱ) բ. բանվորների (ԲԹ)	400 300	402 365	+2 +5
3.	Արդյունաբերա-արտադրական անձնակազմի ընդհանուր քվի մեջ բանվորների տեսակարար կշիռը (ՏԿբ) %	90	90,80	+0.80
4.	1 բանվորի կողմից տարեկան աշխատած օրերի քիվը (Օ)	220	210	-10
5.	Աշխատանքային օրվա միջին տևողությունը (ժամ) (Տ)	7,95	7,8	-0.15
6.	Աշխատած ժամերի ընդհանուր քանակը՝ տարվա ընթացքում բոլոր բանվորների կողմից (Տ) մ/ժ այդ քվում 1բանվորի կողմից (մարդ/ ժամ)	629640 1749	597870 1638	-31770 -111
7.	Միջին տարեկան արտադրողականություն (մլն դրամ) ա. մեկ աշխատողի (Տ _{արտ}) բ. մեկ բանվորի (Տ _{արտբ})	242.5 269.4	253.2 278.9	+10.7 +9.5
8.	Բանվորի միջին օրեկան արտադրողականություն (Օ _{արտ}) հազ. ժամ	1.22	1.33	+0.11
9.	Բանվորի միջին ժամային արտադրողականություն (ժ _{արտ}) հազ. ժամ	154.03	170,26	+16,23
10.	Ժամանակի անարտադրողական ծախսեր (Տ _{ան}) 1000մ/ժ	-	1367	-
11.	Միջոցառումների արժանատվորման հաշվին ժամանակի գերավաճային տնտեսում (Տ _գ) հազ. ժամ	-	8500	-
12.	Կարողացած փոփոխության հետևանքով ապրանքային (ԱԱ _{արտ}) արտադրանքի փոփոխություն մլն. դրամ	-	+2300	-

Այստեղից՝

1 աշխատողի կողմից թողարկված միջին տարեկան արտադրանքի քանակը հավասար է հետևյալ ցուցանիշների արտադրյալին⁴.

$$S_{արտ} = S_{Կբ} \cdot O \cdot S \cdot \sigma_{արտ}$$

Նշված ցուցանիշների փոփոխության ազդեցությունը արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին տարեկան արտադրողականության վրա որոշե՛ք բացարձակ տարբերությունների եղանակով (աղ.5.3):

⁴ Прыкин Б.В. "Технико-экономический анализ производства". Москва. Юнити-Дана, стр.192-124.

Մոյուսակ 1.8

Ցուցանիշներ	Հաշվարկի աղբյուրներ	ՃթՑ մլն. դրամ
Փոփոխությունները՝		
1՝ Բանվորների բաժինը ամբողջ արդարտադրական անձնակազմի մեջ	$\Delta S_{արտ.ո} = \Delta S_{վ} \cdot S_{արտ.ո} = 0.008 \cdot 269.4 = +2.15$	
2՝ Տարվա ընթացքում մեկ բանվորի կողմից աշխատած օրերի թիվը	$\Delta S_{արտ.օր} = S_{վ} \cdot \Delta O_{արտ.օր} = 0.908 \cdot (-10) \cdot 1.22 = -11.08$	
3՝ Աշխատանքային օրվա տևողությունը	$\Delta S_{արտ.տ} = S_{վ} \cdot O_{փ} \cdot \Delta S_{արտ.տ} = 0.908 \cdot 210 \cdot (-0,15) \cdot 0,15403 = -4.40$	
4՝ Միջին ժամային արտադրողականություն	$\Delta S_{արտ.ժ} = S_{վ} \cdot O_{փ} \cdot S_{փ} \cdot \Delta \sigma_{արտ} = 0.908 \cdot 210 \cdot 7,8 \cdot 0,01623 = +24.13$	
ԸՆԴԱՄԵՆԸ՝		+10.7

1.7 և 1.8 աղյուսակների տվյալներից երևում է, որ կազմակերպության 1 աշխատողի միջին տարեկան արտադրողականությունը պլանայինից ավել է 10.7 մլն. դրամով (253.2-242.5): Այս ավելացումը տեղի է ունեցել ի հաշիվ արդյունաբերաարտադրական անձնակազմի մեջ բանվորների բաժնի ավելացմամբ՝ 2.15մլն դրամով 24.13 մլն դրամով՝ ի հաշիվ բանվորների միջին ժամային արտադրողականության բարձրացման նրա մակարդակի վրա բացասական են ազդել աշխատաժամանակի ամբողջօրյա և միջիերթափոխային կորուստները, համապատասխանաբար 11.08 մլն և 4.40 մլն դրամով:

Նման ձևով կատարվում է 1 բանվորի միջին տարեկան արտադրողականության փոփոխության վերլուծությունը, որը կախված է տարվա ընթացքում 1 բանվորի կողմից աշխատած օրերի թվից, աշխատատանքային օրվա միջին տևողությունից և միջին ժամային արտադրողականությունից՝

$$S'_{արտ} = O \cdot S \cdot \sigma_{արտ}$$

Այս գործոնների ազդեցությունը որոշենք բացարձակ տարբերությունների եղանակով՝

$$\Delta S'_{արտ.օ} = \Delta O \cdot S_{ալ} \cdot \sigma_{արտ.ալ} = -10 \cdot 7,95 \cdot 0,15403 = -12,24 \text{ մլն դր.}$$

$$\Delta S'_{արտ.տ} = O_{փ} \cdot \Delta S \cdot \sigma_{արտ.ալ} = 210 \cdot (-0,15) \cdot 0,15403 = -4,85 \text{ մլն դր.}$$

$$\Delta S'_{արտ.ժ} = O_{փ} \cdot S_{փ} \cdot \Delta \sigma_{արտ} = 210 \cdot 7,8 \cdot 0,01623 = \frac{26,58 \text{ մլն դր.}}{+9,49 \text{ մլն դր.}}$$

Եզրակացություն. Հաշվարկից երևում է, որ 1 բանվորի միջին տարեկան արտադրողականությունը պլանայինի համեմատ ավելացել է 9.5 մլն դրամով (278.9-269.4): Սրա մակարդակի վրա դրական է ազդել միջին ժամային արտադրողականության ավելացումը (պլանից աավել է 16.23 մլն դրամ) և նրա վրա դրական ազդեցությունը կազմել է 26.58 մլն դրամ: Սակայն արտադրողականության մակարդակի վրա բացասական է ազդել 1 բանվորի կողմից տարեկան պակաս աշխատած օրերը

(10տ) բացասական ազդեցությունը կազմել է 12.24 մլն դրամ: Ինչպես նաև բացասական է ազդել աշխատանքային օրվա միջին տևողության կրճատումը (0.15ժամ): Ազդեցությունը կազմել է 4.85 մլն դրամ:

Վերլուծության վերջում անհրաժեշտ է մշակել կոնկրետ միջոցառումներ աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ և որոշել ռեզերվներ բանվորների միջին ժամային, միջին օրեկան և միջին տարեկան արտադրողականության համար:

Արտադրողականության բարձրացման համար հիմնական ուղղությունը բխում է նրա բանաձևից՝ $\sigma = U/T$, որի համաձայն արտադրանքի արտադրողականության բարձրացմանը կհասնենք հետևյալ ճանապարհով՝

ա) արտադրանքի թողարկման ավելացում ի հաշիվ կազմակերպության արտադրության հզորության ավելի լրիվ օգտագործման այնպես, ինչպես արտադրության ծավալի ավելացմանը զուգընթաց մեծանում է միայն աշխատաժամանակի ծախսի փոփոխման մասը, իսկ հաստատուն մասը, մնում է անփոփոխ: Արդյունքում արտադրանքի 1 միավորի աշխատաժամանակի ծախսը փոքրանում է.

բ) արտադրության աշխատանքային ծախսերի կրճատում՝ արտադրության ինտենսիվացման ճանապարհով, արտադրության որակի բարձացման, արտադրության մեքենայացման և ավտոմատացման, արտադրության կառուցվածքի բարելավման հաշվին աշխատաժամանակի կրճատման, նյութատեխնիկական մատակարարման և այլ գործոնների հաշվին՝ պլանի համեմատ: Հնարավոր են աշխատանքային ծախսերի և արտադրանքի թողարկման ծավալի փոփոխության հարաբերակցության հետևյալ տարբերակները.

ա) տեղի է ունենում արտադրանքի թողարկման ծավալի ավելացում ի հաշիվ աշխատանքային ծախսերի կրճատման.

բ) արտադրության ծավալն ավելանում է աշխատանքային ծախսերի անփոփոխ մնալու դեպքում.

գ) արտադրանքի ծավալը մնում է անփոփոխ՝ աշխատանքային ծախսերի կրճատման դեպքում.

դ) արտադրանքի ծավալը նվազում է ավելի դանդաղ տեմպով, քան աշխատանքային ծախսերը:

Անկախ ընտրված տարբերակից, միջին ժամային արտադրողականության բարձրացման պահուստները որոշվում են հետևյալ ձևով՝

$$\sigma \uparrow \sigma_{\text{արտ}} = \sigma_{\text{արտ.հ}} \cdot \sigma_{\text{արտ.կ}} = \frac{U_0 + \sigma \uparrow U}{T_0 \cdot \sigma \downarrow T + T_0} - \frac{U_0}{T_0}$$

որտեղ՝

Պ↑ $\sigma_{արտ}$ - միջին ժամային արտադրողականության բարձացման պահուստ

$\sigma_{արտ} \cdot \sigma_{արտ}$ - համապատասխանաբար՝ հնարավոր և փաստացի մակարդակը միջին ժամային արտադրողականության

Պ↑Ա-միջոցառումների արմատավորման հաշվին համախառն արտադրանքի ավելացման պահուստ

T_{ϕ} -փաստացի արտադրանքի թողարկման ծավալի վրա ծախսվող փաստացի ժամանակը

Պ↑S-բանվորների որակավորման բարձրացման կազմակերպության մեքենայացման և ավտոմատացման հաշվին աշխատաժամանակի կրճատման պահուստ

S_{ϕ} արտադրանքի թողարկման ավելացման հետ կապված աշխատաժամանակի լրացուցիչ ծախսեր:

Միջին ժամային արտադրողականության աճի պահուստը բազմապատկելով աշխատանքային օրվա պլանային տևողությամբ, կստանանք միջին օրեկան արտադրողականության աճի պահուստը: Իսկ երբ այդ պահուստը բազմապատկենք 1 բանվորի պլանային աշխատաժամանակի ֆոնդնդով, կստանանք բանվորների միջին տարեկան արտադրողականության աճի պահուստը:

Արտադրանքի արտադրության ավելացման պահուստը որշելու համար անհրաժեշտ է միջին ժամային արտադրողականության հնարավոր աճը բազմապատկել բոլոր բանվորների պլանային աշխատաժամանակով՝

$$\text{Պ}\uparrow\text{Ա} = \text{Պ}\uparrow\sigma_{արտ} \cdot T_{\phi} \cdot S_{\phi}$$

Աշխատանքի արտադրողականության աճի պահուստը ի հաշիվ որոշակի միջոցառումների (Պ Արտ_{xi}) անցացվման կարելի է որոշել նաև հետևյալ բանաձևով՝

$$\text{Պ}\uparrow\text{Արտ}_{xi} = \frac{\text{Պ}\downarrow\text{Թ}u \% x_i}{100 - \text{Պ}\downarrow\text{Թ}u \% x_i}$$

որտեղ՝

$\text{Պ}\downarrow\text{Թ}u \% x_i$ - բանվորների կամ կառավարչական անձնակազմի կրճատման %-ը ի հաշիվ որոշակի միջոցառումների անցկացման .

Աշխատատարությունը պատրաստված 1 միավոր կամ ամբողջ ծավալի արտադրանքի վրա ծախսված աշխատաժամանակն է: Միավոր արտադրանքի աշխատատարությունը (TE) հաշվարկվում է որպես i-րդ արտադրանքի արտադրության աշխատաժամանակի ֆոնդի հարաբերությունը նրա ծավալի վրա՝ գնային կամ արժեքային արտա-

հայտությամբ: Կարելի է հաշվել նաև 1 դրամի արտադրանքի աշխատատարողությունը (ընդհանուր արտադրանքի ծավալի վրա ծախսված աշխատաժամանակը պետք է հարաբերել թողարկված ընդհանուր արտադրանքի ծավալի վրա:)

Արտադրանքի աշխատարարության նվազեցումը աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր գործոն է: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը տեղի է ունենում առաջին հերթին արտադրանքի աշխատարարության իջեցման հաշվին, մասնավորապես պլանավորված կազմակերպատեխնիկական միջոցառումների կատարման հաշվին (գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրում) արտադրական պրոցեսների մեքենայացում և ավտոմատացում, արտադրանքի և աշխատանքի կազմակերպման բարելավում, գնված կիսաֆաբրիկատների տեսակարար կշռի ավելացում և այլն:

Աշխատատարության և արտադրողականության փոխադարձ կապը ցույց տանք աղյուսակով

Աղյուսակ 1.9

No	Ցուցանիշներ	պլան	փաստ	շեղում (+,-)
1.	Արտադրանքի ծավալը (իզ.դրամ)	7000	8000	+1000
2.	Բանվորների թվաքանակը	300	310	+10
3.	1բանվորի աշխատած տարեկան մարդ/օրերը	240	230	-10
4.	Օրվա միջին տևողությունը (ժամ)	8	7,7	-0,3
5.	1 բանվորի տարեկան աշխատած մարդ/ժամերը (2x3x4)	576000	549010	-26990
6.	1 ժամվան ընկնող արտադրանքի քանակը (1:5)	12,15	14,57	+2,42
7.	Աշխատատարությունը (5:1)	0,0823	0,0686	-0,0137

Աղյուսակում բերված տվյալներից պարզվում է, որ կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում պլանի համեմատությամբ արտադրանքի ծավալն ավելացրել է 1 մլն դրամով: Դա տեղի է ունեցել մի կողմից բանվորների թվաքանակի բարձրացման, մյուս կողմից աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ:

Որոշենք աշխատատարության փոփոխությունը ինչպես է ազդել աշխատանքի արտադրողականության մակարդակի վրա: Դրա համար պետք կիրառենք հետևյալ բանաձևը՝

$$1) \quad w_{\%} = \frac{w_{\phi}}{w_{\text{պլ}}} = \frac{0,0686}{0,0823} \cdot 100 = 83\%$$

2) աշխատարարության տնտեսումը՝ $83-100=-17\%$

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության արտադրանքի աշխատատարությունը նվազել է 17%-ով: Որոշենք, թե ի հաշիվ այդ

տնտեսմանը, որքա՞ն է բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը.

$$\%a = \frac{\%a \cdot 100}{100 - a} = \frac{17 \cdot 100}{100 - 17} = \frac{1700}{83} = 20\%$$

Եզրակացություն. Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կողմից իրականացվող տեխնիկական միջոցառումների հետևանքով արտադրանքի աշխատատարությունը կրճատվել է 17%-ով, որի հետևանքով աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 20%-ով:

1.2. Նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության վերլուծությունը

1.2.1. Նյութական պաշարների օգտագործման և նյութական պաշարներով ապահովվածության վերլուծության նշանակությունը, խնդիրները, և տեղեկատվական աղբյուրները:

«Եթե դուք կարող եք չափել և թվերով արտահայտել այն, ինչի մասին խոսում եք, ապա դուք ինչ -որ փաստ գիտեք դրա մասին: Երբ չեք կարող չափել այն, ձեր գիտելիքը աղքատիկ ու անբավարար է: Դա կարող է լինել գիտելիքի սկիզբը, սակայն դուք հազիվ թե մտովի առաջխաղացում եք կատարելի դեպի գիտության կայանը...»

Լորդ Զելվին

Արտադրանքի արտադրության պլանների կատարման, նրա ինքնարժեքի իջեցման, շահույթի, շահութաբերության մեծացման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում լրիվ և ժամանակին հումքի և նյութերի անհրաժեշտ տեսականիով և որակով կազմակերպության ապահովումը:

Նյութական պաշարների գծով կազմակերպության պահանջի աճը կարող է բավարարել էքստենսիվ ուղիով, այսինքն արտադրության ծավալների մեծացմանը համաչափորեն մեծացնել ձեռք բերվող, գնվող և կամ կազմակերպության օժանդակ արտադրություններից ստացվող նյութական ռեսուրսների ծավալները: Սակայն կա ևս մեկ եղանակ նյութական պաշարների գծով պահանջի աճը բավարարելու համար, այն է՝ ինտենսիվ ուղին, որը ենթադրում է նյութական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում:

Առաջին ուղին բերում է միավոր արտադրանքի վրա նյութական ծախսերի տեսակարար աճին, չնայած միևնույն ժամանակ արտադրանքի ինքնարժեքը կարող է իջնել ի հաշիվ արտադրության ծավալի աճի և միավոր արտադրանքի մեջ հաստատուն ծախսերի փոքրացման հաշվին: Երկրորդ ուղին ապահովում է նյութական ծախսերի տեսակարար կշռի կրճատումը և միավոր արտադրանքի ինքնարժեքի իջեցումը:

Արդյունավետ օգտագործումը հումքի, նյութերի, համարժեք է այդ տնտեսված մասով արտադրության մեծացմանը:

Նյութական պաշարների օգտագործման պրոցեսում տեղի է ունենում դրանց փոխակերպություն նյութական ծախսերի, դրա համար էլ հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի և այլնի արդյունավետ օգտագործումը իջեցնում է արտադրանքի ինքնարժեքը:

Նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, իջեցնելով արտադրանքի ինքնարժեքը, հանդիսանում է շահութաբերության աճի գործոն: Սակայն հարկ է նշել, որ նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ոչ միայն հանգեցնում է տնտեսական ցուցանիշների բարձրացմանը, որոնք բնութագրում են արտադրության արդյունավետությունը, այլև առկա տեխնոլոգիական եղանակների պայմաններում բերել են նրան, որ բնական ռեսուրսների սպառման տեմպերը և շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը դուրս են եկել թույլատրելի սահմանները:

Դրա հետ կապված հրատապ խնդիր է հանդիսանում աշխատանքի արտադրողականության աճի որոշակի տեմպերի պայմաններում օգտագործվող նյութական ռեսուրսների ծավալների կրճատումը: Դա հնարավոր է տեխնոլոգիական առաջընթացի դեպքում:

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառի խոշորագույն մասնագետներ Ֆոն Վայդենգերը, Բ. Լովինսը տեխնոլոգիական եղանակների զարգացման տենդենցների վերլուծության հիման վրա եկան այն եզրակացության, որ ռեսուրսների արտադրողականությունը կարող է և պետք է ավելանա քառակի անգամ: Այլ խոսքերով՝ չորս անգամ պետք է ավելանա բնական ռեսուրսների մշակումից ստացվող հարստությունը: Շնորհիվ դրան մենք կարող ենք ապրել երկու անգամ ավելի լավ և ծախսել երկու անգամ քիչ:

Վերլուծության ելությունը կայանում է նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և տնտեսման առավել արդյունավետ տարբերակների որոնումը:

Նյութական ռեսուրսների վերլուծության հիմնական փուլերն են.

1. նյութական պաշարների օգտագործման արդյունավետության գնահատումը,
2. նյութական պաշարների օգտագործման արդյունավետության աղդեցության գնահատումը նյութական ծախսերի մեծության վրա,
3. կազմակերպության նյութական պաշարներով ապահովվածության վերլուծություն,
4. նյութատեխնիկական պաշարների ծախսման նորմաների հիմնավորվածության վերլուծություն,
5. նյութական ռեսուրսների օպտիմալ պահանջի հիմնավորումը:

Նյութական պաշարների օգտագործման և նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության վերլուծության խնդիրներն են.

ա) նյութատեխնիկական մատակարարումների պլանի, նրանց իրագործվելիության և արտադրանքի արտադրության ծավալի վրա ազդեցության գնահատումը,

բ) նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի գնահատումը,

գ) նյութական ռեսուրսների տնտեսման ներարտադրական ռեսուրսների բացահայտումը և գործնական միջոցառումների ձեռնարկումը այդ ռեզերվների օգտագործման գծով:

Վերլուծության համար ինֆորմացիայի աղբյուրներ են հանդիսանում նյութատեխնիկական մատակարարման պլանը, հայտերը, նյութերի և հումքի մատակարարման պայմանագրերը, նյութական պաշարների առկայության և օգտագործման վիճակագրական հաշվետվության ձևերը, նյութատեխնիկական մատակարարման բաժնի օպերատիվ տվյալները, հաշվապահական հաշվետվության վերլուծական տեղեկությունները նյութական պաշարների մուտքերի, ծախսերի ու մնացորդների մասին և այլն:

1.2.2. Նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության վերլուծությունը

Կազմակերպության նյութական պաշարներով ապահովվածության վերլուծության ժամանակ առաջին հերթին ստուգվում են նյութատեխնիկական մատակարարման պլանի որակը: Պլանի ստուգումը սկսում են նորմաների և նորմատիվների ուսումնասիրությամբ, որոնք դրված են կազմակերպության նյութական ռեսուրսների նկատմամբ պահանջի հաշվարկման հիմքում: Այնուհետև ստուգվում է մատակարարման պլանի համապատասխանությունը արտադրանքի արտադրության պահանջներին և անհրաժեշտ պաշարների ձևավերմանը՝ էլենլով նյութերի ծախսման պրոգրեսիվ նորմերից:

Նյութական ռեսուրսների նկատմամբ պահանջը որոշվում է՝ էլենլով արտադրական ծրագրի կատարման համար նյութերի պահանջից, կապիտալ շինարարության, ոչ արտադրական, ոչ արդյունաբերական պահանջներից, ինչպես նաև նյութական պաշարների անհրաժեշտ կուտակման պահանջից:

Նյութական ռեսուրսների գծով պաշարի պահանջը որոշվում է 3 գնահատմամբ.

1. բնեղեն արտահայտությամբ չափված, որն անհրաժեշտ է պահեստների տարողունակության հետ համեմատման և այլ նպատակների համար,

2. արժեքային արտահայտությամբ, որի նպատակն է շրջանառու միջոցներում նյութական ռեսուրսների գծով պահանջը ցույց տալու համար,

3. օրերով ապահովվածությամբ, որը ցույց է տալիս, թե կազմակերպությունը քանի օրով է ապահովված նյութական ռեսուրսներով, պահանջի այս գնահատումը կատարվում է մատակարարումների գրաֆիկի պլանավորման և այդ գրաֆիկի պլանի կատարման վրա վերահսկողություն իրականացնելու նպատակից ելնելով:

Նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածությունը օրերով հաշվարկվում է հետևյալ կերպ⁵ .

$$\eta_0 = \frac{\eta_{mi}}{\bar{\sigma}_i O_i}$$

որտեղ՝

η_0 -ն հումքի և նյութերի պաշարն է օրերով արտահայտված,

η_{mi} -ն i -երորդ տեսակի նյութական ռեսուրսի պաշարը բնեղեն կամ արժեքային արտահայտությամբ,

$\bar{\sigma}_i O_i$ -ն 1 օրվա i -երորդ տեսակի նյութական ռեսուրսի ծախսը համապատասխանաբար բնեղեն կամ արժեքային արտահայտությամբ:

Միջին օրական նյութերի ծախսը որոշվում է վերլուծվող ժամանակահատվածում ծախսված i -երորդ տեսակի նյութական ռեսուրսի գումարը բաժանելով վերլուծվող ժամանակահատվածի օրերի թվին:

Կազմակերպության անընդհատ աշխատանքի կարևոր պայման է հանդիսանում նյութական ռեսուրսների գծով պահանջի ապահովումը ծածկման աղբյուրներով: Դրանք կարող են լինել արտաքին և ներքին:

Արտաքին աղբյուրներին վերաբերվում են նյութական պաշարները, որոնք ստացվում են մատակարարներից՝ համապատասխան կնքված պայմանագրերի:

Ներքին աղբյուրներին են վերաբերվում հումքի թափոնների կրճատումը, երկրորդական հումքի օգտագործումը, նյութերի և կիսապատրաստուկների սեփական պատրաստումը օժանդակ արտադրամա-

⁵ Г.В.Савицкая. "Анализ хозяйственной деятельности предприятия ". Москва. ИНФРА - М. 2002. стр 161.

սերի կողմից, նյութերի տնտեսումը՝ գիտատեխնիկական առաջընթացի ներդրման միջոցով:

Նյութական պաշարների գծով կուտակման իրական պահանջը դա տարբերությունն է ընդհանուր պահանջի և նրա ներքին աղբյուրներով ծածկման գումարի միջև:

Վերլուծության պրոցեսում անհրաժեշտ է նաև ստուգել նյութական պաշարների պահանջի ապահովվածությունը նրանց մատակարարման պայմանագրերով և փաստացի դրանց կատարումը:

Նյութական ռեսուրսների պահանջի ապահովումը, ապահովվածությունը նրանց մատակարարման պայմանագրերով որոշվում է հետևյալ ցուցանիշների միջոցով.

1. պայմանագրերի պլանով ապահովվածության գործակից՝

$K_{ապ.պլ.}$

$$K_{ապ.պլ.} = \frac{\text{կնքված պայմանագրերի գումարը}}{\text{պլանային պահանջ}}$$

2. պայմանագրերի փաստացի ապահովվածության գործակից՝

$K_{ապ.ֆ.}$

$$K_{ապ.ֆ.} = \frac{\text{Փաստացի մատակարարված նյութերի արժեք}}{\text{պլանային պահանջ}}$$

Վերը նշված գործակիցների վերլուծությունը կատարվում է յուրաքանչյուր տեսակի նյութի գծով:

Ստորև բերված 1.10 աղյուսակից նկատում ենք, որ «Ա» նյութի գծով պահանջի պլանը լրիվ ապահովված չէ պայմանագրերով և ներքին ծածկման աղբյուրներով:

Նյութական ռեսուրսների պահանջի ապահովվածությունը մատակարարման պայմանագրերով և դրանց փաստացի կատարումը.

Աղյուսակ 1.10

Նյութի տեսակը	պլանային պահանջը (տոննա)	պահանջի ծածկման աղբյուրները (տոննա)		կնքված պայմանագրերով (տոննա)	Նյութական ռեսուրսների պահանջի ապահովվածությունը պայմանագրերով (%)	փաստացի մատակարարված նյութերի քանակը (տոննա)	պայմանագրերի կատարման թվադրույթը (%)
		ներքին	արտաքին				
	1	2	3	4	5=4:3×100	6	7=6.4×100
«Ա» ն ալյւն	4 800	50	4 750	4 520	95,1	4 290	94,9

Պայմանագրերի պլանով ապահովվածության գործակիցը կլինի.

$$K_{\text{ապ.Փ}} = \frac{4520}{4750} = 0.951$$

Սակայն դրույթունը ավելի վատթար է, քանի որ պլանով նախատեսված մատակարարումների պայմանագրերը փաստացի թերակատարվել են 5,08 %-ով (100-4290/4520 (100)), որի հետևանքով պահանջի բավարարումը արտաքին աղբյուրներով թերակատարվել է 9,7%-ով (100-4290/4750 (100)):

Այսպիսով պայմանագրերի փաստացի ապահովվածության գործակիցը կլիսի.

$$K_{\text{ապ.Փ}} = \frac{4290}{4750} = 0.9$$

Դա նշանակում է, որ միայն 90%-ով է բավարարված «Ա» տեսակի նյութի գծով պահանջը:

Ստուգվում է նաև մատակարարումներից ստացված նյութերի որակը, նրանց համապատասխանությունը ստանդարտներին, տեխնիկական պահանջներին և պայմանագրի պայմաններին, իսկ դրանց խախտման դեպքում ներկայացվում են պահանջներ մատակարարներին, կիրառվում են տույժեր և տուգանքներ: Հատուկ ուշադրություն է դարձվում նյութերի այն մատակարարումների ստուգումների վրա, որոնք տրամադրված են կազմակերպությանը պետական պատվերով:

Մեծ նշանակություն է տրվում պլանի կատարմանը ըստ նյութերի մատակարարումների ժամկետների, ռիթմիկության:

Մատակարարումների ժամկետների խախտումը բերում է նրան, որ թերակատարվում է արտադրության և արտադրանքի իրացման պլանը: Մատակարարումների ռիթմիկության, համաչափության գնահատման համար օգտագործում են համաչափության գործակիցը, վարիացիայի գործակիցը, որոնց հաշվարկման մեթոդիկան կբերվի առանձին:

Հատուկ ուշադրություն է դարձվում հումքի և նյութերի պահեստային պաշարների դրության վրա: Տարբերում են ընթացիկ, պահեստային, տրանսպորտային, նախապատրաստական, տեխնոլոգիական պաշարներ, որոնց հաշվարկումն էլ ընկած է տվյալ ժամանակաշրջանում այս կամ այն նյութի տեսակի ընդհանուր պահանջի հաշվարկման հիմքում:

Ընթացիկ պաշարի մեծությունը կախված է մատակարարման ինտերվալից, այսինքն մի մատակարարումից մինչև մյուսը ընկած օրերի քանակից և i -երորդ նյութի միջին օրական ծախսից:

$$\eta_{\text{ընթ}} = \rho_{\text{օր}} \times \sigma_{\text{օր}}$$

որտեղ՝

Զօր-ն օրերի քանակն է,

Ծօր-ը՝ i -երորդ նյութի միջին օրական ծախսը:

Վերլուծության ընթացքում ստուգվում է հումքի և նյութերի կարևոր տեսակների պաշարների համապատասխանությունը փաստացի և նորմատիվայինի միջև: Այդ նպատակով բնեղեն արտահայտությամբ նյութերի փաստացի առկայության և նրանց միջին օրական ծախսման տվյալների հիման վրա հաշվարկվում է նյութերի փաստացի ապահովածությունը օրերով և համեմատվում է այն նորմատիվայինի հետ: Վերլուծության համար տվյալներ բերված են աղյուսակ 1.11-ում:

Նյութական ռեսուրսների պաշարի դրության վերլուծություն.

Աղյուսակ 1.11

նյութեր	միջին օրական ծախսը (տոննա)	փաստացի պաշար		պաշար – օրերի թիվը ըստ նորմայի		առավելագույն նորմայից շեղվածությունը	
		տոննա	օրեր	առավելագույն	նվազագույն	օրեր	տոննա
«Ա»	20	260	13	16	14	3	60

Փաստորեն տվյալ կազմակերպությունը ապահովված չի եղել տվյալ ժամանակաշրջանում նյութական պաշարներով: Նյութական պաշարներով փաստացի ապահովվածության շեղումը առավելագույն նորմայով սահմանվածից՝ ըստ պաշար-օրերի՝ 3օր, բնեղեն չափման՝ 60 տոննա, կարող է պայմանավորված լինել հիմնականում երկու գործոնով՝ ծախսման նորմաների փոփոխմամբ, որը մեր օրինակում կայուն է, և պաշար-օրերի թվի ոչ ճիշտ հաշվարկման դեպքում: Իսկ պաշարներով ապահովված չլինելը անպայմանորեն բացասաբար է անդրադառնում կազմակերպության արտադրության և թողարկման ծավալների վրա, հետևաբար և շահույթի մեծության վրա:

Վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև հումքի և նյութերի պաշարների դրությունը՝ ավելորդ և ոչ պիտանի նյութերի հայտնաբերման նպատակով: Այդպիսի նյութերը կարելի է բացահայտել պահեստների հաշվառման տվյալներով՝ մուտքերի և ծախսման համեմատման ճանապարհով: Եթե որևէ նյութի գծով չկա ծախս ողջ տարվա և ավելի ժամանակվա ընթացքում, ապա նրանց վերագրում են չօգտագործվող խմբին և հաշվառում են լրիվ արժեքը:

Վերլուծության վերջում որոշվում է յուրաքանչյուր տեսակի արտադրանքի արտադրության ծավալի աճը (նվազումը)՝ կապված հետևյալ գործոններով.

1. հումքի և նյութերի փոխանցվող մնացորդների փոփոխմամբ՝ S_u ,
2. հումքի և նյութերի մթերման քանակի փոփոխմամբ՝ U_p ,

3. գերալանային թափոնների փոփոխմամբ՝ θ , որը պայմանավորված է հումքի և նյութերի ցածր որակի, նյութերի փոխարինման և այլ փաստերի հետ,

4. արտադրանի միավորի գծով հումքի և նյութերի տեսակարար ծախսի փոփոխմամբ՝ $S\theta$:

Հարկ է նշել, որ արտադրանքի ինքնարժեքի մեջ նյութական ծախսերի տեսակարար կշիռը որոշվում է հետևյալ կերպ.

$$U_{S\theta} = \frac{L\theta}{h}$$

որտեղ՝

$U_{S\theta}$ -ն 1 դրամ արտադրանքին ընկնող նյութական ծախսերն են,

$L\theta$ - ն՝ լրիվ նյութական ծախսերի գումարը,

h - ը՝ արտադրանքի ինքնարժեքը:

Այս ցուցանիշի աճը գնահատվում է որպես բացասական երևույթ, իսկ նվազելը՝ դրական:

Վերը նշված գործոնների (M , $U\theta$, θ , $S\theta$) ազդեցության չափերը թողարկվող արտադրանքի ծավալի վրա կարելի է որոշել շղթայական տեղադրումների եղանակով կամ բացարձակ տարբերությունների եղանակով՝ օգտվելով հետևյալ բանաձևից⁶.

$$U_i = \frac{U_{pi} + \Delta U_i - \theta_i}{\Delta S_i}$$

Վերլուծության համար տվյալներ բերված են Աղյուսակներ 1.12 և 1.13-ում:

⁶ Г.В.Савицкая. "Анализ хозяйственной деятельности предприятия ". Москва. ИНФРА - М. 2002. стр.165.

Նյութերի օգտագործման վերլուծությունը «С» տեսակի արտադրության գծով

Աղյուսակ 1.12

Գործոններ	Հաշվարկման մեթոդը	Գործոնների ազդեցության հաշվարկը	ΔԱ
Մթերված նյութերի ծավալը	$(U_{\text{թփ}} - U_{\text{թս}}) / S_{\text{Ծ}}$	$\frac{4967 - 4425}{1,5}$	+361,3
փոխանցվող մնացորդների փոփոխությունը	$-(U_{\text{նփ}} - U_{\text{նս}}) / S_{\text{Ծ}}$	$\frac{-(-3 - 5)}{1,5}$	+5,4
նյութերի թափոնների փոփոխությունը	$-(\text{Թ}_{\text{նփ}} - \text{Թ}_{\text{նս}}) / S_{\text{Ծ}}$	$\frac{-(304,4 - 215,5)}{1,5}$	-5,9
միավոր արտադրանքին ընկնող ծախսի փոփոխությունը	$\frac{-(S_{\text{Ծ}} \cdot -S_{\text{ԿԱ}}) \times \text{Ա} \cdot}{S_{\text{ԾԱԼ}}}$	$\frac{-(1,44 - 1,5) \times 3240}{1,5}$	+129,6
ընդամենը			+437

Գործոնների ազդեցության վերլուծությունը շղթայական տեղադրումների եղանակով:

$$U_{\text{ս}} = \frac{4425 - 5 - 215,5}{1,5} = 2803 \quad U_{\text{սարժ2}} = \frac{4967 + 3 - 215,5}{1,5} = 3169,7$$

$$U_{\text{սարժ1}} = \frac{4967 - 5 - 215,5}{1,5} = 3164,3 \quad U_{\text{սարժ2}} = \frac{4967 + 3 - 215,5}{1,5} = 3169,7$$

Արտադրանքի արտադրության ծավալի ընդհանուր փոփոխությունը կազմել է.

$$\Delta U_{\text{փ}} = 3240 - 2803 = +437 \text{ հատ}$$

այդ թվում ի հաշիվ՝

- նյութերի մթերման ծավալի փոփոխության.

$$\Delta U_{\text{թփ}} = 3164,3 - 2803 = +361,3 \text{ հատ}$$

- նյութերի փոխանցվող մնացորդների փոփոխության.

$$\Delta U_{\text{տն}} = 3169,7 - 3164,3 = +5,4 \text{ հատ}$$

- նյութերի թափոնների փոփոխության.

$$\Delta U_{\text{տծ}} = 3110,4 - 3169,7 = -59,3 \text{ հատ}$$

- նյութերի տեսակարար ծախսի փոփոխության.

$$\Delta V_{\text{ԹԿԳ}} = 3240 - 3110,4 = +129,6 \text{ հատ}$$

Գործոնների ազդեցության վերլուծությունը բացարձակ տարբերությունների եղանակով

Աղյուսակ 1.13

Գործոններ	Չափարկման մեթոդը	Գործոնների ազդեցության հաշվարկը	ΔԱ
Մթերված նյութերի ծավալը	$(U_{\text{թ,տ}} - U_{\text{թ,ա}}) / S_{\text{Ծ}}$	$\frac{4967 - 4425}{1,5}$	+361,3
փոխանցվող մնացորդների փոփոխությունը	$-(U_{\text{մ,տ}} - U_{\text{մ,ա}}) / S_{\text{Ծ}}$	$\frac{-(-3 - 5)}{1,5}$	+5,4
նյութերի թափոնների փոփոխությունը	$-(\text{Թ}_{\text{ն,տ}} - \text{Թ}_{\text{ն,ա}}) / S_{\text{Ծ}}$	$\frac{-(304,4 - 215,5)}{1,5}$	-5,9
միավոր արտադրանքին ընկնող ծախսի փոփոխությունը	$\frac{-(S_{\text{Ծ,տ}} - S_{\text{Ծ,ա}}) \times \text{Ա} - S_{\text{Ծ,ա}} \times \text{Ա}}{S_{\text{Ծ,ա}}}$	$\frac{-(1,44 - 1,5) \times 3240}{1,5}$	+129,6
ընդամենը			+437

Այսպիսով «С» տեսակի արտադրանքի արտադրության պլանը գերակատարվել է հիմնականում ի հաշիվ մթերված հումքի և նյութերի ավելի արդյունավետ օգտագործման և հատկապես՝ մթերված նյութերի ծավալների մեծացման: Իսկ նյութերի գերպլանային թափոնները բացասաբար են անդրադարձել թողարկվող արտադրանքի ծավալի վրա, որի հետևանքով թողարկման ծավալը կրճատվել է 59,3 հատով:

Ընդհանրապես յուրաքանչյուր կազմակերպություն պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի միավոր արտադրանքի արտադրության վրա հումքի ծախսերի փոքրացման վրա: Դրան կարելի է հասնել արտադրության կառուցվածքի պարզեցման ճանապարհով, արտադրության տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործմամբ, ավելի որակով նյութերի մթերմամբ և դրանց տեղափոխման ու պահպանման ընթացքում կորուստների փոքրացման, նվազեցման ճանապարհով, ինչպես նաև թույլ չտալ խոտան արտադրանք, մինչև նվազագույնի հասցնել թափոնների ծավալը, բարձրացնել աշխատողների իրակավորման մակարդակը և այլն:

Նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կազմակերպության նյութերով ապահովվածության գնահատման խնդիրների լուծումը հանդիսանում է լոգիստիկայի խնդիրը: Այսինքն այդ վերլուծության տվյալների հիման վրա կատարվում է մատակարարների ընտրությունը, հայտերի կազմումը, մատակարարվող ռեսուրսների օպտիմալ ծավալների ընտրությունը, պաշարների օպտիմալ չափերի մշակումը և այլն:

1.2.3. Արտադրական և Նյութատեխնիկական մատակարարման ծրագրերի համապատասխանության գնահատումը

Նյութատեխնիկական մատակարարումների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել նյութատեխնիկական մատակարարումների համապատասխանությունը արտադրական ծրագրերին, պետք է ուսումնասիրել նաև մատակարարումների համաչափությունը, բացահայտել մատակարարումների պլանով սահմանված համաչափության, ռիթմիկության շեղումը փաստացիից: Պետք է բացահայտել նաև այդ շեղման պատճառները, և թե դրանցից յուրաքանչյուրը ինչ ազդեցություն է թողել կազմակերպության նյութական պաշարներով ապահովվածության վրա, ուստի և արտադրանքի թողարկման ծավալի վրա:

Հուլիսի և նյութերի ոչ ռիթմիկ մատակարարումների հետևանքով պարապուրդի են մատնվում սարքավորումները, տեղի է ունենում աշխատանքային ժամանակի կորուստ, առաջանում է անհրաժեշտություն արտաժամյա աշխատանքի: Ոչ աշխատողների մեղքով պարապուրդների ժամանակ նրանք վարձատրվում են, արտաժամյա աշխատանքները նույնպես վճարվում են: Այդ ամենը բարձրացնում է թողարկվող արտադրանքի ինքնարժեքը և համապատասխան իջեցնում է շահույթի գումարը: Նյութական ռեսուրսների մատակարարումների գրաֆիկի խախտումների հետևանքներից մեկն էլ հանդիսանում է ապահովված չլինելը պաշարներով:

Նյութական պաշարներով անապահովվածությունը որոշվում է միջին օրական նյութերի ծախսը բազմապատկելով անապահովվածության օրերով:

$$\Delta \mathcal{N}_{\text{ապ}} = \Delta \mathcal{N}_{\text{ապ.օր}} \times \mathcal{C}_{1\text{օր}}$$

որտեղ՝

$\Delta \mathcal{N}_{\text{ապ.օր}}$ -ն կազմակերպության նյութական պաշարներով անապահովվածության մեծությունն է,

$\mathcal{C}_{1\text{օր}}$ -ն անապահովվածության օրերի քանակն է,

$\mathcal{C}_{1\text{օր}}$ -ն՝ *i* տեսակի նյութի միջին օրական ծախսը:

Կազմակերպության հումքով և նյութերով ապահովվածության վերլուծության ժամանակ տրվում է արտադրանքի կորուստի քանակային (արժեքային) գնահատականը, որը պայմանավորված է հետևյալ պատճառներով.

- նյութերի թերամատակարարումները,
- նյութերի վատ որակը,

- նյութերի գների փոփոխությունը.

- նյութերի մատակարարումների գրաֆիկների խախտումների հետևանքով պարապուրդները:

Ենթադրենք նյութական ռեսուրսների մատակարարումների պլանը 1 940 000 դրամ է: Փաստացի մատակարարումներից ստացվել է 1 660 000 դրամի նյութեր: Նյութերի ծախսման նորման 1 դրամ արտադրանքի վրա նախատեսվել է 0,6 դրամ:

Արտադրության ծավալի կրճատումը թերամատակարարումների հետևանքով կազմել է.

$$\Delta N_{\text{թ.վ.}} = \frac{1660000 - 1940000}{0,6} = 467 000 \text{ դրամ}$$

Հումքի և նյութերի ցածր որակի պատճառով թափոնների քանակը ավելացել է: Որպեսզի որոշենք արտադրանքի կորուստը ի հաշիվ հումքի և նյութերի ցածր որակի, պետք է գերպլանային թափոնները բաժանել նյութական ռեսուրսների օգտագործման նորմայի վրա: Փաստացի թողարկման ծավալի պայմաններում հումքի թափոնները նորմայի սահմաններում ենթադրենք պետք է կազմեր 24 400 դրամ: Եթե փաստացի թափոնները կազմել են 33 400 դրամ, ապա գերպլանային թափոնները կկազմեն 9 000 դրամ (33 400 - 24 400): Հումքի և նյութերի ծախսման նորման, նշվել է վերևում, կազմում է 0,6 դրամ 1 դրամ արտադրանքի դիմաց: Այսպիսով արտադրանքի կորուստը ի հաշիվ գերպլանային թափոնների կկազմի 15 000 դրամ (9 000 / 0,6 = 15 000):

Նյութերի գնի բարձրացման դեպքում աճում է միավոր արտադրանքի ինքնարժեքը, և այդ դեպքում կազմակերպությունը կարող է ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

- ավելացնել արտադրության ծավալը և փոխհատուցել փոփոխուն ծախսերի մեծացումը ի հաշիվ հաստատուն ծախսերի տեսակարար փոքրացմանը,

- փոփոխել արտադրության կառուցվածքը,

- հնարվոր է նաև նյութերի նոր, ավելի էժան շուկաների փնտրումը:

Նյութական ռեսուրսների մատակարարումների ռիթմիկությունը, համաչափությունը կարևոր գործոն է հանդիսանում կազմակերպության նյութական պաշարներով ապահովվածության վերլուծության համար: Այնքանով, որքանով նյութական ռեսուրսների մատակարարումները ըստ ժամկետների թերակատարվում են, այլ հավասար պայմաններում այդ նույն ժամանակով էլ կազմակերպությունը ապահովված չի լինում նյութական միջոցներով: Իսկ դա իր հետ բերում է միայն բացասական հետևանքներ: Ուստի վերլուծության խնդիրներից է գնահատել մատա-

կարարումների ռիթմիկության պլանը, բացահայտել մատակարարումների համաչափության խախտման պատճառները:

Նյութերի մատակարարումների գնահատման համար օգտագործվում են հետևյալ ցուցանիշները.

1. մատակարարումների փաստացի ծավալի միջին քառակուսային շեղումը մատակարարման միջին ծավալից՝ արտահայտված օրերով,

2. մատակարարումների անհամաչափության գործակիցը,

3. վարիացիայի գործակիցը:

Մատակարարումների ռիթմիկությունը կամ համաչափությունը դա պլանով նախատեսված մատակարարումներին հավասարաչափ, համաչափ փաստացի կատարումն է:

Վերը նշված գործակիցներով մատակարարումների գնահատման համար տվյալներ բերված են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 1.14

տասնորյակներ	Նյութերի մատակարարումները (դրամներով)		Մատակարարումների տեսակարար կշիռները (%)		Պլանի կատարման գործակիցը	Մատակարարումները ըստ պլանային տեսակարար կշիռների (%)
	պլան	փաստացի	պլան	փաստացի		
I	32 000	30 240	33,3	30	0,945	30,0
II	32 000	34 272	33,3	34	1,071	33,33
III	32 000	36 288	33,4	36	1,134	33,34
ընդ.	96 000	100 800	100	100	1,05	96,67

Համաչափության գործակիցը որոշվում է ըստ տասնորյակների փաստացի մատակարարումների տեսակարար կշիռները, բայց ոչ ավելին քան իրենց պլանային մակարդակը, գումարելով իրար:

$$K_{\text{համաչափ}} = 30 + 33,33 + 33,34 = 96,67 \%$$

Վարիացիայի գործակիցը ($K_{\text{վար.}}$) որոշվում է հետևյալ կերպ.

$$K_{\text{վար.}} = \sqrt{\frac{(\sum \Delta a)^2}{K}} : B$$

որտեղ՝

Δa -ն տվյալ ժամանակաշրջանում մատակարարումների ծավալի շեղվածությունն է պլանայինից,

K -ն վերլուծվող ժամանակաշրջանների թիվն է,

B -ն տվյալ ժամանակաշրջանում նյութերի մատակարարումների փաստացի միջին ծավալն է:

$$K_{\text{վար.}} = \sqrt{\frac{(30,24 - 32)^2 + (34,3 - 32)^2 + (36,3 - 32)^2}{3}} : 32 = 0,094$$

Մեր օրինակում վարիացիայի գործակիցը կազմում է 0,094: Դա նշանակում է, որ նյութերի մատակարարումները ըստ տասնօրյակների շեղվել են գրաֆիկից միջինը 9,4%-ով:

Անհամաչափության գործակիցը նույնպես կարևոր բնութագրիչ ցուցանիշ է, որը ցույց է տալիս, թե ինչքանով են ռիթմիկ մատակարարումները, ինչքանով են մատակարարումները համապատասխանում պլանով նախատեսվածին:

Անհամաչափության գործակիցը հաշվարկվում է որպես դրական և բացասական շեղումների գումար:

Հարկ է նշել, որ որքան կազմակերպության մատակարարումները քիչ համաչափ են, այնքան մեծ է անհամաչափության գործակիցը: Մեր օրինակում այն հավասար է.

$$K_{\text{անհամաչափ}} = 0,055 + 0,071 + 0,134 = 0,26$$

Եթե հայտնի են պլանով նախատեսված մատակարարումների թերակատարման կամ գերակատարման պատճառները, ապա կարելի է հաշվարկել նրանց ազդեցությունը անհամաչափության ցուցանիշի վրա: Դրա համար տվյալ պատճառով մատակարարման ծավալի հարաբերական փոփոխությունը հարաբերվում է անհամաչափության ընդհանուր ցուցանիշին և բազմապատկվում 100-ով:

Ենթադրենք առաջին տասնօրյակում նյութերի մատակարարումները թերակատարվել են 960 դրամով կամ 3%-ով մատակարարի մեղքով, և 800 դրամով կամ 2,5%-ով էլ կազմակերպության ծանր ֆինանսական դրության պատճառով: Այտեղից առաջին գործոնի ազդեցության չափը անհամաչափության ընդհանուր ցուցանիշի վրա կազմում է 11,5% ($0,03 / 0,26 (100)$), իսկ երկրորդի ազդեցության չափը անհամաչափության ցուցանիշի փոփոխության վրա կկազմի 9,6% ($0,025 / 0,26(100)$):

Անհամաչափության ներքին պատճառներն են ծանր ֆինանսական դրությունը, կազմակերպչական ցածր մակարդակը, ինչպես նաև պլանավորման ցածր մակարդակը, արտաքին պատճառներից են մատակարարների կողմից նյութերի թերակատարումները և այլն:

Վերլուծության վերջին փուլում մշակվում են կոնկրետ միջոցառումներ ոչ համաչափ մատակարարումների պատճառների վերացման համար:

1.2.4. Նյութական պաշարներով ապահովվածության արդյունավետության բարձրացման պահուստների վերլուծություն

Վերլուծվող կազմակերպության կոնկրետ արտադրատնտեսական պայմանների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ կազմակերպությունը ունի հնարավորություններ իջեցնելու նյութերի օգտագործման և նյութական ծախսումների նորմերը, որոնք չեն օգտագործվել հաշվետու տարում: Մասնավորապես կան բոլոր պայմանները արտադրական պրոցես ներդնելու կազմակերպչատեխնիկական միջոցառումներ և նոր տեխնիկայի հետ կապված միջոցառումներ, որոնք կապահովեն հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի և ի վերջո նյութական ռեսուրսների ծախսի նորմի կրճատում:

Աղյուսակ 1.15-ում բերված են փնտրելի պաշարների հաշվարկների ալգորիթմներ և ընդհանրացված արդյունքներ:

Այս աղյուսակում թվարկված միջոցառումները արտացոլում են միայն նյութերի տնտեսման պոտենցիալ հնարավորությունները: Տնտեսման իրական պաշար է հանդիսանում նշված միջոցառումների պրակտիկ իրականացումը: Այսպես, նշված իննովացիոն միջոցառումների անցկանացումը կապանավորի հումքի և նյութերի տնտեսում 12,4 մլն. դրամով, վառելիքի և էներգիայի տնտեսում 40,7 մլն. դրամով: Նյութական ռեսուրսների ընդհանուր ռեզերվը կազմակերպությունում կազմում է 53,1 մլն. դրամ (12,4+40,7): Նյութական ռեսուրսների տնտեսման բացահայտված պոտենցիալ հնարավորությունները պետք է հաշվի առնվեն կազմակերպչատեխնիկական միջոցառումների մշակման և նոր տեխնիկայի ներդրման ժամանակ, ինչպես նաև համապատասխան ցուցանիշների գալիք տարվա համար պլանավորման ժամանակ:

Նյութական ծախսումների իջեցման ռեզերվների ընդհանրացում

Միջոցառման (ռեզերվի) անվանումը	Հաշվարկի ալգորիթմ	Ելքային ինֆորմացիա	Նյութական ծախսումների իջեցման ռեզերվների հաշվարկ	Տնտեսման ռեզերվների չափերը (մ.դր.)		
				հումքի և նյութերի	վառելիքի և էներգիայի	
1	2	3	4	5	6	
1. Արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացում						
1.1.Նոր պրոդրեսիվ տեխնոլոգիայի ներդրում. արտադրական պրոցեսի մեխանիզացում և ավտոմատացում						
1.1.1. -7 -1308 012A ձուլվածքի կոնկրետ ձուլումից անցում ճնշման տակ ձուլմանը	$\Delta S = (S_0 - S_n) \times Q_n \times V_n$, որտեղ ΔS -ը նյութի տնտեսումն է (մ.դր.), S_0 և S_n նյութերի ծախսի նորման մինչև միջոցառման ներդրումը և հետո, Q_n նյութի զինը, V_n արտադրանքի քողակում բնական արտադրության միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ	4,56 և 3,51 ձուլվածքի քաշը միջոցառման ներդրումից առաջ և հետո (կգ), 945 4 ձուլվածքի 1 տոննայի արժեքը (հազ.դր), 2100 ձուլվածքի քողարկում միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ (հատ)	(3.51-4.56) * 945*2100	-2.1		
1.1.2. Կատարված է 1240-0 մոդելի կտրոզ հաստոցի խողովակների մոդեռնացում մետաղի կրճատման նպատակով			0,288 և 0,228 մետաղի ծախսի նորմեր միջոցառման ներդրումից առաջ և հետո, 325 1 տոննա մետաղի արժեքը (հազ.դր), 144150 դետալների քողարկում միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ (հատ)	(0.228-0.288)*325*144150	-2.8	

1	2	3	4	5	6
<p>1.1.3. Լեռդնել 240-5137՝ տեսակի դետալի ծնկային լիսեռի վերամշակման գործընթացի փոփոխված տեխնոլոգիա</p> <p>1.2. Արտադրանքների կառուցվածքների և տեխնոլոգիական բնութագրերի փոփոխություն</p>	<p>$\Delta L = A \times \Delta P \times W \times K_{\text{կ}} \times C$. որտեղ W-ն դա հաստոցի էլեկտրական շարժիչների զուսարային հզորությունն է (կՎտ). Δa-ն գործընթացի ժամանակի փոփոխությունը (րոպե). $K_{\text{կ}}$-ն էլեկտրական շարժիչների օգտագործման գործակիցը հզորությամբ. C-ը 1 կՎտ-ժամ էներգիայի արժեքը (դրամ)</p>	<p>2.43 և 2.082 գծողնքացի ժամանակի նորմեր միջոցառման ներդրումից առաջ և հետո (րոպե). 61.6 էլեկտրոշարժիչի զուսարային հզորություն (կՎտ). 120 ՌԿԼ-ժամ էներգիայի արժեք (դրամ). 171540 արտադրանքի թողարկում միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ (հատ). 0.8 հզորությամբ էլեկտրաշարժիչի օգտագործման գործակից</p>	<p>$(2.082-2.43) \times 171540 \times 0.8 \times 60 \times 61.6 \times 120$</p>		<p>-5,9</p>
<p>1.2.1. Լեռդնել առաջնային փոփոխված կառուցվածքով շարժիչի հիմքի արտադրություն (դետալ 240-1001015):</p>	<p>$\Delta L = (L_2 - L_1) \times V_2 \times \Delta P$</p>	<p>3.75 և 3.28 նախապատրաստուկի կշիռը համապատասխանաբար միջոցառման ներդրումից առաջ և հետո (կգ). 500 1 տրնապրոպանի զիւր (րազ դր). 8550 դետալների թողարկում միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ (հատ)</p>	<p>$(3.28-3.75) \times 500 \times 8550$</p>	<p>-2</p>	
<p>1.3. Լոր տեխնիկայի ներդրման գծով այլ միջոցառումներ</p>				<p>-3</p>	<p>6</p>
<p>Ընդամենը արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացման հաշվին</p>				<p>-9,9</p>	<p>-11,9</p>

1	2	3	4	5	6
2. Արտադրության և աշխատանքի կազմակերպման բարելավում					
2.1. Արտադրության ապահովման և կազմակերպման բարելավում					
2.1.1. Ղիգելների փորձարկման կրճատում		0.23 1 ղիգելի վրա M10՝ 2 լուրի ծախսի կրճատում (կգ), 300 1 տոննա լուրի գինը (հազ. դրամ), 15 000 ղիգելների թողարկում միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ (հատ), 1.78 1 ղիգելի վրա վաճառիցի ծախսի կրճատում (կգ/ժամ), 700 1 տոննա վաճառիցի գինը (հազ. դրամ)	1.78 × 15 000 × 700		- 18.7
2.1.2. Հանգստի և տոնական օրերին միացնել բեռագույնը	$\Delta M = W \times K_{\text{գր}} \times C \times 24 \times 52$, Եշանակումներ տես 1.1.3.-ում	60 պրեստիան սարքավորումների գումարային հզորություն (կ-կ), 0.9 հզորությամբ սարքավորումների օգտագործման գործակից, 120 1 կ-կ-ով ժամ (ներդրման արժեք (դրամ)), 24 օրվա ժամերի քանակը, 52 հանգստի և տոնական օրերի քանակը	60 × 0.9 × 120 × 24 × 52		- 8.1
2.2. Այլ արտադրանքի կազմակերպման մատակարարման և նյութական ռեսուրսների օգտագործման բարելավում					
2.2.1. Իրեցնել -25 կանաչների ծախսը, որը օգտագործվում է փակվածների խտացման համար, ի հաշիվ դեմադրանքի լաիսների պատրաստման ալի-լի ռազմիցել եղանակի և բարձր որակի	$\Delta S = (L_m - L_h) \times q_n \times U_{\text{Յ}}$	0.006 և 0.004 ներքի ծախսի նորմեր համապատասխանաբար միջոցառման ներդրումից առաջ և հետո (կգ), 1 250 1 տոննա ներքի գինը (հազ. դրամ), 186 000 փակվածների թողարկում միջոցառման ներդրման պահից մինչև տարվա վերջ (հատ)	$(0.004 - 0.006) \times 1 250 \times 186 000$	- 0.5	
2.3. Այլ միջոցառումներ, որոնք բարձրացնում են արտադրանքի որակը և աշխատանքի կազմակերպման մակարդակը				- 1	- 2
Ընդամենը ի հաշիվ արտադրության և աշխատանքի որակի բարձրացման				- 2.5	- 28.8
Ընդամենը ի հաշիվ ինտելեկտուալ միջոցառումների				- 12.4	- 40.7

1.3 Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծությունը

1.3.1 Հիմնական միջոցների առկայության, կազմի, շարժի և կառուցվածքի վերլուծություն

Կազմակերպության արտադրական պնտեցիայի գնահատման համար հիմնական տեղեկատվական աղբյուրներն են հանդիսանում հիմնական միջոցների առկայության, մաշվածքի և շարժի մասին տեղեկությունները:

Հիմնական ֆոնդերի շարժի վերլուծությունը կատարվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝ հիմնական միջոցների մուտքի նորացման ելքի, լուծարայնության, ընդլայնումների գործակիցների: Հիմնական ֆոնդերի տեխնիկական վիճակը բնութագրվում է մաշվածության, փոխարինման և պիտանելիության գործակիցներով:

Ցուցանիշների հաշվարկման համար տվյալները արտացոլված են աղյուսակ 1.16.

Հիմնական միջոցների շարժի և առկայության հաշվեկշիռ

Աղյուսակ 1.16

Ցուցանիշներ	Առկայությունը տարվա սկզբին	Մուտք	Ելք	Առկայությունը տարվա վերջին
Հիմնական միջոցների սկզբնական գնահատմանը	14930.0	8451.0	146.0	2323 5
այդ թվում նոր	-	6258.0	-	6258.0
Հիմնական միջոցների մաշվածքը	4549	-	-	4884
Հիմնական միջոցների մնացորդային արժեք	10381	-	-	18351

Հիմնական միջոցների շարժի վերլուծության համար կիրառվում են հետևյալ բանաձևերը⁷.

1. $K_{\text{մուտք}}$ - մուտքի գործակից

$K_{\text{մուտք}}$ = նոր մուտք եղած հիմնական միջոցների սկզբնական արժեքը / հիմնական միջոցների սկզբնական արժեքը տարեվերջին

$$K_{\text{մուտք}} = 8451/23235 \cdot 100 = 36,37\%$$

2. $K_{\text{լ}}$ - նորացման գործակից

K_u = նոր հիմնական միջոցների արժեքը / հիմնական միջոցների սկզբնական արժեքը տարեվերջին

$$K_u = 6258/23235 \cdot 100 = 26,93\%$$

3. $K_{ելք}$ - ելքի գործակից

$K_{ելք}$ = ելքագրված հիմնական միջոցների արժեքը / հիմնական միջոցների արժեքը տարեվերջին

$$K_{ելք} = 146/14930 \cdot 100 = 0,98\%$$

4. K_l - լուծարքայության գործակից

K_l = լուծարված հիմնական միջոցների արժեքը / հիմնական միջոցների արժեքը տարեվերջին

Չափվետու տարում հիմնական միջոցների մուտքագրված մասը կազմում է 36,37%, որից նորը 26,93%:

Չիմնական միջոցների նորացման նպատակն է փոքրացնել սարքավորումների պահպանման և շահագործման հանձնելու ծախսերը, սարքավորումների պարապուրդների փոքրացումը, արտադրողականության բարձրացումը, արտադրանքի որակի բարձրացումը:

5. $K_{փոխ}$ - փոխարինման գործակից

$K_{փոխ}$ = ելքագրված հիմնական միջոցների արժեքը մաշվածքի հետևանքով / նոր մուտքագրված հիմնական միջոցների արժեքը

$$K_{փոխ} = 146/8451 \cdot 100 = 1,73\%$$

այսինքն՝ մուտքագրված հիմնական միջոցների բաժինը, որն ուղղված է ելքագրվածին փոխարինելու համար, կազմում է փոքր մեծություն հավասար 1,73%-ի:

6. $K_{ընդ}$ - մեքենաների պարկի և սարքավորումների ընդլայնման գործակից

$$K_{ընդ} = 1 - K_{փոխ}$$

Չիմնական ֆոնդերի վիճակի վերլուծության համար հաշվարկենք հետևյալ ցուցանիշները:

7. $K_{պիտ}$ - պիտանելիության գործակից

$K_{պիտ}$ = հիմնական ֆոնդերի մնացորդային արժեքը / հիմնական ֆոնդերի սկզբնական արժեքը:

8. $K_{մաշվ}$ - մաշվածության գործակից

⁷ Любушин Н.П., Лещева В.Б. "Анализ финансового-экономической деятельности предприятия". Москва. Юнити. 2000. стр.246-248

$K_{մաշվ.}$ = հիմնական ֆոնդերի մաշվածության հաշվարկված գումար / հիմնական ֆոնդերի սկզբնական արժեքը:

$K_{մաշվ.}$ և $K_{պիտան.}$ հաշվարկվում են ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ.

$$K_{սկզբ.մաշվ.} = 4549/14930 * 100 = 30,4\%$$

$$K_{վերջ.մաշվ.} = 4884/23235 * 100 = 21\%$$

Մաշվածության գործակիցի փոքրացումը, մեր օրինակում կախված է նորացման գործակիցի բարձր մակարդակից :

Պիտանելության գործակիցը կարելի է հաշվարկել նաև որպես 1-ի(100%) և մաշվածության գործակիցի տարբերություն.

$$K_{պիտ} = 1 - K_{մաշվ}$$

$$K_{սկզբ.մաշվ.} = 100 - 30,4 = 69,6\%$$

$$K_{վերջ.մաշվ.} = 100 - 21 = 79\%$$

1.3.2 Հիմնական միջոցների արդյունավետ օգտագործման ցուցանիշները

Ֆոնդահատույցի գործունային վերլուծությունը

Հիմնական միջոցներն իրենցից ներկայացնում են արտադրական ռեսուրսների մի տեսակ: Նրանց օգտագործման արդյունավետության գնահատականը հիմնաված է ընդհանուր ռեսուրսների և տեխնոլոգիայի օգտագործման վրա, որը նախատեսում է հատույցի և տարողության ցուցանիշների հաշվարկ և վերլուծություն:

Հատույցի ցուցանիշը բնութագրվում է պատրաստի արտադրանքի էլքագրումը ` 1դրամ արժողությամբ ռեսուրսի դիմաց:

Տարողության ցուցանիշը բնութագրում է ռեսուրսների ծախսը և խնայողությունը 1 դրամ թողարկված արտադրանքի դիմաց: Ռեսուրսների խնայողություն ասելով հասկանում ենք առկա ռեսուրսների ծավալը հաշվետու ժամանակաշրջանում ըստ հաշվեկշիռի, իսկ ծախսերի տակ հասկանում ենք ռեսուրսների ընթացիկ ծախսերը, մասնակիորեն հիմնական միջոցների ամորտիզացիան:

Հաշվետու ժամանակաշրջանում ռեսուրսների պաշարները հասանելիք ծավալի հետ համեմատելուց պետք է հաշվարկել պաշարների միջին մեծությունը այդ նույն ժամանակաշրջանի համար:

Հիմնական միջոցների արդյունավետ օգտագործման ընդհանրացված ընտրազորումը տալիս է շահութաբերության ցուցանիշը (շահույթի կապը հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքի հետ):

Հաշվարկվում է նաև հիմնական ֆոնդերի հարաբերական տևտեսումը⁸.

$$S_{\text{ՀԱՖ}} = \text{ՀԱՖ}_1 - \text{ՀԱՖ}_0 * \text{ԻԹԱ}$$

որտեղ՝

ՀԱՖ₀ և ՀԱՖ₁ - ը համապատասխանաբար հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքն է բազիսային և հաշվետու տարում,

ԻԹԱ - ն արտադրանքի թողարկման ծավալի ինդեքսն է:

Ֆոնդերի միջին տարեկան արժեքի հաշվարկի ժամանակ հաշվի է առնում ոչ միայն սեփական, այլ նաև վարձակալած հիմնական միջոցները և չեն ներառվում ռեզերվները ու վարձակալության տված միջոցները, ինչպես նաև այն ֆոնդերը, որոնք ժամանակորապես չեն գործում:

Հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության առավել ընդհանրացված ցուցանիշ է ֆոնդաշահութաբերությունը: Նրա մակարդակը կախված է ոչ միայն ֆոնդահատույցից, նաև արտադրանքի շահութաբերությունից: Այդ ցուցանիշների փոխադարձ կախվածությունը կարելի է ցույց տալ հետևյալ ձևով.

$$R_{\text{ՀԱՖ}} = \text{Շ/ՀԱՖ} = \text{ԹԱ/ՀԱՖ} * \text{Շ/ԹԱ} = \mathfrak{F}_{\text{հատ}} * R_{\text{ԹԱ}}$$

$$R_{\text{ՀԱՖ}} = \text{Շ/ՀԱՖ} = \text{ԻԱ/ՀԱՖ} * \text{Շ/ԻԱ} = \mathfrak{F}_{\text{հատ}} * R_{\text{ԻԱ}}$$

որտեղ՝

R_{ՀԱՖ}-ն հիմնական արտադրական ֆոնդերի շահութաբերությունն է, Շ-ն արտադրանքի իրացումից շահույթն է,

ՀԱՖ-ն հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքն է,

ԹԱ-ն և ԻԱ-ն համապատասխանաբար արտադրված և իրացված արտադրանքի արժեքն է,

Ֆ_{հատ}-ն ֆոնդահատույցն է,


R_{ԹԱ}, R_{ԻԱ}-ն թողարկված և իրացված արտադրանքի շահութաբերությունն է:

Հիմնական ֆոնդերի շահութաբերության վրա ազդող գործոնները ցույց տանք սխեմա 2-ում.

⁸ Г.В.Савицкая. "Анализ хозяйственной деятельности предприятия ". Москва. ИНФРА - М. 2002. стр.146-148.

Հիմնական արտադրական ֆոնդերի շահութաբերությունը

Մխենա 2



Մխենա 2-ի տվյալները ցույց են տալիս, որ հիմնական արտադրական ֆոնդերի շահութաբերության փաստացին պլանայինից ցածր է 2,94%-ով : Որպեսզի որոշենք, ինչպես է այն փոփոխվել ի հաշիվ ֆոնդահատույցի և արտադրանքի շահութաբերության, կարելի է օգտվել տարբերությունների եղանակից:

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծությունը

Աղյուսակ 1.17

	Ցուցանիշներ	Պլան	Փաստացի	Ենդում
1.	Արտադրանքի բողոքվածան ծավալ(ԹԱ) մլն դրամ	96100	100900	+4800
2.	Արտադրանքի իրացումից շահույթ (Շ) մլն դրամ	18000	19396	+1396
3.	Միջին տարեկան արժեք հիմնական արտադրական ֆոնդերի (ՀԱՖ)	12815	14100	+1285
	ակտիվ մասի (ՀԱՖ ^ա)	7780	8500	+720
	միավոր արքցավորման (Գ)	119.7	126.86	+7.16
4.	Ֆոնդերի ակտիվ մասի տեսակարար կշիռը (ՏԿ ^ա)	0.607	0.603	-0.004
5.	Ֆոնդաշահութաբերություն (R _{ՀԱՖ})%	140.5	137.6	-2.94
6.	Արտադրանքի շահութաբերություն(R _{ՓԱ})%	18.73	19.22	+0.49
7.	Ֆոնդաշահույթ, որա հիմնական արտադրական ֆոնդերի(Ֆ _{հատույ}) ակտիվ մասի (ՀԱՖ ^ա)	7.50	7.16	-0.34
8.	Տեխնոլոգիական սարքավորումների միջին տարեկան քանակ (Ք)	6.5	6.7	+2
9.	9.Սարքավորման կողմից տարեկան աշխատանքի ժամանակը (T) հզ. ժամ	250.250	236.644	-13.6
	այդ թվում միավոր սարքավորման ժամերը (T _ս)	3850	3532	-318
	հերթափոխը (Հ)	600	570.4	-29.6
	օրերը (Օ)	260	255	-5.0
10.	Սարքավորման աշխատանքի հերթափոխության գործակից (K _{հոտ})	2.30	2.24	-0.06
11.	Գերթափոխի միջին տևողությունը (S _ո) ժամ	6.416	6.19	-0.226
12.	1 մեքենա-ժամում արտադրանքի արտադրողականություն (ԺԱ) մլն դրամ	0.384	0.43	+0.046

Աղյուսակ 1.17 տվյալների հիման վրա նախ որոշենք ֆոնդերի ակտիվ մասի տեսակարար կշիռը $S^{ա} = (ՀԱՖ^{ա} : ՀԱՖ)$, որն ըստ պլանի կկազմի $(7780 : 12815) = 0.007$; իսկ փաստացի՝ $(8500 : 14100) = 0.603$:

Ֆոնդաշահութաբերությունը՝ $R_{ՀԱՖ} = Շ / ՀԱՖ * 100$, որն ըստ պլանի կկազմի $(18000 : 12815) * 100 = 140,5\%$, իսկ փաստացին՝ $(19396 : 14100) * 100 = 137,6\%$:

Արտադրանքի շահութաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $R_{Փ} = Շ / Ա * 100$, որը պլանայինի համար կլինի $(18000 : 96100) * 100 = 18,73\%$, իսկ փաստացիի համար $(19396 : 100900) * 100 = 19,22\%$:

Գերթափոխի միջին տևողությունը՝ $S_{ո} = T_{ս} / Հ$, որն ըստ պլանի կկազմի $3850 : 600 = 6,4$; իսկ փաստացին՝ $3532 : 570,4 = 6,2$:

Մեկ մեքենա-ժամում արտադրանքի արտադրողականությունը հաշվարկում ենք հետևյալ բանաձևով. $ԺԱ = ԹԱ / T$, որը պլանայինի հա-

Մար կկազմի 96100:250250=0,384, իսկ փաստացին՝ 100900:236,644=0,43:

Ֆոնդաշահութաբերության փոփոխությունը ի հաշիվ ա) հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդահատույցի.

$$\Delta R_{\text{հս}} = \Delta \Phi_{\text{հատ}} * R_{\text{թվ.տայլ.}} = (7,16 - 7,50) * 18,73 = -6,37\%$$

բ) արտադրանքի թողարկման շահութաբերության

$$\Delta R_{\text{հս}} = \Delta R_{\text{թս}} * \Delta \Phi_{\text{հատ.փ.}} = (19,22 - 18,73) * 7,16 = +3,51\%:$$

Ի մակարդակի գործոնները, որոնք ազդել են հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդահատույցի վրա, հանդիսանում են ամբողջ հիմնական արտադրական ֆոնդերի մեջ ֆոնդերի ակտիվ մասի փոփոխության և ֆոնդերի ակտիվ մասի ֆոնդահատույցի փոփոխությունը.

$$\Phi_{\text{հատ}} = S_4^w * \Phi_{\text{հատ}}^w$$

Այդուսակ 1.17-ի տվյալներով որոշենք գործոնների ազդեցության չափը տարբերությունների եղանակով.

$$\Delta \Phi_{\text{հատ(սփ)}} = (S_4^w_{\text{փ.}} - S_4^w_{\text{սլ.}}) * \Phi_{\text{հատ}}^w_{\text{սլ.}} = (0,603 - 0,607) * 12,3 = -0,05 \text{ դրամ}$$

$$\Delta \Phi_{\text{հատ}}^w = (\Phi_{\text{հատ}}^w_{\text{փաստ.}} - \Phi^w_{\text{սլ.}}) * S_4^w_{\text{փաստ.}} = (11,9 - 12,3) * 0,603 = -0,24 \text{ դրամ}$$

Ընդամենը՝ -0,05 - (-0,24) = -0,3 դրամ:

Ֆոնդերի ակտիվ մասի ֆոնդահատույցը անմիջականորեն կախված է նրա կառուցվածքից, աշխատաժամանակից և միջին ժամային արտադրողականությունից: Վերլուծության համար կիրառենք հաջորդ գործոնային մոդելը.

$$\Phi_{\text{հատ}}^w = \rho * T_m * \sigma U / \lambda U \Phi^w$$

Սարքավորումների հատույցի գործոնային մոդելը կարելի է ընդլայնել եթե միավոր սարքավորման աշխատաժամանակը ներկայացվի աշխատած օրերի քանակով (O), հերթափոխության գործակիցով (Z) և հերթափոխության միջին տևողությամբ (Sh):

Տեխնոլոգիական սարքավորումների միջին տարեկան արժեքը հավասար է տեխնոլոգիական սարքավորումների քանակի (P) և համադրելի գներով նրա միավորի միջին արժեքին:

$$\Phi_{\text{հատ}}^w = \rho * O * K_n * S_n * \sigma U / \rho * q = O * K_n * S_n * \sigma U / q$$

Սարքավորումների ֆոնդահատույցի աճը, ի հաշիվ գործոնների ազդեցության, կարելի է կատարել շղթայական տեղադրման եղանակով:

$$\mathfrak{S}_{\text{հատ}}^{\text{w}} = O_{\text{ւլ}} * K_{\text{հ.ւլ}} * S_{\text{հ.ւլ}} * \sigma U_{\text{ւլ}} / Q_{\text{ւլ}} = 210 * 2,30 * 6,4 * 0,38 / 120 = 12,3$$

Որպեսզի որոշենք առաջին պայմանական ցուցանիշի ազդեցության չափը ֆոնդահատույցի վրա, պետք է միավոր սարքավորման միջին տարեկան արժեքի պլանային փոխարեն վերցնենք փաստացի, որը այլ հավասար պայմաններում կարող է փոփոխվել միայն ի հաշիվ կառուցվածքի փոփոխության.

$$\mathfrak{S}'_{\text{հատ}}^{\text{w}} = O_{\text{ւլ}} * K_{\text{հ.ւլ}} * S_{\text{հ.ւլ}} * \sigma U_{\text{ւլ}} / Q_{\text{փ}} = 260 * 2,30 * 6,4 * 0,38 / 126,86 = 11,464$$

Սարքավորման կառուցվածքի փոփոխության արդյունքում ֆոնդահատույցի մակարդակն իջել է 0,836 դրամով (11,464-12,3)

Յետո որոշում ենք, թե ինչպիսին կլինի ֆոնդահատույցը սարքավորման կառուցվածքի փաստացի և աշխատած օրերի փաստացիի դեպքում, երբ մնացած տվյալները պլանային են:

$$\mathfrak{S}''_{\text{հատ}}^{\text{w}} = O_{\text{փ}} * K_{\text{հ.ւլ}} * S_{\text{հ.ւլ}} * \sigma U_{\text{ւլ}} / Q_{\text{փ}} = 255 * 2,30 * 6,4 * 0,38 / 126,86 = 11,2436$$

Հատույցի իջեցումը 0,2204 դրամով (11,2436-11,464) հանդիսանում է սարքավորումների ամբողջօրյա պարապլորդների հետևանք:

Հատույցի երրորդ պայմանական ցուցանիշը հաշվարկվում է փաստացի կառուցվածքի, փաստացի աշխատած օրերի, փաստացի հերթափոխության գործակցի միջոցով, իսկ մնացածը վերցվում է պլանային.

$$\mathfrak{S}'''_{\text{հատ}}^{\text{w}} = O_{\text{փ}} * K_{\text{հ.փ}} * S_{\text{հ.ւլ}} * \sigma U_{\text{ւլ}} / Q_{\text{փ}} = 255 * 2,24 * 6,4 * 0,38 / 126,86 = 10,9503$$

Ի հաշիվ սարքավորման աշխատանքի հերթափոխության գործակցի իջեցման իջել է հատույցը 0,2933 դրամով (10,9503-11,2436):

Հատույցի չորրորդ պայմանական ցուցանիշի հաշվարկման ժամանակ պլանային մնում է միջին ժամային արտադրադոկանությունը: Կապված այն բանի հետ, որ սարքավորման հերթապոխի փաստացի նուղությունը պլանային համեմատությամբ իջել է 0,2 ժամով, ապա ֆոնդահատույցն իջել է 0,3422 դրամով (10,6081-10,9503):

Սարքավորման փաստացի արտադրողականության դեպքում ֆոնդահատույցը կկազմի .

$$\mathfrak{S}_{\text{հատ.փաստ}}^{\text{w}} = O_{\text{փ}} * K_{\text{հ.փ}} * S_{\text{հ.ւլ}} * \sigma U_{\text{ւլ}} / Q_{\text{փ}} = 255 * 2,24 * 6,2 * 0,43 / 126,86 = 11,9$$

որը 1,2919 (11,9-10,6081) դրամով մեծ է, քան պլանայինը:

Որպեսզի որոշենք, թե այդ գոծոններն ինչպես են ազդել հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդահատույցի վրա, ստացված արդյունքները պետք է բազմապատկել ամբողջ հիմնական արտադրական ֆոնդերի մեջ ակտիվ մասի փաստացի տեսակարար կշռով.

$$\Delta S_{\text{հատու}} = \Delta S_{\text{հատու}}^w * S^w_{\text{փաստ}}$$

Հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդահատույցի փոփոխությունը ի հաշիվ .

- սարքավորման կառուցվածքի	-0,836 * 0,603=-0,504
- ամբողջօրյա պարապուրդների	-0,2204 * 0,603=-0,133
- հերթափոխության գործակցի	-0,2933 * 0,603=-0,177
- միջհերթափոխային պարապուրդների	-0,3422 * 0,603=-0,206
- միջին ժամային արտադրողականության	+1,2919*0,603=+0,778
- ընդամենը	-0,4 -0,241

Երրորդ կարգի գործոնների ազդեցությունը ֆոնդահատույցի ակտիվ մասի մակարդակի վրա հաշվելու համար, պետք է իմանալ, թե ինչպես է փոխվել արտադրանքի արտադրության ծավալը՝ կապված սարքավորման փոխարինման կամ նրա մոդեռնիզացիայի հետ: Դրա համար պետք է համեմատել արտադրանքի թողարկումը նոր և հին սարքավորումներով նրան փոխարինելուց հետո ընկած ժամանակահատվածում և ստացված արդյունքները բաժանել տեխնոլոգիական սարքավորման միջին տարեկան փաստացի արժեքի վրա.

$$\Delta S_{\text{հատ. ն}}^w = (\sum T_i * \sigma_{U_i} - \sum T_i * \sigma_{U_{(i,n)}}): \text{ՀԱՏ}^w_{\text{փ}}$$

որտեղ՝

T_i - n - ռդ սարքավորման աշխատաժամանակն է շահագործման պահից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջը

σ_{U_i} , $\sigma_{U_{(i,n)}}$, համապատասխանաբար 1 մեքենա - ժամում արտադրանքի արտադրողականությունն է մինչև i - ռդ սարքավորման փոխարինումը և փոխարինումից հետո:

Նման ձևով որոշվում է արտադրանքի արտադրության ծավալի և ֆոնդահատույցի փոփոխությունն ի հաշիվ գիտատեխնիկական միջոցառման ներդրման.

$$\Delta S_{\text{հատ. գիտ}}^w = (\sum T_i * \sigma_{U_i} - \sum T_i * \sigma_{U_{(i,n)}}): \text{ՀԱՏ}^w_{\text{փ}}$$

Ֆոնդահատույցի փոփոխությունն ի հաշիվ սոցիալական գործոնների աշխատողների որակավորման մակարդակի բարձրացում, աշխատանքի և հանգստի պայմանների բարելավում և այլն) որոշվում է հաշվեմնացորդի մեթոդով.

$$\Delta S_{\text{հատ. սոց}}^w = \Delta S_{\text{հատ. ժԱ}}^w - \Delta S_{\text{հատ. ն}}^w * \Delta S_{\text{հատ. գիտ}}^w$$


Վերը նշված գործոնների ազդեցությունը հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդահատույցի մակարդակի վրա հաշվարկվում է սարքավորումների հատույցի աճի բազմապատկման ճանապարհով ի հաշիվ i - րդ գործոնի ազդեցության՝ ֆոնդերի ակտիվ մասի փաստացի տեսակարար կշռի վրա: Որպեսզի իմանանք, թե ինչպես կփոփոխվի արտադրանքի արտադրության ծավալը, անհրաժեշտ է հիմնական արտադրական ֆոնդերի ֆոնդահատույցի փոփոխությունը, ի հաշիվ բոլոր գործոնների բազմապատկել հիմնական արտադրական ֆոնդերի փաստացի միջին տարեկան մնացորդով, իսկ հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքի փոփոխությունը՝ նրանց պլանային ֆոնդահատույցի մակարդակով:

Հաշվարկի արդյունքները ցույց են տալիս, որ ֆոնդահատույցի և արտադրանքի արտադրության ծավալի վրա բացասական ազդեցությունը պայմանավորված էր ֆոնդերի ակտիվ մասի նվազեցումով, թանկ սարքավորումների մասի ավելացումով, տեխնիկայի գերպլանային ամբողջօրյա և միջհերթափոխային պարապուրդներով: Հետագա վերլուծության մեջ պետք է որոշել պարապուրդների պատճառները և հայտնաբերել ռեզերվներ դրանց կանխման համար:

Այսպիսով ֆոնդահատույցի գործոնային սխեման կարելի է ցույց տալ հետևյալ ձևով.

Ֆունդահատույցի գործունային սխեմա

Մխենա 3



Արդյունավետության մյուս ցուցանիշը ֆունդատարությունն է, որը որոշվում է հիմնական միջոցների միջին արժեքի հարաբերությամբ թողարկվող արտադրանքի քանակի վրա .

$$F_m = S / N$$

որտեղ՝

F_m - ն ֆունդատարությունն է


S - ը հիմնական միջոցների միջին արժեքն է

N - ը թողարկվող արտադրանքի ծախսն է

Հատուկ նշանակություն ունի ֆունդատարության հաշվարկը և գնահատումը դինամիկայում: Ֆունդատարության փոփոխությունը ցույց է տալիս հիմնական միջոցների արժեքի աճը կամ նվազումը 1 դրամ պատրաստի արտադրանքի հաշվով:

1.3.3. Տեխնոլոգիական սարքավորումների օգտագործման վերլուծությունը

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշների վերլուծությունից հետո ավելի մանրամասն ուսումնասիրվում է առանձին տեսակի մեքենաների և սարքավորումների օգտագործման աստիճանը: Սարքավորման աշխատանքի վերլուծությունը հիմնվում է մի շարք ցուցանիշների համակարգի վրա, որոնք արտահայտում են նրա քանակը, աշխատաժամանակը և հզորությունը: Սարքավորումների մեջ մտնում են բոլոր այն սարքավորումները, որոնք կան հաշվեկշռում անկախ նրանից, թե որտեղ են գտնվում արտադրամասում, թե պահեստում: Օգտագործվող սարքավորումների վերլուծության համար նրանց խմբավորում են՝ կախված օգտագործման աստիճանից, որը կարելի է ցույց տալ հետևյալ սխեմայով.



Առկա սարքավորումներին վերաբերվում են ինչպես տեղակայված, այնպես էլ չտեղակայված սարքավորումները:

Տեղակայված սարքավորումներն են հաստոցները, ագրեգատները ու մեքենաները, որոնք տրված են շահագործման և ամրակցված են աշխատանքային տեղամասին, ինչպես նաև սարքավորումները, որոնք գտնվում են վերանորոգման մեջ կամ մոդեռնացվում են :

Չտեղակայված սարքավորումները այն սարքավորումներն են, որոնք ենթակա են դուրս գրման բարոյական կամ ֆիզիկական մաշվածքի հետևանքով կամ ենթակա են տեղակայման:

Արտադրության մեջ սարքավորումների ներգրավման աստիճանի բնութագրման համար հաշվարկվում են հետևյալ ցուցանիշները⁹.

1. շահագործման հանձնված սարքավորումների մասը=գործող սարքավորում / առկա սարքավորում

2. փաստացի աշխատող սարքավորումների մասը=գործող սարքավորում / տեղակայված սարքավորում

3. առկա հավաքականի օգտագործման աստիճանը=գործող սարքավորում / առկա սարքավորում

Եթե ցուցանիշների արժեքը մոտ է 1-ի, ապա դա նշանակում է, որ սարքավորումներն օգտագործվում են բեռնավորման բարձր աստիճանով, իսկ արտադրական ծրագիրը համապատասխանում է արտադրական հզորությանը:

Սակայն առկա հավաքականի օգտագործման աստիճանի փաստացի բարձրացումը չի նշանակում սարքավորումների հատույցի միանշանակ աճ: Նյութական արտադրության ոլորտում կարևոր նշանակություն ունի ամբողջօրյա և ներհերթափոխային պարապուրդների կրճատման խնդիրը:

Սարքավորումների էքստենսիվ բեռնվածության աստիճանը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

1. ժամանակի օրացուցային ֆոնդ՝ սարքավորման մաքսիմում հնարավոր աշխատաժամանակ (օրացուցային օրերի քանակը հաշվետու ժամանակաշրջանում բազմապատկվում է 24 ժամով և միավոր տեղակայված սարքավորման քանակով):

2. ժամանակի ռեժիմային ֆոնդ (տեղակայված միավոր սարքավորումների քանակը բազմապատկվում է հաշվետու ժամանակաշրջանի աշխատանքային օրերով և ամենօրյա աշխատանքի ժամերի քանակով՝ հաշվի առնելով հերթափոխության գործակիցը)

3. պլանային ֆոն՝ սարքավորման աշխատաժամանակն ըստ պլանի: Ռեժիմայինից տարբերվում է սարքավորման՝ պլանային վերանորոգման և մոդեռնիզացիայի մեջ զտնվելու ժամանակով:

4. աշխատած ժամանակի փաստացի ֆոնդ

Վերոհիշյալը կարելի է ցույց տալ աղյուսակով.

⁹ Любушин Н.П., Лещева В.Б. "Анализ финансового-экономической деятельности предприятия". Москва. Юнити. 2000. стр.253-255

Սարքավորման օգտագործման աշխատաժամանակի ֆոնոլոգ բնութագրող ցուցանիշները

Աղյուսակ 1.18

Ժամանակի ֆոնոլի ցուցանիշ	Պայմանական նշանը	Չափարկի բանաձևը	Ծանոթություն
Օրացուցային	$T_{\text{օր}}$	$T_{\text{օր}} = T_{\text{օր}} \cdot 24$ ժամ	$T_{\text{օր օր}}$ -հաշվետու ժամանակաշրջանում օրացուցային օրերի թիվը
Ռեժիմային	$T_{\text{ր}}$	$T_{\text{օ}} = T_{\text{աշ հոբք}} - t_{\text{հոբք}}$	$T_{\text{աշ հոբք}}$ -աշխատանքային հերթափոխերի քանակը $t_{\text{հոբք}}$ - հերթափոխության տևողությունը
Պլանային	$T_{\text{պ}}$	$T_{\text{պ}} = T_{\text{ր}} - T_{\text{սզ պ}}$	$T_{\text{սզ պ}}$ - պլանային պարապուրդ
Փաստացի	$T_{\text{փաստ}}$	$T_{\text{փաստ}} = T_{\text{պ}} - T_{\text{սրտ պ}}$	$T_{\text{սրտ պ}}$ - արտապլանային պարապուրդ

Սարքավորման աշխատաժամանակի օգտագործման բնութագրման համար կիրառվում են հետևյալ ցուցանիշները.

1. ժամանակի օրացուցային ֆոնոլի օգտագործման գործակից.

$$K_{\text{օ.ֆ}} = T_{\text{փ}} / T_{\text{օ}}$$

2. ժամանակի ռեժիմային ֆոնոլի օգտագործման գործակից.

$$K_{\text{ռ.ֆ}} = T_{\text{փ}} / T_{\text{ռ}}$$

3. ժամանակի պլանային ֆոնոլի օգտագործման գործակից.

$$K_{\text{պ.ֆ}} = T_{\text{փ}} / T_{\text{պ}}$$

4. օրացուցային ֆոնոլում պարապուրդների տեսակարար կշիռը

$$S_{\text{պր}} = \eta_{\text{ր}} / T_{\text{օ}}$$

որտեղ՝

$T_{\text{փ}}$, $T_{\text{պ}}$, $T_{\text{ռ}}$, $T_{\text{օ}}$ - համապատասխանաբար սարքավորումների աշխատաժամանակի փաստացի, պլանային, ռեժիմային և օրացուցային ֆոնոլերն են

$\eta_{\text{ր}}$ - պարապուրդներն են

$K_{\text{օ.ֆ}}$ - օրացուցային ֆոնոլի գործակից

$K_{\text{ռ.ֆ}}$ - ռեժիմային ֆոնոլի գործակից

$K_{\text{պ.ֆ}}$ - պլանային ֆոնոլի գործակից

$S_{\text{պր}}$ - պարապուրդների տեսակարար կշիռը

Սարքավորումների ինտենսիվ բեռնվածությունը ենթադրում է արտադրանքի թողարկում միավոր ժամանակում միջինը 1 մեքենայով: Սարքավորման աշխատանքի ինտենսիվության ցուցանիշը հանդիսանում ինտենսիվ բեռնվածության գործակիցը.

$$K_{\text{խտ}} = \sigma_{\text{փ}} / \sigma_{\text{ալ}}$$

որտեղ՝

$K_{\text{խտ}}$ - ը ինտենսիվ բեռնվածության գործակիցն է:

$\sigma_{\text{փ}}$, $\sigma_{\text{ալ}}$ - համապատասխանաբար փաստացի և պլանային միջին ժամային արտադրողականությունն է:

Սարքավորումների օգտագործումը բնութագրող համընդհանուր ցուցանիշ է ինտեգրալային բեռնվածության գործակիցը, որն իրենից ներկայացնում է սարքավորումների էքստենսիվ և ինտենսիվ բեռնվածության գործակիցների արտադրյալ:

$$IK = K_{\text{ալ.ֆ.}} * K_{\text{խտ.}}$$

Վերլուծության ժամանակ ուսումնասիրվում է այս ցուցանիշների դիսամիկան, պլանի կատարումը և փոփոխության պատճառները:

Միատեսակ սարքավորումների խմբի համար հաշվարկվում է արտադրանքի արտադրության ծավալի փոփոխությունը ի հաշիվ նրա քանակի, էքստենսիվ և ինտենսիվ օգտագործման

$$\theta_{\text{Ա}_i} = \rho_i * O_i * K_{\text{նի}} * S_{\text{նի}} * \sigma_{\text{Ա}_i}$$

որտեղ՝

ρ_i - ն i-րդ սարքավորման քանակն է

O_i - միավոր սարքավորման աշխատած օրերի քանակն է

$K_{\text{նի}}$ - սարքավորման աշխատանքի հերթափոխության գործակիցն է

$S_{\text{նի}}$ - հերթափոխի միջին տևողությունն է

$\sigma_{\text{Ա}_i}$ -1 մեքենա - ժամում արտադրանքի արտադրողականությունը սարքավորման:

Այս գործոնների ազդեցության հաշվարկը կատարվում է շղթայական տեղադրումների կամ բացարձակ տարբերությունների եղանակներով:

Չհաշվարկը կատարենք շղթայական տեղադրումների եղանակով՝ էլենելով աղյուսակ 1.7 տվյալներից.

$$\theta_{\text{Ա}_{\text{ալ}}} = \rho_{\text{ալ}} * O_{\text{ալ}} * K_{\text{ն.ալ}} * S_{\text{ն.ալ}} * \sigma_{\text{Ա}_{\text{ալ}}} = 65 * 260 * 2.307 * 6.416 * 0.384 = 96100 \text{ մլն դրամ}$$

$$\theta_{\text{Ա}'} = K_{\text{փաստ}} * O_{\text{ալ}} * K_{\text{ն.ալ}} * S_{\text{ն.ալ}} * \sigma_{\text{Ա}_{\text{ալ}}} = 61 * 260 * 2.307 * 6.416 * 0.384 = 99013 \text{ մլն դրամ}$$

$$\theta_{\text{Ա}''} = K_{\text{փաստ}} * O_{\text{փաստ}} * K_{\text{ն.ալ}} * S_{\text{ն.ալ}} * \sigma_{\text{Ա}_{\text{ալ}}} = 61 * 255 * 2.307 * 6.416 * 0.384 = 97109 \text{ մլն դրամ}$$

$$\mathcal{R}U''' = K_{\text{փաստ}} * O_{\text{փաստ}} * K_{\text{հ.փաստ}} * S_{\text{հ.պլ}} * \mathcal{D}U_{\text{պլ}} = 61 * 255 * 2.24 * 6.416 * 0.384 = 94288$$

մլն դրամ

$$\mathcal{R}U'''' = K_{\text{փաստ}} * O_{\text{փաստ}} * K_{\text{հ.փաստ}} * S_{\text{հ.փաստ}} * \mathcal{D}U_{\text{պլ}} =$$

$$61 * 255 * 2.24 * 6.19 * 0.384 = 90967 \text{ մլն դրամ}$$

$$\mathcal{R}U_{\text{փաստ}} = K_{\text{փաստ}} * O_{\text{փաստ}} * K_{\text{հ.փաստ}} * S_{\text{հ.փաստ}} * \mathcal{D}U_{\text{պլ}} =$$

$$61 * 255 * 2.24 * 6.19 * 0.43 = 100900 \text{ մլն դրամ}$$

$$\Delta \mathcal{R}U_{\text{փ}} = \mathcal{R}U' - \mathcal{R}U_{\text{պլ}} = 99013 - 96100 = +2913 \text{ մլն դր.}$$

$$\Delta \mathcal{R}U_{\text{օ}} = \mathcal{R}U'' - \mathcal{R}U' = 97109 - 99013 = -1904 \text{ մլն դր}$$

$$\Delta \mathcal{R}U_{\text{հ.հ.}} = \mathcal{R}U''' - \mathcal{R}U'' = 94288 - 97109 = -2821 \text{ մլն դր}$$

$$\Delta \mathcal{R}U_{\text{ՏՅ}} = \mathcal{R}U'''' - \mathcal{R}U''' = 90967 - 94288 = -3321 \text{ մլն դր}$$

$$\Delta \mathcal{R}U_{\text{ԺԱ}} = \mathcal{R}U_{\text{փաստ}} - \mathcal{R}U'''' = 100900 - 90967 = +9933 \text{ մլն դր}$$

$$+2913 - 1904 - 2821 - 3321 + 9933 = \mathcal{R}U_{\text{փաստ}} - \mathcal{R}U_{\text{պլ}} = +4800 \text{ մլն դր}$$

Գործուսային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ապրանքային արտադրանքի թողարկման պլանը գերակատարվել է ի հաշիվ սարքավորումների թվաքանակի ավելացման և մեքենա-ժամում արտադրանքի արտադրողականության բարձրացման: Գերապլանային ամբողջությամբ, միջիդրոփային պարապրոյուները և հերթափոխության գործակցի իջեցումը տանում են ապրանքային արտադրանքի ծավալի իջեցման պլանի համեմատությամբ: Սարքավորումների ավելի ամբողջական օգտագործման այս կազմակերպությունում կարող դիտվել որպես արտադրանքի արտադրության ավելացման հնարավոր ռեզերվ:

1.3.4. Արտադրական հզորությունների օգտագործման վերլուծությունը

Կազմակերպության նյութատեխնիկական բազայի մակարդակից, նրա արտադրական պոտենցիալի օգտագործման աստիճանից կախված են տնտեսվարման վերջնական արդյունքները, մասնավորապես արտադրանքի թողարկման ծավալը, ինքնարժեքի մակարդակը, շահութաբերությունը, ֆինանսական դրությունը և այլն:

Եթե կազմակերպության արտադրական հզորությունն օգտագործվում է ոչ բավարար չափով, ապա այն տառնում է մշտական մեծացման, արտադրանքի ինքնարժեքի աճի և որպես հետևանք՝ շահույթի նվազման: Դրա համար վերլուծության պրոցեսում անհրաժեշտ է որոշել, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել կազմակերպության արտադրական հզորությունների հետ և որքան բավարար են դրանք օգտագործվում և ինչպես է այն ազդում ինքնարժեքի վրա, շահույթի վրա, շահութաբերության վրա և այլն:

Կազմակերպության արտադրական հզորության տակ հասկացվում է հնարավոր առավելագույն արտադրանքի թողարկում արտադրական ռեսուրսների իրական ծավալների, ձեռք բերված տեխնիկայի և տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպման պայմաններում: Այն կարող է արտահայտվել մարդ-ժամերով: Մեքենա-ժամերով կամ արտադրանքի թողարկման ծավալով՝ արժեքային կամ բնեղեն արտահայտությամբ: Կազմակերպության արտադրական հզորությունը չի կարող մշտական լինել: Այն փոփոխվում է տեխնիկայի, տեխնոլոգիայի, արտադրության կազմակերպման կատարելագործման և կազմակերպության ստրատեգիայի հետ մեկ տեղ:

Արտադրական հզորության օգտագործման աստիճանը բնութագրում են հետևյալ գործակիցները.

Ընդհանուր գործակից=արտադրանքի արտադրության ծավալ/կազմակերպության միջին տարեկան արտադրական հզորություն:

Ինտենսիվ բեռնվածության գործակից=միջին օրական արտադրանքի թողարկում/միջին օրական արտադրական հզորություն:

Էքստենսիվ բեռնվածության գործակից=աշխատաժամանակի փաստացի կամ պլանային ֆոնդ/աշխատաժամանակի հաշվարկային ֆոնդ:

Ուսումնասիրվում է այս ցուցանիշների դինամիկան, պլանի կատարումը և փոփոխության պատճառները, ինչպիսիք են նորերի ներդրումը, կազմակերպությունների վերակառուցումը, արտադրության տեխնիկական վերասարքավորումը, արտադրական հզորությունների կրճատումը:

Նրա մեծությունը փոփոխող գործոնները կարելի է որոշել արտադրական հզորության վերաբերյալ տվյալների հիման վրա, որն արտահայտվում է բնեղեն և արժեքային արտահայտությամբ համադրելի գներով.

$$M_q = M_{u,q} + M_b + M_v + M_{d,u} + \Delta M_{in} - M_c$$

որտեղ՝

M₄ և M₅₄ - ը համապատասխանաբար ժամանակաշրջանի վերջի և սկզբի արտադրական հզորություններն են,

M_բ- հզորության բարձրացում՝ ի հաշիվ նոր կառուցվող և գործող կազմակերպությունների ընդարձակման,

M_գ- հզորության բարձրացում՝ ի հաշիվ գործող կազմակերպությունների վերակառուցման,

M_{դ.ն.}- հզորության բարձրացում՝ ի հաշիվ կազմակերպատեխնիկական միջոցառումների ներդրման,

ΔM_տ- հզորության փոփոխություն՝ կապված արտադրանքի տեսականու փոփոխության հետ աշխատատարության տարբեր մակարդակներում,

M_ս-հզորության իջեցում՝ կապված մեքենաների, սարքավորումների և այլ ռեսուրսների դուրս գրման:

1.19 աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ հաշվետու տարում կազմակերպության արտադրական հզորությունն ի հաշիվ նոր արտադրամասերի գործարկման, վերակառուցման և նշվաց կազմակերպատեխնիկական միջոցառումների ներդրման բարձրացել է 20%:

Կազմակերպության արտադրական հզորության օգտագործման վերլուծություն

Աղյուսակ 1.19

Ցուցանիշ	Ցուցանիշի մակարդակը		Փոփոխությունը
	անցած տարի	հաշվետու տարի	
Արտադրանքի ծավալը մլն. դր.	95000	101700	6700
Արտադրական հզորությունը մլն. դր.	100000	120000	+20000
Արտադրական հզորության աճը ի հաշիվ ա) նոր արտադրամասերի գործարկման բ) վերակառուցման գ) կազմակերպատեխնիկական միջոցառումների հզորության մակարդակը. %	95	84.7	+15000 +2200 -10.3

Սակայն նրա օգտագործման մակարդակը զգալի չափով փոքրացել է: Արտադրական հզորության պահուստը հաշվետու տարվա փաստացիում կազմել է 15,3% (100%-84.7%):

Հետևաբար, ստեղծված արտադրական պոտենցիալն անբավարար է օգտագործվում: Պատճառներն են՝ ժամանակի գերալանային ծախսերը սարքավորումների վերանորոգման վրա, գերալանային ամբողջությամբ և ներհերթափոխային պարապուրդները, հուլմքի, էլեկտրաէներգիայի արտադրության անբավարար բարձր մակարդակի բացակայության պատճառով:

Ֆոնդերի պասիվ մասի օգտագործման մակարդակի բնութագրման համար հաշվարկվում է արտադրանքի թողարկման ցուցանիշը 1մ²

արտադրական հրապարակում, որը որոշ մակարդակում լրացնում է կազմակերպության արտադրական հզորությունների օգտագործման բնութագրին: Նշված ցուցանիշի մակարդակի բարձրացումը հանգեցնում է արտադրանքի արտադրության աճին և նրա ինքնարժեքի նվազման:

Տվյալներ կազմակերպության արտադրական հրապարակների օգտագործման վերլուծության համար.

Աղյուսակ 1.20

Ցուցանիշներ	Անցած տարի	Չափվեցող տարի	Շեղում
Արտադրանքի արտադրության ծավալ (մլն)	95000	101700	+6700
Արտադրական հրապարակ մ ² , այդ թվում արտադրամասերի հրապարակ մ ²	5500 5000	5900 5414	+400 +414
Արտադրամասերի հրապարակների տեսակարար կշիռը ամբողջի մեջ	0.909	0.917	+0.008
Արտադրանքի թողարկումը 1մ ² -ում (մլն) արտադրական հրապարակում արտադրամասերի հրապարակում	17.27 19	17.24 18.78	-0.03 -0.22

1.20 աղյուսակի տվյալներից հետևում է, որ վերլուծվող կազմակերպության արտադրանքի ծավալը հաշվետու տարում աճել է 6700 մլն դրամով, այդ թվում ի հաշիվ

ա) կազմակերպության արտադրական հրապարակների մեծացման:

$$\Delta \text{ԹԱ} = (5900 - 5500) * 0.909 * 19 = 6909 \text{ մլն}$$

բ) ամբողջ արտադրական հրապարակների մեջ արտադրամասերի տեսակարար կշռի

$$\Delta \text{ԹԱ} = 5900 * (0.917 - 0.909) * 19 = 967 \text{ մլն}$$

գ) 1 մ² արտադրամասում արտադրանքի թողարկման

$$\Delta \text{ԹԱ} = 5900 * 0.917 * (18.78 - 19) = -1176 \text{ մլն}$$

$$6909 + 967 - 1176 = +6700$$

Այս դեպքում կարելի է անել հետևություն, որ կազմակերպությունը ոչ բավարար է օգտագործում ոչ միայն մեքենաներն ու սարքավորումները, այլ նաև արտադրական հրապարակները (ֆոնդերի պասիվ մաս): Արտադրական հզորությունների ոչ բավարար օգտագործումը տանում է արտադրանքի թողարկման ծավալի իջեցման, նրա ինքնարժեքի աճի, ինչպես նաև արտադրանքին բաժին ընկնող հաստատուն ծախսերի մեծացման:

Գլուխ II Արտադրանքի ինքնարժեք վերլուծությունը

Արտադրական կազմակերպությունների գործունեությունը բնութագրող գլխավոր ցուցանիշներից է հանդիսանում արտադրանքի ինքնարժեքը:

Արտադրանքի ինքնարժեքի մակարդակից է կախված կազմակերպության ֆինանսական արդյունքը. այսինքն՝ ինքնարժեքը գնագոյացնող և եկամտագոյացնող հիմնական գործոնն է, ուստի ինքնարժեքի վերլուծությունը թույլ է տալիս, մի կողմից, ռեսուրսների օգտագործման արդյունավետության ընդհանրացնող գնահատական տալ, մյուս կողմից, բացահայտելեկամտի մեծացման և միավոր արտադրանքի գնի իջեցման ռեզերվները:

Արտադրանքի ինքնարժեքի մակարդակից կախված են նաև կազմակերպության ընդլայնված վերարտադրության տեմպերը. այսինքն՝ արտադրանքի ինքնարժեքի իջեցումը նպաստում է շահույթի մեծացմանը (իհարկե՝ կայուն գների պայմաններում), որն էլ իր հերթին հիմք է հանդիսանում կազմակերպության արտադրության մասշտաբների ընդլայնման համար:

Արտադրանքի ինքնարժեքի մակարդակից կախված ցուցանիշը տևտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակն է: Այսինքն արտադրանքի ինքնարժեքը, իրենից ներկայացնելով կազմակերպության կողմից արտադրության համար կատարվող ծախսերի հանրագումար, հիմք է հանդիսանում ծախսերի ու եկամուտների համեմատման համար, այսինքն՝ այդ ինքնածախսածածկման սկզբունքի պահպանման աստիճանը:

Այսպիսով, արտադրանքի ինքնարժեքի վերլուծության բացառիկ կարևոր նշանակությունը պայմանավորված է նրանով, որ այն հնարավորություն է տալիս որոշել կազմակերպության գործունեության վերը նշված ցուցանիշների փոփոխման տենդենցները, ինքնարժեքի գծով պլանի կատարման մակարդակը, որոշել դրա աճի վրա ազդող գործոնների ներգործությունը և սրա հիման վրա տալ կազմակերպության աշխատանքի ինքնարժեքի իջեցման ռեզերվների բացահայտման և այդ հնարավորությունների օգտագործման ուղղությամբ:

Ինքնարժեքի վերլուծությունը կարող է լինել հետադարձ(կամ վերջնական), օպերատիվ, նախնական և կանխատեսողական(կամ հեռանկարային):

Չետադարձ (կամ վերջնական) վերլուծությունը իրականացվում է ծախսերի դինամիկայի և փոփոխման գործոնների վերաբերյալ տեղե-

կույթունների կուտակման նպատակով: Չետադարձ վերլուծության արդյունքները օգտագործվում են արտադրանքի պլանային ինքնարժեքի որոշման, գնային քաղաքականության ձևավորման, կառավարչական որոշումների մշակման համար, որոնք ուղղված են արտադրանքի մրցունակության բարձրացմանը:

Օպերատիվ վերլուծությունը, որը իրականացվում է օրական կամ 1,5, 10 օրվա պարբերությամբ, ուղղված է անարտադրողական ծախսերի և կորուստների ժամանակին բացահայտմանը: Օպերատիվ վերլուծության արդյունքներին օգտագործվում են սահմանափակ ռեսուրսներով ճկուն ու արդյունավետ արտադրություն կազմակերպելու համար:

Արտադրանքի կոնկրետ տեսակի նախնական վերլուծությունն իրականացվում է ապրանքի կենսացիկլի փուլում՝ գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքների իրականացման էտապում:

Չեռանկարային (կամ կանխատեսողական) վերլուծությունը կոչված է գնահատելու ամբողջ արտադրանքի և առանձին արտադրատեսակների գծով ինքնարժեքի հնարավոր բարձրացումը կամ իջեցումը՝ կապված ռեսուրսների շուկայում կանխատեսվող (սպասվող) փոփոխությունների հետ:

Չեռանկարում ընդհանուր ծախսերի փոփոխությունների որոշման համար օգտագործվում է «ծախսերվնծավալվնհասույթ» հարաբերակցության մեթոդը:

Արտադրանքի ինքնարժեքի ուսումնասիրման համար անհրաժեշտ տվյալները ներկայացնենք աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2.1

Արտադրատեսակների քանակը (Q)				Միավոր արտադրատեսակի ինքնարժեքը (հազար դրամ) (C)		Արտադրանքի ինքնարժեքը (իզ դրամ)			Արտադր. շեղումը (+,-)
ալլան		փաստացի		ալլան	փաստացի	ալլան	պայմ.ինքն.	փաստացի	
հատ	%	հատ	%						
545	38.2	473	32.1	55	59	29975	26015	27907	2068
530	37.2	526	35.7	52	56	27560	27352	29456	1896
215	15.1	258	17.5	75	78	16125	19350	20124	3999
135	9.5	215	14.7	84	86	11340	18060	18490	7150
1425	100.0	1472	100.0	59.6	65.2	85000	90777	95977	10977

$$\bar{C}_{\text{ալլ}} = \frac{\sum_{i=1}^4 (Q_{i\text{ալլ}} \cdot C_{i\text{ալլ}})}{\sum_{i=1}^4 Q_{i\text{ալլ}}} = \frac{85000}{1425} = 59,6 \text{ հազ. դրամ}$$

$$\bar{C}_{\Phi} = \frac{\sum_{i=1}^4 (Q_i \Phi \cdot C_i \Phi)}{\sum_{i=1}^4 Q_i \Phi} = \frac{95977}{1472} = 65,2 \text{ հազ. դրամ}$$

$$D = \frac{Q_{\Phi}}{Q_{\text{ալլ}}} = 1,0329824 (\text{կամ } D\% = 103,3\%)$$

2.1. Արտադրանքի ինքնարժեքի վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները

Արտադրանքի ինքնարժեքը իրենից ներկայացնում է կազմակերպության կողմից արտադրանքի արտադրության ու իրացման համար կատարվող ծախսերի հանրագումարը՝ դրամական արտահայտությամբ: Արտադրանքի ինքնարժեքում արտահայտված են արտադրության պրոցեսում օգտագործվող աշխատանքի առարկաների արժեքները (հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի և այլնի արժեքները), կենդանի աշխատանքի արժեքը (աշխատանքի վարձատրություն), կողմնակի կազմակերպությունների արտադրական ծառայությունների արժեքը, հիմնական ֆոնդերի ամորտիզացիան, ինչպես նաև արտադրական պայմանների պահպանման, բարելավման ու կատարելագործման համար կատարվող ծախսերը:

Տարբերում են 3 տեսակի ինքնարժեք.

1. արտադրամասային ինքնարժեք.
2. արտադրական ինքնարժեք.
3. լրիվ ինքնարժեք:

Արտադրամասային ինքնարժեքը ներառում է արտադրամասի ուղղակի ծախսումները: Արտադրական ինքնարժեքը արտադրամասի ինքնարժեքի և ընդհանուր արտադրական ու ընդհանուր տնտեսական բնույթի ծախսերի հանրագումարն է: Լրիվ ինքնարժեքը արտադրական ինքնարժեքի ու առևտրային ծախսերի հանրագումարն է:

Արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը ուղղված է արտադրական պրոցեսում օգտագործվող նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման, արտադրանքի մատակարարման ու իրացման արդյունավետության բարձրացման, հնարավորությունների բացահայտմանը: Արտադրանքի ինքնարժեքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ գնահատել կազմակերպության եկամուտների ծախսերի ու շահութաբերության ցուցանիշների մակարդակը:

Արտադրանքի ինքնարժեքի վերլուծության խնդիրները հետևյալներն են.

- արտադրանքի արտադրության ու շրջանառության ծախսերի պլանի հիմնավորվածության ու լարվածության գնահատում.

- ինքնարժեքի գծով պլանի կատարման աստիճանի ու դինամիկայի ուսումնասիրություն.

- ինքնարժեքն ընդհանրացնող ցուցանիշների ու դրանց փոփոխման վրա ազդող գործոնների վերլուծությունը.

- միավոր արտադրանքի կամ ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի վերլուծությունը.

- համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը.

- ծախսերի կառուցվածքի ու դինամիկայի վերլուծությունը.

- արտադրանքի ինքնարժեքի իջեցման ռեզերվների բացահայտումը:

Ապրանքային արտադրանքի ինքնարժեքի վերլուծության տեղեկատվական աղբյուրներն են՝ ֆինանսական հաշվետվության որոշ տվյալներ, հիմնական և օժանդակ արտադրամասերի ծախսումների սինթետիկ և անալիտիկ հաշվառման տվյալները, առանձին արտադրատեսակների կալկուլյացիաները և այլն:

Ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի կազմը և ըստ հոդվածների դրանց դասակարգումը որոշվում է պետական ստանդարտներով, իսկ հաշվառման մեթոդները որոշում են կազմակերպությունները՝ ինքնուրույն: Արտադրանքին վերագրվող ծախսումների հաշվառման համակարգը: Ծախսումների մասին տեղեկությունների հավաքագրման ու տրամադրմանն ուղղված համակարգը կոչվում է արտադրանքին վերագրվող ծախսումների հաշվառման հա-

մակարգ: Ծախսումների հաշվառման համակարգը կարևորվում է ոչ միայն հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման, այլ նաև կազմակերպության կառավարման օղակների կողմից կառավարչական որոշումների ընդունման տեսակետից:

Արտադրական ծախսումների հաշվառման համակարգը արտահայտվում է դրանց հաշվառման ժամանակ հաշվապահական հաշիվներում ձևակերպվող գործառնությունների սխեմայիմիջոցով: Գործառնությունների սխեման ցույց է տալիս կիրառվող հաշիվները, նրանցում արտացոլվող ծախսումների շարքը և հաշիվների թղթակցությունները: ՀՀ կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվային պլանին համապատասխան՝ արտադրական ծախսումների հաշվառման և դրանց մասին տեղեկությունների ընդհանրացման համար նախատեսված է ակտիվային հաշիվների 8-րդ «Կառավարչական հաշվառման հաշիվներ» դասը: Արտադրության համար կատարված բոլոր ուղղակի արտադրական ծախսումները անմիջականորեն դեբետագրվում են 811 «Հիմնական արտադրություն» և 812 «Օժանդակ արտադրություն» հաշիվներում: 811 «Հիմնական արտադրություն» հաշվի դեբետում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի սկզբում անավարտ արտադրության մնացորդը, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արտադրանքի արտադրության վրա կատարված ուղղակի ծախսումները, ինչպես նաև անուղղակի արտադրական ծախսումները, կրեդիտում՝ թողարկվող արտադրանքի փաստացի ինքնարժեքը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվեկշռային հաշիվ տեղափոխվող անավարտ արտադրության ինքնարժեքը: 812 «Օժանդակ արտադրության» հաշվի հաշվառման կարգը նույնն է:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվող անուղղակի արտադրական ծախսումները նախ արտացոլվում են 813 «Անուղղակի արտադրական ծախսումներ» հաշվի դեբետում, ապա՝ վերագրվում են հիմնական և օժանդակ արտադրությանը:

2.2. Արտադրանքի ինքնարժեքի ծախսերի դասակարգումը ըստ տնտեսական տարրերի և կալկուլյացիոն հոդվածների

Կազմակերպության կողմից թողարկվող արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվում են ծախսեր, որոնք կապված են արտադրության պրոցեսում բնական ռեսուրսների, հումքի, կյութերի, վառելիքի, էներգիայի, հիմնական միջոցների, աշխատանքային ռեսուրսների օգտագործման հետ, և այլ ծախսեր՝ կապված արտադրանքի արտադրության հետ: Մասնավորապես՝

1. արտադրության նախապատրաստման ու յուրացման ծախսեր.

2. արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված ծախսեր, որոնք պայմանավորված են արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպման իրականացումով, ներառյալ՝ արտադրական պրոցեսների և թողարկված արտադրանքի վերահսկման ծասխսերը.

3. ծախսեր՝ կապված գյուտարարական կամ նորարարական աշխատանքների, նոր նմուշների ու մոդելների պատրաստման ու փորձարկման, ցուցահանդեսների, մրցույթների կազմակերպման, հեղինակային պարզեցումների վճարման հետ և այլն:

4. արտադրական պրոցեսի սպասարկման հետ կապված ծախսերը.

5. աշխատանքային նորմալ պայմանների և տեխնիկական անվտանգության ապահովման ծախսերը

6. արտադրության կառավարման հետ կապված ծախսեր .

7. չաշխատած աշխատաժամանակի համար աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված վճարումները, հերթական և լրացուցիչ արձակուրդների վճարումը, աշխատաժամանակի ընթացքում պետական պարտականությունների կատարման համար վճարումները և այլն:

8. արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվող աշխատանքի վարձատրության ծախսերի հատկացումները պետական, սոցիալական ապահովագրության համար և կեսաթոշակային ֆոնդին, ինչպես նաև զբաղվածության հիմնադրամին:

9. հատկացումներ պարտադիր բժշկական ապահովագրության համար.

10. կազմակերպության արտադրական ֆոնդերի կազմում հաշվարկվող գույքի պարտադիր ապահովագրության վճարումներ.

11. ծախսեր՝ կապված հիմնական արտադրական ֆոնդերի վերարտադրության հետ, որոնք արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվում են հիմնական ֆոնդերի արժեքի լրիվ վերականգնման համար կատարվող ամորտիզացիոն հատկացումների ձևով.

12. ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարը:

Բացի այդ, արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվում են խոտանից առաջացած, կորուստները, ներարտադրական պարապլորդների պատճառով առաջացած կորուստները, արտադրության մեջ և պահեստներում նյութական արժեքների պակասորդները՝ քսական կորստի նորմաների սահմաններում և նորմաներից դուրս, եթե մեղավորներ հայտնաբերված չեն:

Արտադրանքի ինքնարժեքի մեջ մտնող այս բոլոր ծախսերի հաշվառումն ու պլանավորումը վարում են ըստ տնտեսական տարրերի և ըստ կալկուլյացիոն հոդվածների:

ինքնարժեքի տնտեսական տարրերն են.

1. նյութական ծախսումներ (հումք, բնական և արհեստական նյութեր, գնովի կոմպլեկտավորող ապրանքներ և կիսաֆաբրիկատներ, վառելիք, էներգիա, ջերմատեներգիա և այլն).

2. աշխատանքի վարձատրության ծախսումներ.

3. սոցիալական կարիքների համար հատկացումներ.

4. հիմնական միջոցների ամորտիզացիա.

5. այլ ծախսումներ (ոչ նյութական ակտիվների մաշվածությունը, վարձակալության վճարներ, պարտադիր ապահովագրական վճարներ, բանկային վարկի տոկոսավճարներ, արտադրանքի ինքնարժեքի մեջ մտնող հարկեր, արտաբյուջետային ֆոնդերին հատկացումներ և այլն).

Ըստ տնտեսական տարրերի՝ ծախսումների խմբավորումն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրելք նյութատարությունը, էներգատարությունը, աշխատատարությունը, ֆոնդատարությունը և որոշելք ծախսումների կառուցվածքի վրա տեխնիկական առաջընթացի ազդեցությունը: Եթե աշխատանքի վարձատրությունն բաժինը փոքրանում է, իսկ ամորտիզացիայի բաժինը մեծանում է, ապա դա վկայում է կազմակերպության տեխնիկական մակարդակի բարձրացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման մասին: Աշխատավարձի տեսակարար կշիռը փոքրանում է նաև այն դեպքում, եթե մեծանում է գնովի կոմպլեկտավորող ապրանքների, շինվածքների և կիսաֆաբրիկատների բաժինը, ինչը վկայում է մասնագիտացման ու կոոպերացիայի մակարդակների բարձրացման մասին:

Կալկուլյացիան արտադրության գործընթացում արտադրանքի 1 միավոր կամ շինարարությաննորոգումների և այլ աշխատանքների ու ծառայությունների 1 միավորի վրա կազմակերպության կատարած ծախսումների հաշվարկումն ու ինքնարժեքի որոշումն է: Այդպիսի հաշվարկ հանարավոր է կատարել միայն դրամական գնահատմամբ, որովհետև արտադրանքի ինքնարժեքի կազմի մեջ մտնում են տարբեր ծախսեր (դրամական, նյութական, աշխատանքային):

Ծախսումների խմբավորումը ըստ կալկուլյացիոն հոդվածների՝ ցույց է տալիս, թե ինչ նպատակներով, ինչ ուղղություններով և ինչ քանակությամբ ռեսուրսներ են ծախսվել: Դա անհրաժեշտ է, որպեսզի հաշվարկվեն բազմապրոֆիլային արտադրություններում տարբեր տեսակի ապրանքների արտադրանքների ինքնարժեքները առանձին-առանձին, սահմանեն ծախսումների «կուտակման կետերներ» և փնտրեն, բացահայտեն դրանց կրճատման ռեզերվները:

Կալկուլյացիայի հիմնական հոդվածները հետևյալներն են. հումք և նյութեր, վերադարձվող թափոններ (հանվում են), շինվածքներ և կիսա-


Ֆաբրիկատներ, տեխնոլոգիական նպատակներով օգտագործվող վառելիք և էներգիա, արտադրական բանվորների հիմնական և լրացուցիչ աշխատավարձը, արտադրական բանվորների սոցիալական, և բժշկական ապահովագրության հատկացումները, մեքենաների և սաքավորումների շահագործման ու պահպանման ծախսերը, ընդհանուր տնտեսական բնույթի ծախսերը, խտանից կորուստներ, այլ արտադրական ծախսեր, ինչպես նաև՝ կոմերցիոն (առևտրային) ծախսեր:

Ապրանքային արտադրանքի և իրացված արտադրանքի ինքնարժեքի և գործոնների վերլուծությունը ներկայացնենք սխեմա 1-ի օգնությամբ, որի առաջին բաժինը կազմում են ծախսերը՝ ըստ տնտեսական տարրերի, իսկ երկրորդ բաժինը կազմում են ծախսերի կալկուլյացիոն հոդվածները:

Ըստ ինքնարժեքի հետ ունեցած կապի՝ ծախսումները լինում են ուղղակի և անուղղակի (վերադիր): Ուղղակի են այն ծախսերը, որոնք սկզբնական փաստաթղթերի հիման վրա հնարավոր է վերագրել որոշակի կոնկրետ արտադրատեսակի (օրինակ՝ հումք, նյութեր, բանվորների աշխատավարձը և այլն):

Դրանք անմիջականորեն վերաբերում են կալկուլյացիային այս կամ այն օբյեկտին: Անուղղակի (վերադիր) ծախսերը վերագրվում են բոլոր տեսակի աշխատանքներին, ծառայություններին և արտադրատեսակներին (օրինակ՝ լուսավորության, ջեռուցման, մեքենաների և սարքավորումների պահպանման և այլ ծախսեր), որոնք արտացոլվում են 813 «անուղղակի արտադրության ծախսումներ» հաշվի դեբետում:

Շուկայական տնտեսության պայմաններում ծախքերը դասակարգվում են թաքսված և բացահայտ ծախքերի:



Բացահայտ ծախքերը այլընտրանքային ծախքեր են, որոնք ընդունում են միջանցիկ ապրանքների և արտադրության գործոնների մատակարարներին տրվող ուղղակի վճարների տեսք: Բացահայտ ծախքերի թվին են պատկանում բանվորների, մենեջերների, ծառայողների աշխատավարձը, առևտրական կազմակերպություններին տրվող կոմիսիոն վճարները, բանկերին և ֆինանսական ու կյուրական ծառայությունների մատակարարներին վճարումները, տրանսպորտային ծախսերի վճարները և այլն:

Թաքնված ծախսերը կազմակերպության սեփականատերերին պատկանող կամ կազմակերպության՝ որպես իրավաբանական անձի տնօրինության տակ գտնվող ռեսուրսների օգտագործման այլընտրանքային ծախքերը են: Նման ծախքերը ծախսերի պարտավորությունների կատարման պայմանագրերում չեն նախատեսվում և հաշվապահական հաշվառման մեջ չեն արտացոլվում, սակայն դա չի նշանակում, որ այդ ծախքերը գոյություն չունեն: Օրինակ՝ կազմակերպությունը օգտագործում է իր իսկ սեփականատիրոջը պատկանող տարածքը, ընդ որում ոչ մեկին ոչինչ չի վճարում դրա համար: Հետևաբար թաքնվածծախքերը հավասար կլինեն տվյալ շենքը որևէ մեկին վարձով տալու դեպքում ստացվող դրամական վճարների մեծությանը:

Ըստ տեխնիկոտնտեսական գործոնների, և գլխավորապես, ըստ արտադրության ծավալի հետ ունեցած կապի՝ ծախսերը լինում են պայմանական-փոփոխում և պայմանական-հաստատում: Պայմանական-փոփոխուն ծախսերը նորմավորվում են արտադրանքի միավորի նկատմամբ, և դրանց մեծությունընը ավելանում կամ պակասում է թողարկվող արտադրանքի ծավալի փոփոխությանը համամասնորեն (օրինակ՝ հումքի, նյութերի ծախսերը, բանվորների գործարքային աշխատավարձը և այլն): Պայմանական - հաստատուն ծախսերին են վերագրվում այն ծախսերը, որոնց բացարձակ մեծությունը լիմիտավորվում է ըստ արտադրամասի կամ ամբողջ կազմակերպության մասշտաբով և ուղղակի կախվածություն չունի արտադրական ծրագրի կատարման ծավալից (օրինակ՝ շենքի լուսավորության, ջեռուցման ծախսերը կառավարման անձնակազմի աշխատավարձը և այլն):

Պայմանական-փոփոխուն ծախսերը կազմում են արտադրանքի տեխնիկական ինքնարժեքը և հաշվառում են որպես ուղղակի ծախսումներ: Պայմանական-հաստատուն ծախսերը կազմում են պարբերաբար վերադիր ծախսերը և արտադրանքի ինքնարժեքի հաշվակման ժամանակ հաշվառում են որպես անուղղակի ծախսումներ:

Փոփոխուն և հաստատուն ծախսերը դասակարգվում են ըստ ծախսումների առաջացման աղբյուրի. փոփոխունները բնութագրվում են արտադրանքի ծավալի աճի հետ կապված տնտեսական ակտիվության ծախսումները, իսկ հաստատունները բնութագրվում են տնտեսավարման ընդունակության հետ կապված ծախսերը, այսինքն՝ ցույց են տալիս կառավարման արդյունավետությունը: Այս ծախսումներին վերաբերում են ինվեստիցիայի (ամորտիզացիոն) ծախսերը, վարչական ծախսերը, տնտեսական քաղաքականության մշակման ծախսերը (գովազդ, գիտատեխնիկական արտադրական արտադրանքներ և այլն):

Դիտարկենք արտադրության ծավալի ազդեցությամբ պայմանավորված ինքնարժեքի փոփոխությունը հետևյալ օրինակով:

Աղյուսակ 2.2


Արտադրանքի արտադրության ծավալ (հատ)	Անբողջ թողարկման ինքնարժեքը (մլն դրամ)			Միավոր արտադրանքի ինքնարժեքը (հազար դրամ)		
	Հաստատուն ծախսեր	Փոփոխուն ծախսեր	Ընդամենը	Հաստատուն ծախսեր	Փոփոխուն ծախսեր	Ընդամենը
300	40	24	64	120	50	170
600	40	48	88	80	50	110
900	40	72	112	40	50	90
1200	40	96	136	30	50	80
1500	40	120	160	24	50	74

Բերված օրինակում հաստատուն ծախսերի 40մլն դրամի չափը ֆիքսված է արտադրության ցանկացած ծավալի դեպքում: Նրա բացարձակ մեծությունը չի փոխվում արտադրանքի ծավալի ավելացմանը զուգընթաց, բայց միավոր արտադրանքի ինքնարժեքի մեջ արտադրության ծավալի մեծացմանը զուգընթաց հաստատուն ծախսերը նվազում են. աղյուսակ 2.2-ի օրինակում արտադրանքի ծավալը մեծանում է 5 անգամ, իսկ հաստատուն ծախսերը միավոր արտադրանքի ինքնարժեքում կրճատվում են 5 անգամ:

Փոփոխուն ծախսերը արտադրանքի թողարկման ծավալի աճմանը զուգընթաց համամասնորեն մեծանում են, իսկ միավոր արտադրանքի ինքնարժեքի մեջ կազմում են հաստատուն մեծություն:


Արտադրության ծավալից կախված փոփոխուն ու հաստատուն ծախսերի մեծությունը ցույց տանք գրաֆիկորեն:

Գրաֆիկ 1. Ծախսերի ընդհանուր գումարի կախվածությունը արտադրանքի ծավալից



Այժմ ցույց տանք միավոր արտադրանքի ինքնարժեքի մեծությունը՝ կախված արտադրության ծավալից գրաֆիկ 2-ում

Գրաֆիկ 2



Այսպիսով, գրաֆիկ 2-ից երևում է, որ արտադրության ծավալի մեծացման դեպքում միավոր արտադրանքի ինքնարժեքը նվազում է, իսկ արտադրության ծավալի կրճատման դեպքում այն աճում է :

Այժմ արտադրանքի թողարկման ծախսերի վերլուծությունը կատարենք հետևյալ ֆաբրիկայի օրինակի միջոցով: Դրա համար, նախ՝ աղյուսակ 2.3-ում լրացնենք արտադրության ծախսերի վերաբերյալ ունեցած տվյալները:

Արտադրանքի արտադրության ծախսեր

Աղյուսակ 2.3

Ծախսերի տարրերը	Գումարը (հազար դրամ)			Ծախսերի կառուցվածքը (%)		
	Պլան	Փաստացի	Եզրում	Պլան	Փաստացի	Եզրում
Նյութական ծախսեր	35225	40982	+5757	41.44	42.70	+1.26
Աշխատանքի վարձատրություն	21810	23994	+2184	25.66	25.00	-0.66
Սոցիալական ապահովագրության ֆոնդին կատարվող հատկացումներ	6112	6736	+626	7.19	7.02	-0.17
Հիմնական միջոցների ամորտիզացիա	3280	3743	+463	3.86	3.90	+0.04
Արտադրական այլ ծախսումներ	13363	14416	+1053	15.72	15.02	-0.70
Արտադրական ծախսերի ընդհանուր գումարը	79790	89873	+10083	93.87	93.64	-0.23
Կոմերցիոն ծախսեր	5210	6104	+894	6.13	6.36	+0.23
Լրիվ ինքնարժեք այդ թվում	85000	95977	+10977	100.0	100.0	-
1.փոփոխուն ծախսեր	60000	68230	+8230	70.59	71.09	+0.50
2.հաստատուն ծախսեր	25000	27747	+2747	29.41	28.91	-0.50

Ինչպես երևում է աղ. 2.3-ից, ֆաբրիկայի արտադրանքի լրիվ ինքնարժեքի փաստացի գումարը պլանայինից մեծ է 10 977 000 դրամով կամ 13%-ով. գերածախս կատարվել է բոլոր հոդվածների գծով: Ավելացել է ինչպես փոփոխուն, այնպես էլ հաստատուն ծախսերի գումարը: Փոփոխվել է նաև ծախսերի կառուցվածքը. այսինքն ինֆլյացիայի հետ կապված մեծացել է նյութական ծախսերի և հիմնական միջոցների ամորտիզացիայի բաժինը, իսկ աշխատավարձի բաժինը նվազել: Այսպիսով ծախսերի հանրագումարը կարող է փոփոխվել արտադրանքի թողարկման ծավալի, նրա կառուցվածքի միավոր արտադրտադրանքի փոփոխուն և հաստատուն ծախսերի մակարդակների փոփոխության ազդեցությամբ: Նշված գործոնների ազդեցության վերլուծության արդյունքները ցույց կտանք աղ. 2.4-ում.

Արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի ընդհանուր գումարի գործուսային վերլուծության ելակետային տվյալները

Աղյուսակ 2.4

Ծախսեր	Գումարը (հազ.դրամ)	Ծախսերի փոփոխման վրա ազդող գործոնները			
		Արտադրանքի թողարկման ծավալ (Q)	Արտադրանքի կառուցվածքը (D)	Փոփոխուն ծախսեր (X)	Հաստատուն ծախսեր (A)
Ծախսերի պլանային մեծությունը հաշվարկված արտադրանքի թողարկման պլանային ծավալով $\Sigma(Q_{պլ} \times X_{պլ}) + A_{պլ}$	85000	- Պլան	Պլան	Պլան	Պլան
Ծախսերի պլանային մեծությունը վերը հաշվարկված արտադրանքի թողարկման փաստացի ծավալի համար $\Sigma(Q_{պլ} \times X_{պլ}) \times D + A_{պլ}$	86979	Փաստ.	Պլան	Պլան	Պլան
Պլանային մակարդակի սահմաններում արտադրանքի թողարկման ծախսերի գումարը $\Sigma(Q_{պլ} \times X_{պլ}) + A_{պլ}$	87468	Փաստ.	Փաստ.	Պլան	Պլան
Ծախսերի փաստացի գումարը հաշվարկված հաստատուն ծախսերի պլանային մեծությամբ $\Sigma(Q_{փ} \times X_{պլ}) + A_{պլ}$	93230	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Պլան
Ծախսերի փաստացի գումարը $\Sigma(Q_{փ} \times X_{փ}) + A_{փ}$	95977	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Փաստ.

որտեղ՝

Q_i - i-րդ արտադրատեսակի թողարկման ծավալը

X_{իփ-i-րդ} արտադրատեսակի թողարկման համար կատարվող փոփոխուն ծախսերի գումարը

A - ամբողջ արտադրության համար հաշվարկված հաստատուն ծախսերի գումարը

Ստացված տվյալները հաշվարկված են աղ. 2.1-ի և աղ. 2.3-ի տվյալների հիման վրա.

$$\Sigma (Q_{իս} \times X_{իսլ})=60.000, \Sigma (Q_{իփ} \times X_{իփ})=27.747 \text{ հզ. դր.}$$

$$\Sigma (Q_{իսլ} \times X_{իսլ})+A_{իսլ}=85.000 \text{ հզ. դր.}$$

$$\Sigma (Q_{իսլ} \times X_{իփ}) \times D + A_{իսլ} = 60.000 \times 0,10329824 + 25.000 = 86.979 \text{ հզ. դր.}$$

$$\Sigma (Q_{իսլ} \times X_{իսլ}) + A_{իսլ}$$

կարող ենք որոշել հետևյալ կերպ.

քանի որ $X_i + A_i = C_i$ ապա, C_i պայմանական

$$i = \sum (Q_{i\text{ալ}} \times C_{i\text{փ}}) = [\text{աղ. 1 սյուն. 1x սյուն. 6}] = 90.215,$$

այնուհետև

$$\sum (Q_{i\text{ալ}} \times C_{i\text{փ}}) - A_{\text{փ}} + A_{\text{ալ}} = 90.215 - 27.747 + 25.000 = 87.460 \text{ հզ. դր}$$

$$\sum (Q_{i\text{փ}} \times X_{i\text{փ}}) + A_{\text{ալ}} = 68.230 + 25.000 = 93.230 \text{ հզ. դր}$$

$$\sum (Q_{i\text{փ}} \times X_{i\text{փ}}) + A_{\text{փ}} = \sum (Q_{i\text{փ}} \times C_{i\text{փ}}) = 95.977 \text{ հզ. դր}$$

Այդուսակ 4-ից երևում է, որ բնափրային արտահայտությամբ ապրանքային արտադրանքի թողարկման ծավալը 3.3%-ով ($D\% = 103,3\%$) գերակատարելու հետևանքով ծախսերի գումարն աճել է 1979 հազար դրամով 86979-85000): Արտադրանքի թողարկման կառուցվածքի փոփոխման հետևանքով ծախսերի գումարն աճել է 489 հազար դրամով (87468-86979): Դա վկայում է այն մասին, որ արտադրանքի թողարկման ծավալում բարձրացել է ծախսատար արտադրատեսակների բաժինը: Փոփոխուն ծախսերի տեսակարար կշռի բարձրացման հետևանքով արտադրության ծախսերի գումարն աճել է 5762 հազար դր...-ով (93230-87468): Բացի այդ հաստատուն ծախսերն աճել են 2747 հզր. դրամով, որը ևս ծախսերի ընդհանուր գումարի պատճառ է:

Այսպիսով, ծախսերի ընդհանուր գումարի փաստացի մեծությունը պլանայինից բարձր է 10977 հզ. դրամով (95977-85000) կամ 13%-ով, այդ թվում՝ արտադրանքի թողարկման ծավալի գերակա-տարման և նրա կառուցվածքի փոփոխման հետևանքով ծախսերն աճել են 2468 հզ. դրամով, իսկ ինքնարժեքի բարձրացման հետևանքով ծախսերն աճել են 8509 հզ. դրամով. $2468 = 87468 - 85000$; $8509 = 95977 - 87468$:

2.3 Միավոր արտադրանքի ինքնարժեքի (\bar{C}) գործոնային վերլուծությունը

Ամբողջ արտադրության միավոր արտադրանքի ինքնարժեքը (\bar{C}) հաշվարկվում է ինքնարժեքի հանրագումարը (աղ. 2.1 սյ.7 և սյ.9)

հարաբերելով արտադրատեսակների ընդհանուր քանակին ($\sum_{i=1}^n Q_i$).

$$\bar{C}_{\text{այլ}} = \frac{\sum_{i=1}^4 (Q_i \text{այլ} \cdot C_i \text{այլ})}{\sum_{i=1}^4 Q_i \text{այլ}} = \frac{85000}{1425} = 59,6 \text{ հազ. դրամ}$$

$$\bar{C}_{\Phi} = \frac{\sum_{i=1}^4 (Q_i \Phi \cdot C_i \Phi)}{\sum_{i=1}^4 Q_i \Phi} = \frac{95977}{1472} = 65,2 \text{ հազ. դրամ}$$

$$\Delta \bar{C} = \bar{C}_{\Phi} - \bar{C}_{\text{այլ}} = 65,2 - 59,6 = 5,6 \text{ հազ. դրամ,}$$

Ստացանք, որ միավոր արտադրանքի ինքնարժեքը բարձրացել է 5600 դրամով՝ պլանայինի համեմատ:

Միավոր արտադրանքի ինքնարժեքի վրա ազդել են.

1. արտադրանքի թողարկման կառուցվածքային տեղաշարժերը բարձրացել են «Գ» և «Դ» արտադրատեսակների տեսակարար կշիռները, և իջել են «Ա» և «Բ» արտադրատեսակների տեսակարար կշիռները:

2. անվանացանկի յուրաքանչյուր արտադրատեսակի միավորի ինքնարժեքի (C_i) մակարդակը:

Միավոր արտադրանքի ինքնարժեքի վրա կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությունը գնահատելու համար իրականացվում է ամբողջ արտադրանքի ինքնարժեքի ($C(D)$) վերահաշվարկը՝ փաստացի թողարկման ծավալը բազմապատկելով արտադրատեսակների միավորի պլանային ինքնարժեքով՝ $\sum_{i=1}^4 (Q_{i\text{փ}} \times C_{i\text{պլ}})$: Ստացված

մեծությունը հարաբերելով թողարկման փաստացի ծավալին $\sum_{i=1}^4 ($

$Q_{i\text{փ}})$ ՝ որոշվում է միավոր արտադրանքի պլանային ինքնարժեքը փաստացի կառուցվածքի դեպքում:

Այսինքն՝

$$\bar{C}_{(D\Phi)} = \frac{\sum_{i=1}^4 (Q_i \Phi \cdot C_i \text{պլ})}{\sum_{i=1}^4 Q_i \Phi}$$

Այժմ տեղադրենք աղ. 2.2-ի տվյալները.

$$\bar{C}_{(D\Phi)} = \frac{90777}{1472} = 61,7$$

Այսպիսով, միավոր արտադրանքի ինքնարժեքի վրա կառուցվածքային տեղաշարժերի ազդեցությունը կազմում է՝

$$\Delta \bar{C}_{(D)} = \bar{C}_{(D\Phi)} - \bar{C}_{\text{սկ}} = 61,7 - 59,6 = 2,1 \text{ հազար դրամ:}$$

Ինքնարժեքի միջինացված ցուցանիշի [$\bar{C}_{(C)}$] վրա յուրաքանչյուր արտադրատեսակի գծով միավոր արտադրանքի ինքնարժեքի (\bar{C}) մեջ կատարվող փոփոխությունների ազդեցությունը որոշվում է միավոր արտադրանքի փաստացի ինքնարժեքից հանելով փաստացի կառուցվածքով վերահաշվարկված ինքնարժեքի ($\bar{C}_{(D\Phi)}$) ցուցանիշը: Այսինքն՝

$$\Delta \bar{C}_{(C)} = \bar{C}_{\Phi} - \bar{C}_{(D\Phi)}$$

$$\Delta \bar{C}_{(C)} = 65,2 - 61,7 = 3,5 \text{ հազար դրամ:}$$

Այսպիսով, միավոր արտադրանքի ինքնարժեքի 5600 դրամով փոփոխությունը տեղի է ունեցել արտադրանքի թողարկման կառուցվածքային տեղաշարժերի հետևանքով՝ 2100 դրամի չափով և յուրաքանչյուր արտադրատեսակի գծով ինքնարժեքի միջինացված ցուցանիշի մակարդակի փոփոխության հետևանքով՝ 3500 դրամի չափով: Այսինքն՝

$$\Delta \bar{C} = \bar{C}_{\Phi} - \bar{C}_{\text{սկ}} = \Delta \bar{C}_{(D\Phi)} + \Delta \bar{C}_{(C)} = 2,1 + 3,5 = 5,6 \text{ հզ. դրամ:}$$

2.4. Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի վերլուծությունը

Արտադրանքի ինքնարժեքի ընդհանրացնող ցուցանիշներից է ապրանքային արտադրանքի 1 դր. ընկնող ծախսերի մեծությունը: Եթե ամբողջ արտադրանքի ինքնարժեքը արտացոլում է արտադրական ռեսուրսների ծախսումների հանրագումարը, ապա ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսումներն արտացոլում են ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մեծությունը որոշվում է թողարկված արտադրանքի լրիվ ինքնարժեքը հարաբերելով այդ արտադրանքի բացթողման գնին:

Այսինքն՝

$$d = \frac{\sum_{i=1}^n (Q_i * C_i)}{\sum_{i=1}^n (Q_i * P_i)} * 100$$

որտեղ՝

d - ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մեծություն.

Q_i - անվանացանկի i-րդ արտադրատեսակի քանակը.

C_i - անվանացանկի i-րդ արտադրատեսակի լրիվ ինքնարժեքը.

P_i - անվանացանկի i-րդ արտադրատեսակի բացթողման գինը.

n - անվանացանկի արտադրատեսակների քանակը:

Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի փաստացի մեծության շողումը պլանայինից պայմանավորված են մի շարք գործոններով: Դրանք են.

1. արտադրանքի ծավալի և կառուցվածքի փոփոխությունը.

2. միավոր արտադրանքի ինքնարժեքի փոփոխությունը.

3. միավոր արտադրանքի վաճառքի գնի փոփոխությունը.

4. Օգտագործվող հումքի, նյութերի, վառելիքի գնի փոփոխությունը, էլեկտրոէներգիայի, տրանսպորտային փոխադրումների սակագների փոփոխությունները:

Սխեմա 6. Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մակարդակի վրա ազդող գործոնների փոխկախվածությունը.



Կազմակերպությունը ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերը կարող է նվազեցնել ի հաշիվ արտադրանքի թողարկման ծավալի մեծացման, արտադրության կառուցվածքի փոփոխության արտադրանքի բացթողման գնի բարձրացման: Փոփոխուն և

հաստատուն ծախսերի մեծությունը իր հերթին կախված է ռեսուրսատարության մակարդակից նյութական ռեսուրսների գների ու սակագների փոփոխություններից:

Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի գործոնային վերլուծության նպատակով աղ. 2.2-ի տվյալները լրացնենք արտադրատեսակների գների ինդեքսներով: Թողարկման ծավալի բանական ցուցանիշները արտահայտված են ապրանքային ցուցանիշներով բացթողման գնի պլանային և փաստացի մեծությունների հիման վրա:

Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մակարդակի վերլուծության համար տվյալներ

Սղյուսակ 2.5

Արտադրատեսակներ	Ապրանքային իրացումից հատույթ (իզ.դր.)		Արտադրատեսակների գների ինդեքսը	Հանդերձի գներով հաշվարկված ապրանքային արտադրանքի փաստացի մեծությունը	Ապրանքային արտադրանքի ինքնարժեքը (հազ. դր.)			Փաստացի ինքնարժեքի չեղումը պլանային մեծությունից	
	Պլան	Փաստացի			Պլան	Պլանային ինքնարժեքը հաշվարկված փաստացի ծավալով	Փաստացի ինքնարժեքը		Փաստացի
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.
Ա	33790	31565	1.03	30646	29975	26015	25884	27907	-2068
Բ	31780	32673	1.01	32350	27560	27352	27432	29456	+1896
Գ	18840	24895	1.05	22303	16125	19350	18956	20124	+3999
Դ	12970	22687	1.07	21203	11340	18060	17218	18490	+7150
Ընդամենը	96970	111820	-	106502	85000	90777	89290	95977	+10977

Աղ. 2.5-ի տվյալներով կատարենք ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մակարդակի վերլուծությունը՝ կիրառելով շղթայական տեղադրումների եղանակը:

1. Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի պլանային մակարդակը

$$d_{պլ} = \frac{\sum_{i=1}^n (Q_i \cdot C_{i,պլ})}{\sum_{i=1}^n (Q_i \cdot P_i \cdot պլ)} \cdot 100 = \frac{85600}{96970} \cdot 100 = 87.66$$

2. Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մակարդակը՝ հաշվարկված պլանային գներով թողարկման փաստացի ծավալով ու կառոցվածքով.

$$d_1 = \frac{\sum_{i=1}^n (Q_i \Phi \cdot C_{i\text{պլ}})}{\sum_{i=1}^n (Q_i \text{պլ} \cdot P_{i\text{պլ}})} \cdot 100 = \frac{90777}{106502} \cdot 100 = 85,24$$

3. Ապրանքային արտադրանքին 1դրամին ընկնող ծախսերի մակարդակի փաստացի մեծությունը հաշվարկված արտադրանքի ու ռե-տուրսների պլանային գներով.

$$d_2 = \frac{\sum_{i=1}^n (Q_i \Phi \cdot C_i(n)\text{պլ})}{\sum_{i=1}^n (Q_i \Phi \cdot P_{i\text{պլ}})} \cdot 100 = \frac{89290}{106502} \cdot 100 = 83,84$$

4. Ապրանքային արտադրանքին 1դրամին ընկնող ծախսերի մակարդակի փաստացի մեծությունը հաշվարկված արտադրանքի պլանային գներով.

$$d_3 = \frac{\sum_{i=1}^n (Q_i \Phi \cdot C_i \Phi)}{\sum_{i=1}^n (Q_i \Phi \cdot C_{i\text{պլ}})} \cdot 100 = \frac{95977}{106502} \cdot 100 = 90,12$$

5. Ապրանքային արտադրանքին 1դրամին ընկնող ծախսերի փաստացի մակարդակը.

$$d\Phi = \frac{\sum_{i=1}^n (Q_i \Phi \cdot C_i \Phi)}{\sum_{i=1}^n (Q_i \delta \cdot P_{i\delta})} \cdot 100 = \frac{95977}{11820} \cdot 100 = 85,83$$

Գործոնների ազդեցության հաշվարկման կարգն ու ստացվող արդյունքները ցույց տանք աղ.2.6-ում:

Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի մակարդակի վրա գործոնների ազդեցության հաշվարկը.

Աղյուսակ 2.6

Գործոններ	Հաշվարկման կարգը	Հաշվարկը	Ազդեցության չափը
Արտադրանքի կառուցվածքը	$d_1 - d_{\text{պ}}$	85.24 - 87.66	-2.42
Արտադրատեսակների սեստրատադրություն	$d_2 - d_1$	83.84 - 85.24	-1.4
Ռեսուրսների գները	$d_3 - d_2$	90.12 - 83.84	+6.28
Արտադրանքի գները	$d_{\Phi} - d_3$	85.83 - 90.12	-4.29
Ընդամենը	$d_{\Phi} - d_{\text{պ}}$	85.83 - 87.66	-1.83

Այսպիսով, ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերը նվազել են 1,83 դրամ միավորով: Այդ նվազումը պայմանավորված է ասորտիմենտում (արտադրատեսակների կազմում) կառուցվածքային տեղաշարժերի դրական ազդեցությամբ (2,42), արտադրանքի ռեսուրսատա-րության կրճատմամբ (1,4) և արտադրանքի գների բարձրացմամբ (4,29): Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի 6,28 աճը պայմանավորված է նյութերի, աշխատանքային ռեսուրսների և ծառայությունների գների բարձրացմամբ: Ծախսերի մակարդակի վրա գործոնների ազդեցության քանակական գնահատականը թույլ է տալիս իրականացնել արտադրանքի և ռեսուրսների գների ազդեցության համեմատական վերլուծություն: Տվյալ դեպքում ռեսուրսների գների բացասական ազդեցությունը արտադրանքի գների բարձրացմամբ չի փոխհատուցվում, ուստի եկամտի բարձրացման միակ ռեզերվը հանդիսանում է միավոր արտադրանքի ռեսուրսատարության կրճատումը:

2.5 Համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը

Համեմատելի ապրանքային արտադրանք է համարվում կազմակերպության կողմից հաշվետու տարում արտադրվող այն արտադրանքը, որի արտադրությունը իրականացվել է նաև նախորդ տարում, եթե իհարկե նախորդ տարվա արտադրությունը փորձարարական բնույթ չի կրել և նոր յուրացման փուլում չի գըտնվել: Ուստի համեմատելի արտադրանքի ինքնարժեքի գնահատումը կարելի է կատարել ոչ միայն հաշվետու տարվա պլանային ցուցանիշներով, այլ նաև նախորդ տարվա փաստացի տվյալների հետ համեմատելով: Այս համեմատություններից կպարզվի, թե կազմակերպությունը ինչպիսի արդյունքների է հասել օգտագործվող ռեսուրսների տնտեսման ուղղությամբ, դրանց առավել արդյունավետ օգտագործման ուղղությամբ, ինչպես նաև կօգնի բացահայտել կազմակերպության արտադրական ռեզերվները:

Համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի վերլուծության համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ տվյալները:

1. Ապրանքային արտադրանքի նախատեսված (պլանային) ծավալի թողարկման ծախսերը՝ ինքնարժեքի մակարդակով (իզ. դր.).

- նախորդ տարվա փաստացին՝ $\sum (Q_{i041} \times C_{i041}) = 85\ 860$

- հաշվետու տարվա պլանային մեծությունը՝ $\sum (Q_{i141} \times C_{i141}) = 85\ 000$

- տնտեսումը (-), գերածախս (+) համեմատած նախորդ տարվա հետ՝
պլանի համաձայն՝

բացարձակ գումարը՝ 85 000-85 860 = -860

հարաբերական մեծությունը (%) $\frac{-860}{85860} \cdot 100 = -1\%$

2. Ապրանքային արտադրանքի փաստացի ծավալի թողարկման
համար կատարված ծախսերը՝

ինքնարժեքի մակարդակով (իզ. դր.) .

- նախորդ տարվա փաստացին՝ $\sum (Q_{i\text{փ}} \cdot C_{i\text{փ}}) = 92427$

- հաշվետու տարվա պլանային մեծությունը՝ $\sum (Q_{i\text{պ}} \times C_{i\text{պ}}) = 90777$

- հաշվետու տարվա փաստացին՝ հաշվարկված ռեսուրսների
պլանային գներով՝

$\sum (Q_{i\text{փ}} \times C_{i(\text{ն})\text{պ}}) = 89290$

- հաշվետու տարվա փաստացին՝ հաշվարկված ռեսուրսների
փաստացի գներով՝

$\sum (Q_{i\text{փ}} \times C_{i(\text{ն})\text{փ}}) = 95977$

- գերածախսի (+) փաստացի մեծությունը՝ համեմատած նախորդ
տարվա հետ՝

բացարձակ գումարը՝ 95 977-92 427 = 3 550

հարաբերական մեծությունը՝ (%) $\frac{+3550}{92427} \cdot 100 = 3,84\%$

3. Պլանային առաջադրանքներից շեղումները՝

բացարձակ՝ 4410

հարաբերական (%)՝ 4,84%

Համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի
վերլուծությունը կարող ենք կատարել և՛ շրթայական տեղադրումների,
և՛ բացարձակ տարբերությունների եղանակով: Նախ վերլուծենք
շրթայական տեղադրումների եղանակով.

Շրթայական տեղադրումների եղանակով համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի փոփոխության գործոնների ազդեցության հաշվարկը.

Աղյուսակ 2.7

Նախորդ տարվա համեմատ տնտեսման (-), գերաճահետի(+) բացարձակ գումարը (իզ դր.)	Նախորդ տարվա նկատմամբ ինքնարժեքի մակարդակի հարաբերական փոփոխությունը (%)	Ինքնարժեքի փոփոխման գործոնները			
		Արտադրանքի ծավալը	Արտադրության կառուցվածք	Արտադրանքի ռեսուրսատարությունը	Նյութերի գները
85 000 - 85 860 = -860	$\frac{-860}{85000} * 100 = -1.0$	Պլան	Պլան	Պլան	Պլան
92 427 * (-1%) = -924.27	$\frac{-924.27}{92427} * 100 = -1.0$	Փաստացի	Պլան	Պլան	Պլան
90 777-92 427 = -1650	$\frac{-1650}{92427} * 100 = -1.79$	Փաստացի	Փաստացի	Պլան	Պլան
89 290-92427 = -3137	$\frac{-3137}{92427} * 100 = -3.40$	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Պլան
95 977-92 427 = +3550	$\frac{+3550}{92427} * 100 = +3.84$	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի

Գործոնների ազդեցության հաշվարկման արդյունքները.

Աղյուսակ 2.8

Համեմատելի արտադրանքի ինքնարժեքի փոփոխության վրա ազդող գործոնները	Փոփոխության բացարձակ մեծությունը (հազար դրամ)	Փոփոխության հարաբերական մեծությունը (%)
Արտադրանքի արտադրության ծավալը	-924 (-860) = -64	-1.0 (-1.0) = 0
Արտադրության կառուցվածքը	-1650 (-924) = -726	-1.79 (-1.0) = -0.79
Արտադրանքի ռեսուրսատարությունը	-3137 (-1650) = -1487	-3.40 (-1.79) = -1.61
Ունեւորների գները ու մատակարարները	3550 (-3137) = +667	+3.84 (-3.40) = +7.24
Ընդամենը	+ 4410	4.84

Այժմ նույն տվյալների հիման վրա համեմատելի ապրանքային արտադրանքի գործոնային վերլուծությունը կատարենք բացարձակ տարբերությունների եղանակով, որի հաշվարկներն ու արդյունքները ցույց տանք աղ. 2.9-ում.

Բացարձակ տարբերությունների եղանակով համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի գործոնային վերլուծության հաշվարկներն ու արդյունքները.

Այլուսակ 2.9

Գործոնները	Ազդեցության հաշվարկները	Արտադրանքի ինքնարժեքի փոփոխությունները	
		Բացարձակ (իզ. դր.)	Չարաբերական (%)
Համեմատելի ապրանքային արտադրանքի արտադրության ծավալը	(92 427-85 860)(-1%) 100	- 64	0
Համեմատելի ապրանքային արտադրանքի արտադրության կառուցվածքը	90 777 - 92 427(100-1%) 100	- 726	- 0,79
Արտարանքի ռեսուրսատարությունը	89 290 90 777	- 1487	- 1,61
Նյութերի, էներգիայի, ծառայությունների և այլնի գներն ու սակագները	95 977↑ 89 290	+ 6687	+ 7,24
Ընդամենը		4410	+ 4,84

Այսպիսով, աղ. 2.7-2.9 - ում կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ պլանով նախատեսված էր նախորդ տարվա համեմատությամբ համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքը հաշվետու տարում իջեցնել 860 հազար դրամով (1%-ով):

Սակայն փաստացի տվյալներով ինքնարժեքը նախորդ տարվա համեմատ աճել է 2550 հազար դրամով (կամ 3,84%-ով): Դա պայմանավորված է ռեսուրսների գների բարձրացմամբ՝ 6687 հազար դրամով (կամ 7,24%-ով), որի հետ կապված գործոնների ուսումնասիրությունը կկատարենք «7 «Ուղղակի նյութական ծախսումներ»-ում:

2.6 Առանձին արտադրատեսակների ինքնարժեքների վերլուծությունը

Շուկայական տնտեսության պայմաններում արտադրանքի ինքնարժեքի ավելի խորը ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր արտադրատեսակի միավորի փաստացի ինքնարժեքի հաշվառումը և դրա վերլուծությունը, որը հնարավորություն կտա ռեալ գնահատել դրանց շահութաբերությունը և բացահայտել ծախսերի իջեցման լրացուցիչ ռեզերվներ: Յուրաքանչյուր արտադրատեսակի գծով կալկուլյացիոն հաշիվները վերլուծելու համար միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի փաստացի մակարդակը համեմատում են պլանայինի հետ, ինչպես նաև նախորդ տարիների հետ՝ և՛ ամբողջությամբ, և՛ ծախսերի առանձին հոդվածների գծով: Արտադրատեսակի ինքնարժեքի վրա ազդող առաջին կարգի գործոններն են՝ արտադրության ծավալը, հաստատուն ծախսերի մեծությունը, միավոր արտադրանքին ընկնող փոփոխուն ծախսերի գումարը: Այդ գործոնների ազդեցությամբ միավոր արտադրանքի ինքնարժեքի մակարդակի փոփոխության ուսումնասիրությունը կատարվում է գործոնային մոդելի օգնությամբ:

«Ա» արտադրատեսակի ինքնարժեքի գործոնային վերլուծության համար ելակետային տվյալներ.

Աղյուսակ 2.10

Ցուցանիշներ	Պլան	Փաստացի	Եղում(+,-)
Արտադրատեսակի թողարկման ծավալը (հատ) (Q)	545	473	- 72
Հաստատուն ծախսերի գումարը (հազար դրամ) (A)	9265	9460	+ 195
Միավոր արտադրանքին ընկնող փոփոխուն ծախսերի գումարը (հազար դրամ) (X)	38	39	+ 1
Միավոր արտադրանքի ինքնարժեքը (հազար դրամ) (C)	55	59	+ 4

Գործոնների ազդեցության վերլուծությունը կատարվում է շրջայական տեղադրումների եղանակով .

$$C_{պլ} = \frac{A_{պլ}}{Q_{պլ}} + X_{պլ} = \frac{9265}{545} + 38 = 55 \text{ հազ. դրամ}$$

$$C_1 = \frac{A_{պլ}}{Q\Phi} + X_{պլ} = \frac{9265}{473} + 38 = 57,59 \text{ հազ. դրամ}$$

$$C_2 = \frac{A\Phi}{Q\Phi} + X_{պլ} = \frac{9460}{473} + 38 = 58 \text{ հազ. դրամ}$$

$$C\Phi = \frac{A\Phi}{Q\Phi} + X\Phi = \frac{9460}{473} + 39 = 59 \text{ հազ. դրամ}$$

հնքնարժեքի փաստացի մեծության շեղումը պլանայինից կկազմի՝

$$\pm \Delta C = C_{\text{փ}} - C_{\text{պլ}} = 59\ 000 - 55\ 000 = 4000 \text{ դրամ}$$

Այդ թվում տեղի են ունեցել փոփոխություններ՝ ի հաշիվ.
ա. արտադրատեսակի թողարկման ծավալի.

$$\pm \Delta C_{(a)} = C_1 - C_{\text{պլ}} = 57\ 590 - 55\ 000 = 2590 \text{ դրամ}$$

բ. հաստատուն ծախսերի գումարի.

$$\pm \Delta C_{(b)} = C_2 - C_1 = 58\ 000 - 57\ 590 = 410 \text{ դրամ}$$

գ. տեսակարար փոփոխուն ծախսերի գումարի՝

$$\pm \Delta C_{(c)} = C_{\text{փ}} - C_2 = 59\ 000 - 58\ 000 = 1000 \text{ դրամ}$$

Այսպիսով, վերլուծությունից պարզվեց, որ «Ա» արտադրատեսակի միավորի 4000 դրամով աճը տեղի է ունեցել. 72 միավորով (հատով) արտադրանքի արտադրության կրճատման հետևանքով ինքնարժեքն աճել է 2590 դրամով; հաստատուն ծախսերի 195 հազար դրամով ավելացման հետևանքով ինքնարժեքն աճել է 410 դրամով; միավոր արտադրանքի ինքնարժեքում փոփոխուն ծախսերի 1000 դրամով ավելացման հետևանքով ինքնարժեքն աճել է 1000 դրամով:

Ուստի, ինքնարժեքը իջեցնելու համար կազմակերպությունը պետք է մեծացնի արտադրության ծավալը, որն իր հերթին առաջ կբերի միավոր արտադրանքի մեջ հաստատուն ծախսերի տեսակարար կշռի նվազման: Դա հանդիսանում է ռեզերվ՝ ինքնարժեքի հետագա իջեցման համար:

2.7 Ուղղակի նյութական ծախսումների վերլուծությունը

Որպես կանոն, ապրանքային արտադրանքի ինքնարժեքի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն հումքի ու նյութերի ծախսումները: Այդ ծախսումները արտադրության տարբեր ճյուղերի կազմակերպություններում արտադրանքի արտադրության ծախսերի մեջ տարբեր տեսակարար կշիռ ունեն: Օրինակ, սննդի արդյունաբերության մեջ արտադրության ծախսերի կազմում դրանց տեսակարար կշիռը հասնում է 90% մեքենաշինության բնագավառում՝ 65% և այլն: Աեդ պատճառով նյութական արտադրության ճյուղի կազմակերպություններում վերլուծություն կատարելիս մեծ ուշադրություն է դարձվում նյութական ծախսերի պլանի կատարման աստիճանի և դինամիկայի վրա, քա-

ևի որ դրանց տնտեսումը արտադրամբի ինքնարժեքի իջեցման կարևոր ռեզերվն է:

Բոլոր նյութական ծախսումները հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում են 211 «նյութեր» հաշվում, որի մեջ մտնում են՝ հումքը և նյութերը, գնովի կիսապատրաստուքները, համալրող շինվածքներն ու դետալները; վառելիքը; տարան և տարանյութերը, պահեստամասերը, շինանյութերը, գյուղատնտեսական նշանակության նյութերը, վերամշակման հանձնված նյութերը, այլ նյութեր: Արագամաշ առարկաների արժեքը արտացոլվում է 213 «Արագամաշ առարկաներ» հաշվում:


Դրանց բաց թողումը արտադրություն՝ ձևակերպվում է հետևյալ կերպ.

- | | |
|--------------|--------------|
| 1. Դեբետ 811 | 2. Դեբետ 811 |
| Դեբետ 812 | Դեբետ 812 |
| Կրեդիտ 211 | Կրեդիտ 213 |

Այս հոդվածի գծով ծախսումների ընդհանուր մեծությունը (S) կախված է արտադրանքի թողարկման ծավալից (Q), նրա կառուցվածքից (D) և առանձին արտադրատեսակների վրա կատարվող ծախսերի տեսակարար կշռից:

Ուղղակի նյութական ծախսումների գործոնային համակարգի բլոկ սխեման

Մխենա 7



Առանձին արտադրատեսակների միավորի տեսակարար նյութական ծախսումները (S_i) իրենց հերթին կախված են միավոր արտադրանքի համար ծախսվող նյութերի քանակից ($\sum_{j=1}^m m_j$) և միավոր նյութի միջին գնից (P_j):

Ելույթական ծախսումների հաշվարկման բանաձևերը դուրս բերենք մատրիցայի մոդելի օգնությամբ: Ենթադրենք՝ կազմակերպությունը արտադրում է n տեսակի արտադրատեսակները՝ համապատասխան քանակություններով.

I II III • • • I • • • n
 Q_1 Q_2 Q_3 • • • Q_i • • • Q_n

Ենթադրենք կազմակերպությունը արտադրանքի արտադրության համար օգտագործվում է m տեսակի նյութեր՝ յուրաքանչյուրից համապատասխան քանակությամբ ու համապատասխան նյութի միավոր գնով .

I II III • • • j • • • n
 M_1 M_2 M_3 • • • M_j • • • M_m
 P_1 P_2 P_3 • • • P_j • • • P_m

Աղյուսակ 2.11

Արտադրատեսակների համարադաստիարակի քանակությունը	Օգտագործվող նյութերը համապատասխան քանակությամբ ու գնով						Միավոր արտադրանքի վրա ծախսված նյութի քանակը՝		
	I	II	III	...	i	...	m		
	M_1	M_2	M_3	...	M_i	...	M_m		
	P_1	P_2	P_3	...	P_i	...	P_m		
							$S_i = \sum_{j=1}^m (M_j \times P_j)$ 1 արտադրատեսակի վրա ծախսվող նյութի քանակը $S_i = Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j)$		
I	Q_1	$Q_1 \times M_1 \times P_1$	$Q_1 \times M_2 \times P_2$	$Q_1 \times M_3 \times P_3$...	$Q_1 \times M_j \times P_j$...	$Q_1 \times M_m \times P_m$	$S_i = Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j)$
II	Q_2	$Q_2 \times M_1 \times P_1$	$Q_2 \times M_2 \times P_2$	$Q_2 \times M_3 \times P_3$...	$Q_2 \times M_j \times P_j$...	$Q_2 \times M_m \times P_m$	$S_i = Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j)$
III	Q_3	$Q_3 \times M_1 \times P_1$	$Q_3 \times M_2 \times P_2$	$Q_3 \times M_3 \times P_3$...	$Q_3 \times M_j \times P_j$...	$Q_3 \times M_m \times P_m$	$S_i = Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j)$
.....
i-րդ	Q_i	$Q_i \times M_1 \times P_1$	$Q_i \times M_2 \times P_2$	$Q_i \times M_3 \times P_3$...	$Q_i \times M_j \times P_j$...	$Q_i \times M_m \times P_m$	$S_i = Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j)$
.....
n-րդ	Q_n	$Q_n \times M_1 \times P_1$	$Q_n \times M_2 \times P_2$	$Q_n \times M_3 \times P_3$...	$Q_n \times M_j \times P_j$...	$Q_n \times M_m \times P_m$	$S_i = Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j)$
$Q = \sum_{i=1}^n Q_i$ $S_i = m_j \times P_j \times \sum Q_i$ $S_j = m_j \times P_j \times \sum Q_i$		$S_1 = m_1 \times P_1 \times \sum Q_i$	$S_2 = m_2 \times P_2 \times \sum Q_i$	$S_3 = m_3 \times P_3 \times \sum Q_i$		$S_j = m_j \times P_j \times \sum Q_i$		$S_j = m_j \times P_j \times \sum Q_i$	$S = \sum_{i=1}^n \left(Q_i \times \sum_{j=1}^m (M_j \times P_j) \right)$

Այսպիսով, ամբողջ արտադրանքի թողարկման նյութական ծախսումները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$S = \sum_{i=1}^n \left(Q_{ix} \sum_{j=1}^m (M_{jx} P_j) \right)$$

Ապրանքային արտադրանքի նյութական ծախսումների մեծության վրա ազդող գործոնների վերլուծությունը կատարվում է շղթայական տեղադրումների եղանակով:

- Արտադրանքի արտադրության համար պահանջվող նյութական ծախսումները (1000 դրամ)

1. Պլանային մեծությունը՝

$$S_{պլ} = \sum_{i=1}^n (Q_{iպլ} \times \sum_{j=1}^n (M_{iպլ} \times P_{iպլ})) = 35.225$$

2. Ծախսերի պլանային մեծությունը վերահաշվարկված արտադրանքի արտադրության փաստացի կառուցվածքի համար՝

$$S' = \sum_{i=1}^n (Q_{iպլ} \times \sum_{j=1}^n (M_{iպլ} \times P_{iպլ})) \cdot D = 35225 \cdot 1.0329824 = 36.387$$

3. Ծախսերի մեծությունը՝ հաշվարկված պլանային նորմերով ու պլանային գներով՝ արտադրանքի փաստացի թողարկման ծավալի համար.

$$S'' = \sum_{i=1}^n (Q_{iփ} \times \sum_{j=1}^n (M_{iպլ} \times P_{iպլ})) = 37.546$$

4. Փաստացի ծախսումները՝ հաշվարկված պլանային գներով՝

$$S''' = \sum_{i=1}^n (Q_{iփ} \times \sum_{j=1}^n (M_{iփ} \times P_{iպլ})) = 38.768$$

5. Փաստացի մեծությունը՝

$$S_{փ} = \sum_{i=1}^n (Q_{iփ} \times \sum_{j=1}^n (M_{iփ} \times P_{iփ})) = 40.982$$

$$\pm \Delta S = S_{\text{փ}} - S_{\text{ալ}} = 40.982 - 35.225 = + 5.757 \text{ հազար դրամ}$$

Ստացանք, որ արտադրանքի արտադրության նյութական ծախսումներն աճել են 5 757 հզ. դր., այդ թվում՝ ի հաշիվ՝
 - արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության՝

$$S_{(Q)} = S^* - S_{\text{ալ}} = 36\,387 - 35\,225 = +1162 \text{ հզ. դր.}$$

- արտադրանքի արտադրության կառուցվածքի փոփոխության՝

$$S_{(Q(D))} = S^* - S^* = 37\,546 - 36\,387 = 1159 \text{ հզ. դր.}$$

- նյութերի տեսակարար ծախսումների փոփոխության՝

$$S_{(m)} = S^{**} - S^* = 38\,768 - 37\,546 = + 1222 \text{ հզ. դր.}$$

- իրանքի և նյութերի գները փոփոխությունը՝

$$S_{(P)} = S_{\text{փ}} - S^{**} = 40\,982 - 38\,768 = 2214$$

$$S = S_{(Q)} + S_{(Q(D))} + S_{(m)} + S_{(P)} = 1162 + 1159 + 1222 + 2214 = 5757 \text{ հզ. դր.}$$

Առանձին արտադրատեսակների վրա նյութական ծախսումների գումարը կախված է նույն գործոններից, բացառությամբ՝ արտադրատեսակի արտադրության կառուցվածքի:

$$S_i = Q_i x \sum_{j=1}^m (M_j x P_j)$$

S_i -ի-րդ արտադրատեսակի նյութական ծախսումները.

Q_i -ի-րդ արտադրատեսակի թողարկման քանակը:

Օրինակ, «Բ» արտադրատեսակի թողարկման համար պահանջվող նյութական ծախսումները (հզ.դր.)

1. պլանային մեծությունը

$$S_{i\text{պլ}} = Q_{i\text{պլ}} x \sum_{j=1}^m (M_{j\text{պլ}} x P_{j\text{պլ}}) = 14.100$$

2. ծախսերի մեծությունը՝ հաշվարկված պլանային նորմերով ու պլանային գներով՝ արտադրանքի թողարկման փաստացի ծավալի համար՝

$$S_i^* = Q_i^* x \sum_{j=1}^m (M_{j\text{պլ}} x P_{j\text{պլ}}) = 12.960$$

3. փաստացի ծախսումները՝ պլանային գներով.

$$S''i = Qi \times \sum_{j=1}^m (M_j \times P_{j\text{պ}}) = 13.216$$

4. փաստացի մեծությունը՝

$$S_i \text{ փ} = Qi \text{ փ} \times \sum_{j=1}^m (M_j \text{ փ} \times P_{j\text{պ}}) = 12.538$$

$$\pm \Delta Si = Si \text{ փ} - Si \text{ փ} - Si \text{ պ} = 12.538 - 14.100 = -1.562 \text{ հազար դրամ}$$

«Բ» արտադրատեսակի նյութական ծախսումները նվազել են 1562 դրամով, այդ թվում՝

- արտադրատեսակների արտադրության ծավալի փոփոխության հետևանքով՝

$$S_{i(Q)} = S'_i - S_{i\text{պ}} = 12\ 960 - 14\ 100 = -1140 \text{ հզ. դր.}$$

- նյութերի տեսակարար ծախսումների փոփոխության հետևանքով՝

$$S_{i(m)} = S''_i - S'_i = 13\ 216 - 12\ 960 = +256 \text{ հզ. դր.}$$

- հումքի և նյութի գների փոփոխության հետևանքով՝

$$S_{i(P)} = S'_i \text{ փ} - S''_i = 12\ 538 - 13\ 216 = -678:$$

$$S_i \text{ փ} = S_{i(Q)} + S_{i(P)} = -1140 + 256 - 678 = -1562 \text{ հզ. դր.}$$

Եթե վերլուծության է ենթարկվում ոչ թե ամբողջ արտադրությունը, այլ միայն միավոր արտադրանքը, ապա նյութական ծախսումների վրա գործոնների հաշվարկը իրականացվում է հետևյալ մոդելի օգնությամբ՝

$$S_{\text{միավ.}} = \sum_{j=1}^m (M_j \times P_j)$$

1. $S_{\text{միավ. պլ.}} = \sum_{j=1}^m (Mi_{\text{պլ}} \times Pi_{\text{պլ}})$

1. $\Delta S_{\text{միավ. (m)}} = S'_{\text{միավ.}} - S_{\text{միավ. պլ.}}$

$$2. S' \text{ միավ. } \sum_{j=1}^m (M_{ij} \times P_{ij})$$

2. ΔS միավ. (P) = S' միավ. փ. - S' միավ.

$$3. S \text{ միավ. փ. } \sum_{j=1}^m (M_{ij} \times P_{ij})$$

3. ΔS միավ. ընդ. = S' միավ. փ. - S միավ. պլ.

Օրինակ. ենթադրենք միավոր արտադրանքի արտադրության համար ծախսվում են 4 տեսակի նյութեր, որոնց ծախսումների վրա ազդող գործոններն ու դրանց հաշվարկներն արտացոլված են աղ. 2.11.

Միավոր արտադրանքի նյութական ծախսումների գումարի գործոնային վերլուծությունը. (հազար դրամ).

Աղյուսակ 2.12

Նյութեր	Միավոր արտադրանքի ծախսումները			Ընդունը պլանից		
	Պլան	Փաստային պլանային զներով	Փաստացի	Ընդամենը	Սյր քվում ի հաշիվ	
					քանակի	զնի
	$S = M_{pl} \cdot P_{pl}$	$S = M_{act} \cdot P_{pl}$	$S_{pl} = M_{pl} \cdot P_{pl}$	$\Delta S = S_{pl} - S_{pl}$	$\Delta S_{qm} = S - S_{pl}$	$\Delta S_{qm} = S_{pl} - S'$
A	25	28,4	30,5	+ 5,5	+ 3,4	+ 2,1
B	40	42,3	51,2	+ 11,2	+ 2,3	+ 8,9
C	64	56,8	65,3	+ 1,3	- 7,2	+ 8,5
D	85	93,6	77,9	- 7,1	+ 8,6	- 15,7
	214	221,1	224,9	+ 10,9	+ 7,1	+ 3,8

Այսպիսով միավոր արտադրանքի նյութական ծախսումներն աճել են 10,9 հազար դրամով, որից 7100 դրամը՝ ի հաշիվ օգտագործվող նյութերի քանակի փոփոխության, 3800 դրամը՝ ի հաշիվ օգտագործվող նյութի միավորի գնի:

Միավոր արտադրանքի նյութական ծախսումների մեծությունը կախված է հումքի ու նյութերի որակից, մի տեսակի նյութը 1 ուրիշով փոխարինելու հնարավորությունից, հումքի բաղադրամասային փոփոխություններից, արտադրության կազմակերպման ու տեխնոլոգիական կատարելության մակարդակից, թափոնների քանակից և այլն: Նախ՝ պետք է որոշել նյութերի տեսակարար ծախսումների փոփոխությունը՝ ի հաշիվ այս կամ այն գործոնի ազդեցության, այնուհետև այդ փոփոխության չափը բազմապատկել պլանային զներով և i-րդ արտադրատե-

սակի փաստացի ծավալով: Արդյունքում կստանանք տվյալ արտադրատեսակի արտադրության համար կատարված նյութական ծախսումների գումարի աճը՝ ի հաշիվ համապատասխան գործոնի.

$$\pm \Delta S(x)_{i} = Q_{i\text{պլ}} \times \sum_{j=1}^m \pm \Delta M(x)_{j} \times P_{i\text{պլ}}$$

որտեղ՝

(X) - որևէ գործոնը

$M_{(x)j}$ - նյութական ծախսումների փոփոխության չափը՝ ի հաշիվ (X) գործոնի.

Նյութի միավորի միջին գնի մակարդակը կախված է հումքի շուկայի ստրուկտուրայից, մատակարարների բազ թողման գնից, նյութական ռեսուրսների ներխմբային կառուցվածքից, տրանսպորտային և նախապատրաստական ծախսումների մակարդակից, հումքի որակից և այլն: Որպեսզի հաշվարկենք նյութական ծախսերի փոփոխության գումարը՝ ի հաշիվ նշված գործոններից յուրաքանչյուրի, անհրաժեշտ է նյութերի գնի փոփոխությունը՝ ի հաշիվ նշված գործոնի, բազմապատկել i-րդ արտադրատեսակի փաստացի ծավալով և դրա արտադրության համար օգտագործված նյութի փաստացի քանակով.

$$\pm \Delta S(x)_{i} = Q_{i\text{պ}} \times \sum_{j=1}^m (M_{j\text{պ}} \times \Delta P(x)_{j})$$

որտեղ՝

$P_{(x)j}$ -- j - րդ նյութի միավորի գնի փոփոխությունը՝ ի հաշիվ (X) գործոնի:

Շատ կազմակերպություններում կարող են տեղ գտնել նաև գերպլանային վերադրարժվող թափոնները, որոնք կարելի է օգտագործել նաև այլ նպատակների համար: Եթե դրանց արժեքը համեմատենք հնարավոր օգտագործման գնով և սկզբնական հումքի արժեքով, ապա կիմասանք, թե արտադրանքի ինքնարժեքի մեջ մտնող նյութական ծախսումները ինչ գումարով են աճել (կամ նվազել):

Վերադարձվող թափոնների արժեքը հնարավոր օգտագործման գնով (իզ. դր.)

- պլանային նորմաները արտադրանքի փաստացի թողարկման ծավալով՝ 1200 հզ.դր.

- փաստացի մեծությունը՝ 1750 հզ.դր.
- գերպլանային թափոնների գումարը կազմել է՝ 1750 - 1200 = 550 հազար դրամ.

- վերադարձվող թափոնների արժեքը սկզբնական հումքի գնով՝ 5250 հազար դրամ

Այստեղից հետևում է, որ սկզբնական հումքի գնով հաշվարկված վերադարձվող թափոնների արժեքը 3 անգամ մեծ է հնարավոր օգտագործման գնով հաշվարկված արժեքից (5250 :1750): Չետևաբար գերպլանային թափոնների արժեքը՝ սկզբնական հումքի գներով հաշվարկված, կկազմի 1650 հզ.դր.(550*3=1650), իսկ հնարավոր օգտագործման գնով՝ 550 հզ.դր.: Սա նշանակում է, որ արտադրանքի թողարկման նյութական ծախսումների գումարը ի հաշիվ այս գործոնի աճել է 1100 հզ.դրամով (1650-550): Սա ինքնարժեքի իջեցման չօգտագործված ռեզերվ է:

Բացի այդ կարելի է հաշվարկել՝ գերպլանային վերադարձվող թափոնների հետևանքով ինչ ծավալի արտադրանք չի ստացվել: Դրա համար գերպլանային թափոնների՝ սկզբնական հումքի գնով հաշվարկված արժեքը պետք է հարաբերել միավոր արտադրանքի նյութական ծախսումների նորմային: Ենթադրենք, որ տվյալ արտադրատեսակի («Ա») թողարկման համար անհրաժեշտ հումքը նորմայով կազմում է 25 հազար դրամ, ուստի գերպլանային թափոնների հետևանքով չի արտադրվել 66 միավոր արտադրանք (1650:25): Եթե ընդունենք, որ միավոր արտադրանքի ինքնարժեքը 59 հազար դրամ է, ապա չարտադրված արտադրանքի ծավալը դրամական արտահայտությամբ կկազմի 3894 հազար դրամ (66*59) : Այս տվյալների հիման վրա կարելի է հաշվարկել, թե որքանով է աճել միավոր արտադրանքի ինքնարժեքը.

$$\Delta C = \frac{s - P \downarrow s + s}{\varrho \uparrow \varrho} - \frac{s}{\varrho} = \Delta C = \frac{27907 - 1.100 + (39 \times 66)}{473 + 66} - \frac{27.907}{473 \text{ շրջանում}} = \frac{29381}{539} - \frac{27907}{473} = 54.5 - 59 = -4.5 \text{ հազար դրամ}$$

Գերպլանային չվերադարձվող թափոնների առկայությունը հանգեցնում է արտադրանքի անմիջական թանկացմանը և արտադրության ծավալի կրճատման: Նյութական ծախսումների աճի գումարը որոշելու համար անհրաժեշտ է չվերադարձվող թափոնների գերպլանային քանակությունը բազմապատկել սկզբնական նյութի պլանային գնով, այնուհետև անհրաժեշտ է որոշել, թե այդ գործոնի ներգործությամբ որքանով է կրճատվել արտադրանքի թողարկման ծա-

վալը և որքանով է աճել արտադրանքի ինքնարժեքը: Հաշվարկման մեթոդիկան ունի նախորդի տրամաբանությունը:

Մեկ նյութը մեկ ուրիշով փոխարինելու դեպքում փոխվում է ոչ միայն միավոր արտադրանքի նյութական ծախսումների քանակը, այլև դրա արժեքը: Որպեսզի պարզենք, թե միավոր արտադրանքի նյութական ծախսումները որքանով են աճել (կամ նվազել), անհրաժեշտ է փոխարինող նյութի քանակի (q1) և փոխարինվող նյութի քանակի (q0) միջև եղած տարբերությունը բազմապատկել փոխարինվող նյութի գնով (P0), իսկ փոխարինող նյութի գնի (P1)՝ և փոխարինվող նյութի գնի (P0) միջև եղած տարբերությունը բազմապատկելով փոխարինող նյութի քանակով՝ կստանանք, թե այդ գործոնի հաշվին որքանով է աճել, կամ նվազել, այդ նյութից պատրաստվող արտադրանքի ինքնարժեքը.

$$1. \pm \Delta S_{(q)} = (q_1 - q_0) * P_0$$

$$2. \pm \Delta S_{(p)} = (P_1 - P_0) * q_1$$

$$3. \pm \Delta S = S_{(q)} + S_{(p)}$$

Օրինակ, անվանացուցակի i-րդ արտադրատեսակի արտադրության համար նյութական ծախսումների հաշվարկը ընդհանրացված է տեսքով ցույց տանք աղ. 2.13-ում և աղ. 2.14-ում:

i-րդ արտադրատեսակի թողարկման համար պահանջվող նյութական ծախսումների գործոնային վերլուծության ելակետային տվյալները.

Աղյուսակ 2.13

Ցուցանիշներ	Պլան			Փաստացի			Շեղումը պլանից (+,-) (հզ. դր.)
	քանակ (q) կգ	գինը (P) դր.	գումարը q*P (հզ. դր.)	քանակ (q) կգ	գինը (P) դր.	գումարը q*P (հզ. դր.)	
Նյութ A բաց է թողնված արտադրություն	12 000	1 300	15 600	12 500	1 260	13 750	+ 150
Թափոններ՝ վերադարձվող չվերադարձվող	1 200 200	150 -	180 -	1 400 300	150 -	210 -	+ 30 -
Արտադրատեսակի արտադրության վրա կատարված ծախսումները	12000 - 1200 - 200 =10 600		15600 -180 =15420	12500 -1400 - 30 =10800		15750 - 210 =15 540	+ 120
Փոխարինող նյութեր Նյութ B Նյութ C	200 -	4 700 -	940 -	- 300	- 4 200	- 1 260	- 940 + 1 260
Ընդամենը			15 420 +840 =16 360		- -	15 540 +1 260 =16 800	+ 440

Հաշվարկների շարունակություն ու դրանց արդյունքները արտացոլենք աղ. 13-ում:

i-րդ արտադրատեսակի թողարկման համար պահանջվող նյութական ծախսումների գումարի մեծության վրա ներգործող գործոնների ազդեցության հաշվարկները և դրանց արդյունքները.

Աղյուսակ 2.14

Գործոն	Ազդեցության հաշվարկը	Ազդեցության չափը
«Նյութ A» տեսակարար ծախսման բարձրացումը	(10 800 – 10 600)*1 300	+ 260 000
«Նյութ A» -ի զնի իջեցումը	(1 260 – 1 300)*12 500	- 500 000
Վերադարձվող թափոնների քանակի ավելացումը	(1 400 – 1 200)*(1 300-150)	+ 230 000
Չվերադարձվող թափոնների քանակի ավելացումը	(300 - 200)*1 300	130 000
«Նյութ B» -ի փոխարինումը «նյութ C»-ով քանակի փոփոխությունը զնի փոփոխությունը	(300 - 200)*4 700 (4 200 – 4 700)*300	+ 470 000 - 150 000

Այսպիսով, i-րդ արտադրատեսակի արտադրության նյութական ծախսումները աճել են 440 հզ. դրամով: Այդ աճն առաջ է եկել ի հաշիվ «A» նյութի տեսակարար ծախսումների բարձրացման հետևանքով (260 հզ.դր.), վերադարձվող թափոնների քանակի ավելացման հետևանքով (230 հզ.դր.), չվերադարձվող թափոնների քանակի ավելացման հետևանքով (130 հզ.դր.), «B»-ն «C»-ով փոխարինելու հետևանքով քանակական գործոնի (470 հզ.դր.) հաշվին: Իսկ մնացած գործոնները առաջ են բերել նվա-զում. »A« նյութի զնի իջեցման հետևանքով 500 հզ.դր. և «B»-ն «C»-ով փոխարինելու հետևանքով գնային գործոնի հաշվի 150 հզ.դր.:

Եթե կազմակերպությունում առկա են գնովի համալրող շինվածքներ,դետալներ և կիսաֆաբ-րիկատներ, ապա անհրաժեշտ է որոշել, թե կազմակերպության համար կոոպերացիան որքանով է ձեռնառու: Դրա համար համեմատտում են ձեռք բերման գինն ու սեփական արտադրության շինվածքի ինքնարժեքը: Եթե ձեռք բերման գինը ցածր է ինքնարժեքից, ապա իսաֆաբրիկատներ ձեռք բերումը ավելի ձեռնառու է :


2.8 Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծությունը

Արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ աշխատանքները կատարվում են արտադրական հիմնական բանվորների կողմից, ուստի նրանց աշխատանքի ինքնարժեքի մեջ, և իրենց բնույթով փոփոխուն են, քանի որ արտադրանքի ծավալի աճի կամ նվազման հետ մեկտեղ համամասնորեն ա-ճում կամ նվազում են:

Ուղղակի աշխատավարձի ընդհանուր գումարի մեծությունը կախված է ապրանքային արտադրանքի ծավալից, նրա կառուցվածքից և առանձին արտադրատեսակների գծով տեսակարար ծախսումներից, որոնք իրենց հերթին կախված են աշխատատարությունից և 1 մարդ-ժամվա վարձատրության մակարդակից:

Արտադրանքի արտադրության համար պահանջվող աշխատանքի վարձատրության գործոնային բլոկ-սխեման.

Սխեմա 8



Հաշվի առնելով այս գործոնները՝ աշխատավարձի վարձատրության գումարը արտադրանքի ինքնարժեքում կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$A = \sum_{i=1}^n Q_i x r_i a_i$$

Ուղղակի աշխատանքային ծախսումների գործոնային վերլուծությունը կատարվում է շղթայական տեղադրումների եղանակի կիրառմամբ:

Արտադրանքի ուղղակի աշխատանքային ծախսումների գործոնային վերլուծության համար անհրաժեշտ տվյալները.

Աղյուսակ 2.15

Արտադրատեսակներ	Արտադրանքի քոդարկման ծավալը (հատ)		Տեսակարար աշխատատարություն (մարդ-ժամ)		Սիջին ժամային աշխատանքի վարձատրության չափը (հզ. դր.)	
	Պլան	Փաստ	Պլան	Փաստ.	Պլան	Փաստ.
Ա	545	473	6.0	5.5	1.2	1.5
Բ	530	526	7.5	7.0	1.5	1.7
Գ	215	258	13.5	11.5	2.0	2.2
Դ	135	215	15.2	12.9	2.1	2.3
Ընդամենը	1 425	1 472	-	-	-	-

Ուղղակի աշխատանքային ծախսումների գործոնների ազդեցության հաշվարկման կարգն ու ազդեցության արդյունքները.

Աղյուսակ 2.16

Արտադրատեսակներ	Ուղղակի աշխատավարձի գումարը (հզ. դր.)				Ուղղակի աշխատավարձի գումարի փոփոխությունը (հզ.դր.)			
	Q _պ ·r _պ ·a _պ	Q _ֆ ·r _պ ·a _պ	Q _ֆ ·r _ֆ ·a _պ	Q _ֆ ·r _ֆ ·a _ֆ	Ընդամենը	այդ բվում՝ ի հաշիվ		
						Q	r	a
Ա	3 924	3 406	3 122	3 902	- 22	- 518	- 284	+ 780
Բ	5 963	5 918	5 523	6 259	+ 296	- 45	- 395	+ 736
Գ	5 805	6 966	5 934	6 627	+ 722	+ 1161	-1 032	+ 593
Դ	4 309	6 863	5 824	6 379	+2 070	+ 2 554	-1 039	+ 555
Ընդամենը	20 001	23 153	20 403	23 067	+ 3 066	+ 3 152	-2750	+2664

Արտադրանքի արտադրության ուղղակի աշխատանքային ծախսումների գումարը (հզ.դր.)

- պլանային գումարը՝

$$A_{պլ} = \sum_{i=1}^n (Q_{պլ} \times R_{պլ} \times A_{պլ}) = 20001 \text{ հազար դրամ}$$

- պլանային մեծությունը՝ վերահաշվարկված արտադրանքի արտադրության փաստացի կառուցվածքի համար.

$$A_1 = \sum_{i=1}^n (Q_{պլ} \times R_{պլ} \times A_{պլ}) \times D = 20001 \times 1.0329824 = 20661$$

- փաստացի մեծությունը՝ հաշվարկված աշխատանքի վարձատրության պլանային մակարդակով.

$$A_3 = \sum_{i=1}^n (Q_i\phi \times R_i\phi \times A_i\omega) = 20403$$

- ծախսումների պլանային մակարդակը՝ հաշվարկված արտադրանքի թողարկման փաստացի ծավալով.

$$A_2 = \sum_{i=1}^n (Q_i\phi \times R_i\omega \times A_i\omega) = 23153$$

- փաստացի գումարը՝

$$A\phi = \sum_{i=1}^n (Q_i\phi \times R_i\phi \times A_i\phi) = 23067$$

$$\pm\Delta A = A_{\omega} - A\phi = 23067 - 20001 = 3066$$

Ստացանք, որ ուղղակի աշխատավարձի ընդհանուր գերածախսը կազմել է 3 066 հզ.դր., այդ թվում՝ ի հաշիվ՝

- արտադրանքի արտադրության ծավալի ավելացման՝

$$A_{(Q)} = A_1 - A_{\omega} = 20\ 661 - 20\ 001 = 660 \text{ հզ.դր.}$$

- արտադրանքի արտադրության կառուցվածքի փոփոխության.

$$A_{(Q(D))} = A_2 - A_1 = 23\ 153 - 20\ 661 = + 2\ 492 \text{ հզ.դր.}$$

- արտադրանքի աշխատատարություն իջեցման՝

$$A_{(r)} = A_3 - A_2 = 20\ 403 - 23\ 153 = - 2\ 750 \text{ հզ.դր.}$$

- աշխատանքի վարձատրության մակարդակի բարձրացման՝

$$A_{(\phi)} = A\phi - A_3 = 23\ 067 - 20\ 403 = +2664 \text{ հզ.դր.}$$

Այսպիսով՝

$$A = A_{(Q)} + A_{(Q(D))} + A_{(r)} + A_{(\phi)} = 660 + 2\ 492 - 2\ 750 + 2\ 664 = 3\ 066 \text{ հզ.դր.:}$$

Աշխատավարձի գումարների փոփոխությունները ցույց են տալիս, թե յուրաքանչյուր արտադրատեսակի գծով որքանով է նվազել կամ

ավելացել աշխատավարձի ընդհանուր գումարը, և դրա կազմում տեղի ունեցած փոփոխությունները ի հաշիվ յուրաքանչյուր գործոնի:

Այնուհետև, անհրաժեշտ է իմանալ, ինչպես է փոփոխվել միավոր արտադրանքի ինքնարժեքը՝ ի հաշիվ աշխատատարության և միջին ժամային վարձատրության մակարդակի (աղյուսակ 16.):

Միավոր արտադրանքի դիմաց վճարվող աշխատավարձի գործոնային վերլուծությունը.

Աղյուսակ 2.17

Արտադրատեսակներ	Կեսակարար աշխատատարություն (r) (մարդ ժամ)		Աշխատանքի վարձատրության մակարդակ (Q) (հազար դրամ)		Արտադրատեսակի արտադրության դիմաց վճարվող աշխատավարձը (r*a) (հազար դրամ)		Շեղումները պլանից (+,-) (հազար դրամ)		
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի	Ընդամենը	այդ թվում	
								r	a
Ա	6,0	5,5	1,2	1,5	7,20	8,25	+ 1,05	-0,60	+1,65
Բ	7,5	7,0	1,5	1,7	11,25	11,90	+ 0,65	- 0,75	+1,40
Գ	13,5	11,2	2,0	2,2	27,00	25,30	- 1,70	- 4,00	+2,30
Դ	15,2	12,9	2,1	2,3	31,92	29,67	- 2,25	- 4,83	+2,58

$$\Delta A_{(r)} = r * a_{\text{պլ}}$$

$$\text{«Ա» } \Delta A_{(r)} = - 0,5 * 1,2 = - 0,6$$

$$\text{«Բ» } \Delta A_{(r)} = - 0,5 * 1,5 = - 0,75$$

$$\text{«Գ» } \Delta A_{(r)} = - 2 * 2 = - 4,0$$

$$\text{«Դ» } \Delta A_{(r)} = - 2,3 * 2,1 = - 4,83$$

$$\Delta A_{(a)} = r_{\text{պլ}} * a$$

$$\Delta A_{(a)} = 5,5 * 0,3 = + 1,65$$

$$\Delta A_{(a)} = 7,0 * 0,2 = + 1,40$$

$$\Delta A_{(a)} = 11,5 * 0,2 = + 2,30$$

$$\Delta A_{(a)} = 12,9 * 0,2 = + 2,58$$

Վերլուծության արդյունքներից երևում է, որ միավոր արտադրանքի ինքնարժեքը ի հաշիվ տեսակարար աշխատատարության կրճատման նվազել է ի հաշիվ աշխատանքի վարձատրության մակարդակի բարձրացման, աճել է:

Արտադրանքի աշխատատարությունը և աշխատանքի վարձատրության մակարդակը կախված են նոր պրոգրեսիվ տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման, արտադրության մեխանի-զացման ու ավտոմատացման, աշխատանքի կազմակերպման, աշխատողների տարակարգման և այլ գործոններից, որոնք համարվում են 3 կարգի գործոններ: Աշխատանքի վարձատրության վրա այս գործոնների ազդեցությունը որոշվում է հետյալ կերպ.

$$\Delta A_{(r)} = Q_{\text{պլ}} * \Delta r_{(r)} + a_{\text{պլ}}$$

$$\Delta A_{(x)} = Q_{\text{փ}} * r_{\text{փ}} * \Delta a_{(x)}$$

Օրինակ, հին սարքավորումների մի մասը նորով փոխորինելու արդյունքում «Բ» արտադրատեսակի միավորի աշխատատարությունը նվազել է 0,5 մարդ-ժամով: Արդյունքում՝ միավոր արտադրատեսակի գծով աշխատավարձի տնտեսումը կազմում է $0,5 * 1,5 = 0,75$ հազար դրամ, իսկ ամբողջ արտադրատեսակի թողարկման փաստացի ծավալի հաշվով $0,75 * 526 = 394,5$ հազար դրամ:

Սակայն, եթե պահանջվում է արտադրանքի ինքնարժեքի վրա տվյալ գործոնի ազդեցությունը գնահատել կոմպլեքսային ձևով, ապա անհրաժեշտ է հաշվարկել, թե նոր սարքավորումների ներդրմամբ ինքնանով են ավելացել ամորտիզացիան և մյուս ծախսումները: Դրա համար ուղղակի աշխատանքային ծախսումների փաստացի գումարը ($A_{\text{փ}}$) և արտադրանքի արտադրության փաստացի ծավալը ($Q_{\text{փ}}$) անհրաժեշտ է հաշվարկել տվյալ գործոնի ազդեցությամբ և միավոր արտադրանքի ինքնարժեքի ստացված մակարդակը համեմատել փաստացի մակարդակի հետ .

$$\Delta C(x) = \frac{A}{Q} - \frac{A + \Delta A(x)i - \Delta AM(x)i}{Q - \Delta Q(x)i}$$

որտեղ՝

$\Delta C_{(x)}$; - ինքնարժեքի մակարդակի փոփոխությունը՝ ի հաշիվ կոնկրետ կազմակերպատեխնիկական միջոցառման իրականացման.

$\Delta A_{(x)}$; - աշխատավարձի գումարի փոփոխությունը՝ ի հաշիվ i-րդ գործոնի.

$\Delta AM_{(x)}$; - ամորտիզացիոն գումարների և սարքավորումների պահպանման այլ ծախսերի փոփոխությունը ի հաշիվ i-րդ միջոցառման ներդրման:

$\Delta Q_{(x)}$; - արտադրանքի ծավալի փոփոխությունը՝ ի հաշիվ i-րդ միջոցառման:

2.9 Անուղղակի ծախսերի վերլուծությունը

Անուղղակի ծախսերը արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվում են որպես կոմպլեքսային ծախսեր: Կոմպլեքսային են կոչվում այն ծախսերը, որոնք ներառում են մի քանի միատարր ծախսեր: Կոմպլեքսային ծախսեր են՝ սարքավորումների շահագործման ու պահպանման ծախսերը; ընդհանուր արտադրական ծախսերը, առևտրային ծախսերը: Այս ծախսերի վերլուծությունն իրականացվում է ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող դրանց փաստացի մե-

ծությունների դիանամիկայի համեմատությամբ 5-10 տարվա կտրվածքով, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանում՝ փաստացի մակարդակի համեմատությունը պլանայինի հետ: Նման համեմատությունը ցույց է տալիս, թե արտադրանքի ինքնարժեքի մեջ ինչպես է փոփոխվել դրանց բաժինը՝ ըստ դիանամիկայի և պլանի համեմատությամբ, և աճի կամ նվազման ինչպիսի տեղեկեցուցեր են նկատվում: Վերլուծությունների արդյունքում բացահայտվում են բացարձակ և հարաբերական շեղումների պատճառները:

Մեքենաների ու սարքավորումների շահագործման ու պահպանման ծախսերը ներառում են տեխնոլոգիական սարքավորումների ու մեքենանրի ամորտիզացիոն, դրանց ընթացիկ նորոգումների ծախսերը դրանց պահպանման ծախսերը, շահագործման ծախսերը, բեռների ներգործարանային փոխադրումների ծախսերը, փոքրարժեք արագամաշ առարկաների մաշվածքը և այլն:

Ծախսերի որոշ տեսակներ (օրինակի՝ ամորտիզացիա) կախված չեն արտադրանքի արտադրության ծավալից և իրենց բնույթով պայմանական հաստատուն են: Մյուսները ամբողջությամբ կամ մասամբ կախված են արտադրության ծավալի փոփոխություններից և իրենց բնույթով պայմանական-հաստատուն են (օրինակ՝ բեռների ներգործարանային փոխադրումների ծախսերը): Արտադրության թողարկման ծավալից դրանց կախվածության աստիճանը որոշվում է՝ գործա-կիցների օգնությամբ, որոնց մեծությունը սահմանվում է փորձնական ճանապարհով, կամ արտադրանքի թողարկման ծավալի և դրա համար կատարվող ծախսերի գումարների վերաբերյալ տվյալների հանրագումարի գծով կուրեյացիոն վերլուծության օգնությամբ:

Պայմանական-հաստատուն ծախսերի հողվածների վերլուծությունը պետք է սահմանափակել դրանց բացարձակ շեղումների գործոնային վերլուծությամբ, իսկ պայմանական-փոփոխուն ծախսերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է վերլուծել և՛ բացարձակ, և՛ հարաբերական շեղումները: Պայմանական-փոփոխուն ծախսերի մեծությունը նշանակեց P_{պլ} և P_փ, արտադրանքի թողարկման պլանի կատարման աստիճանը նշանակեց Z%, ապա.

$$\pm \Delta P_{բաց} = P_{փ} - P_{պլ}$$

$$\pm \Delta P_{հատ.} = P_{փ} - \frac{P * Z\%}{100},$$

որտեղ՝

$$Z\% = \frac{Z_{\text{փ}}}{Z_{\text{այլ}}} * 100$$

Ամորտիզացիայի ընդհանուր գումարը կախված է մեքենաների և սարքավորումների քանակից, դրանց կառուցվածքից, ամորտիզացիոն նորմայի արժեքից: Սարքավորումների արժեքը կարող է փոխվել նոր, ավելի թանկարժեք մեքենաների ստեղծման հետևանքով և ի հաշիվ դրանց վերազնահատման՝ ինֆլյացիայի հետ կապված: Ամորտիզացիայի միջին նորման կարող է փոփոխվել ֆոնդերի կազմում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի հետևանքով:

$$\bar{H}_{am} = \sum_{i=1}^n (K_i * H_{AMi}),$$

որտեղ՝

K_i - i -րդ տեսակի հիմնական ֆոնդի տեսակարար կշիռը հիմնական ֆոնդերի ընդհանուր քանակի մեջ:

H_{AMi} - i -րդ տեսակի հիմնական ֆոնդի ամորտիզացիոն նորման:

Արտադրանքի կոնկրետ տեսակին վերաբերվող ամորտիզացիայի գումարը, բացի վերը թվարկված գործոններից, կախված է նաև այն ուղղակի ծախսերի գումարից, որոնք նրա բաշխման համար բազա են հանդիսանում: Որքան շատ է արտադրանք թողարկվում տրված արտադրական հզորություններով, այնքան փոքր է ամորտիզացիայի և այլ հաստատուն ծախսերի բաժինը միավոր արտադրանքի ինքնարժեքի մեջ:

Շահագործման ծախսերը կախված են շահագործվող օբյեկտների քանակից, դրանց աշխատելու ժամանակից և 1 հաստոց-ժամվա տեսակարար ծախսումներից:

Կապիտալ, ընթացիկ և պրոֆիլակտիկ նորոգումների ծախսերը կախված են վերանորոգման աշխատանքների ծավալից, դրանց բարդությունից, հիմնական ֆոնդերի մաշվածության աստիճանից դրանց համար օգտագործվող պահեստամասերի և նորոգման նյութերի տևտեսումների արժեքից:

Բեռների ներքին փոխադրումների ծախսերը կախված են տրանսպորտային միջոցների տեսակից, դրանց օգտագործման լրիվությունից, արտադրական ծրագրի կատարման աստիճանից, շարժական մասի պահպանման ու շահագործման համար ծախսվող միջոցների տևտեսման աստիճանից:

Փոքրարժեք արագամաշ առարկաների մաշվածքի գումարի վրա ազդում են արտադրանքի թողարկման ծավալը և 1 արտադրատեսակի

թողարկման համար կատարվող ծախսերի մակարդակը, որն իր հերթին կախված է նրանից, թե ինչ քանով ռացիոնալ ու արդյունավետ են օգտագործվում գործիքները, փոքրաթիվ գույքը, մեծ դեր ունի նաև դրանց պահպանման ու օգտագործման հսկողությունը:

Արտադրամասային և ընդհանուր տնտեսական ծախսերի վերլուծությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ նրանք արտադրանքի ինքնարժեքի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն:

Արտադրամասային և ընդհանուր տնտեսական բնույթի ծախսերի վերլուծությունը

Աղյուսակ 2.18

Ծախսեր	Պլան (հզ.դր.)	Փաստացի (հզ.դր.)	Ծեղում (+,-) (հզ.դր.)
Արտադրամասային ընդհանուր տնտեսական	8 400 5 250	8 420 5 130	+ 20 - 120
Ընդամենը այդ թվում՝ հաստատուն փոփոխուն	13 650 9 100 4 550	13 550 8 985 4 565	- 100 - 115 + 15

Աղյուսակ 2.18-ից երևում է, որ 1-3 - ը կազմում են փոփոխուն ծախսերը, որի մեծությունը փոփոխվում է՝ արտադրանքի արտադրության ծրագրի պլանի կատարման աստիճանից կախված: Դրա համար պայամանական-փոփոխուն ծախսերի գումարը կճշգրտենք ապրանքային արտադրանքի արտադրության պլանի կատարման %-ով (մեր օրինակում՝ 103,3%) և ստացված արդյունքը կհամեմատենք ծախսերի փաստացի գումարի հետ: Արդյունքում կստանանք վերադիր ծախսերի (նշանակենք $S_{վճ}$) փոփոխության գումարը՝ ի հաշիվ նախահաշվի գծով կատարված տնտեսման.

$$\Delta S_{վճ} = 13 550 - (4 550 \cdot 1,0329824 + 9 100) = 13 550 - 13 800 = - 250 \text{ հազար դրամ:}$$

Եթե վերահաշվարկված գումարը (13 800 հզ.դր.) համեմատենք պլանային մեծության հետ, ապա կիմանանք, թե ինչպես են փոփոխվել վերադիր ծախսերը՝ ի հաշիվ արտադրանքի արտադրության ծավալի.

$$\Delta S_{վճ} = 13 800 - 13 650 = + 150 \text{ հազար դրամ}$$

Նմանատիպ արդյունք կստանանք, եթե փոփոխուն ծախսերի պլանային գումարը բազմապատկենք արտադրանքի արտադրության պլանի գերակատարման կամ թերակատարման %-ով (մեր օրինակում՝ 103,3% - 100% = 3,3%) և բաժանենք 100-ի.

$$\Delta S_{\text{գծ}} = (4\,550 \times 3,3\%) / 100 = 150,15 \text{ 150 հազար դրամ}$$

Ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական բնույթի ծախսերի հոդվածներն ու դրանց փոփոխության պատճառ հանդիսաց գործոնները ցույց տանք աղյուսակ 18 - ում:

Ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական բնույթի ծախսերի փոփոխության գործոնները

Աղյուսակ 2.

Ծախսումների հոդվածները	Ծախսերի փոփոխության գործոնները	Ազդեցության հաշվարկը
1.	2.	3.
Կառավարման ապարատի աշխատողների աշխատավարձը (A)	Անձնակազմի բվաքանակի (R) և աշխատավարձի միջին մակարդակի (a) փոփոխություն	$A = R \cdot a$ $\Delta A_{(R)} = \Delta R \cdot a$ $\Delta A_{(a)} = R \cdot \Delta a$ $AM = F \times H_{\text{տն}}$ $\Delta AM_{(F)} = \Delta F \times H_{\text{տն}}$ $\Delta AM_{(H_{\text{տն}})} = F_{\text{գ}} \times \Delta H_{\text{տն}}$
Հիմնական ֆոնդերի պահպանում ամորտիզացիա (AM)	Ֆոնդերի արժեքի (F) և ամորտիզացիոն նորմաների (H _{տն}) փոփոխություն	$M = H \times P$ $\Delta M_{(H)} = \Delta H \times P_{\text{տն}}$ $\Delta M_{(P)} = H_{\text{գ}} \times \Delta P$
լուսավորում, ցեռուցում, քրամա-տակարարում և այլն (M)	Օգտագործման նորմաների (H) և ծառայությունների սակագների (P) փոփոխություն	$S = V \times P$ $\Delta S_{(V)} = \Delta V \times P_{\text{տն}}$ $\Delta S_{(P)} = V_{\text{գ}} \times \Delta P$
Ընթացիկ նորոգման, փորձակման, փորձի ձեռք բերման ծախսեր (S)	Աշխատանքի ծավալի (V) և դրանց արժեքի (P) փոփոխություն	$S_{\text{գոյ}} = q \times r$ $\Delta S_{(q,r)} = \Delta q \times r_{\text{տն}}$ $\Delta S_{(r)} = q_{\text{գ}} \times \Delta r$
Սարդառար տրանսպորտի օգտագործման և պահպանման ծախսեր (S _{գոյ})	Սեքենաների քանակի (q) և 1 մեքենայի պահպանման ծախսերի (r) փոփոխություն	$S_{\text{գոյ}} = q \times r \times P$ $\Delta S_{(q,r,P)} = \Delta q \times r_{\text{տն}} \times P_{\text{տն}}$ $\Delta S_{(q,P)} = q_{\text{գ}} \times \Delta r \times P_{\text{տն}}$ $\Delta S_{(r,P)} = q_{\text{գ}} \times r_{\text{գ}} \times \Delta P$
Գործուղումների ծախսեր (S _գ)	Գործուղումների բվաքանակ (q), միջին տևողությունը (l), գործուղման 1 օրվա արժեքը (P)	$S_{\text{գ}} = R \times a$ $\Delta A_{(R)} = \Delta R \times a_{\text{տն}}$ $\Delta A_{(a)} = R_{\text{գ}} \times \Delta a$
Պահակային անձնակազմի պահպանման ծախսեր (A _պ)	Աշխատողների բվաքանակը (R) և նրանց աշխատավարձը (a)	$S_{\text{պ}} = l \times a$ $\Delta S_{(l,a)} = \Delta l \times a_{\text{տն}}$ $\Delta S_{(l)} = l_{\text{գ}} \times \Delta a$ $X = m \times p$ $\Delta X_{(m)} = \Delta m \times p_{\text{տն}}$ $\Delta X_{(p)} = m_{\text{գ}} \times \Delta p$
Պարապլոդների վճարումը (S _պ)	Պարապլոդների մարդ-օրերի քանակը (l) և պարապլոդի 1 օրվա վճարման մակարդակը (a)	$S_{\text{պ}} = A \times Z$ $\Delta S_{(A,Z)} = \Delta A \times Z_{\text{տն}}$ $\Delta S_{(Z)} = A_{\text{գ}} \times \Delta Z$
խտանցի ու նյութերի ու շինվածքների անավարտությունից առաջացած կորուստներ (X)	Նյութերի քանակը (m) և դրանց միավորի արժեքը (p)	$S_{\text{պ}} = V \times P$ $\Delta S_{(V)} = \Delta V \times P_{\text{տն}}$ $\Delta S_{(P)} = V_{\text{գ}} \times \Delta P$
Հարկեր և պահումներ աշխատավարձից (S _պ)	Հաշվարկված աշխատավարձի զուտարի (A) յուրաքանչյուր տեսակի հատկացումների տոկոսադրույթների (Z) փոփոխություն	$S = V \times P$ $\Delta S_{(V)} = \Delta V \times P_{\text{տն}}$ $\Delta S_{(P)} = V_{\text{գ}} \times \Delta P$
Աշխատանքի անվտանգության ապահովման ծախսեր (S)	Լախատելված միջոցառումների ծախսերի (V) և դրանց արժեքի (P) փոփոխություն	$S = V \times P$ $\Delta S_{(V)} = \Delta V \times P_{\text{տն}}$ $\Delta S_{(P)} = V_{\text{գ}} \times \Delta P$
Եվ այլն		

Նախահաշվի կատարման ստուգման ժամանակ չի կարելի ստացված ողջ տևտեսումը վերագրել կազմակերպության հաշվին, ինչպես նաև ոչ բոլոր գերածախսերն են գնահատվում որպես բացասական երևույթ: Նախահաշվից փաստացի ծախսումների շեղումների գնահատականը կախված է այն բանից, թե որ գործոններն են առաջացել տևտեսում կամ գերածախս՝ ըստ ծախսերի առանձին հոդվածների: Սովորաբար պատահական տևտեսումները կապված են նախատեսված միջոցառումների չիրականացման հետ, որոնք կապված են աշխատանքի պայմանների և անվտանգության տեխնիկայի բարելավման, գյուտարարության և ռացիոնալացման, կադրերի պատրաստման ու վերապատրաստման և այլնի հետ: Այս միջոցառումների չիրականացումը երբեմն ձեռնարկությանը հատուցում է ավելի մեծ վնաս, քան ստացված տևտեսման գումարն է:

Վերլուծության արդյունքում անհրաժեշտ է բացահայտել անարտադրողական ծախսերը, կորուստները, որոնք կարելի է դիտարկել որպես արտադրանքի ինքնարժեքի իջեցման չօգտագործված ռեզերվներ:

Անարտադրողական ծախսերից են խոտանից և հումքի (սյութերի) և պատրաստի արտադրանքի անբավարարունից առաջացած կորուստները, կազմակերպության մեղքով պարապուրդների վճարումները, կազմակերպության պարապուրդների ժամանակ օգտագործված էներգիայի, վառելիքի ծախսերը և այլն:

Արտադրատեսակի միավորի ինքնարժեքի մեջ ընդհանուր արտադրական և ընդհանուր տևտեսական ծախսերի վերլուծությունն իրականացվում է ամբողջ կազմակերպության մասշտաբով դրանց վերլուծությունից ստացված արդյունքների հիման վրա: Այս ծախսերը բաշխվում են առանձին տեսակների միջև՝ համամասնորեն ուղղակի ծախսումներին՝ բացառությամբ գնովի համալրող իրերի:

Միավոր արտադրանքին ընկնող տեսակարար վերադիր ծախսերի գումարը ($S^{(S_{45})}$) կախված է հետևյալ գործոնների փոփոխությունից.

1. Արտադրամասային և ընդհանուր տևտեսական ծախսերի (S_{45}) ընդհանուր գումարից՝ $\sum S_{45}$

2. այն ուղղակի ծախսերի գումարը, որոնք հանդիսանում են վերադիր ծախսերի բաշխման բազա ($S_{(P)}$).

3. արտադրատեսակի արտադրության ծավալը (Q).

Տրված փոխկախվածությունը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի միջոցով.

$$S_i^{(S_{\text{վ}})} = (\sum S_{(i)} * (S_{(i)}) / (\sum S_{(i)})) / Q_i$$

կամ

$$S_i^{(S_{\text{վ}})} = (\sum S_{(i)} * D_i) / Q_i$$

որտեղ՝

D_i - տվյալ i -րդ արտադրատեսակի տեսակարար կշիռը արտադրանքի ընդհանուր ծավալում:

Այդ գործոնների ազդեցության հաշվարկի համար կիրառում են շղթայական տեղադրումների եղանակը:

Եթե արդեն հայտնի է, թե որ գործոնի ազդեցությամբ է փոխվել վերադիր ծախսերի ընդհանուր գումարը, դժվար չէ որոշել նաև դրանց ազդեցությունը առանջին արտադրատեսակների ինքնարժեքի վրա: Դրա համար արտադրամասային և ընդհանուր տնտեսական ծախսերի ընդհանուր գումարի փոփոխությունը՝ ի հաշիվ i -րդ գործոնի, անհրաժեշտ է բազմապատկել այդ ծախսերի մեջ i -րդ արտադրատեսակի տեսակարար կշռով (D_i) և ստացված արդյունքը հարաբերել տվյալ արտադրատեսակի փաստացի ծավալին ($Q_{i\phi}$).

$$\Delta S_i^{(S_{\text{վ}})} = (\Delta \sum S_{(i)(x)} * D_{i\phi}) / Q_{i\phi}$$

2. 10 Առևտրային ծախսերի վերլուծությունը

Առևտրային ծախսերը ներառում են ապրանքների բեռման-բեռնաթափման աշխատանքների կատարման ծախսերը, և գևորդներին առաքելու տրանսպորտային ծախսերը, տարայի և փաթեթավորման կյուլթերի ծախսերը, գովազդի, մարկետինգի և արտադրանքի իրացման հետ կապված այլ ծախսեր, որոնք հաշվառվում են 712 «Իրացման (առևտրային) ծախսեր» հաշվում:

Եթե առևտրային ծախսերի պլանային մեծությունը նշանակենք $S_{պլ}$, իսկ փաստացի մեծությունը՝ S_{ϕ} , ապա՝

- բացարձակ շեղումը.

$$\pm \Delta S_{բաց} = S_{\phi} - S_{պլ}$$

- հարաբերական շեղումը.

$$\pm \Delta S_{հատ} = S_{\phi} - \frac{S}{100} \cdot Z\%$$

որտեղ Z - արտադրանքի իրացման գծով պլանի կատարման աստիճանն է:

Առևտրային ծախսերի մեծության վրա ազդում են բազմաթիվ գործոններ.

- ապրանքների առաքման ծախսերը կախված են փոխադրման հեռավորությունից, փոխադրվող բեռի կշռից (քաշից), բեռների փոխադրման տրանսպորտային տարիֆներից, տրանսպորտային միջոցների տեսակներից (այժմ ամենաեժանը համարվում է ջրային տրանսպորտը).

- բեռնման-բեռնաթափման ծախսերը կարող են փոփոխվել՝ կախված բեռների կշռից, 1 տոննա բեռը բեռնելու ու բեռնաթափելու սակագնից.

- տարայի և փաթեթավորման նյութերի ծախսերը կախված են դրանց քանակից և արժեքից, քանակությունը իր հերթին կախված է իրացման ենթակա արտադրանքի ծավալից և միավոր արտադրանքի փաթեթավորման նյութի ծախսման նորմայից:

Փաթեթավորման նյութի ծախսումների տնտեսումը ոչ միշտ է ցանկալի արդյունքի հանգեցնում, քանի որ գեղեցիկ, էսթետիկ, հրապուրիչ փաթեթավորումը հանդիսանում է արտադրանքի պահանջարկի բարձրացման գործոններից մեկը և այս հողված ծախսերի բարձրացումը փախհատուցվում է վաճառքի ծավալի մեծացմամբ: Նույնը կարելի է ասել գովազդի, վաճառահանման շուկաների ուսումնասիրության և այլ մարկետինգային ծախսերի մասին:

2.11. Արտադրանքի ինքնարժեքի իջեցման ռեզերվների (պահուստների) վերլուծությունը

Ապրանքային արտադրանքի ինքնարժեքի իջեցման ($P \downarrow C$) ռեզերվներ են հանդիսանում հետևյալները.

1. Արտադրանքի արտադրության ծավալի ավելացում ($P \uparrow Q$)

2. Արտադրանքի թողարկման ծախսերի կրճատում ($P \downarrow S$)՝ ի հաշիվ աշխատանքի արտադրողականության մակարդակի բարձրացման, հումքի, նյութերի, էլեկտրոններգիայի, վառելիքի, սարքավորումների արդյունավետ և ռացիոնալ օգտագործման, կառավարչական ապարատի ծախսերի կրճատման, անարտադրողական ծախսերի կրճատման, արտադրական խոտանի կրճատման կամ վերացման և այլն:

Ռեզերվների մեծությունը կարելի է որոշել հետևյալ բանաձևով¹⁰ .

$$\uparrow C = C_{\text{հծ}} - C_{\Phi} = \frac{S_{\Phi} - \uparrow S + S_{\text{լր}}}{Q_{\Phi} + \uparrow Q} - \frac{S_{\Phi}}{Q_{\Phi}}$$

որտեղ՝

$C_{\text{հծ}}$ և C_{Φ} - համապատասխանաբար արտադրանքի հնարավոր և փաստացի ինքնարժեքների մակարդակները

$S_{\text{լր}}$ - արտադրանքի թողարկման ավելացման ռեզերվների յուրացման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսեր:

Արտադրանքի արտադրության ծավալի ավելացման ռեզերվները բացահայտվում են արտադրական ծրագրի կատարողականի վերլուծության պրոցեսում: Արտադրանքի արտադրության ծավալի ավելացման դեպքում մեծանում են միայն փոփոխուն ծախսերը (բանվորների ուղղա-կի աշխատավարձ, ուղղակի նյութական ծախսումներ), իսկ հաստատուն ծախսերի գումարը, որպես կանոն, չի փոփոխվում, ուստի արդյունքում իջնում է արտադրանքի ինքնարժեքը:

Ծախսերի կրճատման ռեզերվները բացահայտվում են ծախսերի առանձին հոդվածների գծով՝ ի հաշիվ կոնկրետ կազմակերպատեսիկական միջոցառումների արտադրության մեջ նոր, ավելի պրոգրեսիվ տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում, աշխատանքի կազմակերպման բարելավում և այլն որոնք պետք է նպաստեն աշխատանքի վարձատրության միջոցների, հումքի նյութերի, էներգիայի և այլնի խնայողաբար, արդյունավետ և ռացիոնալ օգտագործմանը:

Կազմակերպատեսիկական միջոցառումների իրականացման արդյունքում աշխատանքի վարձատրության միջոցների տնտեսումը ($P \downarrow A$) կարելի է հաշվարկել համապատասխան կազմակերպատեսիկական միջոցառման ներդրումից առաջ արտադրանքի աշխատատարության (r_0) և ներդրումից հետո աշխատատարության (r_1) մակարդակների միջև եղած տարբերության, և աշխատանքի միջին ժամային վարձատրության պլանային մակարդակի ($\bar{a}_{\text{պլ}}$) և արտադրանքի թողարկման ծավալի պլանային մեծության ($Q_{\text{պլ}}$) արտադրյալով.

¹⁰ Г.В.Савицкая. "Анализ хозяйственной деятельности предприятия ". Москва. ИНФРА - М. 2002. стр.199.

$$\mathcal{M} \downarrow A = (r_1 - r_0) \cdot \bar{a}_{\text{ալ}} \cdot Q_{\text{ալ}}$$

Ի հաշիվ նոր տեխնոլոգիայի և այլ կազմակերպատեխնիկական միջոցառումների ներդրման՝ արտադրանքի արտադրության պլանավորված թողարկման նյութական ծախսերի իջեցման ռեզերվը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\mathcal{M} \downarrow S = (m_1 - m_0) \cdot P_{\text{ալ}} \cdot Q_{\text{ալ}}$$

որտեղ՝

m_1 և m_0 - ն միավոր արտադրանքի վրա նյութերի ծախսումները՝ համապատասխանաբար կազմակերպատեխնիկական միջոցառման իրականացումից առաջ և հետո:

$P_{\text{ալ}}$ - միավոր նյութի պլանային գինը:

Հիմնական միջոցների պահպանման ծախսերի կրճատման ($P \downarrow S$) ռեզերվը՝ ի հաշիվ անպետք, ավելորդ, չօգտագործվող շենքերի, մեքենաների, սարքավորումների ($P \downarrow F_i$) իրացման, կոնսերվացման, երկարաժամկետ վարձակալության տալու և դուրս գրելու, կարելի է որոշել՝ դրանց սկզբնական արժեքը բազմապատկելով ամորտիզացիոն նորմայով (H_{ami}).

$$\mathcal{M} \downarrow S = \sum (\mathcal{M} \downarrow F_i \cdot H_{\text{ami}})$$

Վերադիր ծախսերի տևտեսման ($P \downarrow S_{(45)}$) ռեզերվները բացահայտվում են այդ ծախսերի յուրաքանչյուր հոդվածի գծով դրանց փաստացի վերլուծության ժամանակ: Վերադիր ծախսերը նվազում են ի հաշիվ կառավարման ապարատի խելամիտ կրճատման, գործողումների, գրասենյակային, փոստային ծախսերի, պարապուրդների վճարման համար նախատեսված միջոցների խնայողաբար, արդյունավետ օգտագործման և այլն: Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ վերադիր ծախսերի տարբեր հոդվածների գծով տևտեսումները միևնույն նշանակությունը չունեն: Օր. արտադրամասի ղեկավար անձնակազմի ռացիոնալ կրճատումն ունի պրոգրեսիվ նշանակություն: Բայց, օրինակ, նախատեսված միջոցառումները չիրականացնելու հա՛մար անվտանգության պահպանման աշխատողների գծով ծախսերի կրճատումն անթույլատրելի է: Այդպիսի «տևտեսումը» կհանգեցնի աշխատանքի պայմանների վատթարացմանը:

Արտադրանքի արտադրության ծավալների ավելացման ռեզերվների յուրացման համար անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը ($S_{լր}$) որոշվում են դրանց առանձին տեսակների համար: Դրանք հիմնականում արտադրանքի լրացուցիչ քանակի թողարկման համար անհրաժեշտ վարձատրության, հումքի, նյութերի, էներգիայի ծախսումներն են և այլ փոփոխուն ծախսերը, որոնք փոփոխվում են արտադրանքի արտադրության ծավալին համամասնորեն: Դրանց մեծության որոշման համար i -րդ արտադրատեսակի թողարկման ավելացման ռեզերվը անհրաժեշտ է բազմապատկել տեսակարար փոփոխուն ծախսերի փաստացի մակարդակով:

$$S_{լր} = \eta \uparrow Q \cdot X_{i\phi}$$

Այժմ, որոշենք ինքնարժեքի իջեցման ռեզերվները յուրաքանչյուր արտադրատեսակի գծով:

Արտադրանքի ինքնարժեքի իջեցման ռեզերվների չափի որոշման համար անհրաժեշտ տվյալները

Աղյուսակ 2.20

	$Q_{i\phi}$ (հատ)	$C_{i\phi}$ միավ (հզ.դր.)	$X_{i\phi}$ միավ (հզ.դր.)	$S_{i\phi}$ (հզ.դր.)	$\eta \uparrow Q$ (հատ)	$\eta \downarrow S$ (հզ.դր.)	$S_{լր} = \eta \uparrow Q \cdot X_{i\phi}$
Ա	473	59	39	27907	74	2407	2886
Բ	526	56	35	29456	30	1162	1050
Գ	258	78	64	20124	22	1014	1408
Դ	215	86	70	18490	18	1000	1260
Ընդամենը	1472	$\bar{C}=65,2$.	95977	144	5583	6604

$$\text{«Ա» } \eta \downarrow C = \frac{27907 - 2407 + 2886}{473 + 74} - \frac{27907}{473} = 51,9 - 59 = -7,1 \text{ հազ. դրամ}$$

$$\text{«Բ» } \eta \downarrow C = \frac{29456 - 1162 + 1050}{526 + 30} - \frac{29456}{526} = 53 - 56 = -3 \text{ հազ. դրամ}$$

$$\text{«Գ» } \eta \downarrow C = \frac{20124 - 1014 + 1408}{258 + 22} - \frac{20124}{258} = 73 - 78 = -5 \text{ հազ. դրամ}$$

$$\text{«Դ» } \eta \downarrow C = \frac{18490 - 1000 + 1260}{215 + 18} - \frac{18490}{215} = 80,5 - 86 = -5,5 \text{ հազ. դրամ}$$

$$\eta \downarrow \bar{C} = \frac{95977 - 5583 + 6604}{1472 + 144} - \frac{95977}{1472} = 60.0 - 65.2 = -5.2 \text{ հազ. դրամ}$$

Նմանատիպ վերլուծություն, անհրաժեշտության դեպքում, կատարվում են կազմակերպատեխնիկական յուրաքանչյուր միջոցառման գծով, ինչը թույլ կտա առավել լիարժեք ձևով գնահատել դրանց ներդրման արդյունավետությունը:

Գլուխ III. Ֆինանսական վերլուծություն

3.1 Շահույթի և շահութաբերության վերլուծությունը

3.1.1 Շահույթի տնտեսագիտական էությունը և վերլուծության նշանակությունը ներկա պայմաններում

Շուկայական տնտեսության հիմքը հանդիսանում են տնտեսագիտական ցուցանիշները, որոնք անհրաժեշտ են կազմակերպության արտադրա-տնտեսագիտական գործունեության օբյեկտիվ գնահատման, հատուկ ֆոնդերի ստեղծման և օգտագործման, ծախսերի և արդյունքի համեմատման համար արտադրական պրոցեսի առանձին փուլերում: Շուկայական տնտեսությանն անցնելու պայմաններում տնտեսագիտական ցուցանիշներից գլխավորը շահույթն է:

Շահույթը իրենից նարկայացնում է վերջնական ֆինանսական արդյունք, որը բնութագրում է կազմակերպության արտադրա-տնտեսական գործունեությունը, այսինքն կազմում է կազմակերպության տնտեսագիտական զարգացման հիմքը: Շահույթի աճը ֆինանսական հիմք է ստեղծում կազմակերպության գործունեության ինքնաֆինանսավորման համար՝ իրականացնելով ընդլայնված վերարտադրություն: Նրա հաշվին կատարվում է բյուջեի, բանկերի և այլ կազմակերպությունների նկատմամբ պարտականությունների մի մասը: Այսպիսով, շահույթը դառնում է կազմակերպության արտադրական և ֆինանսական գլխավոր գնահատականը: Այն բնութագրում է կազմակերպության գործարար ակտիվություն և ֆինանսական բարվոքության նախահաշիվները:

Շահույթը իրենից ներկայացնում է եկամուտների գումարի և՛ վնասների տարբերությունը՝ ստացված տարբեր տնտեսական օպերացիաներից: Հենց դրա համար էլ այն բնութագրում է կազմակերպության վերջնական ֆինանսական արդյունքը: Բացարձակ ցուցանիշների հետ մեկտեղ օգտագործվում է նաև տնտեսվարման հարաբերական արդյունավետությունը՝ շահութաբերության ցուցանիշը: Որպես արտադրատնտեսական գործունեության գնահատման համար օգտագործվող շահույթի հիմնական ցուցանիշներ հանդես են գալիս հաշվեկշռային շահույթը, իրացված արտադրանքի իրացումից շահույթը, համախառն շահույթը, հարկվող շահույթը, կազմակերպության տրամադրության տակ մնացած շահույթը:

Քանի որ կազմակերպությունը շահույթի հիմնական մասը ստանում է թողարկված արտադրանքի իրացումից, ապա շահույթի գումարը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են արտադրանքի ծավալի, տեսականու, որակի, արտադրված և իրացված արտադրանքի կառուցվածքի փոփոխության, առանձին արտադրատեսակների ինքնարժեքի, գների մակարդակի փոփոխությունը: Բացի այդ շահույթի վրա ազդում են պարտքային պարտավորությունների պահպանումը, գնորդների և մատակարարների հետ հաշվարկները: Շահույթից կատարվում են հատկացումներ բյուջեին, վճարվում են տոկոսներ:

Ժամանակակից տնտեսության պայմաններում շահույթի գլխավոր նշանակությունը կազմակերպության արտադրաիրացումային գործունեության արդյունավետության արտացոլումն է: Դա պայմանավորված է նրանով, որ շահույթի մեծության մեջ պետք է արտացոլվեն կազմակերպության արտադրած և իրացված արտադրանքի անահատական ծախսերը, հասարակայնորեն անհրաժեշտ ծախսերը, որոնց անուղղակի արտահայտությունը արտադրանքի գինն է: Կայուն մեծածախ գնի պայմաններում շահույթի մեծացումը վկայում է արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի նվազեցման մասին:

Ժամանակակից պայմաններում շահույթի նշանակությունը բարձրանում է որպես բաշխման օբյեկտ կազմակերպությունների և պետության, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի և նույն ոլորտի կազմակերպությունների միջև, կազմակերպությունների և նրանց աշխատողների միջև:

Շուկայական տնտեսության անցման պայմաններում կազմակերպության աշխատանքը կապված է շահույթի շահագրգիռ դերի բարձրացմամբ: Շահույթի օգտագործումը որպես հիմնական գնահատման ցուցանիշ նպաստում է արտադրանքի արտադրության և իրացման ծավալի բարձրացմանը, առկա արտադրական ռեսուրսների օգտագործման բարելավմանը: Շահույթի դերի բարձրացումը պայմանավորված է նաև նրա բաշխման գործող համակարգով, որին համապատասխան մեծանում է կազմակերպության շահագրգռվածությունը մեծացնելու ոչ միայն շահույթի ամբողջ գումարը, այլև հատկապես նրա այն մասի, որը մնում է ձեռնարկության տրամադրության տակ և օգտագործվում է որպես միջոցների հիմնական աղբյուր, որոնք ուղղված են արտադրական և սոցիալական զարգացմանը, ինչպես նաև աշխատողների նյութական խրախուսմանը ծախսված աշխատանքի որակին համապատասխան: Այսպիսով շահույթը որոշիչ դեր է խաղում արտադրության հետագա արդյունավետության բարձրացմանը, աշխա-

տողների նյութական շահագրգռվածության բարձրացման, կազմակերպության գործունեության բարձր արդյունքների հասնելու գործում:

Շահույթի բաշխման և խրախուսման դերի հետագա բարձրացումը կապված է դրա բաշխման մեխանիզմի կատարելագործման հետ: Սակայն շահույթը չի կարող ուսումնասիրվել որպես արտադրության արդյունավետության միակ և ունիվերսալ ցուցանիշ: Լրացուցիչ շահույթը կարելի է ստանալ արտադրական ֆոնդերի ծավալի մեծացման և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման պայմաններում: Ցանկացած ժամանակահատվածի ընթացքում տնտեսական ցուցանիշների փոփոխությունը կատարվում է մի շարք գործոնների ազդեցությամբ:

Շահույթի վրա ազդող գործոնների բազմազանությունը պահանջում է դրանց դասակարգումը: Շահույթի վրա ազդող գործոնները կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների: Առանձնացվում են արտաքին և ներքին գործոններ: Ներքիններին վերաբերում են այն գործոնները, որոնք կախված են հենց կազմակերպության գործունեությունից և բնութագրում են կազմակերպության անձնակազմի աշխատանքի տարբեր կողմերը:

Արտաքին գործոններին վերաբերում են, որոնք կախված չեն կազմակերպության գործունեությունից, բայց նրանցից ոմանք կարող են էական ազդեցություն ունենալ արտադրության, շահույթի և շահութաբերության աճի տեմպի վրա: Ներքին գործոնները իրենց հերթին ստորաբաժանվում են արտադրական և արտա-արտադրականների: Արտա-արտադրական գործոնները կապված են հիմնա-կանում կազմակերպության առևտրային, պաշտպանական և այլ համանման գործունեությունների հետ, իսկ արտադրական գործոնները արտացոլում են արտադրական պրոցեսների հիմնական տարրերի առկայությունը և օգտագործումը, որոնք մասնակցում են շահույթի ձևավորմանը: Դրանք են աշխատանքի միջոցները, աշխատանքի առարկանները և այլն: Յուրաքանչյուր տարրի համար առանձնացվում են գործոնների էքստենսիվ և ինտենսիվ գործոններ:

էքստենսիվներին են վերաբերում այն գործոնները, որոնք արտացոլում են արտադրական ռեսուրսների ծավալը (օրինակ աշխատողների թվաքանակի փոփոխությունը, հիմնական ֆոնդերի արժեքները), դրանց օգտագործումը ժամանակահատվածի ընթացքում (աշխատանքային օրվա տևողության փոփոխությունը, սարքավորումների փոփոխման գործակիցը), ինչպես նաև ռեսուրսերի ոչ արտադրական օգտագործումը (կորուստներ թափոնների պատճառով):

Ինտենսիվ գործունեորին վերաբերում են նրանք, որոնք արտացոլում են ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը կամ դրան նպաստող գործոնները (օրինակ աշխատողների որակավորման բարձրացումը, սարքավորումների արտադրողականությունը, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրումը):

Կազմակերպության արտադրական գործունեության իրականացման պրոցեսում կապված արտադրանքի արտադրության, իրացման և շահույթի ստացման հետ այս գործոնները գտնվում են փոխադարձ կապի և կախվածության մեջ:

Արտադրության առաջնային գործոնները շահույթի վրա ազդում են առավել բարձր կարգի ընդհանրացնող ցուցանիշների համակարգի միջոցով: Այդ ցուցանիշները արտացոլում են դրանց պահանջվող մասի ծավալը և օգտագործման արդյունավետությունը ինքնարժեքի ձևավորման գործում: Այսպիսով կարելի է հետևություն անել, որ արտադրության պրոցեսի միևնույն տարրերը հատկապես աշխատանքի միջոցները, աշխատանքի առարկանները և աշխատանքը ուսումնասիրվում են մի կողմից որպես արդյունաբերական արտադրանքի ծավալի բարձրացման հիմնական առաջնային գործոնները, մյուս կողմից արտադրության ծախսումները սահմանող հիմնական առաջնային գործոններ: Քանի որ շահույթը իրենից ներկայացնում է արդյունաբերական արտադրանքի ծավալի և դրա ինքնարժեքի տարբերությունը, ապա այդ մեծությունը և աճի տեմպերը կախված են նույն 3 արտադրության առաջնային գործոններից, որոնք ազդում են շահույթի վրա արդյունաբերական արտադրանքի ծավալի և արտադրության ծախսումների համակարգի ցուցանիշների միջոցով:

3.1.2. Շահույթի վերլուծության խնդիրները և տեղեկատվական աղբյուրները

Կազմակերպությունում անցակցվում է շահույթի հանրագումարային (հետադարձ) և կանխագուշակային (հեռանկարային) վերլուծություն:

Հանրագումարային վերլուծության նպատակն է տալ շահույթի փոփոխություններ առաջ բերող պատճառների, շահույթից բյուջե վճարվող հարկերի քանակական գնահատականները, բացահայտել ծախսերի ազդեցությունը շահույթի փոփոխության վրա կամ շահույթի վրա գների փոփոխության ազդեցությունը, որոնք կապված են շուկայական կառուցվածքից:

Շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպության ղեկավարները ավելի հակված են անցկացնել շահույթի հեռանկարային վերլուծություն, այսինքն ապագայում շահույթի ստացման տարբեր տարբերակների համադրում, այլ ոչ թե ժամանակ ծախսել վերլուծելու փաստացի կատարման արդյունքները՝ դրանք ստանդարտ որոշումների հետ համեմատելու միջոցով կամ շահույթի գնահատման միջոցով դինամիկայում: Ձեռներեցը շահագրգռված է նրանում, որ մրցակցային պայքարում ստանա առավելագույն շահույթ: Այդ շահույթը նա ձգտում է հիմնավորել վերլուծական հաշվարկներով:

Շահույթի ձևավորման և օգտագործման վերլուծությունը կատարվում է մի քանի փուլերով.

1. Վերլուծվում է շահույթը ըստ կազմի դինամիկայի
 2. Անցկացվում է իրացումից շահույթի գործոնային վերլուծություն
 3. Վերլուծվում է շեղման պատճառները շահույթի այնպիսի բաղկացուցիչների գծով, ինչպիսիք են սպասվելիք և վճարվելիք տոկոսները, այլ գործարքներից եկամուտները, արտաիրացումային եկամուտները և ծախսերը
 4. Վերլուծվում է գուտ շահույթի ձևավորումը և հարկերի ազդեցությունը շահույթի վրա
 5. Տրվում է շահույթի բաշխման արդյունավետության գնահատականը ըստ կուտակման և սպառման
 6. Վերլուծվում է շահույթի օգտագործումը ըստ կուտակման և սպառման
 7. Մշակվում է ֆինանսական պլանի կազմման առաջարկները
- Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ գործոնային վերլուծության մեթոդը կիրառելի է ինչպես շահույթի ցուցանիշների

վերլուծության ժամանակ հաշվետու ժամանակաշրջանում, այնպես էլ պլանի հիմնավորման կազմման ժամանակ:

Կազմակերպության ֆինանսական արդյունքների վերլուծության խնդիրներն են.

1. Շահույթի ցուցանիշների դինամիկայի գնահատումը

2. Շահույթի ստեղծման և բաշխման փաստացի տվյալների հիմնավորվածություն

3. Շահույթի վրա ազդող տարբեր գործոնների բացահայտումը և դրանց գործողության ազդեցության չափումը

4. Շահույթի հետագա աճի ռեզերվների գնահատում արտադրության ծավալի և ծախսումների օպտիմալացման հիման վրա ֆինանսական արդյունքների վերլուծության համար օգտագործվում են տեղեկատվական հետևյալ աղբյուրները.

- կազմակերպության բիզնես պլան

- ձև N2 «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը»

- ընթացիկ հաշվառման տվյալները և այլն

3.1.3. «Ծախս -ծավալ-շահույթ» հարաբերակցության վերլուծությունը

Ցանկացած կազմակերպության հաջող զարգացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել արտադրանքի իրացման ծավալի, ծախսերի և շահույթի հարաբերակցությունը: Կյո հարաբերակցությունը վերլուծվում է կազմակերպության գործունեության վերջնական արդյունքների կարևոր ցուցանիշների պատճառահետևանքային կապերի, կառավարչական որոշումների գիտական հիմնավորվածության ուսումնասիրության համար:

Վերլուծության ընթացքում լուծվում են հետևյալ հիմնական խնդիրները.

- հաշվարկվում է իրացման ծավալը, որի դեպքում ապահովվում է կազմակերպության ծախսերի լրիվ ծածկում, այսինքն անվաստաբերության մակարդակը

- հաշվարկվում է իրացման ծավալը, որը այլ հավասար պայմաններում ապահովվում է կազմակերպությանը անհրաժեշտ շահույթի գումարը

- տրվում է իրացման անալիտիկ գնահատականը, որի դեպքում կազմակերպությունը կարող է լինել մրցունակ շուկայում, այսինքն անվտանգության դաշտի որոշումը

Վերլուծության հիմնական փուլերը հետևյալն են.

1. «Ծախս-ծավալ-շահույթ» վերլուծության մեթոդին համապատասխան ելակետային ինֆորմացիայի հավաքումը, պատրաստումը և անալիտիկ մշակում

2. Պայմանական հաստատուն և պայմանական-փոփոխուն ծախսերի, անվնասաբերության մակարդակի և անվտանգության դաշտի հաշվարկը

3. Իրացման ծավալի անալիտիկ հիմնավորվածությունը, որը անհրաժեշտ է շահույթի պլանավորված գումարի ապահովման համար

Հարաբերակցության վերլուծությունը իրականացվում է գործարար ակտիվության որոշակի սահմաններում, այսինքն տվյալ կազմակերպությունում ռեալ գոյություն ունեցող արտադրության ծավալի նվազագույն և առավելագույն չափերը, որոնց սահմաններում պետք է ուսումնասիրվի դրա հարաբերակցություն ծախսերի և շահույթի հետ:

Տեսականորեն որպես գործարար ակտիվության բացարձակ առավելագույն սահման կարող է հանդես գալ նախատեսված հողորությունը, որը ապահովված է համապատասխան տեխնոլոգիայով, հումքով, նյութերով, սարքավորումներով, էներգիայով, աշխատանքային ռեսուրսներով: Արտադրության ծավալի ռեալ առավելագույն սահմանը լինում է նախատեսվածից ցածր մի շարք պատճառներով:

Արտադրության ծավալի նվազագույն սահմանը կարող է սահմանվել տեխնոլոգիական սարքավորումների հիմնական տեսակների միևնույն աշխատունակության մակարդակի ապահովումը: Վերլուծությունը կարող է անցկացվել ոչ միայն արտադրության ծավալի բացարձակ մաքսիմալ և բացարձակ մինիմալ չափերի սահմաններում:

Գործարար ակտիվության ցուցանիշների արժեքայնության մակարդակը վերլուծության համար տրվում է ծավալների անփոփոխության արտադրության ծավալի որոշակի սահմաններում: Ենթադրվում է յուրաքանչյուր կազմակերպության համար գործարար ակտիվության իրենց սահմաններում, որոնց շրջանակներում պահպանվում է որոշակի արտադրանքի ծավալի, ծախսումների և շահույթի միջև:

Որպես գործարար ակտիվության ցուցանիշներ կարող են օգտագործվել.

- բնաիրային-արտադրանքի աճը հատերով, տոննաներով, մետր քառակուսիներով
- աշխատանքային - արտադրատեղի արտադրության տեխնոլոգիական աշխատատարությունը
- արժեքային - արտադրանքի ծավալը բաց թողնման գներով

- հարաբերական - արտադրական հզորությունների օգտագործման գործակիցներ

Ցուցանիշների ընտրության հարցում որոշիչ է ոլորտի յուրահատկությունը:

Քանի որ տնտեսական ցուցանիշները փոխկապված են, «Ծախս-ծավալ-շահույթ» վերլուծության անցկացումը պահանջում է որոշակի նախահիմքերի առկայություն:

Իրականում մոդելի բաղկացուցիչ տարրերը փոփոխվում են այնպես, ինչպես մոդելում, այսինքն՝

- ծախսերը հիմնավորված ձևով բաժանվում են հաստատունների և փոփոխունների

- հաստատուն ծախսերը փոփոխվում են գործարար ակտիվության մակարդակին համամասնական (արտադրանքի ծավալի, արտադրանքի իրացման)

- հաստատուն ծախսերը չեն փոփոխվում ռելեվանտ շարքի սահմաններում

- արտադրանքի միավորի իրացման գինը չի փոփոխվում

- իրացված արտադրանքի կառուցվածքը չի փոփոխվում

- արտադրության արդյունավետությունը զգալիորեն չի փոփոխվում

- ծախսերի ձևավորող տարրերի արժեքը չի փոփոխվում

- ծավալը հանդիսանում է ծախսերի վրա ազդող միակ գարծոնը

- գների ընդհանուր մեծությունը չի փոխվի

- ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ պատրաստի արտադրանքի պաշարները չեն փոփոխվում

Ծախսերի բաժանումը հաստատուն և փոփոխուն ծախսերի և դրանց հաշվարկման մեթոդը

Արտադրանքի ծավալից կախվածության մակարդակից կախված ընդհանուր ծախսերը ստորաբաժանվում են հաստատուն և փոփոխուն ծախսերի:

Փոփոխուն ծախսերը բնութագրում են ծախսերը կապված արտադրանքի ծավալի աճի հետ:

Հաստատունները բնութագրում են ծախսերը, որոնք կախված են տնտեսվարման հետ, այսինքն ցույց են տալիս ղեկավարման արդյունավետությունը: Հաստատուն ծախսերի ընդհանուր գումարը անմիջականորեն կախված չէ արտադրանքի արտադրության ծավալից: Դրանց վերաբերում են արտադրական սարքավորումների ամորտիզացիան, արտադրամասերի ղեկավար, սպասարկող և օժանդակող անձնակազմի աշխատավարձը, պլանային վերանորոգումների արժեքը, անուղղակի

ծախսերը կազմակերպության մասշտաբով առաքման և վարչա-կառավարչական ֆունկցիաների իրականացման համար: Հաստատուն ծախսերը արտադրանքի միավորի ինքնարժեքում փոխվում են:

Արտադրա-առաքման ֆունկցիաներին վերաբերում են համապատասխան ծառայությունների գրասենյակային գույքի ամորտիզացիան, գովազդի և մարկետինգային ուսումնասիրությունների պատրաստի արտադրանքի պահպանման և դրանք գնորդին հասցնելու, առևտրային առաքման ծառայության աշխատողների աշխատանքի վարձատրման, վարձակալական վճարների գծով ծախսերը:

Կազմակերպության մակարդակով վարչա-կառավարչական ֆունկցիաների իրականացման ծախսերին վերաբերում են ղեկավարի և մասնագետների աշխատանքի վարձատրությունը, գրեական պիտույքների ծախսերը, արեևդային վճարները և այլն:

Փոփոխուն ծախսերը փոփոխվում են արտադրության ծավալի փոփոխությանը համամասնական, բայց դրանք հաստատուն են միավոր արտադրանքի ինքնարժեքում: Փոփոխուն ծախսերի կազմի մեջ մտնում են բոլոր ուղղակի նյութական ծախսումները (հումք, նյութեր, էլեկտրաէներգիա) և աշխատանքային ծախսումները (արտադրական բանվորների հիմնական և լրացուցիչ աշխատանքի վարձատրությունը սոցիալական ֆոնդի հատկացումներով հանդերձ):


Ընդհանուր, հաստատուն և փոփոխուն ծախսերը պատկերացնելու համար օգտագործենք գրաֆիկը, որը կառուցենք հետևյալ ինֆորմացիայի հիման վրա.

Միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերը- 300 դրամ

Գործարար ակտիվության ուսումնասիրվող սահմաններում՝ 60000-65000 արտադրանքի ծավալի դեպքում հաստատուն ծախսերը- 7100 դրամ, փոփոխուն ծախսերը 19500(3000*65000)

Ընդհանուր ծախսերը կլինեն = 26600 (7100+19500) մլն. դրամ

Այս տվյալներով կառուցված գրաֆիկը արտահայտում է արտադրանքի ծավալի, ընդհանուր (Մ₀), հաստատուն (Մ_ո) և փոփոխուն ծախսերի (Մ_ի) փոխադարձ կապը:



Հաստատուն և փոփոխուն ծախսերի հաշվարկը կարելի է կատարել հանրահաշվական մեթոդներով՝ հաշվի առնելով, որ ընդհանուր ծախսերի աճը տեղի է ունենում միայն փոփոխուն ծախսերի հաշվին: Օրինակի տվյալները ընդհանրացնենք հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 3.1

Ցուցանիշներ	Ցուցանիշների առավելագույն մակարդակը	Ցուցանիշների նվազագույն մակարդակը	Ենդում
Արտադրանքի ծավալը	65000	60000	5000
Ընդհանուր ծախսերի գումարը	26600	24600	2000

Միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերը (Մ'ե) կաղմում են 0.4 (5000/2000)

Միավոր արտադրանքի հաշվով փոփոխուն ծախսերը դեպքում կարելի է հաշվարկել ծախսերի ընդհանուր մեծությունը նվազագույն և առավելագույն կետերում: Դրա համար միավոր արտադրանքի գումարը պետք է բազմապատկել արտադրանքի ծավալով այդ կետերում: Մեր օրինակում այն կկազմի նվազագույն կետում 24000(0.4*60000), առավելագույն կետում՝ 26000 (0.4*65000)

Հաստատուն ծախսերի գումարը կկազմի նվազագույն կետում 400 (24600-24000), առավելագույն կետում 400 (26600-26000)

Հետևաբար հաստատուն ծախսերի գումարը նվազագույն և առավելագույն կետերում նույնն է, իսկ ընդհանուր ծախսերի գումարի փոփոխությունը տեղի է ունենում դրանց փոփոխուն մասի փոփոխության հաշվին, որը կարող է արտահայտվել հետևյալ բանաձևով.

$$\sigma_{\Sigma} = \sigma_h + (\sigma'_{\text{մ.փ}} * U)$$

կամ

$$\sigma_{\Sigma} = \sigma_h + \sigma'_{\text{փ}}$$

որտեղ՝

σ_{Σ} - ընդհանուր ծախսերի գումարը

σ_h - հաստատուն ծախսերի գումարը

$\sigma'_{\text{մ.փ}}$ - միավոր արտադրոնքի փոփոխուն ծախսերը

U - արտադրոնքի ծավալը

$\sigma'_{\text{փ}}$ - փոփոխուն ծախսերի գումարը

3.1.4 Շահույթի գործոնային վերլուծությունը « Դիրեկտ-կոստինգ» եղանակով

Վերջին ժամանակները մեծ հետաքրքրություն է ներկայացնում շահույթի վերլուծության մեթոդը, որը հիմնվում է արտադրական և իրացման ծախսումների բաժանման վրա փոփոխունի և հաստատունի և մարժինալային շահույթ կատեգորայի վրա:

Այս մեթոդը լայն կիրառություն ունի զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Այն թույլ է տալիս ուսումնասիրել շահույթի կախվածությունը առավել կարևոր գործոնների ոչ մեծ խմբից և դրա հիման վրա կառավարել դրա մեծության ձևավորման պրոցեսը: Ի տարբերություն շահույթի վերլուծության մեթոդի, որը կիրառվում է հայրենեկան կազմակերպություններում, « Դիրեկտ- կոստինգ» մեթոդը թույլ է տալիս առավել լիարժեք հաշվի առնել ցուցանիշների միջև փոխադարձ կապը և ճիշտ հաշվարկել գործոնների ազդեցությունը:

Սովորաբար շահույթի վերլուծության համար մեր երկրում օգտագործում են հետևյալ մոդելը¹¹.

$$C = E * (Q - C)$$

որտեղ՝

¹¹ Б.В.Прыкин "Экономический анализ предприятия", Москва, Юнити, 2000, стр.281.

- Շ - շահույթի գումարն է
- Զ - իրացված արտադրանքի քանակը
- Գ - իրացման գինը

C- միավորի արտադրանքի ինքնարժեքը

Տվյալ դեպքում ելնում են այն ենթադրությունից, որ այս բոլոր գործոնները փոփոխվում են անկախ իրարից:

Շահույթը փոփոխվում է ուղիղ համեմատական իրացման ծավալին, եթե իրացվում է շահութաբեր արտադրանք: Եթե արտադրողը վնասաբեր է, ապա շահույթը փոփոխվում է հակադարձ համեմատական արտադրության ծավալին:

Ասկայն այստեղ հաշվի չի առնվում արտադրանքի արտադրության ծավալի և ինքնարժեքի միջև կապը: Արտադրության ծավալի ավելացման դեպքում արտադրանքի միավորի ինքնարժեքը իջնում է, քանի որ այդ դեպքում աճում է միայն փոփոխուն ծախսերի գումարը (հումք, նյութեր, տեխնոլոգիական վառելիք, էլեկտրոէներգիա), այլ հաստատուն ծախսերի գումարը (ամորտիզացիա, շինարարության վարձավճար, աշխատավարձ, վարչակառավարչական ապարատի ապահովագրությունը և այլն) որպես կանոն մնում է անփոփոխ: Եվ հակառակ արտադրության անկման ժամանակ արտադրանքի ինքնարժեքը բարձրանում է այն պատճառով, որ ավելի շատ հաստատուն ծախսեր են ընկնում միավոր արտադրանքին:

Արտասահմանյան երկրներում շահույթի փոփոխության վրա ազդող գործոնների համակարգային մոտեցման ապահովման և դրա մեծության որոշման համար օգտագործվում է մարժինալային շահույթը:

Մարժինալային շահույթը (ՄՇ) - դա շահույթն է գումարած հաստատուն ծախսերը $\bar{\sigma}_h$

$$\text{ՄՇ} = \bar{\sigma} + \bar{\sigma}_h$$

որտեղից՝

$$\bar{\sigma} = \text{ՄՇ} - \bar{\sigma}_h$$

Այս բանաձևի օգնությամբ կարելի է հաշվարկել շահույթի գումարը, եթե հայտնի են մարժինալային շահույթը և հաստատուն ծախսերը:

Շատ հաճախ շահույթի գումարի որոշման ժամանակ մարժինալային շահույթի փոխարեն օգտագործվում է հասույթը (Հ) և դրա մեջ մարժինալային շահույթի տեսակարար կշիռը ($\bar{\sigma}_m$)

Զանի որ

$$\text{ՄՇ} = \bar{\eta} * \bar{\sigma}_m$$

ապա՝

$$C = \bar{q} * C_{տ} - \bar{D}_h$$

Այս բանաձևը հաջողությամբ կիրառվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է վերլուծել կազմակերպության կողմից մի քանի տեսակի արտադրանքի իրացումից շահույթը:

Մեկ տեսակի արտադրանքի իրացումից շահույթի վերլուծության դեպքում կիրառվում է շահույթի որոշման մոդիֆիկացված բանաձևը, եթե հայտնի են վաճառված արտադրանքի քանակը և արտադրանքի միավորի գնի մեջ մարժինալային շահույթի չափը (Եգ):

$$C = \bar{q} * C_{գ} - \bar{D}_h$$

$$C_{գ} = Q - V$$

$$C = \bar{q} * (Q - V) - \bar{D}_h$$

որտեղ՝

V-միավոր արտադրանքի հաշվով փոփոխուն ծախսերը

Այս բանաձևը թույլ է տալիս որոշել շահույթի գումարի փոփոխությունը իրացված արտադրանքի, գնի և հաստատուն ու փոփոխուն ծախսերի հաշվին:

Վերլուծության համար օգտվենք հետևյալ ելակետային տվյալներից.

Տվյալներ «Ա» տեսակի արտադրանքից ստացված շահույթի գործոննային վերլուծության համար

Աղյուսակ 3.2

Ցուցանիշներ	Պլան	Փաստացի
Արտադրանքի իրացման ծավալը հազ. դրամ	65000	61500
Իրացման գինը հազ.դրամ	600	610
Արտադրանքի ինքնարժեքը հազ.դրամ	500	550
Այդ բվում տեսակարար փոփոխուն ծախսերը մլն.դրամ	300	320
Հաստատուն ծախսերի ծավալը մլն.դրամ	7100	6900
Շահույթ մլն.դրամ	6500	5200

$$C_{պլ} = \bar{q}_{պլ} * (Q_{պլ} - V_{պլ}) - \bar{D}_{պլ} = 65000 * (600 - 300) - 7100000 = 2400 \text{ մլն. դրամ}$$

$$C_{փ} = \bar{q}_{փ} * (Q_{փ} - V_{փ}) - \bar{D}_{փ} = 61500 * (600 - 300) - 7100000 = 11350 \text{ մլն. դրամ}$$

$$C_2 = P_{\text{փ}} * (Q_{\text{փ}} - V_{\text{սլ}}) - \text{Մ}_{\text{սլ}} = 61500 * (610 - 300) - 7100000 = 11965 \text{ մլն. դրամ}$$

$$C_3 = P_{\text{փ}} * (Q_{\text{փ}} - V_{\text{փ}}) - \text{Մ}_{\text{սլ}} = 61500 * (610 - 320) - 7100000 = 10735 \text{ մլն. դրամ}$$

$$C_{\text{փ}} = P_{\text{փ}} * (Q_{\text{փ}} - V_{\text{փ}}) - \text{Մ}_{\text{փ}} = 61500 * (610 - 320) - 6900000 = 10935 \text{ մլն. դրամ}$$

Շահույթի ընդհանուր փոփոխությունը կկազմի

$$\Delta C_{\text{ըտ}} = 10935 - 12400 = -1465 \text{ մլն. դրամ}$$

այդ թվում ի հաշիվ փոփոխությունների՝

իրացված արտադրանքի քանակի՝ $\Delta C_p = 11350 - 12400 = -1050$ մլն. դրամ

իրացման գնի՝ $\Delta C_q = 11965 - 11350 = 615$ մլն. դրամ

տեսակարար փոփոխուն ծախսերի՝ $\Delta C_v = 10735 - 11965 = -1230$ մլն. դրամ

հաստատուն ծախսերի գումարի՝ $\Delta C_{\text{ս.հ}} = 10935 - 10735 = 200$ մլն. դրամ

Ուսումնասիրված մեթոդը թույլ է տալիս առավել ճիշտ հաշվարկել գործոնների ազդեցությունը շահույթի փոփոխության վրա, քանի որ այն հաշվի չի առնում արտադրության ծավալի, ինքնարժեքի և շահույթի միջև կապը:

Շահույթի վերլուծության մեթոդը բարդանում է բազմատեսականի արտադրանքի արտադրության պայմաններում, երբ բացի նշված գործոններից անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրացված արտադրանքի կառուցվածքը: Արտասահմանյան երկրներում բազմատեսականի արտադրանքի արտադրության ժամանակ շահույթի փոփոխության վրա անգործ գործոնների ուսումնասիրության համար օգտագործում են (5) մոդելը:

Հասույթի մեջ մարժինալային շահույթի միջին բաժինը իր հերթին կախված է յուրաքանչյուր տեսակի արտադրանքի տեսակարար կշռից հասույթի ամբողջ գումարի մեջ (Ատ) և ըստ յուրաքանչյուր արտադրատեսակի մարժինալային շահույթի բաժնից:

$$C_{\text{տ}} = \sum (U_{\text{տ}i} * C_{\text{տ}i})$$

$$U_{\text{տ}i} = P_i * Q_i / \sum (P_i * Q_i)$$

$$\sigma_{\text{ու}} = (Q_i - V_i) / Q_i$$

Դրանից հետո արտադրանքի իրացումից շահույթի գործոնային մոդելը կունենա հետևյալ տեսքը.

$$\sigma = \beta * \sum (U_{\text{ու}} * (Q_i - V_i)) / Q_i - \sigma_n$$

Այն թույլ է տալիս որոշել շահույթի փոփոխությունը իրացված արտադրանքի քանակի, դրա կառուցվածքի, բաց թողնման զևի, տեսակարար փոփոխուն ծախսերի և կազմակերպության հաստատուն ծախսերի հաշվին:

Ըստ վերը նշված մոդելի տվյալ գործոնների ազդեցության հաշվարկի համար անհրաժեշտ է ունենալ ինֆորմացիա արտադրանքի իրացումից հասույթի (Աղյուսակ 3.3) և դրա իրացման կառուցվածքի մասին (Աղյուսակ 3.4):

Կազմակերպության հաստատուն ծախսերը պլանով կազմում են 23000 մլն.դրամ, փաստացի՝ 25500 մլն.դրամ

Արտադրանքի իրացումից հասույթը

Աղյուսակ 3.3

Ցուցանիշներ	Հասույթի գումարը մլն. դրամ	Հասույթի հաշվարկման պայմանները		
		Վաճառքի ծավալը	Վաճառքի կառուցվածքը	Իրացման զինը
$\beta_{\text{ու}} = \sum (P_{\text{ու}} * Q_{\text{ու}})$	91700	պլան	պլան	պլան
$\beta_1 = \beta_{\text{ու}} * P_1$	85930	փաստացի	պլան	պլան
$\beta_2 = \sum (P_{\text{փ}} * Q_{\text{ու}})$	85940	փաստացի	փաստացի	պլան
$\beta_{\text{փ}} = \sum (P_{\text{փ}} * Q_{\text{փ}})$	86075	փաստացի	փաստացի	փաստացի

Արտադրանքի իրացման կառուցվածքը

Աղյուսակ 3.4

Արտադրատեսակ	Արտադրանքի զինը մլն. դրամ		Արտադրատեսակին ընկնող փոփոխուն ծախսը մլն. դրամ		Տեսակարար կշիռը ամբողջ հասույթի մեջ մլն. դրամ		$\sigma_{\text{ու}} = (Q_i - V_i) / Q_i$		
	պլան	փաստ.	պլան	փաստ.	պլան	փաստ.	պլան	պայմ	փաստ.
«Ա»	600	610	300	320	42.75	39.39	0.5	0.508	0.47
«Բ»	550	530	290	310	32.39	30.75	0.47	0.452	0.41
«Գ»	730	750	360	390	24.86	29.86	0.5	0.52	0.48

Ետո-պայմանականը Ետո արժեքն է՝ հաշվարկված ըստ փաստացի գնեթի և արտադրանքի միավորի հաշվով փոփոխուն ծախսերի ըստ պլանի:

Հաշվարկենք շահույթի պլանային գումարը:

Սկզբում որոշենք մարժինալ շահույթի բաժինը գնի մեջ յուրաքանչյուր արտադրատեսակի համար.

$$\text{«Ա» արտադրատեսակի համար } (600-300) / 600 = 0.5$$

$$\text{«Բ» արտադրատեսակի համար } (550-290) / 550 = 0.47$$

$$\text{«Գ» արտադրատեսակի համար } (730-360) / 730 = 0.5$$

Այնուհետև հաշվարկենք Ետ-ի միջին արժեքը արտադրանքի ամբողջ ծավալի իրացման համար ըստ պլանի.

$$\text{Ետ}_{\text{պլ}} = (0.5 \cdot 42.75 + 0.47 \cdot 32.39 + 0.5 \cdot 24.86) / 100 = 0.490283$$

Ստանանք իրացումից շահույթի գումարը ըստ պլանի՝ նշված բանաձևի միջոցով.

$$\text{Շ}_{\text{պլ}} = \text{Հ}_{\text{պլ}} \cdot \text{Ետ}_{\text{պլ}} - \text{Ծ}_{\text{հ.պլ}} = (91700 \cdot 0.490283) - 23000 = 21958 \text{ մլն. դրամ}$$

Հետագա վերլուծության ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե փոխվել է շահույթի գումարը վաճառված արտադրանքի քանակի հաշվին: Եթե արտադրանքի իրացման ծավալը ավելանում է բոլոր տեսակի արտադրատեսակների գծով հավասարաչափ, ապա նրա կառուցվածքը և մարժինալային շահույթի տեսակարար կշիռները հասույթի գումարի մեջ չի փոփոխվել: Այդ դեպքում շահույթի գումարը կկազմի.

$$\text{Շ}_1 = \text{Հ}_1 \cdot \text{Ետ}_{\text{պլ}} - \text{Ծ}_{\text{հ.պլ}} = (85930 \cdot 0.490283) - 23000 = 19130 \text{ մլն. դրամ}$$

Հաշվարկների տվյալները ցույց են տալիս, որ արտադրանքի իրացման ծավալի կրճատման հաշվին շահույթի գումարը կրճատվել է 2827 (19130-21958) մլն. դրամով:

Այդ նույն արդյունքը կարելի է ստանալ բացարձակ տարբերությունների մեթոդի օգնությամբ.

$$\Delta \text{Շ}_p = (\text{Հ}_1 - \text{Հ}_{\text{պլ}}) \cdot \text{Ետ}_{\text{պլ}} = (85930 - 91700) \cdot 0.490283 = -2827 \text{ մլն. դրամ}$$

Այնուհետև անհրաժեշտ է սահմանել մարժինալային եկամտի և շահույթի գումարները ի հաշիվ արտադրանքի իրացման կառուցվածքի: Նշենք, որ ապրանքային արտադրանքի կառուցվածքային տեղաշարժերը բերում են ոչ միայն հասույթի, այլև մարժինալային շահույթի միջին տեսակարար կշռի փոփոխման: Ըահույթի գումարի հաշվարկը ըստ փաստացի ծավալի և կառուցվածքի, բայց պլանային

գների փոփոխուն և հաստատուն ծախսերի բերվում է նույն հերթականությամբ:

Ետ-ի միջին մեծությունը իրացված արտադրանքի ամբողջ փաստացի ծավալի համար (պլանային բաց թողնման գնով և միավոր արտադրանքի հաշվով փոփոխուն ծախսերով) կկազմի՝

$$\text{Ետ}_1 = (0.5 \cdot 39.39 + 0.47 \cdot 30.75 + 0.5 \cdot 29.86) / 100 = 0.49077$$

Արտադրանքի իրացումից շահույթը փաստացի կատարման համար (անփոփոխ գների և ծախսերի դեպքում)

$$\text{Շ}_2 = \text{Հ}_2 * \text{Ետ}_1 - \text{Շ}_{\text{հ.պլ}} = (85940 * 0.49077) - 23000 = 19176 \text{ մլն. դրամ}$$

Շահույթի գումարը մեծ է նախորդից 46(19176-19130) մլն. դրամ

Շահույթի գումարի վրա առավել մեծ ազդեցություն է թողնում արտադրանքի գնի փոփոխությունը: Դրա հաշվին փոխվում է հասույթի գումարը և մարժինալային շահույթի միջին բաժինը:

Նախ հաշվենք Ետ₁ յուրաքանչյուր արտադրատեսակի համար ըստ փաստացի և միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերի պլանի:

$$\text{«Ա» արտադրատեսակի համար (610-300) / 610 = 0.5081}$$

$$\text{«Բ» արտադրատեսակի համար (530-290) / 530 = 0.4528}$$

$$\text{«Գ» արտադրատեսակի համար (750-360) / 750 = 0.52}$$

Ետ արտադրանքի իրացման ամբողջ փաստացի ծավալը փաստացի կառուցվածքի և գների, բայց փոփոխուն ծախսերի պլանային մակարդակի պայմաններում կլինի հավասար՝

$$\text{Ետ}_2 = (0.5081 \cdot 39.39 + 0.4528 \cdot 30.75 + 0.52 \cdot 29.86) / 100 = 0.494648$$

Արտադրանքի փաստացի ծավալի իրացումից շահույթը գների փոփոխության, փոփոխուն և հաստատուն ծախսերի մակարդակի պահպանման պայմաններում կլինի հավասար

$$\text{Շ}_3 = \text{Հ}_\text{փ} * \text{Ետ}_2 - \text{Շ}_{\text{հ.պլ}} = (85940 * 0.49077) - 23000 = 19176 \text{ մլն. դրամ}$$

Բոլոր արտադրատեսակների գծով գների բարձրացման հաշվին շահույթը մեծացել է 401(19577-19176) մլն. դրամ

Այնուհետև հաշվարկենք Ետ - ի անհատական և միջին արժեքը բոլոր փաստացի պայմանների դեպքում կառուցվածքի, գների, տեսակարար փոփոխուն ծախսերի:

$$\text{«Ա» արտադրատեսակի համար (610-320) / 610 = 0.4754}$$

$$\text{«Բ» արտադրատեսակի համար (530-310) / 530 = 0.415}$$

$$\text{«Գ» և ռտադրատեսակի համար (750-390) / 750 = 0.48}$$

$$\text{Ետ}_\text{փ} = (0.4754 \cdot 39.39 + 0.415 \cdot 30.75 + 0.48 \cdot 29.86) / 100 = 0.4881$$

Հահույթը բոլոր փաստացի պայմանների, բայց հաստատուն գումարի պլանային արժեքի դեպքում կկազմի

$$C_4 = \text{Հփ} * \text{Ետփ} - \text{Մ}_{\text{ն.պլ}} = (86075 * 0.4881) - 23000 = 19013 \text{ մլն. դրամ}$$

Ստացված արդյունքի նախորդի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ տեսակարար փոփոխուն ծախսերի մեծացման հաշվին շահույթը նվազել է 564(19013-19577) մլն. դրամ

Հաշվարկենք շահույթի փաստացի գումար.

$$C_{\text{փ}} = \text{Հփ} * \text{Ետփ} - \text{Մ}_{\text{ն.փ}} = (86015 * 0.4881) - 25500 = 16513 \text{ մլն. դրամ}$$

Հաստատուն ծախսերի գումարում պլանից շեղումը (մեր օրինակում (25500-23000)=2500 մլն. դրամ) բերել է շահույթի փոփոխության հենց նույն գումարով 2500(16513-19013) մլն. դրամ: Այդ հաշվարկը կարելի է ներկայացնել համակարգված տեսքով:

Հահույթի գումարի ընդհանուր շեղումը.

$$\Delta C_{\text{ընդ}} = 16513 - 21958 = -5445 \text{ մլն. դրամ}$$

Այդ թվում ի հաշիվ.

արտադրանքի իրացման ծավալի փոփոխության $\Delta C = 19130 - 21958 = -2828$ մլն. դրամ

արտադրանքի իրացման կառուցվածքի փոփոխության $\Delta C = 19176 - 19130 = 46$ մլն. դրամ

բաց թողման գների փոփոխության $\Delta C = 19577 - 19176 = 401$ մլն. դրամ

տեսակարար փոփոխուն ծախսերի փոփոխության $\Delta C = 19013 - 19577 = -564$ մլն. դրամ

հաստատուն ծախսերի փոփոխության $\Delta C = 16013 - 19013 = -2500$ մլն. դրամ

Շահույթի գումարի վրա գործունների ազդեցության հաշվարկը մարժինալային շահույթի օգտագործմամբ

Աղյուսակ 3.6

Շահույթի գումարի հաշվարկը մլն. դրամ	Գործոն				
	Վաճառքի ծավալ	Իրացման կառուցվածք	Իրացման զին	Փոփոխուն ծախսեր	Հաստատուն ծախսեր
91700*0.491283-23000=21958	պլան	պլան	պլան	պլան	պլան
85930*0.490283-23000=19130	փաստ.	պլան	պլան	պլան	պլան
85940*0.49077-23000=19176	փաստ.	փաստ.	պլան	պլան	պլան
86075*0.494648-23000=19577	փաստ.	փաստ.	փաստ.	պլան	պլան
86075*0.4881-23000=19013	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	պլան
86075*0.4881-25000=18513	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.

Այս եղանակով շահույթը հաշվարկելիս այն եականորեն կախված է վաճառքի ծավալից և կառուցվածքից, քանի որ այդ գործոնները միաժամանակ ազդում են արտադրանքի ինքնարժեքի վրա: Արտադրանքի իրացման ծավալի պլանի չկատարման պատճառով միավոր արտադրանքին ավելի շատ հաստատուն ծախս է ընկնում:

Ի վերջո շահույթի վերլուծության գործոնային մեթոդի ուսումնասիրությունը հաստատում է մարժինալ վերլուծության առավելությունը, որը թույլ է տալիս ուսումնասիրել և քանակական չափել ոչ միայն անմիջական, այնպես էլ միջնորդավորված կապերը և կախվածությունները: Այս մեթոդի օգտագործումը կազմակերպությունների ֆինանսական մենեջմենթում թույլ կտա առավել արդյունավետ ղեկավարել ֆինանսական արդյունքների ձևավորման պրոցեսը: Սակայն դա հնարավոր կլինի միայն կազմակերպության ծախսերի պլանավորումը և հաշվառումը «Դիրեկտ-կոստինգ» մեթոդով կազմակերպելու պայմանով, այսինքն դրանց խմբավորման փոփոխուն և հաստատուն ծախսերի:

3.1.5 Շահութաբերության վերլուծությունը «Դիրեկտ-կոստինգ» մեթոդով

Շատ կազմակերպություններում օգտագործվող շահութաբերության վերլուծության մեթոդը նույնպես հաշվի չի առնում «ծախս-ծավալ-շահույթ» փոխադարձ կապը: Այդ մեթոդով հաշվարկելիս շահութաբերության մակարդակը կախված չէ վաճառքի ծավալից, քանի որ վերջինիս փոփոխության հետ տեղի է ունենում շահույթի և ծախսերի գումարի հավասարաչափ մեծացում:

Իրականում, ինչպես մենք համոզվեցինք, կազմակերպության և շահույթը, և ծախսերը չեն փոփոխվում արտադրանքի իրացման խավալին հավասարաչափ, քանի որ ծախսերը որոշ չափով հաստատուն են:

Աղյուսակ 3.2-ի տվյալներով բերենք «Ա» արտադրատեսակի շահույթի գործոնային վերլուծությունը, որի համար օգտագործենք գործոնային մոդելը.

$$R_1 = C_1 / D_1 = Q_1 * (Q_1 - V_1) - D_n / D_1 * V_1 + D_n$$

$$R_{ալ} = C_{ալ} / D_{ալ} = Q_{ալ} * (Q_{ալ} - V_{ալ}) - D_{n,ալ} / Q_{ալ} * V_{ալ} + D_{n,ալ} = 65000 * (0.6 - 0.3) - 7100 / 65000 * 0.3 + 7100 = 12400 / 26600 * 100 = 46.6\%$$

$$R_1 = C_1 / D_1 = Q_{փ} * (Q_{ալ} - V_{ալ}) - D_{n,ալ} / Q_{փ} * V_{ալ} + D_{n,ալ} = 61500 * (0.6 - 0.3) - 7100 / 61500 * 0.3 + 7100 = 11350 / 25500 * 100 = 44.4\%$$

$$R_2 = C_2 / D_2 = Q_{փ} * (Q_{փ} - V_{ալ}) - D_{n,ալ} / Q_{փ} * V_{ալ} + D_{n,ալ} = 61500 * (0.61 - 0.3) - 7100 / 61500 * 0.3 + 7100 = 11965 / 25500 * 100 = 46.8\%$$

$$R_3 = C_2 / D_3 = Q_{փ} * (Q_{փ} - V_{փ}) - D_{n,ալ} / Q_{փ} * V_{փ} + D_{n,ալ} = 61500 * (0.6 - 0.32) - 7100 / 61500 * 0.32 + 7100 = 10735 / 26780 * 100 = 40.09\%$$

$$R_{փ} = C_{փ} / D_{փ} = Q_{փ} * (Q_{փ} - V_{փ}) - D_{n,փ} / Q_{փ} * V_{փ} + D_{n,փ} = 61500 * (0.61 - 0.32) - 6900 / 61500 * 0.32 + 6900 = 10935 / 26780 * 100 = 40.8\%$$

Բերված տվյալները ցույց են տալիս, որ շահութաբերության փաստացի մակարդակը պլանայինից փոքր է 3.6%-ով

$$\Delta R_{ընդ} = 40.8 - 44.4 = -3.6\%$$

Այդ թվում ի հաշիվ

իրացված արտադրանքի քանակի $\Delta R_p = 44.4 - 46.6 = -2.2\%$

իրացման գնի $\Delta R_q = 46.8 - 44.4 = 2.4\%$

տեսակարար փոփոխուն ծախսերի $\Delta R_v = 40.09 - 46.8 = -6.71\%$

հաստատուն ծախսերի գումարի $\Delta R_{\Sigma, \text{հ}} = 40.8 - 40.09 = 0.71\%$

Այս մեթոդը արտադրության անկման և իրացման ծավալի կրճատման շահութաբերությունը նվազել է 2.2 %: Դրանք առավել հավաստի արդյունքներ են, քանի որ դրանք հաշվի են առնում վաճառքի ծավալի, ինքնարժեքի և շահույթի միջև փոխադարձ կապը:

Իրացված արտադրանքի գծով ծախսերը

Աղյուսակ 3.6

Ցուցանիշ	Հաշվարկ	Գումար մլն. դրամ
Ըստ պլանի	$\Sigma(P_{\text{պլ}} \cdot V_{\text{պլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}} = 45980 + 23000 =$	68980
Վաճառքի փաստացի ծավալի, կառուցվածքի, փոփոխուն և հաստատուն ծախսերի պլանային մակարդակի դեպքում	$\Sigma(P_{\text{պլ}} \cdot V_{\text{պլ}}) \cdot R_{\text{հ}} + \Sigma_{\text{հ.պլ}} = 45980 \cdot 0.937 + 23000 =$	66083
Վաճառքի ծավալի և կառուցվածքի, փոփոխուն և հաստատուն ծախսերի պլանային մակարդակի դեպքում	$\Sigma(P_{\text{պլ}} \cdot V_{\text{պլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}} = 43090 + 23000 =$	66090
Փաստացի հաստատուն ծախսերի պլանային մակարդակի դեպքում	$\Sigma(P_{\text{պլ}} \cdot V_{\text{պլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}} = 46720 + 23000 =$	69720
Փաստացի	$\Sigma(P_{\text{պլ}} \cdot V_{\text{պլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}} = 46720 + 25500 =$	72220

Ամբողջ կազմակերպության մասշտաբով շահութաբերության վերլուծության համար օգտագործում ենք հետևյալ մոդելը.

$$R = \frac{L}{L} = \frac{R_{\text{հ}} \cdot \sigma_{\text{գ}} - \delta}{\Sigma(K_{\text{փ}} \cdot V_{\text{պլ}}) + \delta} = \frac{\Sigma(K_{\text{ընդ.}} \cdot \Delta R_{\text{ի}} \cdot \delta_{\text{ի}}) \cdot \Sigma(\Delta R_{\text{ի}} \cdot (\delta_{\text{ի}} - V_{\text{ի}}) / \delta_{\text{ի}}) - \delta}{\Sigma(K_{\text{ընդ.}} \cdot \Delta R_{\text{ի}} \cdot V_{\text{ի}}) + \delta}$$

Հաջորդաբար փոխելով յուրաքանչյուր գործոնային ցուցանիշի պլանային արժեքները փաստացիներով և համեմատելով հաշվարկի արդյունքները յուրաքանչյուր գործոնի փոփոխությունից առաջ և հետո կարելի է որոշել շահութաբերության մակարդակի փոփոխությունը ի հաշիվ իրացված արտադրանքի ծավալի (Kընդ.), դրա կառուցվածքի (ΔR_ի), գնի(δ) տեսակարար փոփոխուն ծախսերի(V)և հաստատուն ծախսերի գումարի (H):

$$R_{\text{պլ}} = \frac{\Sigma(P_{\text{ընդ.պլ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot Q_{\text{իպլ}}) \cdot \Sigma(\text{Ատ}_{\text{պլ}} \cdot (Q_{\text{իպլ}} - V_{\text{իպլ}}) / Q_{\text{իպլ}}) - \Sigma_{\text{հ.պլ}} / \Sigma(P_{\text{ընդ.պլ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot V_{\text{իպլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}}}{\Sigma(P_{\text{ընդ.պլ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot Q_{\text{իպլ}}) \cdot \Sigma(\text{Ատ}_{\text{պլ}} \cdot (Q_{\text{իպլ}} - V_{\text{իպլ}}) / Q_{\text{իպլ}}) - \Sigma_{\text{հ.պլ}} / \Sigma(P_{\text{ընդ.պլ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot V_{\text{իպլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}}} = 21958 / 68980 = 31.93\%$$

$$R_1 = \frac{\Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot Q_{\text{իպլ}}) \cdot \Sigma(\text{Ատ}_{\text{պլ}} \cdot (Q_{\text{իպլ}} - V_{\text{իպլ}}) / Q_{\text{իպլ}}) - \Sigma_{\text{հ.պլ}} / \Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot V_{\text{իպլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}}}{\Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot Q_{\text{իպլ}}) \cdot \Sigma(\text{Ատ}_{\text{պլ}} \cdot (Q_{\text{իպլ}} - V_{\text{իպլ}}) / Q_{\text{իպլ}}) - \Sigma_{\text{հ.պլ}} / \Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{պլ}} \cdot V_{\text{իպլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}}} = 19130 / 66083 = 28.95\%$$

$$R_2 = \frac{\Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{իփ}} \cdot Q_{\text{իպլ}}) \cdot \Sigma(\text{Ատ}_{\text{իփ}} \cdot (Q_{\text{իպլ}} - V_{\text{իպլ}}) / Q_{\text{իպլ}}) - \Sigma_{\text{հ.պլ}} / \Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{իփ}} \cdot V_{\text{իպլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}}}{\Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{իփ}} \cdot Q_{\text{իպլ}}) \cdot \Sigma(\text{Ատ}_{\text{իփ}} \cdot (Q_{\text{իպլ}} - V_{\text{իպլ}}) / Q_{\text{իպլ}}) - \Sigma_{\text{հ.պլ}} / \Sigma(P_{\text{ընդ.փ}} \cdot \text{Ատ}_{\text{իփ}} \cdot V_{\text{իպլ}}) + \Sigma_{\text{հ.պլ}}} = 19176 / 66090 = 29\%$$

$$R_3 = \sum(\rho_{\text{ընդ.փ}} * U_{\text{տիփ}} * Q_{\text{նիփ}}) * \sum(U_{\text{տիփ}} * (Q_{\text{նիփ}} - V_{\text{նսլ}}) / Q_{\text{նիփ}}) - \sigma_{\text{ն.սլ}} / \sum(\rho_{\text{ընդ.փ}} * U_{\text{տիփ}} * V_{\text{նսլ}}) + \sigma_{\text{ն.սլ}} = 19577/66083 = 29.62\%$$

$$R_4 = \sum(\rho_{\text{ընդ.փ}} * U_{\text{տիփ}} * Q_{\text{նիփ}}) * \sum(U_{\text{տիփ}} * (Q_{\text{նիփ}} - V_{\text{նիփ}}) / Q_{\text{նիփ}}) - \sigma_{\text{ն.սլ}} / \sum(\rho_{\text{ընդ.փ}} * U_{\text{տիփ}} * V_{\text{նիփ}}) + \sigma_{\text{ն.սլ}} = 19013/69720 = 27.27\%$$

$$R_{\text{փ}} = \sum(\rho_{\text{ընդ.փ}} * U_{\text{տիփ}} * Q_{\text{նիփ}}) * \sum(U_{\text{տիփ}} * (Q_{\text{նիփ}} - V_{\text{նիփ}}) / Q_{\text{նիփ}}) - \sigma_{\text{ն.փ}} / \sum(\rho_{\text{ընդ.փ}} * U_{\text{տիփ}} * V_{\text{նիփ}}) + \sigma_{\text{ն.փ}} = 16513/72220 = 22.86\%$$

Գործոնային վերլուծության արդյունքները կլինեն՝

Վաճառքի ամբողջ ծավալի հաշվին = 28.95-31.93 = -2.88

Արտադրանքի գնի կառուցվածքի հաշվին = 29-28.95 = 0.05

Արտադրանքի ինքնարժեքի հաշվին = 22.28-29.62 = 0.62

Այլ թվում

Փոփոխուն ծախսերի հաշվին = 27.27- 29.62 = -2.35

Հաստատուն ծախսերի հաշվին = 22.86-27.27 = -4.41

3.1.6. Շահույթի բաշխման վերլուծությունը

Շահույթի բաշխումն ու օգտագործումը դիտվում են որպես կարևոր տնտեսական գործընթացներ, որոնցով ապահովվում են ձեռնարկատերերի կարիքների բավարարումը և հանրապետության բյուջեի որոշակի եկամուտների ձևավորումը: Շահույթի բաշխման մեխանիզմի նկատմամբ հիմնական պահանջը, բոլոր ժամանակներում և հատկապես շուկայական էկոնոմիկայի դեպքում, եղել և մնում է տնտեսվարման արդյունավետության բարձրացմանը ամեն կերպ նպաստելը:

Հասարակական արտադրության օբյեկտիվ պայմաններից կախված, շահույթի բաշխման մեխանիզմը մշտապես ենթարկվել է փոփոխությունների և համարվել է տնտեսական ռեֆորմների կենտրոնական հարցերից մեկը: Դրա կարևորագույն խնդիրներից մեկը, ինչպես նախքան շուկայական հարաբերություններին անցնելը, այնպես էլ դրանց զարգացման պայմաններում համարվել և համարվում է պետական բյուջե կենտրոնացվող և տնտեսվարող սուբյեկտների տնօրինմանը թողնվող մասերի միջև օպտիմալ հարաբերակցության ստեղծումը:

Կազմակերպությունների, կազմակերպությունների համատարած սեփականա-շնորհման արդյունքում տնտեսվարող սուբյեկտները իրավունք են ձեռք բերում ստացած շահույթը իրենց հայեցողությամբ օգտագործելու, բացառությամբ այն մասի, որը ենթակա է պարտադիր նվազեցումների և հարկադրման՝ գործող օրենսդրությանը համապատասխան: Բոլոր մասնակիցների համար անհրաժեշտություն է դառնում շահույթի

բաշխման հստակ համակարգի գոյությունը նախնառաջ զուտ շահույթի ձևավորմանը նախորդող փուլում, այսինքն պետք է նախօրոք ու պարզորոշ հայտնի լինի, թե տնտեսական զուտ արդյունքի որ մասն նրանք կարող են լիիրավ տնօրինել և ինչպիսի մեխանիզմով:

«Շահութահարկի մասին» օրենքով հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և տվյալ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Տպավորություն է ստեղծվում, որ հարկվող շահույթը հանդես է գալիս շահույթից անկախ: Եվ իրոք այդպես է, փաստորեն, համախառն (հաշվեկշռային) շահույթը բոլորովին այլ, հարկվող շահույթի հետ անչլություն չունեցող մեծություն է և ծառայում է միայն որպես հարկի վճարման աղբյուր: Համախառն եկամտի և նվազեցումների տարբերությունը, ըստ էության, միջանկյալ արտահայտություն է, բովանդակությամբ գործառնական շահույթի (իրացումից զուտ հասույթի և արտադրության ու իրացման ծախսերի տարբերություն) հետ կարող է նույնական չլինել: Այս առումով պարզ չէ նաև, թե չփոխհատուցվող հարկերի (գույքահարկ, հողի հարկ, տուրքեր և այլն) վճարման աղբյուրը շահույթն է, թե իրացումից հասույթը:

Համախառն եկամուտը, գործող օրենքի իմաստով, ընդգրկում է հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի կողմից ստացված բոլոր եկամուտների ամբողջություն, անկախ դրանց ստացման աղբյուրից: Մասնավորապես, եկամուտ են համարվում արտադրանքի, ապրանքների, ծառայությունների, ընթացիկ ու ոչ ընթացիկ ակտիվների իրացումից հասույթը, փոխատվությունների, վարձակալության դիմաց ստացված վճարները, շահաբաժինների, ապահովագրական, վնասի փոխհատուցման, պարտքերի, տույժ ու տուգանքների, հայցային վաղեմությունը կորցրած կրեդիտորական պարտքերի դիմաց փոխհատուցումներն ու եկամուտները և այլն: Գործնականում եկամուտ չեն համարվում միայն մասնակիցների կանոնադրական կապիտալում կատարած ներդրումների և արտարժույթի վերագնահատման դրական տարբերությունը:

Շահույթի մեծության վրա, որը մնում է կազմակերպության տնօրինության տակ, ազդում են բոլոր հարկերը, որ վճարում է կազմակերպությունը անկախ հարկման բազայից: Բայց հարկային վճարումների մի մասը, ինչպիսիք են ճանապարհային վճարները, աշխատավարձի ֆոնդին հատկացումները, ունեն անուղղակի ազդեցություն զուտ շահույթի վրա արտադրանքի ինքնարժեքի և իրացումից շահույթի միջոցով: Դրանք հանդիսանում են զուտ շահույթի համար II գործոններ:

Հարկերի մյուս տեսակները, այնպիսիք, ինչպիսիք են բնակարանային ֆոնդի, սոցիալ կուլտուրական ոլորտի պահպանման, քաղաքի

բարելավման վճարները, գովազդային վճարները ուղղակի հարկեր են, որոնք հարկվում են տարբեր հարկային բազաներից:

Հարկային հատկացումների չափը յուրաքանչյուր տեսակի գծով կախված է հարկման բազայից և հարկային դրույքաչափերից:

Այսպիսով զուտ շահույթի փոփոխությունը հարկային վճարումների ազդեցության տակ ձևավորվում է հարկային բազայի փոփոխությունների արդյունքում շեղումների գումարից և հարկային դրույքաչափերի փոփոխությունից վերցրած՝ հակառակ նշանով.

$$\Delta C_q(\%) = - (\Delta ZP * ZP/100 + \Delta Z\Gamma * ZP^1/100)$$

որտեղ՝

C_q - զուտ շահույթն է

ZP - հարկման ենթակա բազա

$Z\Gamma$ - հարկի դրույքաչափ, %

Z - հարկային վճարումների չափը

Շահութահարկի հաշվարկման համար սահմանվում է հարկման ենթական շահույթը: Հարկման համար հաշվեկշռային շահույթը նվազեցվում է: Նվազեցումները հստակորեն բաժանվում են երեք խմբի՝ ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ:

Ծախսերի թվին են դասվում նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովագրության, ոչ ընթացիկ ակտիվների մաշվածքի ծախսերը, ապահովագրական, չփոխհատուցվող հարկերի վճարները, փոխառու միջոցների տակասները, կոմերցիան ու այլ ծախսեր: Հարկվող շահույթի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 20% -ի չափով անկախ շահույթի չափից:

Ի մակարդակի գործոնները, որոնք ազդում են զուտ շահույթի վրա հարկման ենթական շահույթն է և շահութահարկի դրույքաչափը: Դրանց ազդեցության չափը որոշվում է վերը նշված բանաձևով: Ի մակարդակի գործոնները, որոնք ազդում են շահույթի վրա հարկման ենթական շահույթի վրա հետևյալներն են.

- եկամուտներ՝ հաշվարկված դրույքաչափերով, որոնք տարբերվում են շահութահարկից

- պահուստային ֆոնդ հատկացումների չափը

- շահույթից արտոնությունների գծով հատկացումների չափը

Ի և այլ կարգի գործոնների ազդեցությունը շահութահարկի վրա հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\Delta Z_1 = \Delta C Z_1 * Z\Gamma/100$$

որտեղ՝

$\Delta Z_i - i$ - ընդհանուր ազդեցությունը շահութահարկի վրա

$\Delta C Z_i - i$ - ընդհանուր ազդեցությամբ հարկվող շահույթի աճը

Չուտ շահույթի մեծության վրա շահութահարկի ազդեցության հաշվարկը ուսումնասիրենք հետևյալ տվյալների հիման վրա.

Շահութահարկի վերլուծությունը մլն. դրամ

Աղյուսակ 3.7

Ցուցանիշներ	Պլան	Փաստացի	Շեղում
Համախառն շահույթ	21958	16513	-5445
Բաժնետոմսերից եկամուտ	0.3	0.25	-0.05
Հատկացումներ պահուստային ֆոնդին	3	2	-1
Արտոնյալ շահույթ	8908	6513	-2393
Հարկվող շահույթ (1-2-3-4)	13047	9996	-3051
Շահութահարկի դրույքաչափ	25%	20%	-5
Շահութահարկի գումար	3261	1999	-1262

Շահութահարկի գումարը նվազել է 1262 մլն. դրամով

Շահութահարկի մեծության վրա ազդել է հարկվող շահույթի մեծացումը

$$\Delta Z(\Delta C) = \Delta C Z_i \cdot \frac{3}{3} / 100 = -305120 / 100 = -610$$

Շահութահարկի դրույքաչափի իջեցումը

$$\Delta Z(\Delta C) = \Delta C Z_i \cdot \frac{5}{100} = -5 \cdot 9996 / 100 = -500$$

Ընդհանուր ազդեցությունը կազմել է -1010 (-610-500) մլն.դրամ

II մակարդակի գործոնների ազդեցության հաշվարկը շահութահարկի վրա հաշվարկվում է ստորև բերված աղյուսակի օգնությամբ

II կարգի գործոնների ազդեցությունը շահութահարկի մեծության վրա մլն. դրամ

Աղյուսակ 3.8

Գործոն	Հաշվարկ	Ազդեցության չափը
Համախառն շահույթի փոփոխությունը	$-5445 \cdot 25 / 100$	-1361
Բաժնետոմսերից եկամտի փոփոխությունը	$-0.05 \cdot 25 / 100$	-0.0125
Պահուստային ֆոնդի հատկացումների փոփոխությունը	$-1 \cdot 25 / 100$	-0.25
Արտոնյալ շահույթի փոփոխությունը	$2395 \cdot 25 / 100$	-500
Հարկվող շահույթի փոփոխությունը	$-3051 \cdot 25 / 100$	-763

Շահութահարկի գումարը նվազել է 1361 մլն. դրամով ի հաշիվ համախառն շահույթի նվազեցման, 0.0125 մլն. դրամով բաժնետոմսերի եկամտի փոփոխության, 0.25 մլն. դրամով ի հաշիվ պահուստային ֆոնդին հատկացումների փոփոխության և 600 մլն. դրամով ի հաշիվ արտոնյալ շահույթի փոփոխության:

Շահութահարկը վճարելուց հետո մնում է կազմակերպության զուտ շահույթը, որը կազմակերպությունը տնօրինում է ինքնուրույնաբար: Իր հայեցողության տակ մնացող շահույթը կարող է օգտագործվել տարբեր խնդիրներ լուծելու համար՝ ձեռնարկչատիրական գործունեության հետագա զարգացման, ներտնտեսական այլ պահանջների բավարարման: Ոչ մի կազմակերպություն, ընդհուպ նաև պետությունը, իրավունք չունի միջամտելու այդ շահույթի օգտագործման ուղղություններին: Սեփական շահույթի օգտագործման առաջնայությունները որոշվում են շուկայական պայմաններից ելնելով: Մրցակցության հետագա զարգացումը պահանջ է դնում արտադրություն ընդլայնման, կատարելագործման, տեխնիկական հագեցման, աշխատողների կյանակալի սոցիալական պահանջների բավարարման, ինչը և դառնում է գլխավոր կողմնորոշող գործոնը: Չուտ շահույթը, ներկա պայմաններում, սեփական շրջանառու կապիտալի լրացման ամենա-նպատակահարմար աղբյուրն է, միաժամանակ ուղղվում է նաև հիմնական միջոցների պակասը լրացնելու համար ստացած փոխառությունների մարման և ժամկետանց վարկերի դիմաց տոկոսների վճարման նպատակներին:

Արտադրության ընդլայնման, տեխնիկական հագեցման, արդիականացման և այլ միջոցառումներին զուգընթաց, կազմակերպության զուտ շահույթը կարող է ծախսվել նաև կոլեկտիվի սպառողական ու սոցիալական կարիքների բավարարման նպատակով՝ ի վերջո բաժանելով կուտակման և սպառման ֆոնդերի շահույթից տրվող հատկացումների միջև օպտիմալ հարաբերակցության սահմանումը, չանտեսելով պահուստներին հատկացում կատարելու անհրաժեշտությունը:

Վերլուծության գործընթացում անհրաժեշտ է պարզել պահուստների օգտագործման կոնկրետ պատճառները:

Կուտակման և սպառման հիմնադրամների միջոցները ունեն նպատակային նշանակություն և ծախսվում են հաստատված նախահաշիվների համաձայն:

Կուտակման հիմնադրամի միջոցները հիմնականում օգտագործվում են ընդլայնված վերարտադրության, տեխնիկական վերազինվածության, նոր տեխնոլոգիաների ներդրման համար:

Սպառման հիմնադրամի միջոցները, ի տարբերություն կուտակման հիմնադրամի, ուղղվում են անձնակազմի սոցիալական զարգացմանը և

նյութական խրախուսմանը: Այդ միջոցները նախատեսված են անձնակազմի սոցիալական պաշտպանվածության ապահովման, ինչպես նաև նյութական խրախուսման համար:

Արտադրական կազմակերպությունների շահույթի բաշխման ամբողջական պատկերը հետևյալն է.

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ձև N2

Ցուցանիշի անվանումը	Տարեսկիզբ	Տարեվերջ
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հատույթ	-	-
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	-	-
Համախառն շահույթ (վճաս)	21958	16513
Իրացման (առևտրային) ծախսեր	-	-
Վարչական և ընդհանուր այլ ծախսեր	-	-
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից շահույթ (վճաս)	-	-
Գործառնական այլ եկամուտներ	-	-
Գործառնական այլ ծախսեր	-	-
Գործառնական գործունեությունից շահույթ (վճաս)	-	-
Ֆինանսական ծախսեր	-	-
Կապակցված կազմակերպությունների շահույթը (վճասը) ներդրումները «բաժնեմասնակցության մեթոդով» հաշվառելիս	8908	6513
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վճաս)	-	-
Արտասովոր դեպքերից շահույթ (վճաս)	-	-
Չուտ շահույթ (վճաս) մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	13047	9996
Շահութահարկի գծով ծախս	3261	1999
Չուտ շահույթ (վճաս) հարկումից հետո	9786	7997
Սեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	-	-
Սեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուրբացված շահույթ	-	-

3.2 Ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը

3.2.1 Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության հասկացությունը, էությունը և խնդիրները

Կազմակերպության ֆինանսները դրամական հարաբերությունների համակարգ է, որը դրվում է արտադրանքի արտադրության, իրացման և գործունեության այլ ձևերի իրականացման հիմքում: Կազմակերպության ֆինանսական դրություն հասկացության տակ ի նկատի է առնվում կազմակերպության հնարավորությունները ֆինանսավորելու իր գործունեությունը: Կազմակերպության ֆինանսական դրությունը արտացոլվում է ֆինանսական ռեսուրսների՝ դրամական միջոցներ, իրացումից մուտքեր (ապրանքներ, աշխատանք և ծառայություններ), մատակարարներին և այլ կրեդիտորներին պարտավորություններ, հատուկ ֆոնդերի ժամանակավորապես ազատ միջոցներ և այլն, ձևավորման, նպատակահարմար տեղաբաշխման և արդյունավետ օգտագործման մեջ:

Շուկայական էկոնոմիկային անցնելուց հետո կազմակերպության առջև խիստ դրվեց նրա կայունության հարցը և վերջինիս վերականգնման ուղիների բարելավումը:

Կազմակերպության ֆինանսական դրությունը բնութագրվում է կազմակերպության նորմալ արտադրական, կոմերցիոն և այլ տիպի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովվածությամբ, նրանց նպայտակային և էֆեկտիվ տեղաբաշխմամբ և օգտագործմամբ, այլ տնտեսվարող սուբյեկտների հետ փոխհարաբերություններով, վճարունակությամբ և ֆինանսական կայունությամբ: Կազմակերպության ունակությունը ժամանակին կատարել բոլոր վճարումները վկայում է նրա լավ ֆինանսական դրության մասին: Կազմակերպության ֆինանսական դրությունը կախված է նրա արտադրական, կոմերցիոն և ֆինանսական գործունեությունից:

Արտադրական և ֆինանսական պլանների բարեհաջող կատարումը դրականորեն է ազդում կազմակերպության ֆինանսական դրության վրա: ԵՎ հակառակը, արտադրության և իրացման պլանների թերակատարման արդյունքում տեղի է ունենում արտադրանքի ինքնարժեքի աճ, հասույթի և շահույթի մեծությունների նվազում, իսկ դրա արդյունքում կազմակերպության ֆինանսական դրության ու վճարունակության վատթարացում: Կայուն ֆինանսական դրությունը իր հերթին դրական ազդեցություն է ունենում արտադրական պլանների կատարման և արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման

վրա: Օրինակ՝ բարձրորակ արտադրանքի անընդհատ արտադրությունը և իրացումը նպաստում են ֆինանսական դրության բարելավմանը, իսկ արտադրական գործընթացներում խախտումները և անկանոնությունները, արտադրանքի որակի իջեցումը, նրա իրացման հետ կապված դժվարությունները բերում են կազմակերպության հաշիվներ մուտքերի նվազման, որի արդյունքում ընկնում է նրա վճարունակության մակարդակը:

Գործնականում քիչ չեն դեպքեր, երբ լավ աշխատող կազմակերպությունը զգում է ֆինանսական դժվարություններ՝ կապված ֆինանսական ռեսուրսների ոչ ռացիոնալ տեղաբաշխման և օգտագործման հետ:

Այդ պատճառով ֆինանսական գործունեությունը պետք է ուղղված լինի ֆինանսական ռեսուրսների սիստեմատիկ ներգրավմանը, էֆեկտիվ օգտագործմանը, հաշվարկային և վարկային կարգապահության պահպանմանը, սեփական և փոխառու միջոցների ռացիոնալ հարաբերակցության սահմանմանը, ֆինանսական կայունության պահպանմանը՝ կազմակերպության արդյունավետ գործունեության նպատակով: Հետևաբար, կազմակերպության ֆինանսական դրությունը հանդիսանում է ոչ միայն արտադրատնտեսական գործունեության այլ նաև ֆինանսական հարաբերությունների բոլոր տարրերի փոխազդեցություն:

Որպեսզի կազմակերպությունը զարգանա շուկայական եկոնոմիկայի պայմաններում և թույլ չտա սնկացում, պետք է իմանալ ինչպես կառավարել ֆինանսները, ինչպիսին պետք է լինի կապիտալի կառուցվածքը՝ կախված կազմից և ձևավորման աղբյուրներից, ինչ մաս պետք է կազմեն սեփական և փոխառու միջոցները:

Ֆինանսական դրության վերլուծության գլխավոր նպատակը հայտնաբերել և հեռացնել ֆինանսական գործունեության անբավարարությունները, թերությունները և գտնել կազմակերպության դրության և վճարունակության բարելավման ռեզերվները: Միաժամանակ անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. Արտադրական, կոմերցիոն և ֆինանսական գործունեության տարբեր տիպի ցուցանիշների միջև փոխկախվածության ուսումնասիրման հիման վրա տալ ֆինանսական ռեսուրսների ստացման և նրանց օգտագործման պլանի կատարման վերլուծությունը՝ կազմակերպության ֆինանսական դրության տեսանկյունից:

2. Կանխատեսել հնարավոր ֆինանսական արդյունքները, տնտեսական շահութաբերությունը՝ ելնելով տնտեսական գործունեության իրական պայմաններից, սեփական և փոխառու ռեսուրսներից և

ռեսուրսների օգտագործման բազմազան տարբերակներով ֆինանսական դրության մոդելներին:

3. Կազմակերպել կոնկրետ միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ֆինանսական ռեսուրսների ավելի արդյունավետ և էֆեկտիվ օգտագործմանը և կազմակերպության ֆինանսական դրության ամրապնդմանը:

Կազմակերպության ֆինանսական կայունության գնահատման համար օգտագործվում ցուցանիշների համակարգ.

- Կազմակերպության ակտիվների կառուցվածքը՝ ըստ նրա տեղաբաշխման և ձևավորման աղբյուրների

- Կապիտալի օգտագործման էֆեկտիվությունը և ինտենսիվությունը

- Վճարունակությունը և վարկունակությունը

- Կազմակերպության ֆինանսական կայունության պաշարը

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը հիմնվում է գլխավորապես հարաբերական ցուցանիշների վրա, քանի որ հաշվեկշռի բացարձակ ցուցանիշները, հատկապես ինֆլացիայի պայմաններում, դժվար է համադրել միմյանց հետ:

Կազմակերպության ֆինանսական դրության հարաբերական ցուցանիշները կարելի է համեմատել՝

- Այլ կազմակերպությունների համանման տվյալների հետ, որը հնարավորություն է տալիս հայտնաբերել կազմակերպության թույլ և ուժեղ կողմերը և նրա հնարավորությունները:

- Նախորդ տարիների համանման ցուցանիշների հետ, որպեսզի ուսումնասիրվի կազմակերպության ֆինանսական դրության վատթարացման կամ բարելավման տենդենցը:

- Բիսկի մակարդակի գնահատման և սնկացման հնարավորության կանխատեսման համար ընդունված նորմերի հետ:

Ֆինանսական դրության վերլուծությամբ զբաղվում են ոչ միայն կազմակերպության ղեկավարները և համապատասխան ծառայությունները, այլ նաև կազմակերպության հիմնադիրները, ինվեստորները՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության ուսումնասիրման համար, բանկերը՝ վարկավորման պայմանների գնահատման և ռիսկի մակարդակի որոշման համար, մատակարարները՝ ժամանակին վճարները ստանալու համար, հարկային օրգանները՝ բյուջե մուտքագրվող միջոցների պլանի կատարման համար և այլն:

Սրան համապատասխան կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը բաժանվում է՝

- Ներքին վերլուծություն

- Արտաքին վերլուծություն

Տնտեսական գործունեության
վերլուծություն

Ֆինանսական
վերլուծություն

Կառավարյալ
վերլուծություն

Ներքին ֆինանսական
վերլուծություն

Ներդրմանական
ֆինանսական
վերլուծություն

Ներդրմանական
արտադրական
վերլուծություն

Ներքին վերլուծությունը իրականացվում է կազմակերպության ծառայությունների կողմից, իսկ դրա արդյունքները օգտագործվում են կազմակերպության ֆինանսական դրության պլանավորման, վերահսկման և կանխատեսման համար: Նրա նպատակն է ապահովել դրամական միջոցների պլանաչափ մուտքերը և տեղաբաշխել սեփական և փոխառու միջոցները այնպես, որ ստանան առավելագույն շահույթ և խուսափեն սննկացումից:

Արտաքին վերլուծությունը իրականացվում է ինվեստորների, նյութական և ֆինանսական ռեսուրսների մատակարարների, վերահսկող օրգանների կողմից: Արտաքին վերլուծությունը ունի հետևյալ առանձնահատկությունները.

- կազմակերպության գործունեության վերաբերյալ ինֆորմացիայից օգտվող սուբյեկտների մեծ քանակության առկայություն

- վերլուծության սուբյեկտների նպատակների և հետաքրքրությունների բազմազանություն

- տիպային մեթոդիկայի, հաշվառման ստանդարտների և հաշվետվությունների առկայություն

- կազմակերպության գործունեության վերաբերյալ ինֆորմացիայից օգտվողների համար վերլուծության արդյունքների ազատ տրամադրում

Բացի այդ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին վերլուծության հիմնական խնդիրներն են.

- ֆինանսական դրության ընդհանուր գնահատականը և նրա փոփոխության վրա ազդող գործոնները:

- Միջոցների և նրանց աղբյուրների համապատասխանության ուսումնասիրությունը, ռացիոնալ տեղաբաշխումը և արդյունավետ օգտագործումը:

- ֆինանսական, հաշվարկային և վարկային կարգապահության պահպանումը:¹

- Կազմակերպության իրացվելիության և ֆինանսական կայունության որոշումը:

- Կազմակերպության ֆինանսական կայունության երկարաժամկետ և կարճաժամկետ կանխատեսումը:

Այս խնդիրների լուծման համար ուսումնասիրվում են կազմակերպության միջոցների առկայությունը, կազմը, կառուցվածքը, նրանց փոփոխության պատճառները և հետևանքները, կազմակերպության միջոցների աղբյուրների առկայությունը, կազմը, կառուցվածքը, նրանց փոփոխությունների պատճառները և հետևանքները, երկարաժամկետ ակտիվների վիճակը, կառուցվածքը և փոփոխությունները, արտադրության և շրջանառության ոլորտում ընթացիկ ակտիվների առկայությունը, իրացվելիությունը, դեբիտորական պարտքի որակը, վճարունակությունը, ֆինանսական ճկունությունը և այլն:

Բացի այդ լուծվում են նաև այլ խնդիրներ, օրինակ՝ ներքին վերլուծության կարևորագույն խնդիրը հանդիսանում է արտաքին ֆինանսավորման հնարավորությունը որոշող իրավիճակի գնահատումը: Դրա համար ուսումնասիրվում են կազմակերպության պահանջը ֆինանսական ռեսուրսների նկատմամբ, այդ թվում փոխառու միջոցների նկատմամբ, ռիսկի մակարդակը և այլն: Արտաքին վերլուծության ժամանակ ուսումնասիրվում է կազմակերպության ունեցվածքի իրական արժեքը(իրականացվում է հետագա ֆինանսական մուտքերի կանխատեսում), կապիտալի կառուցվածքը, դիվիդենտների մակարդակը, դրանց փոփոխությունների տենդենցները և այլն:

Ֆինանսական վերլուծության պրակտիկայում մշակվել է ֆինանսական հաշվետվությունների վերլուծության մեթոդիկան: Կարելի է առանձնացնել վերլուծության 6 հիմնական տեսակ.

- **Հորիզոնական վերլուծություն** - հաշվետվության յուրաքանչյուր դիրքի համեմատում նախորդ ժամանակաշրջանի համապատասխան դիրքի հետ:

- **Ուղղահայաց վերլուծություն** (կառուցվածքային) - ֆինանսական ցուցանիշների կառուցվածքի որոշում:

- **Տրենդային վերլուծություն** - հաշվետվության յուրաքանչյուր դիրքի համեմատումը նախորդ ժամանակաշրջանների հետ և տրենդի որոշումը, այսինքն ցուցանիշի հիմնական տենդենցի որոշումը՝ հաշվի չառած պատահական գործոնների ազդեցությունը և առանձին ժամանակահատվածների առանձնահատկությունները:

- **Հարաբերական ցուցանիշների վերլուծություն** (ֆինանսական գործակիցների) -տարբեր ձևերի հաշվետվությունների թվային հարաբերությունների հաշվարկ, ցուցանիշների փոխկապվածության որոշում:

- Համեմատական վերլուծություն, որը բաժանվում է .
- Ենթոտեսական՝ կազմակերպության հիմնական ցուցանիշների համեմատումը դուստր կազմակերպությունների, արտադրամասերի համապատասխան ցուցանիշների հետ:
- Միջտեսակական՝ կազմակերպության ցուցանիշների համեմատումը մրցակից կազմակերպությունների համապատասխան ցուցանիշների հետ:
- **Գործոնային վերլուծություն** - առանձին գործոնների ազդեցության վերլուծությունը արդյունքային ցուցանիշների վրա:

3.2.2 Կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության ինֆորմացիայի աղբյուրները

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության համար ինֆորմացիայի հիմնական աղբյուր են հանդիսանում.

- Հաշվապահական հաշվեկշիռը
- Շահույթի և վնասի մասին հաշվետվությունները
- Հաշվապահական հաշվեկշռի և շահույթի ու վնասի մասին հաշվետվության պարզաբանումը՝
 - Կապիտալի շարժի մասին հաշվետվություն
 - Դրամական հոսքերի հաշվետվություն
 - Հաշվապահական հաշվեկշռի հավելված
 - Բացատրագիր

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծությունը սկսվում է հաշվապահական հաշվեկշռի «ընթերցմամբ», որի դեպքում հանդես են գալիս կարևորագույն բնութագրիչներ.

- Կազմակերպության ընդհանուր կապիտալի գումարը
- Կենտրոնացված և ապակենտրոնացված միջոցների արժեքը
- Կազմակերպության սեփական և փոխառու միջոցների մեծությունը և այլն:

Հորիզոնական վերլուծությունը թույլ է տալիս համեմատել միմյանց հետ հաշվեկշռի կոնկրետ հոդվածների մեծությունը բացարձակ և հարաբերական արտահայտությամբ ուսումնասիրվող ժամանակահատվածում և որոշել նրանց փոփոխությունը այդ ընթացքում:

Ուղղահայաց վերլուծությունը բացահայտում է հաշվեկշռի կառուցվածքը և ուսումնասիրում է նրա փոփոխության դինամիկան ուսումնասիրվող ժամանակահատվածում (ամիս, եռամսյակ, տարի և այլն):

Ներկայումս կիրառվող հաշվապահական հաշվեկշիռը իր բովանդակությամբ մոտ է շուկայական էկոնոմիկայի պահանջներին և միջազգային ստանդարտներին:

3.2.3 Կազմակերպության հաշվեկշռի կազմը և կառուցվածքը

Կազմակերպության հաշվեկշռի ակտիվի կազմի և կառուցվածքի փոփոխության վերլուծություն

Կազմակերպության միջոցների ընդհանուր բնութագրության համար ուսումնասիրվում է նրանց առկայությունը, կազմը, կառուցվածքը և նրանցում տեղի ունեցած փոփոխությունները: Այդ պատճառով դիտարկվում է հաշվեկշռի և ակտիվի, և պասիվի կառուցվածքը:

Հաշվեկշռի ակտիվ մասը պարունակում է տեղեկություններ կազմակերպության տրամադրության տակ գտնվող կապիտալի տեղաբաշխման մասին, այսինքն կոնկրետ ունեցվածքում և նյութական արժեքներում ներդրումների մասին, արտադրության և իրացման վրա կատարված կազմակերպության ծախսերի մասին և ազատ դրամական միջոցների մնացորդների մասին:

Տեղաբաշխված կապիտալի յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է հաշվեկշռի առանձին հոդված:

Սխեմա 10

Երկարաժամկետ կապիտալ	Ոչ նյութական ակտիվներ	
	Ֆինանսական միջոցներ	
	Երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ	
Ընթացիկ ակտիվներ	Պաշարներ	Զեմնարկությունից դուրս օգտագործվող միջոցներ
	Դեբիտորական պարտք	
	Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ	
	Դրամական միջոցներ	

Հաշվեկշռի ակտիվի հոդվածների խմբավորումների հիմնական հատկանիշը նրանց իրացվելիության մակարդակն է(դրամական միջոցների վերածվելու արագությունը): Այս հատկանիշով հաշվեկշռի բոլոր ակտիվները ստորաբաժանվում են երկարաժամկետ կամ հիմնական կապիտալի և ընթացիկ(շրջանառու) ակտիվների:

Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել նրա ներքին շրջանառությունում և նրա սահմաններից դուրս՝ դեբիտորական

պարտքի, այլ կազմակերպությունների բաժնետոմսերի, փոխառության պարտատոմսերի ձեռքբերման տեսքով:

Կազմակերպության ֆինանսական դրությունը մեծ մասամբ կախված է նրանից թե ինչ միջոցներ են ներդրված հիմնական և շրջանառու ֆոնդերում, նրանցից որքան են գտնվում արտադրության, և որքանը շրջանառության ոլորտում՝ դրամական և նյութական ձևով, որքան օպտիմալ է նրանց հարաբերակցությունը, կազմակերպության արտադրական և ֆինանսական գործունեության արդյունքներից:

Դրանից ելնելով ձեռնարության ակտիվների վերլուծության պրոցեսում առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց կառուցվածքում, կազմում տեղի ունեցած փոփոխությունները և տալ նրանց գնահատականները:

Հետագա վերլուծության պրոցեսում պետք է հաշվի առնել երկարաժամկետ ակտիվների փոփոխությունները: Որպես կանոն, բանկի հաշիվներում դրամական միջոցների աճը վկայում է կազմակերպության ֆինանսական դրության ամրապնդման մասին: Նրանց գումարը պետք է լինի այնպիսին, որ ապահովվեն բոլոր առաջնահերթ վճարումները: Դրամական միջոցների զգալի մնացորդները երկարատև ժամանակաշրջանի ընթացքում կարող են շրջանառու միջոցների սխալ օգտագործման արդյունք լինել: Դրանք պետք է արագ ներդրվեն շրջանառություն շահույթ ստանալու նպատակով՝ իրենց արտադրության ընդարձակման կամ այլ կազմակերպությունների բաժնետոմսեր կամ այլ արժեթղթեր ձեռք բերելու ճանապարհով:

Անհրաժեշտ է վերլուծել դեբիտորների հաշիվների փոփոխության ազդեցությունը կազմակերպության ֆինանսական դրության վրա: Եթե կազմակերպությունը ընդլայնում է իր գործունեությունը, ապա աճում է գևորդների թիվը, և որպես կանոն՝ դեբիտորական պարտքը: Մյուս կողմից, կազմակերպությունը կարող է կրճատել արտադրանքի առաքումը՝ կրճատելով դեբիտորների հաշիվները: Հետևաբար, դեբիտորական պարտքի աճը ոչ միշտ է բացասական գնահատվում:

Անհրաժեշտ է տարբերել պարտքի 2 տեսակ

- նորմալ

- հետաձգված կամ ժամկետանց

Ժամկետանց պարտքի առկայությունը առաջ է բերում ֆինանսական ռիսկերի, քանի որ կազմակերպությունը արտադրական պաշարների ձեռք բերման, աշխատավարձի վճարման և այլ նպատակների իրականացման համար ֆինանսական ռեսուրսների կարիք կարող է զգալ: Միջոցների սառեցումը բերում է կապիտալի

շրջապտույտի տեմպերի դանդաղեցում: Այդ պատճառով յուրաքանչյուր կազմակերպություն ձգտում է կրճատել վճարումների ժամկետները:

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվում են դեբիտորական պարտքի դինամիկան, կազմը, ձևավորման պատճառները և ժամկատները: Դեբիտորական պարտքի վերլուծության համար հաշվեկշռից բացի օգտագործվում են առաջնային և անալիտիկ հաշվապահական հաշվառման նյութերը: Չվճարումների խնդիրը առավել ակտուալ է հատկապես ինֆլյացիայի պայմաններում:

Կազմակերպության գործունեության վրա մեծ ազդեցություն է ունենում արտադրական պաշարների վիճակը: Փոքր ծավալի, բայց ավելի շարժուն պաշարների առկայությունը նշանակում է, որ կանխիկ ֆինանսական ռեսուրսների փոքր ծավալ է գտնվում պահեստում: Մեծ պաշարների կուտակումը վկայում է կազմակերպության ակտիվության անկման մասին:

Շատ կազմակերպություններում ընթացիկ ակտիվներում մեծ տեսակարար կշիռ է կազմում պատրաստի արտադրանքը, հատկապես կապված վերջին ժամանակներում մրցակցության, վաճառահանման շուկաների կորստի, տնտեսվարող սուբյեկտների և բնակչության ցածր գնողունակության, արտադրանքի բարձր ինքնարժեքի, թողարկման ոչ ռիթմիկայնության, և այլ գործոնների հետ: Կազմակերպության պահեստներում պատրաստի արտադրանքի մնացորդների աճը բերում է շրջանառու միջոցների երկարատև սառեցման, դրամական միջոցների բացակայության, վարկային միջոցների նկատմամբ պահանջի մեծացման, մատակարարներին, բյուջեին, կազմակերպության աշխատողներին կրեդիտորական պարտքի մեծացմանը և այլն:

Ներկայումս դա արտադրության անկման, նրա արդյունավետության իջեցման, կազմակերպության վճարունակության և սննկացման հիմնական պատճառներից մեկն է:

Պատրաստի արտադրանքի գերնորմատիվային մնացորդների կազմի, երկարատևության և ձևավորման աղբյուրների վերլուծության համար օգտագործվում են անալիտիկ հաշվառման, պահեստային հաշվառման, գույքագրման տվյալները, ինչպես նաև իրացման բաժնի օպերատիվ տվյալները և մարկետինգային ծառայությունների տվյալները:

Նոր վաճառահանման շուկաների գրավման համար անհրաժեշտ է ուսումնասիրել արտադրանքի ինքնարժեքի իջեցման, նրա որակի բարձրացման և մրցունակության ուղիները, կազմակերպության կառուցվածքային փոփոխությունները, գովազդի կազմակերպումը և այլն:

Կազմակերպության հաշվեկշռի պասիվի կառուցվածքի վերլուծություն

Եթե հաշվեկշռի ակտիվում արտացոլվում են կազմակերպության միջոցները, ապա պասիվում՝ նրանց ձևավորման աղբյուրները: Կազմակերպության ֆինանսական դրությունը շատ բանով կախված է նրանից, թե ինչ միջոցներ այն ունի իր տրամադրության տակ և որտեղ են նրանք ներդրված:

Հաշվեկշռի պասիվում բերված տվյալները թույլ են տալիս որոշել ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել սեփական և փոխառու կապիտալների կառուցվածքում, ինչքան երկարաժամկետ և կարճաժամկետ փոխառու միջոցներ են ներգրավվել կազմակերպության շրջանառություն, այսինքն պասիվը ցույց է տալիս թե որտեղից են վերցվել միջոցները և կազմակերպությունը ում է պարտավոր դրանց համար:

Ըստ սեփականության ձևի օգտագործվող կապիտալը ստորաբաժանվում է սեփականի և փոխառուի:

Ըստ օգտագործման ժամանակաշրջանի տարբերում են երկարաժամկետ և կարճաժամկետ կապիտալ¹²:

Սխեմա 11

Սեփական կապիտալ	Սեփական միջոցների աղբյուրներ	Հաստատուն կապիտալ
Փոխառու կապիտալ	Երկարաժամկետ ֆինանսական ապրտավորություններ	Փոփոխուն կապիտալ
	Կարճաժամկետ ֆինանսական պարտավորություններ	

Սեփական կապիտալի անհրաժեշտությունը բխում է կազմակերպության ինքնաֆինանսավորման պայմանից: Սեփական կապիտալը կազմակերպության անկախության հիմքն է հանդիսանում: Սակայն պետք է հաշվի առնել, որ սեփական միջոցների հաշվին գործունեության ֆինանսավորումը ոչ միշտ է ձեռնտու կազմակերպության համար, հատկապես այն դեպքերում, երբ արտադրությունը կրում է սեզոնային բնույթ: Այդ դեպքում առանձին ժամանակահատվածներում բանկի հաշիվներում կկուտակվեն խոշոր միջոցներ, իսկ մնացած ժամանակ կզգացվի դրանց նկատմամբ պահանջ: Բացի դրանից, պետք է հաշվի առնել, որ եթե ֆինանսական ռեսուրսների զևերը բարձր չեն, իսկ կազմակերպությունը կարող է ապահովել ներդրված կապիտալի վերա-

դարձ ավելի բարձր մակարդակով, քան վճարել վարկային ռեսուրսների դիմաց, ապա փոխառու միջոցների ներգրավումը կարող է բարձրացնել սեփական կապիտալի շահութաբերությունը: Միևնույն ժամանակ, եթե կազմակերպության միջոցները ձևավորվում են հիմնականում կարճաժամկետ պարտավորությունների հաշվին, ապա նրա ֆինանսական դրությունը կլինի անկայուն, քանի որ կարճաժամկետ կապիտալի օգտագործման ժամանակ անհրաժեշտ է անընդհատ օպերատիվ աշխատանքներ իրականացնել՝ ուղղված նրանց ժամանակին վերադարձմանը, վերահսկմանը և այլ միջոցների ներգրավմանը շրջանառություն:

Հետևաբար, կազմակերպության ֆինանսական կայունությունը կախված է նրանից, թե որքան օպտիմալ է սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցությունը: Ծիշտ ֆինանսական ռազմավարության մշակումը շատ կազմակերպություններին կօգնի բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը:

Դրա հետ կապված, կազմակերպության շուկայական կայունությունը բնութագրող կարևոր ցուցանիշներ են հանդիսանում.

- Ֆինանսական ինքնուրույնության գործակից
- Ֆինանսական կախվածության գործակից
- Ֆինանսական լծակ կամ ֆինանսական ռիսկի գործակից(փոխառու կապիտալի հարաբերությունը սեփականին):

Օգտվելով աշխատանքում ուսումնասիրվող կազմակերպության հաշվապահական հաշվեկշռի տվյալներից՝ ցույց տանք վերը նշված գործակիցների փոփոխության դինամիկան:

Աղյուսակ 3.9

Ցուցանիշներ	Տարեսկիզբ	Տարեվերջ	Շեղում
Սեփական կապիտալի տեսակարար կշիռը հաշվեկշռի արժույթին(ֆինանսական ինքնուրույնության գործակից)	42,8	36,4	-6,4
Փոխառու միջոցների տեսակարար կշիռը (ֆինանսական կախվածության գործակից), այդ թվում՝	57,2	63,6	6,4
երկարաժամկետ	10,6	9,4	-1,2
կարճաժամկետ	46,6	54,1	7,5
Ֆինանսական ռիսկի գործակից(ֆինանսական լծակ)	1,3	1,7	0,4

Պետք է նշել, որ առաջին ցուցանիշի բարձր մակարդակը, իսկ երկրորդ և երրորդ ցուցանիշների ցածր մակարդակները վկայում են կազմակերպության կայուն ֆինանսական դրության մասին: Սակայն, մեր օրինակում նկատվում է սեփական կապիտալի տեսակարար կշռի

¹² Любушни Н.П., Лещева В.Б. "Анализ финансового-экономической деятельности предприятия". Москва. Юнити. 2000. стр.104

նվազում՝ հաշվետու տարում այն նվազել է 6,4%-ով: Մեծացել է փոխառու կապիտալի բաժինը՝ 6,4%-ով: Ֆինանսական լծակը աճել է 40%-ով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կազմակերպության կախվածությունը արտաքին ինվեստորներից բավականին աճել է և ինչ որ չափով նվազել է նրա շուկայական կայունությունը:

Կապիտալի կառուցվածքում տեղի ունեցող փոփոխությունները տարբեր տեսանկյունից են գնահատվում կազմակերպության և ինվեստորների կողմից:

Բանկերի և այլ ինվեստորների համար առավել հուսալի իրավիճակ է, եթե սեփական կապիտալի տեսակարար կշիռը ավելի մեծ է: Դա բացառում է ֆինանսական ռիսկը: Իսկ կազմակերպությունները, ընդհակառակը, ձգտում են ներգրավել ինչքան հնարավոր է շատ փոխառու միջոցներ: Ստանալով փոխառու միջոցներ ավելի ցածր տոկոսներով, քան կազմակերպության շահութաբերության մակարդակն է, կարելի է ընդլայնել արտադրությունը, բարձրացնել սեփական կապիտալի եկամտաբերությունը:

Տարբեր ոլորտներում ձևավորվել է սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության տարբեր նորմատիվներ: Այն ոլորտներում, որտեղ կապիտալի շրջանառելիության գործակիցը ցածր է, ֆինանսական լծակը 0,5 է, իսկ որտեղ բարձր է, ֆինանսական լծակը կարող է լինել 1-ից բարձր:

Ֆինանսական դրության ներքին վերլուծության դեպքում անհրաժեշտ է ուսումնասիրել սեփական և փոխառու կապիտալի դինամիկան և կառուցվածքը, բացահայտել նրա առանձին բաղադրիչների փոփոխության պատճառները և հաշվետու ժամանակահատվածում տալ այդ փոփոխությունների գնահատականը:

Սեփական կապիտալի կառուցվածքի դինամիկան

Աղյուսակի 3.10

Սեփական կապիտալի աղբյուրները	Գումարը հզ.դր.		Կապիտալի կառուցվածքը		
	տարվա սկիզբ	տարվա վերջ	տարվա սկիզբ	տարվա վերջ	շեղում
Կանոնադիր կապիտալ	40000	40000	67,7	67,1	-0,6
Լրացուցիչ կապիտալ	15000	15000	25,4	25,1	-0,3
Կուտակված շահույթ	2534	2855	4,2	4,7	0,5
Պահուստներ	1547	1785	2,6	3,1	0,5
ԸՆդամենը	58081	58850	100	100	-

Տվյալները երևում է, որ կանոնադիր կապիտալի բաժինը նվազել է 0,6% -ով, իսկ կուտակված շահույթի և պահուստների 0,5% աճը արտադրության ինչ-որ չափով ընդլայնման արդյունք է:

Փոխառու կապիտալի կառուցվածքի դինամիկան

Աղյուսակ 3.11

Սեփական կապիտալի աղբյուրները	Գումարը հզ.դր.		Կապիտալի կառուցվածքը		
	տարվա սկիզբ	տարվա վերջ	տարվա սկիզբ	տարվա վերջ	շեղում
Բանկի երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	14680	15314	18,6	14,7	-3,9
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	35750	42690	45,2	41,1	-4,1
Վարկերի և փոխառությունների գծով հաշվեզրված տոկոսներ	2100	3425	2,6	3,3	0,7
Սեևտրական կրեդիտորական պարտքեր	12320	15244	15,6	14,7	-0,9
Ստացված ընթացիկ կանխավճարներ	593	1101	0,8	1,1	0,3
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին	4030	7117	5,1	6,8	1,7
Կարճաժամկետ կրեդիտորական պարտք պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	1396	3543	1,8	3,4	1,6
Պարտավորություններ անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	2130	6106	2,7	5,9	3,2
Գալիք ժամանակաշրջանի ծախսեր և վճարումների պահուստ	2920	5250	3,7	5,1	1,4
Այլ ընթացիկ պարտավորություններ	3145	4221	4,0	4,1	0,1
Ընդամենը	79064	104011	100	100	

Փոխառու կապիտալի կառուցվածքում բանկային կարճաժամկետ վարկի բաժինը՝ կախված նրա մասնակի մարումներից նվազել է: Ընդհանուր վերցրած կրեդիտորական պարտքը, որը ժամանակավորապես օգտագործվում է կազմակերպության շրջանառությունում՝ մինչև մարման ժամկետները անել է:

Փոխառու կապիտալի ներգրավումը կազմակերպության արտադրական շրջապտույտին սովորական երևույթ է: Դա օժանդակում է ֆինանսական դրության ժամանակավոր բարելավմանը՝ պայմանով, որ միջոցները երկարատև ժամանակամիջոցում չեն սառեցվում և ժամանակին ետ են վերադարձվում: Հակառակ դեպքում, կարող է առաջ գալ ժամկետանց կրեդիտորական պարտք, որը ի վերջո առաջ է բերում տույժերի, տուգանքների վճարում, ֆինանսական կայունության վատթարացում:

Հետևաբար, փոխառու կապիտալի խելամիտ չափերը ընդունակ են բարելավել կազմակերպության ֆինանսական դրությունը, իսկ չափազանց մեծ չափեր՝ վատթարացնել այն: Այդ պատճառով, վերլուծության ընթացքում անհրաժեշտ է ուսումնասիրել կրեդիտորական պարտքերի կազմը, ժամկետը, հաճախականությունը և պատճառները:

Կազմակերպության շրջանառությունում կրեդիտորական պարտքի օգտագործման միջին տևողությունը հաշվարկվում է հետևյալ կերպ:

$$\text{Ու՝} = \frac{\text{Կրեդիտորական պարտքի միջին մնացորդ*ժամանակահատվածի օրերի թիվ}}{\text{Կրեդիտորների հետ հաշվարկների հաշիվների կրեդիտային շրջանառությունների գումար}}$$

Երկարաժամկետ փոխառու կապիտալի վերլուծության ժամանակ հատաքրքրություն է առաջացնում նրանց մարման ժամկետները, քանի որ դրանցից է կախված կազմակերպության ֆինանսական դրության կայունությունը:

Կրեդիտորական պարտքի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն հանդիսանում է նաև դեբիտորական պարտքի մարման աղբյուր: Այդ պատճառով, վերլուծության ընթացքում անհրաժեշտ է համեմատել դեբիտորական և կրեդիտորական պարտքի գումարները:

Այսպիսով, սեփական և փոխառու միջոցների կառուցվածքի վերլուծությունը անհրաժեշտ է կազմակերպության գործունեության համար անհրաժեշտ աղբյուրների ձևավորման արդյունավետության և շուկայական կայունության գնահատման համար: Այս պահը շատ կարևոր է առաջին հերթին արտաքին ինվեստորների համար՝ ֆինանսական ռիսկի ուսումնասիրման ժամանակ, և երկրորդ հերթին հենց կազմակերպության համար՝ ֆինանսների կազմակերպման և ֆինանսական ռազմավարության ընտրության հեռանկարային ծրագրերի համար:

3.2.4 Կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծությունը և նրա գնահատականը

Կազմակերպության ֆինանսական դրության կարևորագույն բնութագրիչներից է նրա գործունեության կայունությունը: Այն կապված է կազմակերպության հաշվեկշռի կառուցվածքի, կրեդիտորներից և ինվեստորներից նրա կախվածության աստիճանի, միջոցների արտաքին աղբյուրների ներգրավման և սպասարկման պայմանների հետ:

Կազմակերպության ֆինանսական կայունությունը հասկացությունը սերտորեն կապված է հեռանկարային վճարունակության հետ: Ֆինանսական կայունության տակ ի նկատի է առնվում կազմակերպության այնպիսի դրություն (տնտեսական և ֆինանսական), որի դեպքում վճարունակությունը անընդհատ է ժամանակի մեջ, իսկ սեփական և փոխա-

ռու կապիտալի հարաբերակցությունը ապահովում է այդ վճարունակությունը:

Ֆինանսական կայունության գնահատականը թույլ է տալիս վերլուծության արտաքին սուբյեկտներին մասնավորապես ինվեստորներին, որոշել կազմակերպության ֆինանսական հնարավորությունները երկար ժամանակահատվածում (ավելի քան 1 տարի): Քանի որ շուկայական էկոնոմիկայի պայմաններում արտադրության պրոցեսի իրականացումը, նրա ընդլայնումը, կազմակերպության սոցիալական և այլ կարիքների բավարարումը կատարվում է ինքնաֆինանսավորման միջոցով, այսինքն սեփական միջոցների հաշվին, իսկ նրանց պակասի դեպքում փոխառու միջոցների հաշվին, ապա կարևոր նշանակություն ունի արտաքին փոխառու աղբյուրներից անկախությունը, չնայած առանց դրանց գոյության դժվար է, իսկ գործնականում գրեթե անհնար: Այդ է պատճառը, որ մանրամասն ուսումնասիրվում է սեփական, փոխառու և ամբողջ կապիտալի փոխհարաբերակցությունը տարբեր տեսանկյուններից:

Այդ պատճառով առանձնացնում և վերլուծության են ենթարկում կապիտալի կառուցվածքը բնութագրող մի շարք ցուցանիշներ¹³:

1. Սեփական կապիտալի կուտակման գործակից

$$K_{\text{ս.կ.}} = \text{ՍԿ} / \text{ՀԱ}$$

ՍԿ - սեփական կապիտալ

ՀԱ - հաշվեկշռի արժույթ

Այս ցուցանիշը բնութագրում է կազմակերպության գործունեությունում սեփականատերերի ավանսավորված միջոցների բաժինը ընդհանուր միջոցների գումարի մեջ: Գտնում են, որ որքան բարձր է այս գործակիցի արժեքը, այնքան ավելի կայուն, ստաբիլ և արտաքին կրեդիտորներից անկախ է կազմակերպությունը:

2. Որպես լրացում նախորդ ցուցանիշին, հանդես է գալիս փոխառու կապիտալի կուտակման գործակիցը՝

$$K_{\text{փ.կ.}} = \text{ՓԿ} / \text{ՀԱ}$$

ՓԿ - փոխառու կապիտալ

Տվյալ դեպքում փոխառու միջոցները իրենցից ներկայացնում են ոչ ընթացիկ, ընթացիկ պարտավորությունների գումարը՝ կազմակերպության պարտքը: Այս գործակիցը բնութագրում է պարտքի բաժի-

¹³ Любушин Н.П., Лещева В.Б. "Анализ финансового-экономической деятельности предприятия". Москва. Юнити. 2000. стр.111-114

նը ընդհանուր կապիտալում: Ինչքան մեծ է այդ բաժինը, այնքան մեծ է կազմակերպության կախվածությունը միջոցների ֆինանսավորման արտաքին աղբյուրներից:

Այս երկու ցուցանիշների գումարը պետք է հավասար լինի 1-ի:

3. Փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից

$$K_3 = \Phi_4 / U_4$$

Այս գործակիցը ցույց է տալիս ինչքան փոխառու միջոցներ են ներգրավված Ռդրամ սեփական միջոցների հաշվին, ինչքանով է 1 դրամ պարտքը ամրագրված սեփական միջոցներով: Գործակցի աճը վկայում է արտաքին աղբյուրներից կազմակերպության կախվածության մեծացման, ֆինանսական կայունության կորստի մասին: Եթե այս գործակցի արժեքը գերազանցում է 1-ից, ապա դա վկայում է ոչ միայն ֆինանսական կայունության լրիվ կորստի, այլ նաև կրիտիկական կետին հասնելու մասին:

Սակայն դա բոլոր կազմակերպությունների համար պարտադիր երևույթ չէ: Այս գործակցի նշանակության գնահատականը կախված է կազմակերպության տնտեսական գործունեության տեսակից և շրջանառու միջոցների շրջանառելիության արագությունից: Եթե կազմակերպությունը ունի շրջանառու միջոցների շրջանառելիության բարձր գործակից, ապա քննարկվող գործակցի կրիտիկական արժեքը կարող է լինել 1-ից բարձր և չբերել ֆինանսական կայունության կորուստ:

4. Սեփական միջոցների շարժունակության գործակից

$$K_4 = U_6 U / U_4$$

ՍՇՄ - Սեփական շրջանառու միջոցներ

Այս գործակիցը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի որ մասն է օգտագործվում ընթացիկ գործունեության ֆինանսավորման համար, այսինքն ներդրված է շրջանառու միջոցների մեջ և որ մասն է կապիտալիզացված: Այս ցուցանիշի նշանակությունը կարող է եականորեն փոխվել կախված կազմակերպության գործունեության տեսակից և նրա ակտիվների կառուցվածքից, այդ թվում շրջանառու ակտիվների կառուցվածքից:

$$U_6 U = U_4 + ԵՊ - ՈՇՄ$$

ԵՊ - Երկարաժամկետ պասիվներ

ՈՇՄ - Ոչ շրջանառու ակտիվներ

Ենթադրվում է, որ երկարաժամկետ պասիվները նախատեսված են հիմնական միջոցների և կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար:

5. Երկարաժամկետ ներդրումների կառուցվածքի գործակից

$$K_{\text{կ.պ.}} = \text{ԵՊ} / \text{ՈՇԱ}$$

Գործակիցը ցույց է տալիս, թե հիմնական միջոցների և այլ ոչ շրջանառու ակտիվների որ մասն է ֆինանսավորվել ի հաշիվ երկարաժամկետ փոխառու կապիտալի:

6. Կայուն ֆինանսավորման գործակից

$$K_{\text{կ.ֆ.}} = (\text{ՍԿ} + \text{ԵՊ}) / (\text{ՈՇԱ} + \text{ԸԱ})$$

(ՍԿ + ԵՊ) - անընդհատ կապիտալ

(ՈՇԱ + ԸԱ) - ոչ շրջանառու և ընթացիկ ակտիվների գումարը

Սեփական և երկարաժամկետ փոխառու միջոցների գումարային մեծության հարաբերությունը ոչ շրջանառու և շրջանառու ակտիվների գումարային մեծությանը ցույց է տալիս թե ակտիվների որ մասն է ֆինանսավորվում ի հաշիվ կայուն աղբյուրների:

Բացի այդ, $K_{\text{կ.ֆ.}}$ գործակիցը արտահայտում է կազմակերպության անկախությանը (կամ կախվածությունը) կարճաժամկետ փոխառու աղբյուրներից:

7. Ունեցվածքի իրական արժեքի գործակից

$$K_{\text{ի}} = \text{ԻԱ} / \text{ՅԱ}$$

ԻԱ-հիմնական միջոցների, հումքի, անավարտ արտադրության, փոքրարժեք արագամաշ առարկաների գումարային արժեքը

Ակտիվների թվարկված միջոցները, որոնք ներառվում են գործակցի հաշվարկման մեջ, ըստ էության արտադրության միջոցներն են, հիմնական գործունեության համար անհրաժեշտ պայմանները, այսինքն կազմակերպության արտադրական պոտենցիալը: Հետևաբար, $K_{\text{ի}}$ գործակիցը արտացոլում է կազմակերպության հիմնական գործունեությունը ապահովող ակտիվների բաժինը ամբողջ ունեցվածքի կազմում: Հասկանալի է, որ այս գործակիցը ունի սահմանափակ կիրառություն, և կարող է արտացոլել միայն իրական վիճակը արտադրական ոլորտի կազմակերպություններում: Բացի այդ տարբեր ոլորտներում եականորեն տարբերվում է:

8. Կազմակերպության համար կարևորություն է ներկայացնում նաև ամորտիզացիոն կուտակումների գործակիցը

$$K_a = \frac{\text{Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն գումար}}{\text{Հիմնական միջոցների և ոչ նյութական արժեքների սկզբնական արժեք}}$$

9. Կազմակերպության հնարավորությունը վճարել վարկերի տոկոսները բնութագրվում է հետևյալ գործակցով:

$$K_{վ.տ.} = \frac{\text{Չուտ շահույթ} + \text{հարկեր} + \text{վարկային տոկոսներ}}{\text{Վճարված տոկոսների գումար}}$$

Օգտվելով ուսումնասիրվող կազմակերպության հաշվեկշռի տվյալներից՝ ցույց տանք վերը նշված գործոնների փոփոխությունը հաշվետու տարվա սկզբի և վերջի դրությամբ:

Որպեսզի որոշենք, թե ինչքան սեփական կապիտալ է օգտագործվում շրջանառությունում, անհրաժեշտ է հաշվեկշռի պասիվի I և II բաժինների ընդհանուր գումարից հանել ոչ ընթացիկ ակտիվների գումարը:

Աղյուսակի 3.12

	Տարեսկիզբ	Տարեվերջ
Հաստատուն կապիտալի ընդհանուր գումարը (պասիվի I և II բաժինների գումար)	73761	74964
Ոչ ընթացիկ ակտիվներ	42144	46535
Սեփական շրջանառու միջոցների գումար	31617	28429

Սեփական շրջանառու կապիտալի գումարը կարելի է հաշվել նաև հետևյալ ձևով՝ ընթացիկ ակտիվների ընդհանուր գումարից հանել կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գումարը: Տարբերությունը ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների ինչ գումար է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին, կամ ինչ կմնա կազմակերպության շրջանառությունում, եթե միաժամանակ մարվեն կրեդիտորների բոլոր կարճաժամկետ պարտքերը:

Մոյուսակի 3.13

	Տարեկիզք	Տարեվերջ
Ընթացիկ ակտիվների ընդհանուր գումար	97001	117126
Կարճաժամկետ պարտավորություններ	64384	88597
Սեփական շրջանառու կապիտալ	31617	28429
Ընթացիկ ակտիվների գումարում տեսակարար կշիռը՝ %		
սեփական կապիտալի	33.6	24.3
փոխառու կապիտալի	66.4	75.7

Տվյալները ցույց են տալիս, որ ընթացիկ ակտիվները տարվա սկզբին 66.4%-ով ձևավորվել են փոխառու միջոցների հաշվին, իսկ սեփական կապիտալի բաժինը՝ 33.6% է: Նկատվում է փոխառու կապիտալի աճ, որից կարելի է եզրակացնել, որ մեծանում է կազմակերպության կախվածությունը արտաքին կրեդիտորներից:

Հաշվարկվում է նաև սեփական կապիտալի տեղաբաշխման կառուցվածքը, այսինքն ընդհանուր գումարում սեփական շրջանառու կապիտալի և սեփական հիմնական կապիտալի բաժինը: Սեփական շրջանառու կապիտալի հարաբերությունը նրա ընդհանուր գումարին դա նույն կապիտալի շարժունակության գործակիցն է, որը ցույց է տալիս թե սեփական կապիտալի որ մասն է շրջանառությունում, այսինքն այն ձևում, որը թույլ է տալիս ազատ գործակցել այդ միջոցները: Գործակիցը պետք է լինի բարձր, որ ապահովի կազմակերպության սեփական միջոցների օգտագործման ճկունությունը:

Մոյուսակի 3.14

	Տարեկիզք	Տարեվերջ
Սեփական շրջանառու կապիտալ	31617	28429
Սեփական կապիտալի ընդհանուր գումար	59081	59650
Սեփական կապիտալի շարժունակության գործակից	0.54	0.48

Ուսումնասիրվող կազմակերպությունում շրջանառությունում գտնվող սեփական կապիտալի բաժինը տարվա վերջում նվազել է 6%-ով: Դա կազմակերպության համար չի գնահատվում դրական:

Կազմակերպության ֆինանսական դրությունը և նրա կայունությունը բնութագրող կարևոր ցուցանիշ է հանդիսանում նյութական շրջանառու միջոցների ապահովվածությունը ֆինանսավորման սեփական աղբյուրներով: Այն որոշվում է սեփական շրջանառու կապիտալի մեծությունը համեմատելով նյութական շրջանառու ֆոնդերի ընդհանուր գումարի հետ:

Աղյուսակ 3.15

	Տարեսկիզբ	Տարեվերջ
Սեփական շրջանառու կապիտալի գումար	31617	28429
Նյութական շրջանառու ֆոնդերի գումար	47683	67338
Ապահովվածության տոկոս	66.3	42.2

Այստեղից հետևում է, որ տարեսկզբին նյութական շրջանառու ֆոնդերը սեփական աղբյուրներով ապահովված են եղել 66.3%-ով, սակայն տարեվերջին այն նվազել է: Դա նույնպես վկայում է կազմակերպության ֆինանսական կայունության անկման մասին:

3.2.5 Ֆինանսական կայունության տեսակները

Սովորաբար առանձնացնում են ֆինանսական կայունության 4 տեսակ:

I. **Ֆինանսական դրության բացարձակ կայունություն**, երբ պաշարների և ծախսերի գումարը ավելի փոքր է սեփական շրջանառու կապիտալի և ապրանքանյութական արժեքների դիմաց բանկային վարկի գումարից:

$$\eta < UC\Gamma + P\psi_{\text{ապ.նյ.արծ.}}$$

Միաժամանակ պաշարների և ծախսերի ապահովվածության գործակիցը պետք է մեծ լինի 1-ից:

$$K_{\text{պ.ապ.}} = (UC\Gamma + P\psi_{\text{ապ.նյ.արծ.}}) / \eta > 1$$

II. **Նորմալ կայունություն**, որի դեպքում երաշխավորվում է կազմակերպության վճարունակությունը:

$$\eta = UC\Gamma + P\psi_{\text{ապ.նյ.արծ.}}$$

երբ

$$K_{\text{պ.ապ.}} = (UC\Gamma + P\psi_{\text{ապ.նյ.արծ.}}) / \eta = 1$$

III. **Անկայուն ֆինանսական դրություն** (սախակրիտիկական), որի դեպքում խախտվում է վճարային հաշվեկշիռը, բայց պահպանվում է վճարման միջոցների և վճարման պարտավորությունների հավասարակշռության վերականգնման հնարավորությունը կազմակերպության շրջանառություն ժամանակավորապես ազատ միջոցների, բանկային վարկի ներգրավման հաշվին:

$$\eta = UC\Gamma + P\psi_{\text{ապ.նյ.արծ.}} + \Delta U$$

$$K_{\text{պ.ապ.}} = (UCU + \text{ԲՎ}_{\text{ապ.նյ.արժ.}} + \text{Ամ}) / \eta = 1$$

Բացի այդ, այս դեպքում ֆինանսական անկայունությունը համարվում է թույլատրելի, եթե պահպանվում են հետևյալ պայմանները.

- Արտադրական պաշարների և պատրաստի արտադրանքի գումարը հավասար է կամ գերազանցում է պաշարների ձևավորմանը մասնակցող կարճաժամկետ վարկերի և փոխառու միջոցների գումարին:

- Անավարտ արտադրության և ապագա ժամանակաշրջանի ծախսերը հավասար են կամ փոքր սեփական շրջանառու կապիտալի գումարից:

IV. Կրիտիկական ֆինանսական դրություն, երբ կազմակերպությունը գտնվում է սնկացման եզրին:

$$\eta > UCU + \text{ԲՎ}_{\text{ապ.նյ.արժ.}} + \text{Ամ}$$

$$K_{\text{պ.ապ.}} = (UCU + \text{ԲՎ}_{\text{ապ.նյ.արժ.}} + \text{Ամ}) / \eta < 1$$

Վճարային հաշվեկշռի հավասարակշռությունը տվյալ դեպքում ապահովվում է աշխատավարձի, բանկային վարկի, մատակարարներին, բյուջեին հետաձգված վճարումների հաշվին:

Ֆինանսական վիճակի կայունությունը կարող է վերականգնվել հետևյալ պայմանների դեպքում.

- Ընթացիկ ակտիվներում կապիտալի շրջանառելիության արագացում, որի արդյունքում տեղի կունենա դրա հարաբերական կրճատում 1 դրամ հասույթի հաշվին:

- Պաշարների և ծախսերի հիմնավորված կրճատում

- Ներքին և արտաքին աղբյուրների միջոցով սեփական շրջանառու կապիտալի համալրում:

Այդ պատճառով ներքին վերլուծության ժամանակ իրականացվում է խորը ուսումնասիրություն պաշարների և ծախսերի փոփոխության պատճառների, ընթացիկ ակտիվների շրջանառելիության, սեփական շրջանառու կապիտալի առկայության, ինչպես նաև միջոցների շրջանառելիության արագացման հղիների, սեփական շրջանառու կապիտալի ավելացման վերաբերյալ:

Օգտվելով մեր ունեցած և վերլուծության արդյունքում ստացված տվյալներից, որոշենք, թե մեր կազմակերպության ֆինանսական դրությունը որ խմբին է դասվում:

Աղյուսակ 3.16

Ցուցանիշներ	Տարեկիզք	Տարեվերջ
Սեփական շրջանառու կապիտալ	31617	28429
Բանկային վարկ	35750	42690
Ֆինանսական ներդրումներ	15720	16923
Պաշարներ	47683	67338
Ֆինանսական կայունություն	47683<83087	67338<88042
Պաշարների ապահովվածության գործակից	1.7	1.3

Սեփական շրջանառու կապիտալի առկայությունը և նրա փոփոխությունները ունեն շատ կարևոր նշանակություն կազմակերպության ֆինանսական կայունության ապահովման գործում:

Փաստորեն, չնայած նախորդ տվյալներից երևում էր, որ կազմակերպության կախվածությունը արտաքին ինվեստորներից մեծացել է, սակայն նա դեռ համարվում է կայուն, քանի որ չունի պաշարների մեծ ծավալ:

Սեփական կապիտալի աճի տեմպերը կախված են հետևյալ գործոններից:

- վաճառքի շահութաբերություն K_4
- կապիտալի շրջանառելիություն K_2 րջ
- կազմակերպության ֆինանսական ակտիվությունը բնութագրող ակտիվների կառուցվածք ԱԿ
- արտադրության ընդլայնման համար դուրս գրված գուտ շահույթի տոկոս $\Sigma q.տ.$

Սեփական կապիտալի աճի տեմպերի փոփոխության վրա տվյալ գործոնների ազդեցության չափը որոշելու համար բերվում է հետևյալ մոդելը՝

$$R_4 * K_{2րջ} * ԱԿ * \Sigma q.տ. = \Sigma U/3 * 3/4 * 4/104 * 63/20$$

Առաջին երկու գործոնները արտացոլում են ֆինանսական, իսկ վերջին երկուսը՝ ստրատեգիական քաղաքականությունները:

Ըստ որոշ տնտեսագետների, ճիշտ ընտրված գնային քաղաքականությունը, վաճառահանման շուկաների ընդլայնումը բերում են և իրացման ծավալի, և կազմակերպության շահույթի ավելացում, բարձրացնում են շահութաբերության մակարդակը և կապիտալի շրջապտույտի արագությունը:

Միևնույն ժամանակ ոչ ռացիոնալ ներդրումային քաղաքականությունը կարող է նվազեցնել առաջին երկու գործոնների դրական ազդեցությունը:

Կայուն աճի տեմպերի ավելի տարածական մոդելը թույլ է տալիս հաշվի առնել ֆինանսական կայունության այնպիսի կարևոր ցուցա-

նիշներ, ինչպիսիք են իրացվելիությունը, ընթացիկ ակտիվների շրջանառելիությունը, պարտավորությունների և կազմակերպության կապիտալի փոխհարաբերությունը:

Այն ունի հետևյալ տեսքը.

$$Y = a b c d e f$$

Y - սեփական կապիտալի աճի գործակից

a - կապիտալի կառուցվածքը(հաշվեկշռի արժույթի հարաբերությունը սեփական կապիտալին)

b - անհետաձգելի պարտավորությունների բաժինը հաշվեկշռի արժույթում

c - իրացվելիության ընդհանուր գործակից

d - ընթացիկ ակտիվների շրջանառություն

e - վաճառքի շահութաբերություն

f - կուտակված շահույթում զուտ շահույթի բաժինը

3.3 Սեփական և փոխառու կապիտալի օգտագործման արդյունավետության գնահատականը

3.3.1 Ֆինանսական լծակի էֆեկտ

Կապիտալի օգտագործման արդյունավետության գնահատման համար կարելի է առանձնացնել եկամտաբերության 3 հիմնական ցուցանիշներ

- Ինվեստավորված կապիտալի ընդհանուր շահութաբերություն

- Փոխառու կապիտալի շահութաբերության մակարդակ

- Սեփական կապիտալի եկամտաբերության մակարդակ

Ինվեստավորված կապիտալի ընդհանուր շահութաբերությունը որոշվում է շահույթի ընդհանուր գումարի, այսինքն սեփականատերերի և կրեդիտորների եկամուտների գումարի հարաբերությամբ նրանց կողմից ինվեստավորված կապիտալի գումարին¹⁴:

1. Նախքան հարկերի վճարելը

¹⁴ Г.В.Савицкая. "Анализ хозяйственной деятельности предприятия ". Москва. ИНФРА - М. 2002. стр.290

$$R_{\text{հ.կ}} = 3\text{Ը} / (\text{ՍԿ} + \Phi\text{Կ})$$

ՍԿ - սեփական կապիտալ

ՎԿ - փոխառու կապիտալ

$R_{\text{հ.տ}}$ - ինվեստավորված կապիտալի շահութաբերության մակարդակը

3Ը - համախառն շահույթ՝ նախքան հարկերի և տոկոսների վճարումը

2. Հարկերը վճարելուց հետո

$$R = (2\text{Ը} + \text{Ճ}_\Phi) / (\text{ՍԿ} + \Phi\text{Կ})$$

2Ը - զուտ շահույթ՝ հարկերի և տոկոսների վճարումից հետո

Ճ_Φ - կրեդիտորական պարտքի սպասարկման ֆինանսական ծախսեր

Փոխառու կապիտալի շահութաբերության մակարդակը հաշվարկվում է սեփականատերերի կողմից կրեդիտորներին տոկոսների դիմաց տրված շահույթի ծավալի և նրանց կողմից ինվեստավորված կապիտալի գումարի հարաբերությամբ:

Ինվեստորներին վարկերի տոկոսների դիմաց վճարվող գումար

$$R_{\text{փ.կ.}} = \frac{\text{Կազմակերպության երկարաժամկետ պարտավորությունների միջին տարեկան գումար}}{\text{ՎՍ}} = \text{ՎՏ}$$

ՎՏ - վարկային տոկոս

Տվյալ ցուցանիշի հայտարարը ներառում է ոչ միայն ֆինանսական պարտքը (վարկեր և փոխառություններ), այլ նաև մնացած բոլոր պարտքերը՝ մատակարարներին և այլ կրեդիտորներին:

Փոխառու կապիտալի շահութաբերության այսպիսի հաշվարկը ռեալ չի արտացոլում կազմակերպության վարկերի արժեքը, քանի որ հաշվի չի առնում հարկային տնտեսումները, որը նվազեցնում է պարտքի իրական արժեքը:

Աղյուսակ 3.17

Ցուցանիշներ	Տարեթիվը	
	2000թ	2001թ
Շահույթ՝ նախքան հարկերի և տոկոսների վճարումը	600	600
Ֆինանսական ծախսեր՝ վարկային տոկոսների դիմաց	80	100
Հարկվող շահույթ	520	500
Հարկեր 20%	104	100
Զուտ շահույթ	416	400

Հարկային տնտեսումը 2001թ-ին կազմել է 4մլն դրամ, հետևաբար եթե կազմակերպությունը վարկ է վերցնում 6%- ով, ապա հարկման 20 %-ի դեպքում վարկի իրական արժեքը ոչ թե 6% է, այլ 4.8% [6% (1-0.2)] :

Սեփական կապիտալի շահութաբերությունը իրենից ներկայացնում է հաշվետու տարում ստացված զուտ շահույթի հարաբերությունը սեփական կապիտալի միջին տարեկան արժեքին:

$$R_{ս.կ} = 2C/U4$$

$R_{ս.կ}$ - սեփական կապիտալի շահութաբերություն
 Իր հերթին զուտ շահույթը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով:
 $2C =$ Համախառն շահույթ - Հարկեր - Տոկոսներ

$$2C = R_{\text{հս.կ}} * \Sigma 4 (1 - 4_b) - 4S(\Phi 4)$$

$\Sigma 4$ - ինվեստավորված կապիտալի ընդհանուր գումար
 Զանի որ՝ $\Sigma 4 = 44 + \Phi 4$
 ապա

$$2C = R_{\text{հս.կ}} * U4(1 - 4_b) + R_{\text{հս.կ}} * \Phi 4(1 - 4_b) - 4S * \Phi 4$$

Զանի որ սեփական կապիտալի շահութաբերությունը հավասար է զուտ շահույթի հարաբերությանը սեփական ինվեստավորված կապիտալի գումարին, ապա

$$R_{ս.կ} = (R_{\text{հս.կ}} * U4(1 - 4_b) + R_{\text{հս.կ}} * \Phi 4(1 - 4_b) - 4S * \Phi 4) / U4 = R_{\text{հս.կ}}(1 - 4_b) + (R_{\text{հս.կ}}(1 - 4_b) - 4S) * \Phi 4 / U4$$

Սեփական կապիտալի շահութաբերության և ինվեստավորված կապիտալի շահութաբերության տարբերությունը՝ հարկերը վճարելուց հետո $ն3(1-4_b)$, ձևավորվում է ի հաշիվ ֆինանսական լծակի էֆեկտի:

$$\Phi LE = (R_{\text{հս.կ}} * (1 - 4_b) - 4S) * \Phi 4 / U4$$

Ֆինանսական լծակի էֆեկտը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի շահութաբերությունը ինչ տոկոսով է ավելանում կազմակերպության շրջանառություն փոխառու միջոցների ներգրավման հաշվին: Այն առաջանում է այն դեպքերում, երբ տնտեսական շահութաբերությունը բարձր է վարկային տոկոսից:

Ֆինանսական լծակի էֆեկտը բաղկացած է 2 կոմպոնենտներից.

- հարկերը վճարելուց հետո ինվեստավորված կապիտալի շահութաբերության և վարկերի դիմաց տոկոսների տարբերությունից՝

$$R_{\text{հս.կ}}(1 - 4_b) - 4S$$

- ֆինանսական լծակից
 Ֆինանսական լծակի դրական էֆեկտ առաջանում է այն ժամանակ,
 եթե

$$R_{\text{հս.կ}}(1 - \gamma_b) - \gamma S > 0$$

Փոխառու կապիտալի և տեղաբաշխված կապիտալի արժեքների տարբերությունը թույլ է տալիս բարձրացնել սեփական կապիտալի շահութաբերությունը: Այս պայմաններում շահավետ է մեծացնել ֆինանսական լծակը, այսինքն փոխառու կապիտալի բաժինը:

Եթե $R_{\text{հս.կ}}(1 - \gamma_b) - \gamma S < 0$, առաջանում է ֆինանսական լծակի բացասական էֆեկտ («մահակի» էֆեկտ), որի արդյունքում տեղի է ունենում սեփական կապիտալի «կլանում», և հետևանքները կազմակերպության համար կարող են լինել կործանարար:

Իրադրությունը որոշակիորեն փոփոխվում է ֆինանսական լծակի էֆեկտի ազդեցությամբ, եթե հարկերի հատկացման ժամանակ հաշվի են առնում պարտքի սպասարկման ֆինանսական ծախսերը: Այդ ժամանակ հարկային տնտեսման հաշվին վարկային իրական տոկոսադրույքը կնվազի պայմանագրային տոկոսադրույքի համեմատությամբ և հավասար կլինի $\gamma S (1 - \gamma_b)$:

Այդ դեպքում ֆինանսական լծակի էֆեկտը խորհուրդ է տրվում հաշվարկել հետևյալ ձևով:

$$\Delta LE = (R_{\text{հս.կ}}(1 - \gamma_b) - \gamma S(1 - \gamma_b)) * \Phi Y / U Y = (R_{\text{հս.կ}} - \gamma S)(1 - \gamma_b)\Phi Y / U Y$$

Ֆինանսական լծակի էֆեկտը ֆինանսական ծախսերի հաշվառման դեպքում կախված է 3 գործոններից:

1. Հարկերը վճարելուց հետո ինվեստավորված կապիտալի ընդհանուր շահութաբերության և պայմանագրային տոկոսադրույքի տարբերությունից

$$R_{\text{հս.կ}}(1 - \gamma_b) - \gamma S$$

2. Հարկային տնտեսման պատճառով տոկոսադրույքի կրճատումից

$$\gamma S - \gamma S(1 - \gamma_b)$$

3. Ֆինանսական լծակից

Սակայն, պետք է ի նկատի ունենալ, որ այս հաշվարկները չեն ներառում ինֆլյացիայի ազդեցությունը: Ինֆլյացիայի պայմաններում, եթե պարտքերը և տոկոսները դրանց գծով չեն ինդեքսավորվում, ֆինանսական լծակի էֆեկտը և սեփական կապիտալի շահութաբերությունը

աճում են, քանի որ պարտքի սպասարկումը և հենց պարտքը վճարվում են արժեզրկված փողով:

Շահույթի գումարը ճշգրտված ինֆլյացիայով ստանում են հետևյալ բանաձևից.

$$C_{u,y} = (R_{\text{ըն.կ.}} * UY(1+h) + R_{\text{ըն.կ.}} * \Phi Y(1+h) - \text{ՎՏ} * \Phi Y)(Y_u)$$

h - ինֆլյացիայի տեմպը

Ինֆլյացիայից մաքրված սեփական կապիտալի շահութաբերության վերազնահատված դրույթաչափը հաշվարկվում է շահույթի ճշգրտված գումարը հարաբերելով վերազնահատված սեփական կապիտալի վրա:

$$R_{u,y} = C_{u,y} / UY(1+h) =$$

$$R_{\text{ըն.կ.}}(1 - Y_u) + (R_{\text{ըն.կ.}}(1 - Y_u) - \text{ՎՏ} / (1+h) (1 - Y_u)) * \Phi Y / UY + h / (1+h) * \Phi Y / UY$$

Այդ դեպքում ֆինանսական լծակի էֆեկտը հավասար է

Այսպիսով, ինֆլյացիայի պայմաններում ֆինանսական լծակի էֆեկտը կախված է՝

- Ամբողջ ինվեստավորված կապիտալի շահութաբերության տոկոսի և փոխատվական տոկոսի դրույթաչափի տարբերությունից
- Հարկման մակարդակից
- Պարտքային պարտավորությունների գումարից
- Ինֆլյացիայի տեմպերից

3.3.2 Արտադրա-ֆինանսական լեվիիրիդջի գնահատականը

Կազմակերպության ակտիվների և պասիվների կառուցվածքի օպտիմալացման պրոցեսը շահույթի մեծացման նպատակով ֆինանսական վերլուծությունում ստացել է «լեվիիրիդջ» անվանումը:

Տարբերում են լեվիիրիդջի 3 տեսակ:

- Արտադրական
- Ֆինանսական
- Արտադրա- ֆինանսական

Ըստ եռույթյան լեվիիրիդջը խթան է, որը եականորեն կարող է փոփոխել կազմակերպության արտադրաֆինանսական գործունեության արդյունքները:

Երա եռույթյան բացահայտման համար բերենք գուտ շահույթի՝ ՇԸ գործոնային մոդելը հասույթի ԱՄ և արտադրական ու ֆինանսական ՖԾ բնույթի ծախսերի տարբերության տեսքով¹⁵:

¹⁵ Прыкин, Б.В. "Экономический анализ предприятия". Москва. Юнити.2000. стр.327.

ՉԸ = Գ - ԱԾ - ՖԾ

Արտադրական լեվիորիդը կազմակերպության շահույթի վրա ազդելու պոտենցյալ հնարավորությունն է՝ արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքի և թողարկման ծավալի փոփոխության միջոցով:

Շահույթի և սեփական և փոխառու կապիտալի հարաբերակցության փոխկախվածությունը իրենից ներկայացնում է ֆինանսական լեվիորիդը: Ֆինանսական լեվիորիդը պոտենցյալ հնարավորությունն է ազդելու շահույթի ծավալի վրա սեփական և փոխառու կապիտալի ծավալի և կառուցվածքի փոփոխության միջոցով: Նրա մակարդակը չափվում է զուտ շահույթի աճի տեմպերի հարաբերությամբ համախառն շահույթի աճի տեմպերին:

$$K_{\Phi,1} = L \text{ ՉԸ} \% / L \text{ Ծ} \%$$

Այն ցույց է տալիս թե զուտ շահույթի աճի տեմպերը ինչքան անգամ են գերազանցում համախառն շահույթի աճի տեմպերին: Գերազանցման այդ չափը ապահովվում է ի հաշիվ ֆինանսական լծակի էֆեկտի: Ավելացնելով կամ նվազեցնելով ֆինանսական լծակը՝ կախված ձևավորված իրավիճակից, կարելի է ազդել սեթական կապիտալի եկամտաբերության և շահույթի վրա:

Ֆինանսական լեվիորիդի աճը ուղեկցվում է ֆինանսական ռիսկի աստիճանի բարձրացմամբ, կապված երկարաժամկետ վարկերի և պարտքի դիմաց տոկոսների վճարման համար միջոցների հնարավոր անբավարարությամբ:

Բարձր ֆինանսական լեվիորիդի պայմաններում համախառն շահույթի և ինվեստավորված կապիտալի ոչ էական փոփոխությունը կարող են բերել զուտ շահույթի նշանակալի փոփոխության, որը վտանգավոր է արտադրության անկաման համար:

Ընդհանրացնող ցուցանիշ է հանդիսանում արտադրա-ֆինանսական լեվիորիդը, որն արտացոլում է ընդհանուր ռիսկը՝ կապված արտադրական ծախսերի փոխհատուցման և արտաքին պարտքի սպասարկման ֆինանսական ծախսերի փոխհատուցման համար անհրաժեշտ միջոցների հնարավոր անբավարարության հետ:

3.3.3 Կազմակերպության ֆինանսական կայունության պաշարի գնահատականը

Անվտանգության սահման

Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության ժամանակ անհրաժեշտ է իմանալ նրա կայունության պաշարը: Այդ ցուցանիշի ուսումնասիրության համար օգտագործվում է «Ծախս- Ծավալ-Շահույթ» մեթոդը: Այդ նպատակով ձեռարկության բոլոր ծախսերը պետք է բաժանել 2 խմբի: Կախված արտադրության ծավալից և արտադրանքի իրացումից ծախսերը լինում են՝

- հաստատուն
- փոփոխուն

Փոփոխուն ծախսերը ավելանում կամ նվազում են արտադրանքի արտադրության ծավալին համամասնորեն: Դրանք հումքի, նյութերի, էներգիայի, վառելիքի, աշխատողներին աշխատավարձի, հարկերի, տույժերի և այլնի գծով ծախսերն են:

Հաստատուն ծախսերը կախված չեն արտադրության և արտադրանքի իրացման ծավալից: Դրանց են վերաբերում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան, վարկերի դիմաց տոկոսների գումարը, վարձակալական բժարները, արտադրության կառավարման և կազմակերպման ծախսերը և այլն:

Հաստատուն ծախսերը շահույթի հետ միասին կազմում են կազմակերպության մարժինալ շահույթը:

Ծախսերի դասակարգումը հաստատունի և փոփոխունի և մարժինալ եկամտի ցուցանիշի օգտագործումը թույլ են տալիս հաշվարկել շահութաբերության շեմը, այսինքն հասույթի այն գումարը, որն անհրաժեշտ է կազմակերպության ողջ հաստատուն ծախսերի մարման համար: Այս դեպքում շահույթ չի լինի, բայց չի լինի նաև վնաս: Շահութաբերությունը հավասար կլինի 0-ի:

Հաշվարկվում է շահութաբերության շեմը իրացված արտադրանքի մեջ ներառված հաստատուն ծախսերի հարաբերությամբ հասույթի մեջ մարժինալ եկամտի գումարին:

Իրացված արտադրանքի ինքնարժեքի մեջ հաստատուն ծախսեր

$$\text{Շեմ.} = \frac{\text{իրացված արտադրանքի ինքնարժեքի մեջ հաստատուն ծախսեր}}{\text{Հասույթում մարժինալ եկամուտ}}$$


Եթե հայտնի է շահութաբերության շեմը, ապա դժվար չէ հաշվարկել ֆինանսական կայունության պաշարը:

$$\text{ՖԿՊ} = \frac{\text{Հասույթ} - C_{\text{շեմ}}}{\text{Հասույթ}} * 100\%$$

Աղյուսակ 3.18

Ցուցանիշներ հզ. դր.:	Նախորդ տարի	Հաշվետու տարի
Իրացումից հասույթ	21455	24674
Շահույթ հզ. դր	4787	3132
Իրացված արտադրանքի լրիվ ինքնարժեք	16668	21542
Փոփոխում ծախսեր	14902	19062
Հաստատուն ծախսեր	1766	2480
Սարժինալ եկամուտ	6553	5612
Սարժինալ եկամտի բաժինը հասույթում %	30.5	10.1
Շահութաբերության շեմ	(1766/30.5)*100=5790	(2480/10.1)*100=24554
Ֆինանսական կայունության պաշար հզ.դր %	21455-5790=15665 (21455-5790)/21455*100=91.8	24674-24554=120 (24674-24554)/24674*100=0.5

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, տարեսկզբին անհրաժեշտ էր իրացնել 5790 հզ. դրամի արտադրանք, որպեսզի ծածկեն բոլոր ծախսերը: Այդ հասույթի դեպքում շահութաբերությունը հավասար է 0-ի: Փաստացի հասույթը կազմել է 21455 հզ. դրամ, որը գերազանցում է շահութաբերության շեմին 19689 հզ. դրամով, կամ 91.8 տոկոսով: Դա հենց ֆինանսական կայունության պաշարն է: Տարեվերջին ֆինանսական կայունության պաշարը կազմել է 120 հզ. դրամ: Փաստորեն, տարեվերջին չնայած առկա է ֆինանսական կայունության պաշար, կազմակերպության կայունությունը որոշ չափով նվազել է: Եթե հասույթը էլ ավելի կրճատվի, կազմակերպությունը կսկսի աշխատել վնասով: «Կկլա-նի» սեփական և փոխառու կապիտալը և կսննկանա: Այդ պատճառով պետք է անընդհատ հետևել ֆինանսական կայունության պաշարին, ինչքան պետք է լինի շահութաբերության շեմը, որ կազմակերպության հասույթը դրանից ցածր չլինի:



Արժեքների առանցքի վրա տեղադրվում է արտադրանքի իրացման ծավալը, օրդինատների առանցքի վրա՝ հաստատուն և փոփոխուն ծախսերը, շահույթը:

Հասույթի և ծախսերի ուղիղների հատման կետը շահութաբերության շեմն է: Այդ կետում հասույթը հավասար է ծախսերին: Այդ կետից վերև շահույթն է, ներքև՝ վնաս է:

Արդյունքում անհրաժեշտ է ընդհանրացնել վերլուծության բոլոր արդյունքները և տալ կազմակերպության ֆինանսական դրության առավել ճշգրիտ բնութագրումը, ինչպես նաև հեռանկարային կանխատեսումը: Անհրաժեշտ է նաև կազմակերպել կոնկրետ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան բարելավել կազմակերպության ֆինանսական դրությունը: Ամենից առաջ այդ միջոցառումները պետք է ուղղված լինեն արտադրանքի արտադրության և իրացման ծավալների ավելացմանը, նրա որակի և մրցունակության բարձրացմանը, ինքնարժեքի իջեցմանը, շահույթի և շահութաբերության աճին, կապիտալի շրջանառելիության արագացմանը և կազմակերպության արտադրական պոտենցյալի առավել էֆեկտիվ և ամբողջական օգտագործմանը:

Գրականություն

1. Абрютин М.С., Грачев А.В. Анализ финансово-экономической деятельности предприятия. М.: Дело и сервис, 1998.
2. Анализ хозяйственной деятельности в промышленности /Под ред. В.И.Стражева. Мн.: Вышэйшая школа, 2000.
3. Анализ экономики /Под ред. В.Е.Рыбалкина, М.; Междунар. отношения, 1999.
4. Артеменко В.Г., Беллендир М.В. Финансовый анализ. М.; Дис, 1999.
5. Баканов М.И., Шеремет А.Д. Теория анализа хозяйственной деятельности: Учебник. М.; Финансы и статистика, 2000.
6. Балабонов И.Т. Анализ и планирование финансов хозяйствующего субъекта. М.: Финансы и статистика, 1994.
7. Барнгольц С.Б. Экономический анализ хозяйственной деятельности на современном этапе развития. М.: Финансы и статистика, 1984.
8. Бернштейн Л.А. Анализ финансовой отчетности. М.: Финансы и статистика, 1996.
9. Ван Хорн Дж. Основы управления финансами: Пер. с англ. /Под редакцией И.И.Елисеевой. М.: Финансы и статистика, 1996.
10. Дембинский Н.В. Вопросы теории экономического анализа. М.: Финансы, 1973.
11. Донцова Л.В., Никифорова Н.А. Анализ бухгалтерской отчетности. М.: Дис, 1998.
12. Ермолович Л.Л. Анализ финансово-хозяйственной деятельности предприятия. Мн.: БГЭУ, 2001.
13. Ефимова О.В. Финансовый анализ. М.: Бухгалтерский учет, 1998.
14. Ильенкова Н.Д. Спрос: анализ и управление. М.: Финансы и статистика, 1997.
15. Ковалев А.И., Войленко В.В. Маркетинговый анализ. М.: Центр экономики и маркетинга. 1996.
16. Ковалев В.В. Финансовый анализ: Управление капиталом, выбор инвестиций, анализ отчетности. М.: Финансы и статистика, 2000.
17. Ковалев В.В., Волкова О.Н. Анализ хозяйственной деятельности предприятия. М.: Проспект. 2000.
18. Ковалев В.В., Патров В.В. Как читать баланс. М.: Финансы и статистика, 1998.
19. Любушкин Н.П., Лещева В.Б., Дьякова В.Г. Анализ финансово-экономической деятельности предприятия. М.: ЮНИТИ, 1999.

20. Майданчик Б.И., Карпунин М.Б., Любенецкий Л.Г., и др. Анализ и обоснование управленческих решений. М.; Финансы и статистика, 1991.
21. Ришар Жак. Аудит и анализ хозяйственной деятельности предприятия. М.:ЮНИТИ, 1997.
22. Савицкая Г.В. Анализ хозяйственной деятельности предприятий АПК. Мн.: Экоперспектива, 1999.
23. Савицкая Г.В. Анализ хозяйственной деятельности предприятия. Мн.-М.: ИП "Новое знание", 2000.
24. Хэлферт Эрик. Техника финансового анализа. М.: "Аудит", ЮНИТИ, 1996.
25. Чумаченко Н.Г. Учет и анализ в промышленном производстве США. М.: Финансы, 1971.
26. Шабалин Е.М, Кричевский Н.А., Карп М.В. Как избежать банкротства. М.: ИНФРА-М, 1996.
27. Шеремет А.Д. Сайфулин Р.С. Методика финансового анализа. М.: ИНФРА-М, 1996.
28. Шеремет А.Д. Сайфулин Р.С. Финансы предприятий. М.: ИНФРА-М, 1997.
29. Шеремет А.Д., Негашев Е.В. Методика финансового анализа. М.: ИНФРА-М, 1999.
30. Экономический анализ: Ситуации, тесты, примеры, задачи, выбор оптимальных решений, финансовое прогнозирование /Под ред.проф.М.И.Баканова и проф. А.Д.Шеремета. - М.:Финансы и статистика, - 2000.

ՑԱՆԿ

Ներածություն.....	3
Գլուխ I. Արտադրության տարրերի գործոնային վերլուծությունը	5
1.1. Աշխատանքային ցուցանիշների վերլուծությունը	5
1.1.1. Աշխատանքային ցուցանիշների վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվության աղբյուրները	6
1.1.2. Կազմակերպության աշխատուժով ապահովվածության վերլուծություն	5
1.1.3. Անձնակազմի կազմի և կառուցվածքի վերլուծություն	14
1.1.4. Աշխատանքային ցուցանիշների օգտագործման արդյունավետության բարձրացման պահուստների վերլուծություն	21
1.2. Նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության վերլուծությունը	29
1.2.1. Նյութական պաշարների օգտագործման և նյութական պաշարներով ապահովվածության վերլուծության նշանակությունը, խնդիրները, և տեղեկատվական աղբյուրները:	29
1.2.2. Նյութական պաշարներով կազմակերպության ապահովվածության վերլուծությունը	31
1.2.3. Արտադրական և նյութատեխնիկական մատակարարման ծրագրերի համապատասխանության գնահատումը.....	39
1.2.4. Նյութական պաշարներով ապահովվածության արդյունավետության բարձրացման պահուստների վերլուծություն	43
1.3 Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության վերլուծությունը	47
1.3.1 Հիմնական միջոցների առկայության, կազմի, շարժի և կառուցվածքի վերլուծություն	47
1.3.2 Հիմնական միջոցների արդյունավետ օգտագործման ցուցանիշները	49
1.3.3. Տեխնոլոգիական սարքավորումների օգտագործման վերլուծությունը.....	58
1.3.4. Արտադրական հզորությունների օգտագործման վերլուծությունը	63
Գլուխ II Արտադրանքի ինքնարժեք վերլուծությունը	67
2.1. Արտադրանքի ինքնարժեքի վերլուծության նշանակությունը, խնդիրները և տեղեկատվական աղբյուրները	69
2.2. Արտադրանքի ինքնարժեքի ծախսերի դասակարգումը ըստ տնտեսական տարրերի և կապուլյացիոն հոդվածների	71
2.3 Միավոր արտադրանքի ինքնարժեքի (\bar{C}) գործոնային վերլուծությունը.....	81
2.4. Ապրանքային արտադրանքի 1 դրամին ընկնող ծախսերի վերլուծությունը	83

2.5 Համեմատելի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը	87
2.6 Առանձին արտադրատեսակների ինքնարժեքների վերլուծությունը	90
2.7 Ուղղակի նյութական ծախսումների վերլուծությունը	91
2.8 Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծությունը	100
2.9 Անուղղակի ծախսերի վերլուծությունը	107
2.10 Առևտրային ծախսերի վերլուծությունը	110
2.11. Արտադրանքի ինքնարժեքի իջեցման ռեզերվների (պահուստների) վերլուծությունը	111
Գլուխ III. Ֆինանսական վերլուծություն	111
3.1 Ըահույթի և շահութաբերության վերլուծությունը	111
3.1.1 Ըահույթի տնտեսագիտական էությունը և վերլուծության նշանակությունը ներկա պայմաններում	111
3.1.2 Ըահույթի վերլուծության խնդիրները և տեղեկատվական աղբյուրները	121
3.1.3. «Ծախս -ծավալ-շահույթ » հարաբերակցության վերլուծությունը	121
3.1.4 Ըահույթի գործոնային վերլուծությունը « Դիրեկտ- կոստինգ» եղանակով	121
3.1.5 Ըահութաբերության վերլուծությունը «Դիրեկտ-կոստինգ» մեթոդով	131
3.1.6. Ըահույթի բաշխման վերլուծությունը	141
3.2 Ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը	141
3.2.1 Կազմակերպության ֆինանսական դրության վերլուծության հասկացությունը, էությունը և խնդիրները	141
3.2.2 Կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծության ինֆորմացիայի աղբյուրները	151
3.2.3 Կազմակերպության հաշվեկշռի կազմը և կառուցվածքը	151
3.2.4 Կազմակերպության ֆինանսական կայունության վերլուծությունը և նրա գնահատականը	151
3.2.5 Ֆինանսական կայունության տեսակները	161
3.3 Սեփական և փոխառու կապիտալի օգտագործման արդյունավետության գնահատականը	161
3.3.1 Ֆինանսական լծակի էֆեկտ	161
3.3.2 Արտադրա-ֆինանսական լեվիիդիջի գնահատականը	171
3.3.3 Կազմակերպության ֆինանսական կայունության պաշարի գնահատականը	171
Գրականություն	171